891.99 (Հ82) 29581.
Գ-93 Գրական-գեղարվեստ-
ական ժողովածու: 15ռ.

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

891.99-82

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

Ա III/2156 29581

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԱՐՏԱՆ

1927—ԹԻՖԼԻՍ

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Թիֆլիսում հիմնված (Հայաստան կից) Հայ Գրողների Միությունը (Ֆեդերացիան), վորն ընդգրկում ե պրոլետարական և «ուղեկից» գրողներին, արդեն մի տարուց ավելի յե, ինչ անցել ե գործի և որեցոր ընդլայնում ե իր գործունեությունը։ Յեվ ահա ներքին գրական-լաբորատորիական աշխատանքներից հետո Միությունը անցնում ե հրատարակության և ընթերցող հասարակության առաջարկում ե այս ժողովածուն։ Այս հրատարակությամբ Գրողների Միությունը (Ֆեդերացիան) նպատակ ե դնում․ իրեն մի կողմից՝ հանդես բերել իր անդամների գրական աշխատանքները և մյուս կողմից՝ բավարարել ընթերցող հասարակության ակնհայտ պահանջը, վորն աճում ե որեցոր և դառնում հրամայական։

Գրական-գեղարվեստական այս ժողովածուն, վորը պիտի համարել խորհրդային ինտելիգենցիայի նվաճումներից մեկը կուլտուրական ֆրոնտում, մի ավելորդ անգամ ևս գալիս ե ապացուցանելու, վոր հեղափոխական շինարարության որերում գրականությունը, վորպես գործոն ուժ, մտնում ե իր բնական հունի մեջ և առնում ե խորհրդային իրավակարգին հարազատ գունավորում և շունչ։

Ճիշտ ե, նոր խնդիրներ, նոր ապրումներ վորոնելու միջոցին դժվար ե համապատասխան գույները, անհրաժեշտ ձևերն ու կաղապարը հասցնել բավարար չափի կատարելության, սանձելով հարմոնիկ արվեստ ձևի ու բովանդակության տեսակետից. սակայն հիմքը դրված ե արդեն հաստատուն ու պինդ. մնում ե ցանկալ, վոր պրոլետարական գրողներին կից մեր «ուղեկիցներն» ևս շարունակեն իրենց ապրումների, հույզերի պրոլետարացման, խորհրդայնացման ուղին, կարողանան ավելի խոր թափանցել խորհրդային այն իրավակարգի մեջ, վորը մնում ե և կենդանություն տալիս նրանց գրչին։ Ներդաշնակ գեղարվեստական ձևի կաղապարումը տարիների գործ ե, վորի համար պետք ե ոգտվել մեզ ժառանգություն հասած բուրժուական արվեստի արժեքներից, յենթարկելով վերջինս զգալի վերամշակման համաձայն պրոլետարական արվեստի սկզբունքների ու սոցիալիստական շինարարության պահանջների։

Սրա լավագույն գրավականն է արդեն իսկ սկսված աշխատանքը Հայ Գրողների Միության ներսում, ուր գրական տարբեր ուղղությունները բախվելով իրար՝ տալիս են ըստ ամենայնի գրական արդյունք։

Նման աշխատանքների արգասիքն է և այս ժողովածուն։

Այս գործը՝ լինելով իրենին մի գրական յերևույթ, անկասկած ունի և մի շարք թերություններ, վորոնք վերանալու յեն աստիճանաբար, ժամանակի ընթացքում։ Հայաստանի ընդհանուր ղեկավարությամբ ու մեր գրողների յեռանդուն գործակցությամբ խմբագրական կոլլեգիան յերկրորդ ժողովածուն կտա ավելի լրիվ։

Ֆեդերացիայի անդամներից շատերի գրվածքները տեղ չգտան այս ժողովածվի մեջ մեզնից անկախ պատճառներով։ Հույս ունենք հետագա ժողովածուներն այս տեսակետից կլինեն ավելի կատարյալ։

Խմբագրական Կոլլեգիա

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

ՔՆԹԵՌ·ՉՈՐՍԸ*)

(Աքսորի հուշերից)

Ընկեր Սերգո Օրջոնիկիձեյին

I

Վոչ հինգ թվին եր այն և վոչ յոթ-ութին համենայն դեպս, այլ ավելի ուշ, քայքայիչ ռեակցիայի ամենածանր օրերին, յերբ հակահեղափոխության շիջուկը այնպես եր փարակել ողը, նրա մղձավանջը թանձր չանգի նման այնպես պիրկ նստել յերկրի կրծքին, վոր քիչ եր մնում մարդու սիրտը պայթի, շունչը կտրվի...

— Ախ, մի պատերազմ... վոր գար մաքրեր այս գաղջ մթնոլորտը,— հառաչում եյի յես դադված սրտով, համոզված՝ վոր այս անգամվա պատերազմը վերջանալու յե ցարերի գահի անկումով։

Սակայն պատերազմը չեր գալիս, իսկ ռեակցիան օր-ավուրել ավելի յեր վոտքերը ձգում ու ճիվաղի նման աչքերը չռած գիտում աջ ու ձախ, վոր մի շշուկ, մի կենդանի շարժում նկատելուն պես հափ անի, կլանի այն։

Հալածանքները հասել եյին մինչ այն աստիճանի, վոր մի որ էլ բոլոր արհեստակցական միությունները փակված տեսանք։

Այս արդեն հեղափոխության նվաճումներից մնացած վերջին փշրանքն եր, այն էլ կորցրինք, մեր կռուտների վերջին ետապը, վորը խստովանում եյինք, բայց չեյինք վհատվում, գիտակցում եյինք մեր պարտության փաստը, բայց չեյինք լքվում. ընդհակառակը, համարելով այն ժամանակավոր, մենք էլ մեր հերթին պատրաստվում եյինք նոր խոյանքների, նոր գրոհների։

Յեվ այն ժամանակ, յերբ հրճվանքից վրնջացող ռեակցիան նժույգած իր արնախում արշավանքներից սկսել եր արդեն հանգստանալ իր պալատների վերին հարկերում՝ մենք, ընդհանուր հալածանքներից հրաշքով գերծ մնացած մի քանի բաղդավորներս, դարան եյինք մտել նրա ներքնահարկերում և խլուրդի նման փորփորում, կրծոտում եյինք նրանց ապարանքների քարե հիմքերը տապալելու համար։

Ու աշխատում եյինք խլուրդներս ծանր զգուշավորության—յոթը կողպեքի տակ, անընդհատ, անդուլ, շատ դեպքում իրարից անջատ, առանց փոխադարձ կապերի հնարավոր տարածության։

Այսպես կարծես ավելի լավ եր, ավելի ապահով, գոնե խորը կոնսպիրացիայի տեսակետից։

*) Ճաքթաղ—այգեքաղից հետո տեղ-տեղ անքաղ մնացած ողկույզի կամ պտուղի հավաքումը։
Ծանոթ. հեղ.

II

Մի օր էլ, նոյեմբերի վերջերին, ստանում եմ նամակ իմ ընկեր Մալաքի Թորոշելիձեյից.

— Շտապիր ճանապարհվել մոտս, Սամարեղի, այստեղից պիտի գտնենք Ղորեշա գյուղը խաղողաքաղի. բոլ մաճառ կխմենք, կուրախանանք, յերկու օրից կվերադառնանք։

Մաճառ խմելը դեռ հասկանում եմ, բայց նոյեմբերի վերջերին խաղողաքա՞ղ... ահա այդ էր դժվար հասկանալին. ով է տեսած այգեքաղ աշնան վերջին ամսին, վոր սակ է նոյեմբերի համարյա կեսին նոր ամարով։

«Յերևի ընկերս կարիք ունի ինձ տեսնելու ու գայթակղեցնում է խաղողաքաղով» — մտածեցի ու իսկույն պատասխանեցի.

— Կարող եմ գալ տեսակցության մի շաբթից հետո միայն. ինչ վերաբերում է մեր խաղողաքաղի շտապելուն... այդ էլ հետաձգիր մյուս տարվան, այս տարի ուշ է...

Այս հանաքի համար յես-գրությամբ ավելացրի. «Այդ տեսակ բաղաքաղին իմ ծննդավայր Գյանջայում տալիս են կնտեր-վորս անունը». և վերջում նամակս գրել էյի ռուսերեն՝ ստացվել էր մի շատ զվարճալի խոսք — кнтер-ворс...

Մի քանի օրից ստանում եմ դարձյալ նամակ ընկերոջիցս, ուր նա պնդում է, թե այգեկութը մեզ սպասում է, ինձ մնում է շտապել միայն... ու յես-գրությամբ, յերևի նույնպես հանաքի համար, վերջացնում է.

«Նամակից բոլոր կետերը պարզ էյին, հասկացա. բայց թե ինչ կնշանակի դժվար ընթեռնելի կնտեր-վորս խոսքը՝ այդ մեկը լավ չհասկացա, յերևի այդ էլ գալուց կբացատրես...»։

Ինձ մնում էր սրտանց ծիծաղել ու շտապել սիրելի ընկերոջս տեսակցության։

III

Գիշերվա գնացքը առավոտյան հասցրել է ինձ Սամարեղի։ Ծիծաղից կրկչալով ընկել եմ կայարանին կից ընկերոջս սենյակն ու համբուրվում ենք. համբուրվում ու յերկուսով ծիծաղում ենք աշխույժ։ Կերևի, վոր ընկերս լավ է հասկացել կնտեր-վորս խոսքի նշանակությունը, բայց ուրախ տրամադրություն ստեղծելու համար սրամտել է։

Մյուս կողմից՝ աշխատել է հետս խոսել փոխաբերական մաքով, հին հեղափոխականներին հատուկ բառախաղով, ասել է թե յեզոպական ժարգոնով, դարձյալ անշուշտ զգուշության համար, հանուն կոնսպիրացիայի։

Պարզվեց, վոր այս ուշ պահին կնտեր-վորս գնալ՝ այդ կնշանակի գնալ թաղելու դեռ հեղափոխությունից չհասթափված ու ռեակցիայից չհնձված Ղորեշայի գյուղացիության։

Բացատրեց, վոր այդ գյուղի բնակիչները ճանաչ ապստամբներից

ձանձրացել են. անհրաժեշտ է բոլորովին նոր, անծանոթ դեմք, վորին այս դեռ «անբաղ այգին» սիրով է ընդունելու։

Ահա թե ինչ... Ամենուրեք կործանված է հեղափոխությունը, մանավանդ գյուղերում, և Ղորեշան դեռ մնացել է անձեռնմխելի, անսասան... Ինչ հրաշք է այս...

Հասկացա դերս, ուրախացավ ջահել, խոսելու համար խլրտացող արյունս և մի ակնթարթում յերկուսով հակառակ գնացքը թռանք սուլիչի ազդանշանից մի վայրկյան հետո, գնացքը կայարանից հենց շարժվելու րոպեյին։

Հետու չէ Սամարեղին Բելոգորի կայարանից. իջել ենք կայարանում ծառայող յերիտասարդ ընկերների մոտ, վորոնք ըստ յերևույթին կապված էյին Մալաքիի հետ դեռ հինգ թվից՝ հեղափոխության ֆրոնտում միասին աշխատելու օրերից։

Նրանք մեզ համար նախաճաշի պատրաստություն են տեսնում. չեն էլ հարցնում, կուզենա՞նք ուտել, թե վոչ, այլ շտապ սուփրային փռում, խորոված շամփրում, գինու շիշ բացում։

Այս ամենը կատարվեց այնպես արագ, վոր ինձ թվաց, վորպես նախորոք տեղի ունեցած կարգադրություն Մալաքիի կողմից։

Զանցած կես ժամ, յերբ դուրս յեկանք սենյակից, արդեն յերկու թամբած ձի, սանձերը կապված կայարանի յետին մուտքի յերկու յերկաթե օղակներից, մեզ էյին սպասում։

Թռանք ձիերի մեջքին ու հեռահեռե բարձրանալով, թեքվեցինք դեպի արևմուտք, լեռները։

Պարզ ու հստակ առավոտ էր, և չնայած բարեխառն աշուն էր, այնուամենայնիվ հյուսիսային կողմերում փայլփլում էյին Ռոճայի ձյունապատ ատամնավոր լեռները, վորոնց սաղափե կատարները վոսկեզօծվել էյին վաղորդյան արևից։

Ղորեշա հասնելը յերեք ժամից ավելի չտևեց. ձիերը իրենք իրենց իջնում էյին դեպի ձորը, իրենք գտնում ճանապարհը. գյուղի ձիեր էյին, լեռների սովոր։

— Ո՞ւր ենք իջնելու, Մալաքի, — հարցնում եմ ընկերոջս, զառիվայրից իջնող ձիու բաշին կքած։

— Աներոջս տուն. դու կտեսնես այնտեղ իսկական իմերելին իր պատվով ու կենցաղով, — ու այստեղ միայն սկսեց պատմել, թե ով է իր աները, ովքեր են գյուղի բնակիչները, քանի շունչ ունի Ղորեշան և այլն։

Բանից յերևաց, վոր այս գյուղի բնակիչները գլխովին իրար ազգականներ են, իսկ ազգակիցների մեջ ամենամեծ բաժինն ընկնում էր մեր ականավոր ընկեր Սերգո Որջոնիկիձեյի արյունակիցներին՝ Որջոնիկիձե ազգանուններով։

Բոլորն էլ լենդի հեղափոխականներ, հեղափոխության օրերի ամենալավ ապստամբները։

Գյուղը իր ցրված հեռավոր մասերով հանդերձ բաժանվում է յերկու — Վերին ու Ներքին Ղորեշայի, չորս հարյուր ծխով, վորոնց իրարից բաժանում է ձորակով աղմկող փրփրուն գետակը։

— Այ, նկատո՞ւմ ես այն լիճը,— մատով ցույց է տալիս Մալաքին հեռավոր մթնոլորտում կապույտ տվող մի լճակ,— 1905 թվին բոլոր լրտեսներին ու հեղափոխության դավաճաններին այս լճակումն են խեղդել...

— Ինչպես թե խեղդել... հարցնում եմ։

— Շատ պարզ. ձեռք ու վոտք թոկով կապկպել, նետել են ջուրը։

Կուրծքս բարձրանում է ներքին հրճվանքից։

— Իսկ այն լեռնանստ քարափները տեսնո՞ւմ ես,— նա ձեռքը մեկնում է դեպի հարավ,— նրանց տակից այս գյուղացիք զենք բռնած հինգ անգամ խփել են ցարական պատժիչ-արշավախմբերին։ Ալիխանով-Ավարսկու շայկաները իրենց հրանոթներով չեն կարողացել ներս խուժել այս գյուղը, իսկ յերբ կամեցել են անցնել գյուղի մոտով՝ հալածվել են։

Մալաքի պատմածներից մնում էր յենթադրել, վոր այստեղ ապրողները հեքյաթներում նկարագրված հսկաների նման մի սերունդ պիտի լինեյին՝ քաջասիրտ, հաղթանդամ, անպարտելի...

IV

Յենթադրությունս ճշտվեց, յերբ հասանք գյուղի հրապարակը. իմ ուշադրությունը գրավել են բարձրահասակ, առողջ, թիկնավետ ծերունիները իրենց թավ ու թուխ փառավոր մորուքներով և յերկար բեշմեթներով. ամեն մեկը նրանցից՝ մի-մի պատմական նախարարի,— վսեմ, հպարտ քայլվածքով։ Ծերերը ջահելների նման առողջ, կարմրաթշիկ դեմքերով, պատկառելի մորուքներով մարդիկ՝ նահապետական պարզությունն ու անսահման բարությունը դեմքերին դրոշմված։

Նրանք ամենքն էլ անխտիր բարևում են մեզ, ինչպես հին ծանոթների. անկասկած է, վոր ինձ ընդունել են Մալաքի ազգականներից մեկի տեղ, ապա թե վոչ վո՞ր հարամ վոտը կհամարձակվեր անցնել այս լեռնոտ անտառներով։

— Մալաքի,— ասում եմ,— բա էս գյուղում մի վատառողջ, մի վտիտ վոչմին չծնվե՞ց. բոլորն էլ կարծես ընտրովի, ամեն մեկը՝ մի-մի Նաբուգադոնոսո՞ր...

— Շրջապատի հողն ու ջուրը վատներ չեն սիրում. ինչպես թավ են ու բարձրահասակ այս գավառի անտառներն ու կաղնուտները, այնպես էլ փարթամ են ու առողջ այս կողմերի գյուղացիք,— պատասխանում է Մալաքին մի առանձին հաճույքով։

— Լավ, բա սրանք նաչալնիկի բունցը չեն տեսած, յա տանուտերի մտրակի համ չեն առած... Վորքա՜ն վստահ են խոսում, վորքա՜ն գլուխը բարձր պահած են քայլում...

— Մեր յետևը թողած լիճը մոռացա՞ր. բոլոր բռնակալները— նաչալնիկներից սկսած մինչև վերջին ուրյադնիկը՝ իրենց գերեզմանը այնտեղ են գտել. գիշերները... կազմակերպված կարգով...

Մնում էր յենթադրել, վոր ճնշումների ու հալածանքների կողմից ևս

Ղորիշան շնորհիվ իր աշխարհագրական դիրքի, այլ և իր բնակիչների համերաշխության՝ կազմում էր մի յերջանիկ բացառություն ամբողջ Իմերեթիայում։

V

Իջել ենք Մալաքի անշուք տան ուղղակի շեմքին։ Նրա դռանը, վաթսունից անց մի կայտառ գրնդան պառավ, ջահելի նման հագնված, վերիցն էլ մախմուրի քուլաջան, հեռվից նկատելով՝ ընդառաջել է մեզ և ձիու սանձից բռնած ուրախ-ուրախ գրուցելով հասցրել մինչև տան շեմքը։ Աշխարհքից կտրված լեռնցիք են, դրսի մարդ տեսնելով խելույն ուրախանում են։

Սենյակից ծանրախոհ քայլերով դուրս է գալիս Մալաքի աները— բատոնո Յեփրեմին— մի յոթանասունհինգամյա, ճերմակ մազ ու մորուքով գեղեցկություն, խելացի, լուրջ դիմագծերով, բաց, ազնիվ ճակատով։ Սրա կայտառ դեմքից պետք էր յենթադրել, վոր ծերացության ձեռքը կարճ է յեղած այս ծերուկ-ջահելին մի հարված անգամ հասցնելու ու, յեթե հավակնել է՝ հանդիպել է հակահարվածի։

— Ո՞վ է ընկերդ,— հարցնում է բատոնո Յեփրեմին և ուրախությունից, վոր փեսան հյուր է բերել, շոյում է իր կարապի թևի պես ճերմակ փառահեղ միրուքը։

— Մեր ամենալավ աշխատավորներից մեկը,— պատասխանում է Մալաքին,— յեկել է նոր խոսք ասելու։

— Խոստումդ կատարել ես. վա՛շա, ուրեմն սկսենք հենց հիմիկուց,— վրա յի բերում բատոնո Յեփրեմի յեղբայր Իլյա Որջոնիկիձեն, վորպես նոր խոսքի ծարավներից մեկը։

— Լավ է մի առաջ ճաշեյինք, հանգստանայինք՝ հետո,— պատասխանում է Մալաքին տանը մարդու պես։

Մինչ ճաշի պատրաստությունն կտեսնեն, մենք մտել ենք բատոնո Յեփրեմի տանը կից մեծ այգին. վազերի վրա վո՛չ մի վողկույզ. խաղողը արդեն քաղված, մզված է. նրա խռովարկու մաճառն էլ յերևի հանգստանում է մեզնից վոչ հեռու հնձանի տակ թաղված կարասներում։

— Մալաքի, չսկսե՞նք kvisbr-varup...

— Յեռանդդ պահիր միտինգի համար,— ժպտում է Մալաքին թիկն տված անուշահոտ խոտի դեզին։

— Գիտե՞ս, ասում է, յերջանիկ մարդիկ են այս անտառի բերդի բնակիչները. մարդիկ, վորոնք կարծես ծնված են միայն սխրագործությունների համար։ Հարկեր չեն տալիս կառավարությանն առաջին հեղափոխությունից հետո։ Տարվա յերեք յեղանակներին Գուրիայի անտառներում պատսպարված հեղափոխականները ձմեռնամուտին այստեղ են միայն կարողանում ապահով թաքնվել, ապաստանվել։ Գարունը աչք բացվելուն պես թողնում են այս բույնը ու նորից ընկնում կռիվների ջանին... Վո՛չ պակաս հետաքրքիր են մասնավոր կյանքում. տղամարդիկ ունեն մի գեղեցիկ սովորություն — միշտ

հարևաններով, կոլեկտիվ ճաշել։ Այստեղ առանձին, մենակ ճաշող ընտանիքի շատ սակավ կհանդիպես։

Այնուհետև պատմում է Որջոնիկիձեների քաջագործություններից.

— Հեղափոխության օրերին ապստամբ գյուղացիների ղեկավարները միշտ Որջոնիկիձեներն են եղած. ահա թե ուր ես գտնվում դու այժմ, братец мой...

VI

Մեզ տանում են ուղղակի դեպի պատրաստի ճաշը. սուփրեն փռել են մի մեծ լուսավոր սենյակում գետնի վրա, շրջապատել են այն դոշակներով ու մութաքաներով։

Սենյակից դուրս, ուղիղ դռան շեմքին, սարքվել է մախմուրե քուլաջայից անբաժան Մալաքիի պառավ զուռնաչը և շարունակ տաք-տաք խաչապուրի յե հասցնում մեզ։ Սուփրի վրա սրտաբաց առատություն է. մի ամբողջ յեփած գոճի, հնդկահավից՝ սացիվի, խաշած հավեր, իրար վրա դարսած սուրգուլի և... անբաժան փարչերը գիժ մաճառի։

Ամբողջ ընտանիքով աշխույժ խոսում են, ուտում, զրուցում և ինչպես կասեն՝ բազար են տաքացնում, ինձ էլ խոսելու հրավիրում։

Մալաքին առաջարկում է ամենալավ ագիտատորի կենացը. քսաներկու ձեռք միանգամից գավաթները բարձրացրած ինձ են նայում, թե ինչ պիտի անեմ։ Շեմքում նստած քուլաջավոր զուռնաչը տեղից թռչում է և նույնպես փարչը առնում ձեռքը։

Մաճառը արդեն վառել է գլուխս, թևավորել մտքերս. գտել եյի իմ տարերքը և սկսում եմ խոսել վոգևորված։ Խոսում եմ շեշտված, համոզված տոնով ու նկատում, վոր գյուղացուն հատուկ առողջ ինստինկտը համակվել է տրամադրությամբ։

— Այս գյուղի Որջոնիկիձեների կենացը,— ասում եմ.— յես կուզենայի, վոր նրանց սերունդը, արժանի իրենց այժմյան հայրերին, այնքան բազմանար, վորքան կաթիլներ կան ձեռքիս բռնած գավաթում...

— Մեզ չմոռանաք, հաճախեցեք շատ-շատ, ձեզ նման հյուրերին միշտ կարոտ ենք,— անկեղծ ցանկություն է հայտնում Յեփրեմի Որջոնիկիձեյի ընտանիքը։

— Ինձ դժվար չե կարել մի այսպիսի հյուրասիրություն ձեզ մոտ գալու համար, բայց յես ավելի ուրախ կլինեյի, վոր ամեն մեկդ Թիֆլիս գալուց հանդիպեյիք ինձ իմ օջախում. գուցե համոզվեյիք, վոր Թիֆլիսի հայը վոչ պակաս հյուրասեր է Ղորեշու իմերելից,— ասում եմ յես և շտապ մատիտս հանելով մոտենում եմ պատուհանի փեղկերից մեկին ու վրան հասցես գրում։

— Ահա և հասցես, վոր չկորցնեք...

— Յեփրեմի,— ձայն է տալիս զվարճախոս Որջոնիկիձեներից մեկը,— Թիֆլիս գնալուց չմոռանաս საჩუქარი էլ հետդ տանել։

— Դրուստ է ասում Երմիլեն, առաջին պիտի անպատճառ կալանդ տակ տանես և այնպես Թիֆլիս մտնես, տան հասցեն յե...

— Հետաքրքիր է Յեփրեմին տեսնել Թիֆլիսի փողոցներում առաջին սրան-նրան ցույց տալիս, հասցե հարցնելիս,— մտերմորեն սրամտում են մյուսները ու սրանց ծիծաղում...

VII

Արդեն Ներքին Ղորեշան լսել է, վոր նոր ագիտատոր է յեկել, խոսում է մոտեցող հեղափոխության մասին, հորդորում է պատրաստվել նրան ընդառաջելու։

— Մի՞թե ხալხი վատ յե կանգնում և մենք չգիտենք. գնանք տեսնենք ինչ նորություն է բերել յեկվորը...

Առավոտ է. գյուղի հրապարակում խռնվել է մի մեծ բազմություն։ Մալաքին նախապատրաստությունների վրա յե. բացում է միտինգը։

— Ո՞վ է են մեկը, վոր պնդում է, թե հեղափոխության կրակը հանգել է, մոխրացել,— հենց առաջին խոսքից ռումբի նման նետում եմ յես ամբոխի մեջ։— Սուտ է, հեղափոխությունը նոր է սկսվում ու նա չի հանդարտանա մինչև չխորտակի ռեակցիան. ձեր այս բազմության ներկայությունը ապացույց, վոր հեղափոխությունը դեռ ապրում է, դեռ քայլում է... Ասում եմ յես տաքացած ու մոլեռանդ յերկարամազ դարվիշի պես զգում, վոր խոսքերս ազդել են հավատացյալներիս վրա։

Յես չեմ հիշում, թե էլ ինչ ասացի, բայց յերբ իջա կոտրած մի ծառի հաստ կոճղից, վորի վրա բարձրացած խոսում եյի, ինձ թվաց, թե վոտքերիս տակ սղոցած ծառը նոր վոստեր է ձգել, աճել, ճյուղավորվել...

— Ո՞վ է ագիտատորը, վոր այսքան ջիգարով է խոսում,— հիացած հարցնում է Մալաքիին մի պատկառելի ծերուկ։

— Ակակի Ծերեթելս իցնո՞բ *)— հարցնում է Մալաքին տպավորությունը ուժեղացնելու համար։

— Վիցնոբ **)— պատասխանում է ծերուկը։

— Եսեց սոմխեբիս Ակակիա ***)։

— Հա՜ա՜,— ծոր է տալիս գյուղացին և ներքին գոհունակությամբ նայում աչքերիս մեջ, վոր բաղդ ունի «հայ Ծերեթելուն» տեսնելու։

Նա հարգանքով ու սրտառուչ իր լայն ափը սեղմած ափիս՝ մտերմորեն հայտնում է, վոր յես հիշեցնում եմ իր բոլշևիկ ավագ վորդուն, վորը անհետ կորել է Սիբիրի տունդրաներում աքսորից փախչելու ժամանակ։

VIII

Արդեն Վերին Ղորեշան նույնպես իմացել է, վոր քաղաքից յեկել է «հայ Ակակին» և քարոզում է...

---

*) — Ակակի Ծերեթելուն ճանաչում ես։

**) — Ճանաչում եմ։

***) — Սա էլ հայերի Ակակին է։

Վերին Ղորևշայի Որջոնիկիձեները յեկել բռնել են բառոնս Յեփրեմի դռան մուտքը և պահանջում են, վոր իրենց նույնպես այցելեմ:

Գնում ենք, ավելի շուտ մագլցում ենք անտառապատ զառիվայրով, վորի գագաթին արծիվների նման թառած ապրում են Վերին Ղորևշայի Որջոնիկիձեները:

Մեզ տանում են ուղղակի դեպի մի լայն բացատ, ուր հավաքված է հոծ բազմություն:

Կենդանի խոսքի ծարավ այս լեռնցիները կլանում են ագահությամբ ամեն մի նոր խոսք. նկատում եմ, թե ինչպես լայնանում են նրանց բիբերը, փայլում դեմքերը, պայծառանում:

Ագիտատորի համար չկա ավելի բաղձալի մոմենտ, քան այն, յերբ տեսնում է ունկնդիրների վոգևորված ու բոցավառված աչքերը:

— Գնանք, Մալաքի, նպատակին հասել ենք...

— Հա, նպատակին հասանք, հիմա կարող ենք գնալ:

Քայլում ենք, բայց մեզ այստեղ խլում են իրարու ձեռքից: Ամենքն էլ ուզում են մեզ հյուրասիրել: Մերժում ենք:

Մութն արդեն կոխել է. վերադառնում ենք տուն ու դեռ չհասած անտառապատ տներին՝ տեսնում եմ վառված ջահերի մի բազմություն. իմ մոտենալուն պես ոդը թնդում է կանացիական թարմ յերգի ներդաշնակ հնչյուններով:

— Ի՞նչ է նշանակում այս, Մալաքի, չլինի՞ թե այսօր ժողովրդական տոն է ձեզ մոտ:

— Սա նշանակում է պատվով ճանապարհ ձգել «հայ Ծերեթելուն»,— պատասխանում է Մալաքին ինքնագոհ:

Նայում եմ, քանի զույգ ջահել աղջիկներ առաջ, փարթամ կրծքով, զույգ-զույգ, շարքով կանգնած՝ ճարճատող ջահերը ձեռքներին յերգելով, սպասում են ինձ:

Քանի զույգ կարմիր բոցեր լեզու հանած, ծառս-ծառս լինելով, վառել շառագունել են մեր անցնելիք անտառի շառավիղը. կարծես մեզ ասում են՝

— Առա՜ջ անցեք...

Ու անցնելով առաջ, յես ու Մալաքին քայլում ենք հանդիսավոր ջահերի ուղեկցությամբ:

Ու քանի զույգ կուսական թարմ ձայներ քառաձայն յերգերով կենդանացնում են. մթին անտառի խորհրդավոր լռությունը, կարծես լեռնային վոգիների հեռավոր հիմն լինի այն:

Քանի զույգ կույսերի վոգևորված աչքեր, զույգ ավելի վառվռուն, քան իրենց ձեռքերում պահած ջահերը, հպարտ բռնած գլխով, հայ ագիտատորին ուղեկցում են դեպի Ներքին Ղորևշա, յերթը խմատալից դարձնում հեղափոխական յերգերով ու իրեն Ակակի Ծերեթելու «Սալամուրի» (սրինգ), «Սուլիկո»-ից „საყვარლის საფლავს ვეძებდი" խոսքերով:

Ի՞նչ արտաշարժ տեսարան, ի՞նչ վսեմ հղացում հեռավոր Ղորևշայի լեռնային յերիտասարդության — կին սերնդի կողմից:

Այս անտառապատ լեռներում մնացել է անպարտելի մի առողջ կուսական զանգված, մի գեղեցիկ, գիտակից սերունդ — վորպես սիմվոլ հեղափոխության և մենք՝ քաղաքի ինտելիգենտներս, հեղափոխությունը պարտված ենք համարում...

. . . .

Ու յերբ զառիվայրից մեզ իջեցնող կույսերի շարքերը հասան վերին գյուղը Ներքինից բաժանող լեռնային փրփրադեզ գետակին՝ ջահավոր վրացուհիները մեզ մնաս բարև տալով, կանգ առան ու մինչև վոր մյուս ափը չանցանք՝ տեղերից չշարժվեցին:

Ու մի վայրկյանում, յերբ բաժանվեցինք իրարից, տեսնում եմ, թե ինչպես աշխույժ, վայրի այծյամների նման նրանք բարձրացան զառիվայրով,— նույն կուսական թարմ ձայների ուղեկցությամբ, նույն անմար ջահերով:

— Սոփելի հեճյյ՜յ*),— թնդում է զառիվայրի հեռավոր ճակատից լիաթոք, հուժկու մի կոչ:

— Եյ՜յ՜յ՜... պատասխանի փոխարեն լսվում է գիլ կոչի արձագանքը:

— Սոփե՜լի՜ հեճե՜յյ՜յ... կրկնում է ձայնը ավելի հուժկու ծոր տալով:

Պատասխան չկա. լեռնավտակն է միայն, վոր վրրխկալով յերգում է գիշերվա լռության մեջ, կույսերի ընդհատված յերգի փոխարեն:

— Ո՞վ է կանչողը, Մալաքի, ինչ է ուզում:

— Մեր Կոլյան է, Որջոնիկիձեն. իմաց է տալիս ներքին-ղորևշցիներին, վոր գան ջրի ափ, ընդունեն «հայ Ծերեթելուն»...

Յեվ իրոք, յերբ արդեն անցել եյինք լեռնավտակի մյուս ափը, մեզ սպասում եյին Ներքին գյուղից մի խումբ յերիտասարդներ, վորոնք ուղեկցեցին մեզ մինչև բառոնս Յեփրեմի շեմքը:

IX

Վաղ առավոտյան մեր ձիերը մեզ նորից բարձրացնում են Ներքին գյուղի ձորից դեպի անանց լեռները:

Անցնում ենք գյուղի միակ փողոցով ու տեսնում ամեն մի շեմքի առաջ մի-մի պատկառելի մորուքավոր — տան նահապետ՝ խոնչան ձեռքներին մեզ են սպասում.

— Մինչև մի-մի բաժակ գինի չխմեք ու մի-մի բերան խաչապուրի չխածեք՝ չենք թողնի անցնեք մեր տան առջևից:

Նայում ենք իրար յերեսի յես ու Մալաքին ու սարսափում:

— Պիտի խմենք, ճար չկա. այս մարդկանց շնորհակալության հայտնելու ձևն այս է:

Արդեն գյուղի սահմաններումն ենք ու բարձրանալով հասել ենք լեռների շղթային:

---

*) — Գյուղ, հեյ...

Նորից նշմարվում են հեռավոր հորիզոնում կապտին տվող խորհրդավոր լիճը, Ուաճա-ի տասնավոր պսպղուն ձյունաթույր սարերի կոնտուր-ները, թավ անտառների հեռավոր մշուշը, հերոսական դիրքերի դեր կատարող քարքարուտները:

Բարձրավանդակից նայում եմ փոսում թաղված ներքին և ժայռերի կատարներին կառչած վերին Որջոնիկիձեների աներին, նրանց շուրջը անտառում ցրված գործիչներին ու մտածում.

Վորքան նման է այս ժողովուրդը անմատչելի ու անբաղ մնացած ծառի այն հատ պտուղին, վորը կպած իր մայր ճյուղին, հասունացել է ու ստացել հակինթի գույն, կամ թե ավելի շուտ՝ այն փոքրուկին, վորը փայտի խիտ տերևների տակ թաքնվելով նույնպես մնացել է անձեռնմխելի ու անբաղ և յուրացրել փունջ մարգարիտի շափալը...

Թիֆլիս, 1927 թ., մայիս:

ԱՐԱՋԻ

ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՆ

Սովորաբար ծառայողները առավոտից մի կես ժամ «մլուլ» էին տալիս, ապա սկսում իրենց գրագրությունները: Յերկար շարքերով ձգված սեղանների վրա վորը համրիչն էր չխչխկացնում, վորը աչքի անցնում ստացված գրությունները, վորը թերթում հաստափոր «Գործերը»: Կեսորին մոտ հաճախորդները լցվում էին բոլոր միջանցքները, թամբաքվի ծուխը տարածվում էր բոլոր սենյակներում ու գրամեքենաների աղմուկը հասնում էր գագաթնակետին: Այդ ժամին ծառայողները գզգզվում էին, հաճախորդները թվում էին բծախնդիր. դաշտից յեկող գյուղացին ներս մտնելով մնում էր շվարած թե՝ «էս մարդիկ ինչի՞ յեն հերսոտել»:

Մեծ սենյակի պատից վերահսկիչի աչքով նայում էր ժամացույցը: Նրա սլաքները շատ խորամանկ էին. յերբեմն արագ մոտենում էին վերջին ժամին, կարծես ստիպում ծառայողներին շուտով տուն գնալ, յերբեմն էլ թարսվում էին, յերկար ձգձգում, տառապանք անում ամեն մի րոպեյի համար: Ավելի համեստ էր նույն պատի վրա ամրացրած օրացույցը. նա վոչ վոքի չէր նեղացնում, յեթե հաշվի չառնենք մի-յերկու ծառայողների, վորոնք պիտի զեկուցում պատրաստեյին ամսի այն-ինչ թվին:

Հեռավոր անկյունի մի փոքր սեղանի մոտ նստած էր հաշվապահ Մաղաքյանը: Պետք է ասած, թե նրա տեղը և թե սեղանը համապատասխանում էին իր համեստ պաշտոնին:

Այդպես՝ Մաղաքյանը մի հասարակ և համեստ ծառայող էր: Միայն կինոգրեյի՝ չասեք իրեն, թե համեստ է. նա դրանից նեղանում է իր ներսում, կարծես վիրավորանք են հասցնում կամ ասում են. «Դու անբժշկելի հիվանդություն ունես, չես կարող առողջ մարդկանց հետ լինել»:

Նրա դեմքը մռայլ էր, ավելի լուրջ քան անհրաժեշտ է: Իր ներսում բողոքում էր բնության դեմ, վոր այդպիսի տխուր դիմակ է դրել իր դեմքին, յերբեմն նույն իսկ փորձում էր հակառակ գնալ, ուրախ լինել, մտերմանալ մարդկանց հետ, բայց բնությունը նորից իր դերն էր ստանձնում, դեմքի պատուհանները շուտով փակվում էին ու ասում խոսակցին. «Կանգնիր, էլ առաջ մի՛ գնա, ներս մտնելն արգելված է»:

Սովորական այցելուն գրազ կգար, վոր Մաղաքյանի դեմքին վոչ միայն ծիծաղը, այլ և ժպիտը յերբեք չի հյուրընկալվում: Պետք է ասած, վոր այդ կարծիքը ծայրահեղություն էր. նրա ուրախ րոպեները տեսնողներ յեղել են: Նրան ճանաչողները ասում էին. «Լավ տղա յե Մաղաքյանը, բայց մի ծանր քար կա նրա ներսում»:

Կանայք խուսափում էին նրանից, մտածելով, որ «թեպետ Մազաքյանը օրինավոր ամուսին կլինի, բայց լուսնի տակ շատ բանաստեղծական մոմենտներ բաց կթողնի»։

Ի՞նչ էր Մազաքյանի գործը. հենց է սանկ. հաշիվների, աղյուսակների, անհոգի ու դաժան թվերի հետ էր նրա գործը։ Այդ հաշիվները, պատահում էր՝ գիշերն էլ հանգիստ չէին տալիս։ Շատ անգամ յերազում ուղիղ թվերը սխալ թվեր էին դառնում ու բավական քրտինք քամում Մազաքյանից։ Պահանջկոտ, բծախնդիր թվեր էին. յերբեք չէին զիջում, յեթե գումարը թեկուզ մի չնչին ավել կամ պակաս էր լինում։ Մազաքյանի միակ բավականությունը (յեթե միայն դա բավականություն կարելի յե հաշվել) այն ժամանակ էր լինում, յերբ նա ստուգելով գումարը, համոզվում էր, որ ուղիղ է, կամ մանավանդ՝ յերբ գտնում էր սխալը. այդ րոպեներին թվերը վարժված զինվորների նման ուրախ շարվում էին ու վողջույն տալիս։

Առավոտից սկսած նրա գործն անպակաս էր. նրա առաջ հաշիվների, աղյուսակների կույտը քանի գնում մեծանում էր։ Ասես բնական օրենք լիներ, որ ինչ անհետաձգելի, խճճված գործ կար՝ ուղարկում էին Մազաքյանի մոտ։ Նրա սեղանի վրա կտեսնեյիք այն մնացած, «ջանջալ» հաշիվները, վորոնցից ուրիշ ծառայողները այս կամ այն պատրվակով հրաժարվել էին, կամ թե այն շատ ու «հրատապ» գործերը, վորոնք հենց իսկույն պիտի կատարվեյին։

Միշտ այնպես էր պատահում, որ մի ժամից հետո ժողով պիտի լիներ և այդ անհրաժեշտ թվերը պիտի զեկուցեյին, կամ յերեկոյան կառավարիչը պիտի մեկներ «կենտրոն» և հետը տաներ պատվիրած աղյուսակները։ Որվա մեջ քանի՞ անգամ կլսեյիք.

— Հանձնեք Մազաքյանին։

— Դիմեք Մազաքյանին։

Յեվ նա ընկնում էր այդ թվերի տակ, ինքն իրեն մոռանում. մի յերկու ժամից հետո նրա դեմքը՝ կարմրած լարված աշխատանքից՝ այնպիսի տպավորություն էր անում, կարծես սաստիկ կռվամենճի յեր բռնվել իր առաջը կիտած թվերի հետ։

Գործի այդ բռնարար րոպեներին մի միտք խուլ կերպով հնչում էր նրա ականջին, վորպես պատասխան իր բոլոր չարչարանքի ու դժգոհության.

— Ընկել ես, պիտի տանես...

* * *

Առավոտները Մազաքյանը գալիս էր ծառայության ճիշտ իր ժամանակին, բայց իր ճշտապահությունը չէր հավանում։

— Ի՞նչ ես մեքենայի պես ճիշտ իր ժամանակին գնում ու գալիս,— ասում էր ինքն իրեն.— գոնե մի արտակարգ բան արա, հենց թեկուզ մի քառորդ ժամ ուշացիր, վոր սես թե ապրում ես. կյանքի համը շեղումների մեջ է...

Բայց այսպես մտածելով նա դարձյալ շարունակում էր նույնը, և ինչպես ասում էին ծառայողները՝ դեռ մի դեպք չէր յեղել, վոր Մազաքյանն ուշանար։

Ծառայության գնալիս լավ է, վոր բարձր չէր արտահայտում իր մտքերը, թե չէ թյուրիմացություններ կարող էին ծագել։ Տեսնելով շարունակ ծառայողներին, վորոնք թղթապանակները կռնատակին շտապում էին գործի՝ նա մտքում դիմում էր բոլորին մի արհամարհական խղճանքով.

— Թղթի առնետնե՛ր,— ասում էր նա,— դուք արժանի յեք ձեր վիճակին, թղթերից ավել վոչինչ չեք հասկանում...

— Իսկ դու, Մազաքյան,— ասում էր նա ինքն իրեն,— դու էլ նույն ապրանքից չե՞ս. յեթե «ուրիշ» մարդ լինեյիր՝ այս թղթի գործում չեյիր լինի, վորը իսկապես մարդ-մեքենայի գործ է... Դու, գիտե՞ս, կլինեյիր...

Բայց այստեղ սկսում էր գործել նրա յերևակայությունը. ահա նա, Մազաքյանը՝ ժողկոմ է. բայց սովորական ժողկոմ չէ. նա բոլոր շինարարական և գյուղատնտեսական գործերի «պետն» է. թռչում է ավտոյով, թռչում է այերոպլանով — ու վորտեղ իջնում է՝ այնտեղ մի նոր շենք է բարձրանում, այգիներ, բանջարանոցներ, լայնատարած ցանքսեր են փռվում... Նա պտտվում է վողջ յերկրում, գործի յե հրավիրում ամենքին, ամենքին... Անօրինակ յեռանդով հրաշքներ է գործում, բայց այդ բոլորը կատարվում է առանց թղթի. նա խիստ արգելում է գրագրությունը, նույն իսկ պատժել է տալիս նրանց, վորոնք թուղթ են ներկայացնում։

— Չգիտե՞ք,— ասում է Մազաքյանը,— չգիտե՞ք, վոր մեր լոզունգն է՝ «կորչի գրագրությունը. թուղթը սպանում է գործը»...

Նրա յերևակայությունը վերջանում էր այն ժամանակ, յերբ հիմնարկության սանդուխներով բարձրանալով հանդիպում էր իրենց ծառային։ Սերոբ էր անունը, կեռ քթով, լայն պեխերով ու նեղ շալվարով. Նրա յերկար ձեռքերը շարունակ փնտրում էին իրենց տեղն ու չէին գտնում։ Իրար տեսնելով Մազաքյանն ու Սերոբը տարօրինակ խաղի մեջ էին ընկնում. Մազաքյանը անպատճառ ուզում էր բարևել Սերոբին, վորպես հավասար ընկերոջ, իսկ սա էլ աշխատում էր խուսափել նրա բարևից, մտածելով թե «յերբ վոր բարձր ծառայողները չեն բարևում, քո բարևելն ի՞նչ եմ անում. շատ հարկավոր ա... մյ, թե ուզում էր մեզ էլ հավասար մարդու տեղ դնել՝ ռոճիկս ավելացրեք»...

Սերոբի կցկտուր բարևը կամ նրա յերես շուռ տալը անհարմար դրություն էին ստեղծում Մազաքյանի համար, միշտ զգացնել տալով, վոր իր և Սերոբի մեջ մի պատնեշ կա. նա ամաչում էր, վոր Սերոբից ավել է ռոճիկ ստանում, ու ամեն անգամ այս զգացումով էր ներս մտնում դրասենյակը։

* * *

Մազաքյանն անցնում էր յերկար դահլիճով, նստում իր տեղը ու ընդհանուր սովորության հակառակ՝ իսկույն սկսում գործը։ Կես ժամից հետո գալիս էին բարձր ծառայողներն ու բազմում իրենց առանձին ձևի աթոռներին։ Կարճատև հանգստյան րոպեներին կամ յերբ առիթ էր լինում անցնել այդ բարձրերի առաջ, Մազաքյանը տեսնում էր գլխավոր հաշվապահի ամբարտավան դեմքը, վորը կարծես ասում էր.

Ա 2156

— Ինձ հետ խոսելը սրբապղծություն է։

Գործավարի յերկար քիթը միշտ ձգտում էր դեպի վերև, մի արհամարհական ժպիտի ուղեկցությամբ։

Բաց դռներից յերևում եյին փոքրիկ սենյակում նստած յերեք «սպեցները», վորոնք կեղծ լրջություն տված դեմքերին՝ միշտ այնպիսի տեսք ունեյին, կարծես հենց այդ րոպեյին նրանք զբաղված են ամենալուրջ հարցերով։ Դահլիճի մյուս ծառայողները հեռվից միապաղաղ պատկեր եյին ներկայացնում, իսկ մոտկից յերևում էր, վոր ամեն մեկը յուրատեսակ մի հնարով աշխատում էր ինքն իրեն լուրջ և նշանակալից տեսք տալ։

Ամեն անգամ, յերբ Մաղաքյանն անցնում էր բարձր ծառայողների մոտով, նկատում էր նրանց դեմքին մի գաղտնի արհամարհանք դեպի ինքը և իր նմանները ու լցվում էր փոխադարձ ատելությամբ։

«Մինչև նորից սկսվում է այն հինը, վորը նա վաղուց մոռացել է. մինչև նորից գալիս են «բարձրերը» և «ցածրերը»... Նա այդ րոպեներից հիշում էր անցյալը, յերբ ծառայում էր մասնավոր բանկում. յերբ տերերը կրճատցնելով հպատակվում էր դաժան կառավարիչներին։

Նրա շուրջը ծառայողները քծնում եյին բարձրերի առաջ, իսկ իր մռայլ դեմքը դառնորեն ծամածռվում էր զզվանքից։ Յերբեմն մեծ ճիգեր եյին հարկավոր Մաղաքյանին իր մարդկային արժանապատվությունը պահպանելու համար. նրա ջղերը շարունակ լարված եյին, բռունցքը սղմած։ Անցան այդ օրերը...

Բայց ահա նորից տեսնում է «բարձրեր» ու «ցածրեր» և զգում է իր մեջ հավասարության տենչեր։ Սակայն այդ մոմենտներին նա ինքն իրեն բռնում էր հակասության մեջ. «Չէ՞ վոր մի քանի տարի առաջ, յերբ հավասարություն էր տիրում, յերբ Սերոբի ու կառավարչի մեջ տարբերություն չկար, դու էլ դժգոհ եյիր, փնթփնթում եյիր, թե ինչու «հասարակ» թղթատարը քեզ հետ հավասար ռոճիկ է ստանում. իսկ հիմա... դու նորից դժգոհ ես ու նորից բողոքում ես... «բարձրերի» դեմ»...

Ինչպես գոյացան այդ «բարձրերը»: Մի քանի անգամ ռոճիկների հավելում, և ահա դրվեց այդ պատնեշը. ամեն մեկը ձգտում էր իր դիրքը բարձրացնել. կամ պոչն էր շարժում, կամ պոզը՝ իրեն առաջ քաշելու համար. «Իսկ դու այդ չես արել, քո մեջ մի թաքնված անբավարարվածություն կա. վոչ հպատակվում ես, վոչ էլ ձգտում հպատակեցնելու քեզ, այդ պատճառով մնացել ես ներքևի հարկում։ Այժմ դու դժգոհ ես նորից. բայց վորոնք են քո իղձերը...: Հավասարությո՞ւն ես տենչում, թե՞ զուցե կամենում ես սանդուղքների վերևը, պատվավոր դիրքը գրավել... Յեթե այդպես է՝ ինչ կասես Սերոբի մասին. նա էլ է մտնում քո ծրագրի մեջ... չէ՞ վոր ամեն առավոտ նա սպասում է քո պատասխանին, քո հավասարության»...

* * *

Ամեն օր, վորոշ ժամին կառավարչի ողնականի առանձնասենյակից դուրս էր գալիս Մեջլումյանն ու անցնում ծառայողների յերկար շարքով։ Անցնում էր թեկիկ-մեկիկ գալով, ինքն իրեն վրա սիրահարվածի տեսքով։

Ծառայողները տեսում եյին նրան, վորովհետև նրա հայացքի մեջ ինչ-վոր արհամարհանք կար մանավանդ դեպի ստորին ծառայողները։ Փողոցում պատահելիս նա ակնհայտնի սպասում էր, վոր դիմացինը բարևի, հետո ինքը բարեհաճի պատասխանել։ Իսկ ծառայության տեղը նա ուշադրություն էր դարձնում միայն «բարձրերի» և կուսակցականների վրա։

Ամենքը գիտեյին, վոր Մեջլումյանը կառավարչի ողնականի բարեկամն է, նրա քրոջ տղան։ Ծառայողները այդ պատճառով վորոշ ակնածություն ունեյին դեպի նա։ Իր դիրքը ավելի բարձրացնելու համար Մեջլումյանը տարածել էր, թե կուսակցության թեկնածու յե և շուտով մտնելու յե նրա շարքերը։ Միամիտ հավատացողներին այդ բանը ամենից ավելի յեր գրգռում.

— Ախր վո՞նց թե կոմունիստ... Մեջլումյանը վոչ միայն սպեկուլյանտի տղա յե, այլ և սպեկուլյանտի թոռը... Ախր Լենինը շուռ կգա գերեզմանում...

Սակայն, յեթե Մեջլումյանը սուր ականջներ ունենար՝ կլսեր, թե ինչպես են հեգնում իրեն յետևից.

Բայց, ի հարկե, նա այդ խոսքերը չէր լսում. փքված առաջ էր գնում դեպի դահլիճի ծայրը, ուր նստած եյին գրամեքենաների վրա աշխատող օրիորդները։

Աշխենը, վորին համակրում էր Մեջլումյանը՝ այն պաշտոնական գեղեցկուհիներից էր, վորոնք առանձնահատուկ տեղ են գրավում ծառայող աղջիկանց մեջ։ Բնականից ունեցած կոկետությունը այստեղ՝ ծառայող տղամարդկանց մթնոլորտում՝ աճում է մոլախոտի նման ու ամեն ինչ կլանում։ Պաշտոնական հաճոյախոսություններով սնվելով՝ նրանց դեմքերը հետզհետե թատրոնական են դառնում և լցվում դերասանական ինքնաբավականությամբ։

Մինչև Մեջլումյանի մոտենալը օրիորդ Աշխենը արդեն վորոշ «պոզա» յե ընդունում, ուսերը և գլուխը կոկետորեն շարժում։ Յերբ Մեջլումյանը նստում է իր կողքին՝ նա իր ձեռքը վոլոր-մոլորելով տալիս է նրան, բարևում. նրա խոշոր աչքերը լայնանում են իրենց սահմաններից դուրս։ Սկըսվում է աչքերի ու ժպիտների մի ներկայացում, վորի նկարագրությունը գրչի զորությունից վեր է։

Մեջլումյանը գիջող ժպիտը դեմքին՝ առաջ է քաշում տպագրած թղթերը, իբր թե ստուգելու կամ թելադրելու համար, բայց դրանով միայն քողարկում է իր սիրաբանությունը։ Նրանց հայացքները արդեն իրար ընտելացած եյին և կցկտուր խոսքերից միմյանց հասկանում եյին։

Այնքանը պարզ էր՝ Մեջլումյանը իրենն էր համարում Աշխենին, իսկ օրիորդն էլ սրտի խորքում մի գաղտնի հույս ուներ, թե այդ սովորական, թեթև սկսված կապը կհանգի ամուսնության։ Այդ միտքը այնքան էր նրան վոգևորում, վոր լայն դեմքը մի թիզ ավելանում էր։ Դռների մոտ նստած տիկին Կարտոյանը, վորը հասակն առած էր ու միշտ աչքերը լացակումած՝ նայում էր օրիորդին ու ասում մտքում. «Ի՞նչ ես կոտրատվում. շա՛տ-շա՛տ մի գեղի լուսին ես եղե՛»։

Իսկ մյուս մեքենայի վրա բանող որիորդ Շողիկը, վորը նիհար, սուր դեմք ուներ և նախնիքներից ժառանգած մութ մալյարիոտ գույն, այդ րոպեներին ջղայնանում էր և սովորաբար շփոթում տառերը: Մռայլ մտքերը, հուսահատ նախանձը հասնում էյին գագաթնակետին: Նրա ավելորդ անունը «որիորդ Կրճատում» էր. վախկոտ և կասկածոտ նրա բնավորությունը ամեն մի չնչին դեպք առիթ էր տալիս մտածելու. «Չլինի՞ թե կրճատում է լինելու»:

Նրա վախը վորոշ հիմք ուներ, քանի վոր նրա վզին էյին իր ծնողները և փոքր քույրը: Իր չնչին ռոճիկը ծվիկ-ծվիկ անելով ապրում էյին հոգսերի թախծոտ ամպի տակ: Առավոտները որիորդ Շողիկը զարթնում էր ու անկողնում մտածում. «Ինչի՞ց է, վոր Աշխենը յերջանիկ է: Մենք միևնույն մեքենայի վրա յենք աշխատում, նրա ռոճիկն էլ իմի չափ է, բայց վո՞րտեղից է այդպես հագնվում ու պճնվում. նա արդեն յերկու կոշիկ է փոխել, իսկ իմը կարկատած դեռ քաշ եմ տալիս: Տղամարդիկ նրան փայփայում են, նա գեղեցիկ է, իսկ յես... Միթե թառամելու յեմ այսպես զրկված անձնական կյանքից»... Հարցնում էր նա ինքն իրեն և կես ժամից հետո, նայելով բարձի տակ դրած փոքրիկ ժամացույցին՝ միայն մի պատասխան էր գտնում.

— Պետք է վեր կենալ. արդեն գործի գնալու ժամանակն է...

* * *

Կար մի մարդ ծառայողների մեջ, վորին Մեջլումյանը մարսել չէր կարողանում. դա Մաղաքյանն էր, վորի գոյությունը նա կարծես մի հանդգնություն էր համարում: Մանկությունից, դեռ դպրոցական շրջանում, հարուստ լինելով՝ Մեջլումյանը սաստիկ ատում էր այն աղքատ տղաներին, վորոնց մեջ վորևէ ընդունակություն կամ «հպարտություն» էր նկատում: Հետագայում «աղքատ ու հպարտ» մարդիկ նրա կծու ատելությունն էյին շարժում: Այդպիսիների թվին էր պատկանում Մաղաքյանը: Ամենից շատ Մեջլումյանը սիրում էր գործեր հանձնել ծառայողներին «ոգնականի» անունից և հետո շտապեցնել, նկատողություն անել. նույնը անում էր և Մաղաքյանի վերաբերությամբ, բայց այս կետում միշտ ժայռի յեր հանդիպում ու միշտ կատաղում, վոր չի կարողանում ընկճել «մի ինչ-վոր Մաղաքյանի»:

Արտաքուստ շատ համբերող էր Մաղաքյանը, ուղտի նման համբերող ու բարձվող, բայց և ուղտի նման վրիժառու: Նա առանց հակաճառելու ընդունում էր իրեն հանձնած բոլոր գործերը, բայց նրա դեմքի մեջ մի թաքնված հեգնանք կար, մի սպանիչ թույն, վորը Մեջլումյանին մահու չափ ցնցում էր: Մաղաքյանի դեմքին նա տեսնում էր «քիմիական անալիզի» յենթարկող մի հայացք, վորը կարծես մերկացնում էր իր պճնված փառասիրությունը:

Դեռ հեռվից նկատելով Մաղաքյանի պրոֆիլը, նրա ակնոցները, լայն, դուրս ընկած ճակատը, հեգնող կնճիռները, Մեջլումյանը արդեն կատաղում էր. նա այդ դեմքի վրա տեսնում էր ինքնասիրություն, հպարտություն, վորոնք իր մաղձը շարժում էյին. նա մեծ ցանկություն էր ունենում այդ

րոպեներին վիրավորել, ստորացնել Մաղաքյանին, ցույց տալ, վոր նրա այդ «հպարտությունը» մի ֆիկցիա յե, վոչ մի հիմք չունի, վոր նա մի հասարակ ծառայող է և ուրիշ վոչինչ, ուստի միայն պիտի «հպատակվի»: Սակայն այդ բանը չէր աջողվում Մեջլումյանին. նա միայն մի զենք ուներ՝ գործ էր ուղարկում Մաղաքյանին «ոգնականի» անունից և շտապեցնում, վոր գրգռի նրան. բայց Մաղաքյանն էլ ամեն կերպ աշխատում էր շուտ և լավ կատարել, ու շատ անգամ ավելի առաջ էր վերջացնում և մինչև Մեջլումյանի գալը ուղարկում էր ոգնականին, վորով ավելի յեր դաղում նրան: Յեվ այդպես օր-օրի վրա Մեջլումյանն ավելի յեր կատաղում, տեսնելով, վոր այդ հպարտությունն ու ինքնասիրությունը, այդ «ֆիկցիան» կարծես ավելի յեր ամրանում Մաղաքյանի համառ դեմքին, և յեթե իշխանությունն իր ձեռքին լիներ, նա անշուշտ անմիջապես կբանտարկեր Մաղաքյանին վորպես «ֆիկցիաներ» տարածողի...

Պետք է ասած, վոր իր կողմից Մաղաքյանն էլ ատում էր Մեջլումյանին: Իր ծոցատետրի մեջ նա գրել էր. «Յես այնպես եմ ատում Մեջլումյանին, վորպես թունավոր օձի. յեթե նույնիսկ նրան հանդիպեմ ամենավերջին սոցիալիստական կարգերում՝ հանցանք կգործեմ—կսպանեմ նրան: Յեթե լուսնի վրա յես և նա մենակ մնանք՝ կշպրտեմ նրան դեպի մի հանգած մոլորակ, վորովհետև նա մեր յերկրի մեջ էլ կմտցնի իշխողի և հպատակվողի աստիճաններ. նա իր դատարկ գլուխը ինձանից բարձր կպահի. նա «ընկերականի» յերդվյալ թշնամին է, նրա թույնն է...»:

Վորպես միջանցիկ քամին իր հետ հարբուխ է բերում, այնպես էլ Մեջլումյանի հայտնվելը դռնփակում հոռետես մտքեր էր ներշնչում Մաղաքյանին: «Յեթե Մեջլումյանը ոգտվելով իր բարեկամական կապերից՝ կարող է այսպես թոզ փչելով համարյա վոչինչ չլինել, բոլորի վրա վերևից նայել, էլ ինչ ես շատ մտածում. ինչքան ուզում ես մտածիր ու բարակ մանիր՝ անխուսափելի «վոճիրը» կգա և կնստի աղբյուրի ամենավերին ակի վրա...

Բայց զարմանալի յե. այսպիսի հոռետես մտքերը պատում էյին Մաղաքյանին, յերբ նա հեռվից նկատում էր Մեջլումյանին. իսկ հենց վոր Մեջլումյանը մոտենում էր՝ մի զորեղ ալիք գալիս սրբում էր Մաղաքյանի այդ մտքերը, ու նրանց տակը մնում էր մի ժայռ, մի բուռն բողոք, վորը իսկույն ծառանում էր նրա մեջ և պատրաստ էր իսկույն գործի անցնելու: Նա ամբողջ հոգով «ժխտում էր» Մեջլումյանին և պատրաստ էր նոր հեղափոխություն սկսելու, միայն թե նրան տապալեր...

* * *

Թարս օր էր: Առավոտից Մաղաքյանին հանձնել էյին մի քանի հին ավանսի հաշիվներ: Անկարգ կազմած էյին, վատ ձեռքով գրած և սխալներով լիքը: Մաղաքյանին գրգռում էյին անկանոնությունները, սխալները, բայց մանավանդ գրգռում էյին հաշիվը ներկայացնող անձերն ու նրանց ծախսած մեծ գումարները:

— Լրբեր,— ասում էր նա ինքն իրեն.— ով գիտե ես փողերի կեսը գավառներում քեֆի չեք տվել, իսկ ես հիմա պիտի ձեր կեղտոտ շապիկները լվանամ...

Այնուհետև յեկան մեկը մյուսի յետևից շտապ և «հրատապ» գործերը: Ցերեկը բերեց Մեջլումյանը, դրեց Մաղաքյանի սեղանին ու արհամարհական տոնով ասաց.

— Այս յերկու գործն էլ ոգնականի համար է. շատ շտապ է. պետք է մի ժամից հետո պատրաստ լինի:

Մաղաքյանը այնպես գրգռվեց Մեջլումյանի արհամարհական տոնից, վոր պատրաստ էր իր առաջի թանաքամանը գլխովը տալ, բայց Մեջլումյանը կարծես զգալով այդ՝ ասելն ու հեռանալը մեկ արավ:

Մաղաքյանը յերկար ժամանակ չեր կարողանում կենտրոնանալ իր հաշիվների մեջ: Գումարները սխալ եյին դուրս գալիս ու ավելի գրգռում: Իսկ պատի ժամացույցը այսոր գլխովին թարսվել էր և ուշացած գնացքի նման էլ դադար չեր տալիս. մի գլուխ վազում էր ու շտապեցնում Մաղաքյանին:

Չանցած մի կես ժամ՝ Մեջլումյանն ուղարկեց ծառային իմանալու՝ վերջացրե՞լ է Մաղաքյանը, թե չէ: Պատասխան յեկավ՝ թե չէ: Մի քառորդ ժամից հետո նա նորից դուրս յեկավ ոգնականի առանձնասենյակից, անցավ դահլիճով ու յետ դառնալով՝ նորից ուղարկեց ծառային, ինքն էլ յետևից գնալով:

— Մաղաքյանն ասեց, դեռ չի վերջացրել, յերբ պատրաստ կլինի՝ կբերի,— ասաց ծառան:

— Ի՞նչ... Մաղաքյանի հերն էլ անիծած,— պատասխանեց Մեջլումյանը դեմքը արհամարհական ծամածռելով: Ասաց դիտմամբ բարձր ձայնով, վոր Մաղաքյանն էլ լսի, նրա շուրջին նստողներն էլ:

Մաղաքյանը տեղից վեր թռավ ու բռունցքը բարձրացրած՝ վազեց դեպի Մեջլումյանը:

— Սրիկա, յես քո գլուխը կջարդեմ,— գոռաց նա կատաղած:

Բայց նրա վեր թռչելուն պես՝ ծառայողները առաջը կտրեցին, և նա հազիվ մի քանի քայլ արած՝ նրանց ձեռքերումն էր:

— Թողեք, պիտի սպանեմ,— գոռում էր Մաղաքյանը մի տարօրինակ դարդանդ ապրող ձայնով:

Յերեք հոգով հազիվ եյին կարողանում նրան բռնել: Իսկ յերբ նա զգաց, վոր անկարող է շարժվել, ծանր հևալով ընկավ աթոռի վրա ու անթարթ նայում էր հատակին:

Ամբողջ դահլիճը տակն ու վրա յեղավ: Ծառայողները մեկ մեկու յետևից գալիս եյին հարցական դեմքերով, համախմբվում Մաղաքյանի շուրջը: Ապա իմանալով գործի եյությունը՝ ամեն մեկը մի փորձ ածական էր ասում.

— Ի՞նչ զզվելի... ի՞նչ տգեղ բան է...

Բարձր ծառայողների խմբակը, վորը աշխատում էր Գիլյասովի չեզոքությունը պահպանել՝ աշխատում էր ամեն կերպ ծածկել իր կարծիքը կատարված դեպքի առթիվ:

Կառավարիչը աղմուկի վրա դուրս յեկավ, մոտեցավ խմբված ծառայողներին և իմանալով գործի եյությունը՝ դիմեց բոլորին.

— Հո չի՞ կարելի մի ինցիդենտի պատճառով ամբողջ հիմնարկության գործը խանգարել: Գնացեք տեղներդ և շարունակեցեք ձեր զբաղմունքները:

Ու ակնոցներն ուղղելով՝ լուրջ դեմքով վերադարձավ իր առանձնասենյակը, մտածելով «ոգնականիս փրոնտը շատ է ուժեղացել. պետք է մի քիչ տեղերը ցույց տալ...»:

Բայց մի հինգ րոպեյից հետո նա մոռացավ և՛ «ինցիդենտը», և՛ իր մտածումները, մի հաճախորդի հետ զրույցի բռնվելով:

Անսովոր դեպքը կարծես մեխվեց հիմնարկության պատերին: Մերթ ընդ մերթ գրիչները ծառայողների ձեռքերին կանգ եյին առնում ու ասես հարցնում.

— Վո՞նց թե... վո՞նց թե եղ խոսքերը... են ժամանակին, են հիմնարկության մեջ...

* * *

Տուն գալուն պես Մաղաքյանը պառկեց մահճակալի վրա ու յերկար ժամանակ մտածում էր, ավելի շուտ՝ անկապ դատողում որվա դեպքի շուրջը: Սկզբում յերևակայում էր, թե հարձակվում է Մեջլումյանի վրա ու վրեժը հանում, նույն իսկ ատրճանակով սպանում («փոշնչացնում», ինչպես ինքն էր ասում), ապա փոքր ինչ հանգստանալով՝ յերևակայում էր, թե դատի յեն կանչում Մեջլումյանին, ինքը ճառ է ասում, մեղադրում. Մեջլումյանին պաշտպանողներ են լույս ընկնում, բայց բոլորը տապալվում են:

Մեկ-մեկ նա հանկարծ վեր էր թռչում, նստում մահճակալի վրա ու բռնկվում կասկածով. չլինի՞ թե նա այսոր մի անուղղելի սխալ է արել, թույլ է տվել, վոր իրեն ծանր վիրավորեն, և վոչ մի կերպ չի կարող սրբել իրենից այդ վիրավորանքը. գուցե բոլոր ծառայողները գիտեն և խոսում են դրա մասին, և միայն ինքը չի հիշում:

Վեր է կենում, քայլում ու հետզհետե հանգստանում. չէ, այսոր նա սխալ չի արել. նա արել է այն, ինչ վոր բնականաբար պիտի աներ ամեն մեկը.

Սեղանի վրա դրած էր մի շիշ գինի. խմում էր, քայլում, նորից խմում. արդեն շիշը դատարկվելու վրա յեր: Նրա տրամադրությունը գինու ալիքներով բարձրացել էր: Մտքերի, զգացումների մի խառնուրդ էր մեջը: Ահա վերջին բաժակն էլ խմեց ու նորից քայլեց. ամեն ինչ մշուշի մեջ յեր յերևում: Կանգ առավ Լենինի պատկերի առաջ:

— Մտածե՞լ ես ինձ նմանների մասին,— հարցրեց պատկերից ու ինքը նրա տեղ պատասխանեց.

— Կավիր...

— Իսկ յեթե գալիս է «անխուսափելին», մանրանում են մարդիկ նրանց կռիվները...

— Կա ավելի մեծ և հզոր «անխուսափելին»,— ճագար գլխանի պրոլետարը... այսուհետև ամեն ինչ նրա ոտքի մեջն է...

Փայլում էր նորից ու մշուշի միջից բացվում էին մարդկային լայնածիր շարքերը. բոլորը միաձույլ գալիս էին, խառնում ու փոթորկալից ձայնով կանչում.—

Կպաշտպանենք ընկերոջը, կպաշտպանենք...

* * *

Անձրևային օր է։ Զբաղմունքներից հետո յերկու հոգի յեն մնացել հիմնարկության մեջ։ Կոնֆլիկտային հանձնաժողովի նախագահ Պետրոսյանը և Մաղաքյանը։ Բավական ժամանակ նախագահը լուռ էր։ Դուրս էր նայում պատուհանից, սակայն ավելի դեմքը ծածկելու համար։ Մտածում էր ինչպես սկսի, ինչ քաղաքավարական հանգերով, վոր կարողանա համոզել Մաղաքյանին։ Փոքրիկ դեմքը ծամռում էր, մի աչքը խուփ անում, ձեռքով ծածկում յերեսը։ Վերջապես յերկար մազերը ձեռքով խառնելով սկսեց.

— Ընկեր Մաղաքյան, դուք, ի հարկե, գիտեք ինչի համար եմ ձեզ հրավիրել. ձեր գործը շատ ցավալի դեպք է մեր՝ այսպես ասած՝ ծառայողների ընտանիքում... Ինչ խոսք, Մեջլումյանը շատ անկարգ է վարվել ձեզ հետ, միանգամայն անթույլատրելի մեր՝ այսպես ասած՝ ծառայողների ընտանիքում... Կարծում եմ, մենք պիտի ամեն ջանք գործ դնենք այդ անախորժ դեպքը լիկվիդացիայի յենթարկելու...

Մաղաքյանը չհամբերեց.

— Յես զարմանում եմ, վոր դուք դիմում եք ինձ այդպիսի խոսքերով. իմ հարցը շատ պարզ է. Մեջլումյանը վիրավորել է ինձ և պիտի ներողություն խնդրի. յես ուրիշ դեր չունեմ խաղալու, բացի Մեջլումյանից ներողություն լսելուց...

— Ընկեր Մաղաքյան, դուք մոռանում եք, վոր բոլորը մի տեսակ գիտակից չեն. և այդպիսի դեպքերում գիտակիցները պիտի օգնեն գործին...

— Այսինքն, ներեցեք, դուք կամենում եք, վոր յես գնամ Մեջլումյանից ներողություն խնդրեմ։

Պետրոսյանը կարմրեց հիմնովին մինչև ականջները։

— Դուք իրավունք ունեք, ընկեր Մաղաքյան, վորպես վիրավորված մարդ՝ գրգռվելու. սակայն պետք է հարցին հանգիստ նայել...

— Այսինքն ինչպես. չի՞ կարելի, վոր պարզեք ձեր միտքը։

— Գիտե՞ք, կան հանգամանքներ... օրինակ, կարող է պատահել, վոր Մեջլումյանը համառ է չանի այն, ինչ վոր անհրաժեշտ է...

— Հետո։ Իսկ դո՞ւք... ինչ է ձեր դերը։ Դուք պիտի ինձ պաշտպանե՞ք, թե չէ...

— Ինչո՞ւ յեք այդպես մոտենում հարցին. չէ՞ վոր մենք կոչված ենք՝ այսպես ասած՝ խաղաղություն մտցնելու... և այդ տեսակետից ցանկալի յեր, վոր ձեր հաշտեցումը լիներ՝ այսպես ասած՝ փոխադարձաբար... ձեռք ձեռքի տված...

— Միանգամայն հասկանալի յե ձեր ասածը, ընկ. Պետրոսյան։ Շնորհակալ եմ, վոր վերջապես պարզեցիք ձեր միտքը։ Իսկ յես հայտնում եմ, վոր դուք շնորհիվ ձեր «հանգամանքների» գործիք եք դարձել և օրը ցերեկով այդպիսի առաջարկություններ եք անում...

— Ինչո՞ւ յեք այդ տոնով խոսում։ Ինձ թվում է վիրավորելու կարիք չկա, յերբ մարդ ձգտում է իր պարտքը կատարելու։

— Դուք դա անվանում եք պարտք կատարե՞լ... Իսկ յես, պարզ լսեցեք, ձեր առաջարկը համարում եմ մի դավաճանություն։ Յես ձեր պաշտպանության կարիք չունեմ. կարող եմ գործը տանել առանց ձեզ էլ։

Ու դուրս գնաց։

* * *

Ահա այդ ժամանակ էր, վոր Մաղաքյանը գրեց իր նամակը արհեստակցական միության խորհրդին.

«Ընկերներ, յեթե լուսնի վրա յեմ՝ իջեցրեք, յեթե քնած եմ՝ արթնացրեք։ Օրը ցերեկով պատկառելի մեր հիմնարկումն ինձ վիրավորեց չակերտավոր մի ընկեր, վորը նույնքան հարազատ է մեր կարգերին, վորքան պապը Հռոմի։ Այսպես պատահեց, ընկերներ, և չնաշխարհիկ մեր կոնֆլիկտային մասնաժողովը առաջարկում է «վան թարսության օրենքի», վոր վիրավորվածը «փոխադարձ» ներողություն խնդրի վիրավորողից։

«Ընկերներ, վորքան ճիշտ է, վոր գրում եմ սև թանաքով՝ նույնքան ճիշտ է, վոր սիրտս սև է այս թարս բաներից։ Ուստի պահանջում եմ՝ պաշտպանեցեք «ընկեր» անունը, վոր անցել է բարիկադներից ու խոցվում է «բարեկամներից». պաշտպանեցեք «ընկեր» անունը, վոր բարձր է, քան Մասիս...

«Մաղաքյան»։

Հենց նամակը ստանալուն պես կարգադրություն յեղավ նշանակել հետևյալ օրը ծառայողների ընդհանուր ժողով՝ արհմիության ներկայացուցչի մասնակցությամբ։

* * *

Արտակարգ ժողով էր։

Համակրական ճառերը կեծ ջրի նման թափվում էին Մաղաքյանի վրա։

Կուսակցական Ադամյանի վճռական հայտարարությունը՝ թե վերջին ժամանակներս մեր հիմնարկության մեջ «նեպի» ազդեցության տակ առաջ են յեկել մի շարք յերևույթներ, շեղումներ»... կարծես գալիս են Մաղաքյանի ներսից։ Նրա ներսից էին գալիս և անկուսակցական Կողկյանի խոսքերը, թե՝ «մեր հիմնարկության աշխատակիցները այս հարցում ցույց տվին կատարյալ տհասություն. այսօր արհմիության խորհուրդը մեր ականջից բռնած հրավիրում է ժողովի»... Կոմյերիտ Սաղոյանը, իր յերկար մազերը թափահարելով՝ բուռն կերպով հարձակվում է Մեջլումյանի և նրա «արբանյակների» վրա, պահանջում է մաքրել աշխատավորների շարքերը թունավոր օձերից...

Մաղաքյանն ընկնում է տաք հոսանքի մեջ. այլ ևս չի կարողանում

հետևել խոսողների մտքերին, վոչ էլ կարողանում է կենտրոնանալ, հիշել, թե ինչ պիտի ասի ինքը, յերբ «վերջին խոսքը» կտան իրեն։

Նա չի նկատում, թե ինչպես բոլորի հայացքներն ուղղված են իրեն, համակրական հայացքներ...

«Միայն «բարձր» ծառայողների մի խմբակ հմուտ թղթախաղների նման ծածկում են ամեն ինչ իրենց դեմքերի չեզոք արտահայտությամբ. չի իմացվում, թե ում կողմն են—Մաղաքյանի՞, թե Մեջլումյանի։

Որիորդ Աշխենը հազիվ է զսպում իր կատաղությունը։ Սկզբից անհամբեր սպասում էր Մեջլումյանին, բայց չեկավ (քանի որ ե չի տեսել). «Մի գար, տապալեր էս մութը կիտած փիլիսոփային... Ինչի՞ համար են ապրում եսպես մարդիկ, վորոնք միայն ուրիշներին խանգարում են... Ի՞նչպես լավ էր. նա սիրահարված էր ինձ վրա, իսկ այժմ...»։

Որիորդ Շողիկը զարմանում է, թե ինչո՞ւ այսպես փոխվել է Մաղաքյանի դեմքը. կարծես լուսավորվել է. ինչո՞ւ առաջ չէր նկատում, թե ինչ «հետաքրքիր» է յեղել. ուժեղ մարդ է յերևում. համարձակ դուրս կգա բոլորի դեմ. միթե չի վախենում կրճատումից...

— Ընկեր Մաղաքյան... դիմում է նախագահը։

Մաղաքյանը շփոթված, այրվող դեմքով գալիս կանգնում է նախագահի սեղանի մոտ. սիրտը բաբախում է ուժգին, կարծես մենամարտի յե դուրս գալիս։

— Ընկերներ, ամեն անգամ, յերբ խոսողները իմ անունն եյին տալիս, յես յերևակայում եյի մի ուրիշ Մաղաքյան, վորը նստած է ձեզնից ամեն մեկի մեջ։ Պատահակա՞ն էր արդյոք այն, ինչ վոր կատարվեց։ Վո՛չ, նա նույնքան անխուսափելի յէր, վորքան է այն, վոր գիշերը հեռանում է ցերեկին, վորովհետև մի շարք մարդկանց համար այս նոր աշխարհը մի յերկարատև մղձավանջ է, մի թյուրիմացություն... Բայց ինձ միշտ այրում էր մի միտք՝ վոր մեր մեջ են ննջում այդ խայթող հերոսները։ Նրանք ննջում են այն ընկերների հնացած սրտերում, վորոնց մեջ այսօրվա դատի ժամանակ չկար բողոք, այլ չեզոքություն, անտարբերություն... Սակայն, ընկերներ, այս առկայծող ժամանակներին է ահա, վոր յերևան է գալիս Անխուսափելին... մեր ժամանակի մեծ խորհուրդը, այն հզոր պայքարը, վոր անթեղած ապրում է ամեն աշխատավորի կրծքում... Նա բռնկվում է, հրդեհում, յերբ ժամն է հնչում... Այստեղ Մաղաքյանի գործը չէ, վոչ էլ Մեջլումյանի, այստեղ խոսում է հզոր Անխուսափելին... Նա հետևում է մեզ ամեն մի քայլում։ Թեկուզ յոթը սարի յետևում թաքնվեք՝ նրա ալիքները ձեզ կհասնեն... Այսուհետև ամեն ինչ նրա օղակի մեջն է...

Ն. ԹՈՐԳՈՄՅԱՆ

ՀՈՐՁԱՆՔՈՒՄ

(Ընկերոջ հուշատետրից)

(Հատված „Հորձանքում" գրվածքից)

I

Զինային նորից հանդիպեցի փողոցում, յերբ նրան տանում եյին զինավոր յերկու սպիտակ զինվորներ։

Մեջտեղից էր քայլում։ Հագել էր մոխրագույն կարճ շրջազգեստ։ Հնամաշ գլխարկի վրա աչքի յէր զարնվում կարմրավուն, խունացած ժապավենը։ Նիհար, բայց գրավիչ դեմքն արտահայտում էր վեհություն և վճռականություն։

Չեյիր կարծում, թե ձերբակալված է։ Հանդարտ յերթն ու դեմքի խաղաղությունը ներքին հուզմունք չեյին ցուցադրում։

Բազմությունը ճեղքելով ավելի մոտ գնացի՝ նրա ուշադրությունը գրավելու համար։ Նկատեց։ Մի պահ անխոս հայացքն յեկավ ծանրացավ վրաս։ Գլխով թեթև բարևեց։ Զինվորները նշմարեցին նրա բարևը և ծուռ-ծուռ նայեցին իմ կողմը։

Զինան ժպտաց և ձեռքի թեթև շարժումով հասկացրեց, վոր չմոտենամ իրեն։ Աչքերի կապտավուն տարածության մեջ, ինչպես հանդարտ ու անփոթորիկ ծով, իմ ծանոթ ժպիտն էր, մեղմ ժպիտը...

Հետևեցի նրան քայլ առ քայլ, մխրճվելով բազմության մեջ, քայլելով մայթի յերկայնքն ի վար։

Պահակների սվինները արտացոլում եյին արևի բարկ ցոլքերը և պսպղում ինչպես արծաթ։ Արևի շողերի տակ պատկերվում էր նրա գլխարկի խունացած ժապավենը, ինչպես իրիկնապահին յերկնքի կապույտ լանջին ձգված ամպի մի փոքրիկ պատառ։

Սվինները վերջին անգամ էլ շողացին յերկաթյա ցանկապատով շրջապատված քարաշեն շինության առջև։ Կարմիր ժապավենը մի վայրկյան նշմարվեց շենքի մռայլ դարբասում և ծածկվեց այնտեղ...

II

Զինային ազատելն ինձ համար դարձավ կենտրոնական միտք։ Սակայն այդ քաղաքում շատ քիչ ծանոթներ ունեյի, համարյա մի քանի մարդ։ դրանց մեջ էր նաև իմ հայրենակից առևտրական Ավագովը։ Վերջերս նրա տանը մի մեծ խնճույք կար, վորտեղ յես ծանոթացա քաղաքի հետախուզական բաժնի պետի օգնական գնդապետ Շեչենկոյին։ Ավագովի դրացին էր

և լավ կոնծող: Քեֆի ժամանակ նստել էր կողքիս և սիրալիր զրուցում հետս, կարծես հին ծանոթներ լինեյինք: Գինու լիքը բաժակը դնում էր բերնին, աչքերը կկոցում քնաթաթախ մարդու պես, ծծում լի ու լի և ասում.

— Ախր, պալուբչիկ մոյ, կուլ տուր. աշխարքիս մեջ ամենալավ բանը կոնծելն է...

Սակայն այն, որ նա հետախուզական բաժնումն էր ծառայում, բավական էր, որ ներքին բուռն ատելությամբ լցվեյի դեպի նա: Յեվ յես այդ քեֆից հետո վորոշեցի էլ յերբեք չայցելել հայրենակցիս և չհանդիպել նրա բնակարանում ապրող գնդապետ Շեշենկոյին:

Զինայի ձերբակալումն առիթ հանդիսացավ ոգտվելու ծանոթությունից: Նախ դիմեցի հայրենակցիս: Անուշեղենի նրա մեծ և ընդարձակ խանութը գտնվում էր կենտրոնական փողոցի ամենաբանուկ վայրում, պետական թատրոնի դեմ առ դեմ: Ինչ թանկարժեք խորտիկներ, զանազանատեսակ քաղցրավենիք, անուշեղեն ասես կճարեյիր այնտեղ: Ապակյա ինչ գեղեցիկ գզրոցներ, հայելածածկ պահարաններ, վորքան լույս ու լուսավորություն: Ութը ռուս որիորդներ վոտքի վրա, հայելիների և ապակիների արանքում, աշխատում եյին ու վաճառում շարունակ:

Հայրենակիցս կարճահասակ, փոքրիկ, թուխ դեմքով, շարժուն, խաժ աչքերով մարդ էր. շարունակ առևտրի, դրամի ու ապրանքի մասին մտածող ու խոսող: Մաքուր, շիկ հագուստը, ամերիկյան մոխրագույն գլխարկը, խոշոր, ադամանդակուռ մատանին ցույց եյին տալիս, վոր դրպանը պանկեպռունկ լցվել է: Նա առանձին աշխատանք չուներ, բացի հսկող, սուր աչք լինելուց: Ձեռները գրպանում կամ ժամացույցի վոսկյա շղթայի հետ խաղալով զբոսնում էր խանութում և դիտում գործակատար աղջիկների շարժումները, թե չլինի գաղտնի կերպով շաքարահաց ուտեն, ապրանքն ավել կշռեն կամ պակաս հաշվեն:

Հեքիաթի պես պատմում եյին, թե ինչպես Ավագովը ամեն գիշեր, նախքան խանութ կողպելը, մանրազննին խուզարկում էր ծառայող աղջիկների գրպանները և ապա ճամբու դնում: Պատմում եյին նույնպես, վոր նա դիտմամբ ընտրում էր գեղեցիկներին, վորպեսզի շատ հաճախորդներ գրավի և վորպեսզի... Սատանան տանի, խոսում եյին, և յես հավատում եմ այդ ասեկոսեներին, քաջ ծանոթ լինելով հայրենակցիս բնավորության «լավ» գծերին:

Յես ու Ավագովը վոչ միայն համաքաղաքացի եյինք, այլ և միասին սովորել դպրոցում:

Նրան կանչում եյինք Գիժ Մկո: Դպրոցում վատ էր սովորում, չափազանց ծույլ էր և չարաճճի: Ընկերների նախաճաշերը գողանում էր և թաքուն ուտում: Յերբ դասարանից դուրս էր արվում, կանգնում էր դռան մոտ և բարձրաձայն այնպես սրտակտուր հեկեկում, վոր դասատուն ձանձրացած կրկին ներս էր բերում նրան: Մի կերպ ավարտեց դպրոցն առանց կարգին գրել-կարդալ իմանալու: Յեվ յերբ հարցնում եյիր՝ «Մուկուչ, վո՞րտեղ ես սովորել», ասում էր՝ «Վերջացրել եմ այսինչ միջնակարգ դպրոցը». իսկ յերբ

գիրքը տալիս եյիր ձեռքը և առաջարկում կարդալ, այնպես դանդաղ ու վատ էր կարդում, վոր կարծես քարքարոտ տափաստան վարող գութան լիներ:

Այժմ այդ վողորմելի Գիժ Մկոն դառել է Նիկիտ Սերգեյիչ Ավագով— հարուստ, յերևելի մարդ:

Վո՞րտեղից և ինչպես մարդամեջ անցավ Գիժ Մկոն:

Ասում եյին, թե պատերազմի ժամանակ քաղաքից քաղաք ապրանք է տեղափոխել, ուրիշների առևտրական հանձնարարությունները կատարելով զբաղվել: Ապրանքների հարափոփոխ գներից և հեղափոխության առաջ բերած վայրիվերումներից ոգտվել է և լավ դրամ դիզել: Յեվ ահա այժմ այս խոշոր խանութն ունի, որ ու գիշեր հաճախորդներով լիքը, սեփական տուն ունի և ուրիշ առևտրական գործարքներ:

Նիկիտ Սերգեյիչի հայրը—Սերգո բիձան, վոր մեր քաղաքում հացթուխ էր, այժմ խանութի ներքնամասի անուշեղեններ յեփող փուռն է աշխատում: Իսկի չի փոխվել, էլի նույն խոժոռադեմ, ծուռ վոտներով մարդն է, հին որերի պես վատ հագնված, թափթփված, փոշեթաթախ: Յերբ այս ու այն գործով դուրս է գալիս, ուսերին նստած է լինում ալրափոշի, ինչպես նաև չսափրած դեմքի և հոնքերի մազերին: Յեթե հարցնես՝ «Սերգո բիձա, վո՞նց ես», թուխ, ակոսավոր դեմքի կնճիռներն ամփոփելով, արտասվել պատրաստվող մարդու պես, ուսերը վեր քաշելով պատասխանում է.

— Է՜, յեղբայր, ինչ ես հարցնում. շատ դժվար ենք յոլա գնում, շա՜տ...

Վոր տարին, վոր որը, ինչ վիճակում էլ հանդիպեք նրան, թեկուզ վոսկու մեջ շաղ տված, Սերգո բիձան միշտ միևնույն լալկան դեմքն ունի և նույն տխուր յերգն է հնչում նրա շրթունքներին:

Վորդին հոր մանրանկարն է, ավելացնելով շիկ, փառավոր հագուստն ու կարճ հասակը:

Ինձ տեսնելով Նիկիտ Սերգեյիչը մի սառը թուշ ունեցող դեմքին ժպիտ հյուսեց, իբր թե ուրախացավ:

— Հո՜, եդ դո՞ւ ես, չես յերևում, մեզնից հեչ բան չես գնում, յեղա՜վ...

Յես հավատացրի նրան, վոր սաստիկ զբաղված եյի, դրա համար չեյի յերևում և այսուհետև կայցելեմ հաճախ, ապա անցա բուն նյութին: Խնդրեցի նրան միջնորդել Զինայի համար գնդապետի մոտ: Աչքերը լայն-լայն բացած նայեց ինձ.

— Խոմ բոլշևիկ չի՞, դրուստ խոսիր:

— Ինչ բոլշևիկ, — ասացի համոզիչ ձայնով, — յեթե այդպիսին լիներ, քեզ կդիմեյի՞:

— Յեթե բոլշևիկ է, թող նստի, թող նրանց քոքը կտրվի էս աշխարքից...

Նիկիտ Սերգեյիչի փոքրիկ մարմինը դողաց և բարկությունից շառագունվեց թուխ դեմքը: Յես կրկին հավատացրի, վոր միամիտ մնա Նիկիտ Սերգեյիչը, բոլշևիկի համար չեմ դիմում:

— Բա ինչի՞ յեն բռնել:

— Հեչ, կասկածով, ուրիշ վոչինչ: Իսկի չի՞ կարող պատահել, վոր սխալ-

մամր անմեղ մարդի բանեն մեղավորի փոխարեն,— ասացի յես սառնարյուն, ներքնապես տհաճություն զգալով, վոր ստում եմ:

Նիկիտա Սերգեյիչը մի պահ լռեց, ապա կիսախուփ աչքերի մեջ սուզելով պստլուն բիբերը՝ ավելացրեց.

— Հը՛մ, եղ քո խնդրածի համար արժե՞ գլուխ ցավեցնել, լա՛վ ապրանք է, մեզ էլ խե՛… խե… փող կհասնի…

Աչքերս մթնեցին, և յես մեծ ճիգով զսպեցի ինձ հավասարակշռությունս պահպանելու համար: Հենց ուզում եյի յետ դառնալ, չընդունել այդ լըրբի միջնորդությունը, բայց նա կարծես զգալով իմ ջղայնությունը՝ թևս բըռնեց և մտերմաբար ասաց.

— Լա՛վ, լա՛վ, մի նեղանա, յեղբայր, կխոսեմ գնդապետի հետ. այսօր յերեկոյան անպայման կխոսեմ, վաղը ինքդ գնա նրա մոտ, տես ինչ կասի:

Հետեյալ օրը, յերբ գնացի, գնդապետը տանն եր: Նա բնակվում եր Ավագովի հարկաբաժնում, մի ընդարձակ, լավ կահավորված սենյակում: Սիրալիր ընդունեց ինձ. հարցրեց առողջությունս, հրավիրեց նստել և ասաց.

— Յե՛րբ եյի խմենք, գալուբչիկ մոյ, մի լա՛վ կոնծենք…

Յեվ նրա մսոտ, հազար ու մի դար ու փոս ունեցող դեմքը կծկվեց, կանաչ աչքերը փոքրացան, կորան դեմքի ծալքերում:

Խոստացա նրա համար մի լավ քեֆ սարքել: Ձեռքն ուսիս դրեց և կոկորդի միջից խրխռաց.

— Կեցցե՛ք, յերիտասարդ պարոն, ապրե՛ք: Ա՛յ, հավանում եմ ձեզ՚նման դարդիման մարդկանց, վորոնք մտնում են մեր դրության մեջ: Դե՛հ, գիտեք եյի, ռաճկավոր մարդ ենք, գինու, արաղի փողը միշտ պակաս է լինում…

Մի պահ այսպես կողմնակի հարցերի մասին խոսելուց հետո անցա բուն նյութին: Յերբ խոսք բացի Զինայի մասին, գնդապետի դեմքը խոժոռվեց և լուրջ արտահայտություն ստացավ:

— Հը՛մ, գիտեմ ում մասին է ձեր խոսքը: Ավագովն էլ ինչ-վոր խոսեց նրա մասին: Միջահասակ, նիհար աղջիկ է, չե՞:

— Այո՛, հենց նա յե:

— Դա՛, նու, սանեք բավական լավիկն է, չե՞, խե՛, խե՛, խե…

Փոս ընկած, կանաչ աչքերի մեջ պլպլաց ինչ-վոր փայլ: Իսկ կոկորդում հյուսվեց մի աններդաշնակ, խռպոտ քրքիջ:

— Ասացեք խնդրեմ, ինչո՞ւմն եք մեղադրում նրան:

— Ինչո՞ւմ, խը՛, խը՛,— հազաց գնդապետը և ուսերն այնպես մոտեցրեց իրար, կոլոլվեց, վոր պահ մի ինձ թվաց, թե թիկնաթոռի վրա մի գնդաձև յուղի պարկ է դրված:

— Պապիրոս ունե՞ք,— հարցրեց շրթունքների արանքից:

Յես նրան հյուրասիրեցի ընտիր տեսակի ծխախոտով, վոր հատկապես գնել եյի նրա համար. առանց շնորհակալություն հայտնելու վերցրեց և սկսեց ագահորեն ծխել:

— Ինչն է ստիպում ձեզ հետաքրքրվել, թե ինչու յենք ձերբակալել և վորտեղից եք ճանաչում նրան,— ասաց նա սուր-սուր նայելով աչքերիս:

«Ի՞նչ պատասխան տամ, սատանան տանի, կարող եմ յես էլ ծուղակն ընկնել. ասե՞մ, վոր Զինան կարմիրների ժամանակ ինձ ազատել է մահից… Բայց դրանից կարող են նորանոր խնդիրներ ծագել, յերկար-բարակ հարցեր պիտի սկսի տալ…» մտածում եյի շփոթված՝ հայացքս հեռացնելով նրա համառ աչքերից:

Յես հայտնեցի, վոր Զինային պատահաբար եմ ծանոթացել, պատահական բան, թող միամիտ մնա Վասիլի Պետրովիչը…

— Հը՛մ,— մի պահ լռեց. ծանր խնդիր եր լուծելու:— Ախը՛ր, նա համարվում է կասկածելի անձնավորություն, պետք է զգույշ մնալ:

— Ինձ չի յերևում, վոր նա կասկածելի անձնավորություն է, յերևի սխալվել են, ուրիշի նմանեցրել,— պատասխանեցի յես և ընդունեցի այնպիսի դեմք, վոր կարելի յեր ամբողջովին հավատալ ասածներիս անկեղծությանը:

— Ե՛հ, յերիտասարդ պարոն, ինչպես յերևում է, դեռ շատ անփորձ ու միամիտ եք, ձեր ծանոթներին լավ չեք ճանաչում:

— Յես նրան լավ չեմ ճանաչում, բայց թվում է, թե նա այդպիսին չե:

— Գիտեմ, գալուբչիկ մոյ, գիտեմ, դուք նրան ճանաչում եք ուրիշ կողմից… խե՛, խե… Դե, բավական անուշիկն է, ինչ արած, խե՛, խե՛, խե…

Ամբողջ մարմնովս անախորժ դող անցավ, տեսնելով նրա դեմքի լկտի արտահայտությունը, բայց ինչ արած, գործի աջողության համար պետք է զսպեյի ինձ:

— Յեթե դուք նրան մի կերպ ազատեք, Վասիլի Պետրովիչ, շատ յերախտապարտ կթողնեք ինձ:

— Դժվար է, հոգյակս, շատ դժվար, անկարելի բան…

— Շատ կպարտավորեցնեք ինձ, Վասիլի Պետրովիչ:

— Նու, դա… կոպտորեն խրխռաց գնդապետը, ինչպես չվանը վզին պինդ կապած հորթը, մաժեց սափրած ծնոտը, մի պահ լռեց, ապա մի փոքր կռանալով իմ կողմը, կանաչ աչքերն անթարթ բևեռեց վրաս և խորհրդավոր շշուկով ասաց.

— Դրա համար, գիտեք եյի, սա յե պետք,— բթամատով մի քանի անգամ տրորեց ցուցամատը,— թե չե բանը գլուխ չի գա, սիրելիս, աղջիկդ կուղարկենք, խե՛, խե…

Ծիծաղեց և ցույց տվեց յերկինքը, հետո նույն խորհրդավոր շշուկով շարունակեց.

— Ինձ համար չե, գիտե՞ք, յես ձեր խաթրու կանեմ ամեն ինչ: Բայց ինձանից չի կախված, դրամն ուրիշի համար եմ ուզում, գալուբչիկ մոյ, ուրիշի համար…

Խոստացա: Նա խորասուզվեց թիկնաթոռի մեջ, մտազբաղվեց: Իսկ մեկնելուս ժամանակ մտերիմ ժպիտով ճամբու դրավ ինձ:

III

Գնդապետ Շեչենկոն իր խոստումը կատարեց, թեև բավական թանկ գնով:

Հիշում եմ, յերբ դրամի ծրարը ավի նրան, մատը շրթունքներին դրեց, կռացավ դեպի ինձ և, շնչառությամբ ծխախոտի մի պաղ ու անխորժ գոլորշի թափելով վրաս, ասաց.

— Բայց մարդ չիմանա, հա՞, թե չե ձեզ համար վատ կլինի։ Փոքրիկ կասկած, կասենք բոլշևիկ ես ու պրծա՛վ…

Վորոշյալ որն անցա բանտի նեղ փողոցով. նայեցի մառայլ շինության բարձր պատերին, վորոնց վրա փոքրիկ, յերկաթակուռ լուսամուտները նմանվում եյին վճռագործի արնակալած աչքերի։ Ո՞վ գիտե, վոր լուսամուտի մառայլ սավերում եր կանգնել Զինան ու իմ քայլերը համրում…

Գորշ ամայություն եր թագավորում այդ յետընկած փողոցում, վորտեղ որական հազիվ մի քանի անգամ պաշարակիր սայլը կամ ավտոմոբիլը իրենց ծանր դղրդոցով մի պահ խզում եյին շրջապատի լռությունը։

Զգիտեմ, վորքան անցուդարձեցի փողոցի յերկայնքն ի վար, յերբ արևի վերջին ցոլքերը մարեցին աների բարձր կատարներին։ Յերկինքը մույգ թանաքի գույն ստացավ, իրիկունը իր բազմահազար սավերներով կամացուկ իջավ քաղաքի վրա և աննկատելիորեն սողաց ամեն մի անկյուն։

Ահա և Զինան, վոր հանդարտ քայլերով, բեզարած ճամբորդի պես գալիս և դեպի ինձ։ Գլխարկի ժապավենը հեռվից նշմարվում և ինչպես մի փոքրիկ, կարմիր բիծ։

— Զինա…

Կանչեցի և ուրախության արցունքներով թրջվեցին աչքերս։ Կարծես վաղո՜ւց չտեսած հարազատ քրոջս եյի հանդիպում։

— Բարև՛, ընկեր Արամ, ինչպես ես,— ասաց հանդարտ և փոքրիկ ձեռները հանձնեց ինձ։

— Յես անհամբեր սպասում եյի, թե յերբ կազատվես այն վորջից,— ասացի ջերմությամբ սեղմելով նրա ձեռները։

— Սոսկալի տանջարանից ասա,— վրա բերեց Զինան, գլխի մազերն ուղղեց և մի պահ լռելուց հետո շարունակեց.— Եհ, ինչ արած, հանցանք շատ եյի գործել, պետք և պատժվեյի…

Քաթանի պես գունատ դեմքին պատկերվեց ժպիտ և իրիկվա մթնշաղի մեջ աչքերը փայլփլեցին պայծառ։

— Եդ բոլորը դատարկ բաներ են. դու ասա տեսնեմ, ինչ կա-չկա, մերոնցից ինչ լուր. լրագրերն ինչ են գրում ռազմաճակատի մասին։

Նա ավելի անդորր եր, ավելի գործնական, քան յես։ Հաղորդեցի մի քանի տեղեկություններ, թե ինչպես Դենիկինի զորքերը հաղթականորեն առաջ են շարժվում, հասել են մինչև Կուրսկ։

— Կո՞ւրսկ… բացականչեց Զինան և դեմքին իջավ մառայլ ամպ։

— Այո, մինչև Կուրսկ… այժմ Դենիկինը պատրաստվում և արշավել կարմիր Մոսկվի վրա։

— Հը՛մ — կանչեց Զինան հեգնորեն,— այդ նրան յերբեք չի աջողվի, Մոսկվայի պրոլետարիատը նրա գլուխը կջախջախի, յերբեք չի թողնի գրավել ռուսական հեղափոխության սիրտը…

Մառայլ ամպը փարատվեց դեմքից և նա փոխվեց.

— Քանի բանվորն ու աշխատավոր գյուղացին մեզ հետ են, մենք կհաղթենք, ընկեր Արամ…

Յեվ այնպես վճռական, այնպես հանդիսավոր նայեց ինձ, վոր կարծես հաղթական կռվից դարձող ռազմիկ լիներ։

Մենք նստեցինք տրամվայ և ուղևորվեցինք Դուբինկո՝ Զինայի հորաքրոջ մոտ։

Զինայի հորաքույրը, Վարվառա Նիկոլաևնան աչքերին չհավատաց, յերբ հանդիպեց յեղբոր աղջկան։ Գիրկն առավ նրան, կարոտալին համբուրեց. ուրախության արցունքները թրջեցին տամուկ աչքերը։

— Ա՜խ, Զինա, հրաշք բան և, դու ազատվա՞ծ… Որեցոր սպասում եյի, վոր քեզ մի վատ բան կպատահի, իմ անգին Զինա…

— Ինձ ազատեց մեր ընկեր Արամը, թե չե սպիտակների ճանկերից պրծնողը չեյի,— ասաց Զինան ժպտուն հայացքն ուղղելով ինձ։

Նրա աչքերին շատ նման հորաքրոջ աչքերը մի պահ կենտրոնացան վրաս և յես նրանց մեջ կարդացի յերախտագիտության անհուն զգացմունք։

Հոգնած լինելով՝ Զինան իսկույն տեղավորվեց թախտի վրա և կռնակը հենեց թավշապատ բարձին։ Յես ու Վարվառա Նիկոլաևնան տեղավորվեցինք սեղանի շուրջը։ Մի փոքրիկ սենյակ եր նրանց բնակարանը, անշուք կահավորված, ցած առաստաղով։

Զինան պատմեց, թե ինչպես ձերբակալեցին իրեն։

— Թատրոնից գալիս յերկրորդ օրը ձերբակալեցին ինձ, խուզարկեցին սենյակս, բայց բան չգտան։ Առանձին մեղադրական փաստեր չկային, բացի կասկածանքից։ Քանի՜, քանի՜ անգամ ինձ տարան և մահվան սպառնալիքի տակ պահանջեցին խոստովանվել։ Ինչ-վոր հեքիաթներ եյին հյուսել շուրջս, պատմում եյին և դրանով ուզում եյին գլուխս խաբել և մի բան կորզել։ Բայց յես, ի հարկե, կաթնակեր յերեխա չեյի, վոր մի բան անգամ հայտնեյի այդ հիմար գլուխներին։ Զարմանում եյին, վոր այնքան համառ եմ, սակավախոս. ատամները կրճտում եյին, բայց ի զո՜ւր… Վերջին անգամ ինձ տարան մի ճարպագունդ սպայի մոտ, վոր քեզ ճանաչում և…

— Գնդապե՞տ եր,— հարցրի յես կտրելով նրա խոսքը։

— Այո՛, նա ինքն ասաց, վոր քեզ ճանաչում և, և պահանջեց խոստովանվել, թե ինչպես ենք յես և դու ծանոթացել իրար հետ և ինչ կապ կա մեր միջև. յես հայտարարեցի, վոր քեզ հետ պատահական ծանոթություն ունեմ և մենք իրար լավ չենք ճանաչում։ Բայց նա համառ եր, դաժան ու բիրտ. վոտները խփում եր գետին և գոռգոռում, թե «եսենց կանեմ, ենենց, յեթե ճշմարտությունը չպատմես»… Արյունախում աչքերը զարզանդ եյին պատճառում մարդուս, բայց յես ավելի համառ եյի, քան նա։ Այդ նույն մարդը վերջին օրը այնպես եր փափկել, քաղաքավարի դարձել, վոր ծիծաղս հազիվ եյի զսպում, տեսնելով նրա խոզի պես ճարպակալած մարմինը։ Նստեցրեց կողքին, հայրաբար խրատ ավեց, վոր զգույշ լինեմ, խելոք պահեմ ինձ, հա՛, հա՛… վոր իբր իմ «կավալերը», այսինքն դու, ինձ

յերաշխավորել ես, կարող ես իմ պատճառով վտանգվել, յեթե խելոք չմնամ... Իսկ թե ինչ հիմարություններ կարող եյի գործել, այդ մասին բան չասաց: Այնպես եր խրատում, իսկ ճոռթած աչքերը քաղցած ագռավի պես ինձ բևեռած պահում. մազ մնաց ապտակ հրամցնեյի նրա դալ ու փոս դեմքին... Հետո կարգադրեց իրերս վերցնել և հեռանալ բանտից: Արժեր միթե այդ գայլերին գնալ ու խնդրել...

— Այսինքն ինչպես,— հարցրի յես, չհասկանալով նրա խոսքերի իմաստը:

— Ասում եմ, արժեր դիմել այդ գայլերին և խնդրել, թե ինչ է յես կազատվեմ:

— Ուզում եյիր փախել այնտեղ, ինչ է,— ասաց հորաքույրը զարմացած:

— Չե, ի հարկե. ով կուզենա նստել այդ մեռելատանը և մաշվել: Բայց դե մարդս զզվում է այդ դահիճների անունը տալ, ուր մնաց գնալ ու խնդրել նրանց:

«Իսկ յեթե իմանա, վոր դրամական զոհողություն ել է յեղել նրան ազատելու համար, ո՛, վորքան պիտի հուզվի ու ջղայնանա Զինան...» մտածում եյի յես և վորովհետև լավ եյի ճանաչում նրա բնավորության գծերը, մանավանդ նրա կամակորությունը, չհակաճառեցի:

Վարվառա Նիկոլաևնան թեյի պատրաստությամբ զբաղվեց: Նա մոտ վաթսուն տարեկան, մազերն արդեն սպիտակած պառավ եր: Տարիների դաժանությունը կքել եր նրա կռնակը և դժգույն դեմքին փորել բազմաթիվ ակոսներ: Միայն աչքերի մեջ անաղարտ եր մնացել անսահման բարությունը մանկան միամիտ ժպիտը:

Ձեռները գլխատակին, Զինան նայում եր ինչ-վոր անորոշ կետի: Սեղանի վրա դրված փոքրիկ լամպի լույսը վողողել եր նրա գունատ դեմքը, ծիրանեվառ փայլ ընդունած այտերը և քունքերին ինկած խարտյաշ մազերի ծոպերը: Անորոշ կետից չանջատվող աչքերի մեջ ինչ-վոր թախծոտ մտորում կար: Ինչ եր արդյոք այդ րոպեյին զբաղեցնում նրան,— բանտային կյանքից ծանր հիշողություննե՞ր, թե անցյալից ինչ-վոր մասը վերհիշում...

Գլուխը վերցրեց բարձից, թափահարեց և կարծես տխուր անուրջի միջից մրմնջաց.

— Բայց ինչ ազնի՛վ գնդակահարվեցին բանտում, ինչ անձնվեր ընկերներ, վոր իմանայիր...

Դարձյալ գլուխն ինկավ բարձին: Դեմքը մշուշվեց, փայլատակեց և արտահայտեց ներքին ծով հուզմունք: Այդպիսի արտահայտություն եր ընդունում նրա դեմքը, յերբ նա խոսում եր վորևե անհաջողության կամ ընկերների գնդակահարության մասին:

Թեյի ժամանակ Զինան համեմատաբար ավելի հանգիստ եր և կենսուրախ: Սկսեց հորաքրոջը պատմել ինձ հետ ծանոթանալու պարագաները:

— Նախանցյալ տարի ամառն եր, յերբ Արամին առաջին անգամ հանդիպեցի Արմավիրում, քաղաքացիական կռիվների թունդ ժամանակը, յերբ մերոնք վոգի ի բռին աշխատում եյին Արմավիրը պահել իրենց ձեռքին՝

վորպեսզի Յեկատերինոդարից—Նովոռոսիյսկ—Տուապսե—Մայկոպ գծով նահանջող կարմիրների գիծը չկտրվի և չընկնեն սպիտակների մահափյուռ ողակի մեջ: Այն ժամանակ Արամը թերահավատ եր, կասկածում եր, թե հնարավոր լինի Ռուսաստանի նման յետամնաց յերկրում հաստատել կոմմունիստական կարգեր: Մինչ յես շարունակ հակառակն եյի պնդում: Չգիտեմ այժմ ել նույն թերահավատն է Արամը, բայց այն ժամանակ շատ թունդ եր վիճում հետս, բավականին համառ եր:

— Կարծեմ դու ավելի համառ եյիր՝ քան յես, քեզ համոզելն անկարելի բան եր: Նույնիսկ կարմիրների նահանջի վերջին իրիկուն, մոտ բարևելիս դարձյալ պնդում եյիր, վոր շուտով կոմմունիզմը կատարելապես կհաղթանակի Ռուսաստանում, հիշո՞ւմ ես:

— Այո, հիշում եմ, այսօրվա պես պայծառ հիշում եմ: Յեվ այժմ ել, սպիտակների տիրապետության և հաղթանակի այս օրերին, պնդում եմ իմ ասածները, վոր շուտով կոմմունիզմը կհաղթանակի վոչ միայն Ռուսաստանում, այլ և ամբողջ աշխարհում...

— Ե՛, յերեխեք, իզուր եք վիճում, մերոնք աղքատ են, քաղցած, տկլոր, իսկ գեներալներն ու հարուստները փող ունեն, ույժ, նրանց վոչ վոք չի կարող հաղթել, ե՛խ, ե՛խ... հառաչեց պառավը շարժելով ձյունածածկ գլուխը:

Այնուհետև քիչ ել խոսեցինք դեսից-դենից: Ուշ յերեկո եր արդեն, յերբ մեկնեցի տուն:

Զինան վոչ մի տեղ չեր յերևում. ուր եր գնում, ինչու՝ հայտնի չեր: Վարվառա Նիկոլաևնան ել զանգատվում եր, վոր Զինան տանը չի նստում.

— Գնում է, հա գնում, իսկի չի ասում ուր...

Զինան վոչ վոք չուներ հարազատ, բացի Վարվառա Նիկոլաևնայից, վոր ապրում եր մենակ. յերկու վորդիները՝ Վալոդիան ու Միշան, վորոնք մասնակցել եյին քաղաքացիական կռիվներին, փախել եյին կարմիրների հետ:

— Մի տեսնեք ինչ ջահել-ջիվան տղա յե իմ Միշան. Վալոդիան ել յետ չի մնում. յեթե նրանց կորցնեմ, Զինային ել մի բան պատահի, կմնամ բոլորովին մենակ ես աշխարքում,— ասում եր պառավը և ձեռներն իրար կցում:

Շարունակ տեղեկություններ եր հավաքում սպիտակների գործերի, ռազմաճակատի դրության մասին: Այդպիսի հարցերով նա դիմում եր Զինային, յերբ վերջինս տանն եր լինում:

— Ա՜խ, արդյոք մի անգամ ել կտեսնե՞մ վորդիներիս...

— Կտեսնես, հորաքույր, շատ դարդ մի անի, Միշան, Վալոդիան, մերոնք կգան շուտով,— հայտարարում եր Զինան դեմքին տալով հանգստավոր արտահայտություն և գորովագին գրկելով պառավի ալեմաղ գլուխը:

Զինան միշտ լուրջ եր, մտազբաղ, վորևե բարդ գործի նախաձեռնող մարդու պես: Հանգիստ եր և անխռով, կարծես վոչինչ չի պատահել և չի ել պատահի: Յերբ հետաքրքրվում եյի, թե ուր է լինում, ինչ է զբաղվում, խուսափողական պատասխաններ եր տալիս: Իզուր փորձում եյի համոզ-

նել, վոր վոչ վոքի չեմ ասի, յերբեմն եվ նեղանում էի նրա ծայրահեղ գաղտնապահության համար։

— Ախպեր, դու կուսակցական չես, — արդարանում էր Զինան այդպիսի դեպքերում, — իսկ անկուսակցականներին մենք չենք հավատում, թեկուզ նրանք թունդ համակրող լինեն մեզ։ Շատ կուսակցականներ անգամ անտեղյակ են մեր ներքին գաղտնիքներին. մենք խոժ սպիտակներ չենք, վոր «խաթրի համար» գործեր անենք, ինչպես արավ ձեր «բարեկամ» գնդապետը։ Մեր աջողությունը վոչ միայն մեր գաղափարի, այլ և մեր յերկաթյա, կուռ կազմակերպության մեջ է։ Մի անգամ ընդմիշտ պարզ պիտի լինի քեզ, վոր քանի դու մեր կուսակցության մեջ չես, մեր հոգիները հեռու յեն իրարից, շատ հեռու…

Նրա ծովածավալ աչքերում խաղաց մի ջերմ, մտերիմ ժպիտ…

IV

Տրամվայի վագոնից իջնելիս Զինան նկատեց ինձ և մոտեցավ։ Հագել էր նավաստու շոր, մազերն ամփոփել կաշվե գլխարկի տակ և դարձել անճանաչելի։ Զարմացած նայում էի նրան։

— Հը, սազում են շորերս, — ասաց նա հրճվագին։

«Սազելը սազում են, շատ յերիտասարդ նավաստու տպավորություն է թողնում, բայց վորտեղի՞ց է ճարել այդ շորերը» — մտածում էի, ու ինձ համար հանելուկ էր մնում նրա վարած կյանքը, թե ինչպես էր ապրում, ում հաշվին։

Քաղաքն այնօր ընդունել էր տոնական կերպարանք։ Լավ հագնված, շխշխկուն թրերով սպաներն անցնում էին հանդիսավոր քայլերով, ուրախ էին, մի քանիսը հարբած՝ հազիվ էին իրենց պահում վոտների վրա։ Յերգ ու աղմուկով նժույգներն էին քշում փափախներին սպիտակ ժապավեն կարած կոզակները։

Գլխավոր փողոցը հեղեղվել էր ծով բազմությամբ։ Ամբոխն շտապում էր դեպի մեծ հրապարակը։ Այնտեղ մի մարդ էին կախել և բոլորին թույլ էին տալիս գնալ տեսնելու։

Զինայի հետ ուղևորվեցի այնտեղ։ Հրապարակի կենտրոնում շինված փայտյա կախաղանից կախված էր փոշեպատ, պատառոտուն հագուստով մի մարդ։ Դեմքն սպիտակ, յերակներն ուռած, մազերը գլխին բիզ-բիզ ցցված։ Բերնից դուրս յերկարած լեզուն ատամներով այնպես էր սեղմել, վոր ծայրն ուռել և կապտել էր։ Յերկարաճիտ կոշիկներով վոտները գետնից հազիվ մի թիզ բարձրության վրա էին գտնվում։

Կրծքին մի փոքրիկ, քառակուսի տախտակ կար փակցրած, վորի վրա սև տառերով գրված էր.

«Ռուսաստանին և Կուբանին դավաճանելու համար»։

Զինան կռացավ դեպի ինձ և ականջիս շշնջաց.

— Ճանաչում եմ, Կալաբուխովն է, ռադայի անդամ Կալաբուխովը, Կուբանի ինքնորոշման գլխավոր ղեկավարներից մեկը…

Մաքուր ներկված մի կառք սլաց և կանգնեց կախաղանի մոտ։ Մեջը բազմել էր շիկ հագուստով, սպիտակ ձեռնոցներով, թավ ու սրածայր բեխերով մի վայելչակազմ տղամարդ։ Առանց կառքից իջնելու մի պահ դիտեց կախված մարդուն և ապա մոտ հրավիրելով պահակ յենթասպային բարձրաձայն ասաց.

— Յեթե բոլոր բոլշևիկներին և դավաճաններին այսպես մեկ-մեկ կախ տաք, այն ժամանակ միայն աշխարհը կխաղաղվի…

Այդ ցասկոտ հայտարարությունը միայն յենթասպայի դեմքից քաղեց մի հլու, կամակատար ժպիտ. մինչ ներկա յեղող քաղաքացիները լուռ էին, շատերի դեմքերը մռայլ ու գունատած…

Յետ դարձանք։

— Հը՛մ, — մրմնջաց Զինան ճանապարհին, — հիմարը կարծում է, թե բոլոր բանվորներին կարելի յե կախ տալ, չի իմանում, վոր վերջը յեկել է։ Ճանաչեցի՞ր նրան։

— Վո՛չ։

— Դա կնյազ Սոկոլովն է, մի քանի հազար դեսյատին հող ունեցող հայտնի կալվածատերը։ Կարմիրների ժամանակ փախավ Կ. Պոլիս, իսկ հողերն անցան գյուղացիների ձեռքը, վորոնք մշակում և օգտվում էին։ Այժմ սպիտակների շնորհիվ վերադարձել է և յետ խլել իր հողերը, և կարո՞ղ ես յերևակայել, վոչ միայն յետ խլել, այլ յերկու տարվա հասույթն էլ է պահանջում պատերազմից և քաղաքացիական կռիվներից արյունաքամ յեղած գյուղացիներից։ Ասա խնդրեմ, վո՞ր ռուս գյուղացին կգնա դրա և դրանմանների համար արյուն կթափի…

Լայնարձակ ծառուղով դիմեցինք դեպի քաղաքային այգին։ Շուրջ բոլորը հնչում էին կանացի ուրախ քրքիջներ և հարբած սպաների աններդաշնակ յերգեր։

Տրամադրությունս ճնշված էր. կախված մարդու արյունաքամ դեմքը, հավիտենապես փակված աչքերը մղձավանջային տեսիլքի պես հետևում էին ինձ։

Մեր կողքից կանանց հետ թևանցուկ, քրքջալով և բարձրաձայն խոսելով անցան յերկու սպա։ Կոշիկների կրնկակալներն այնպես էին չխկում մայթին, ինչպես նոր նալած ձիու սմբակները։ Պատառոտուն շորերով յերեք զինվոր գալիս էին դիմացից. սպաներին տեսնելով նրանցից յերկուսը զինվորական բարև տվին, իսկ յերրորդը, չգիտես ինչու՝ չբարևեց, թվում է, թե չնկատեց։ Սպաներից մեկը, թողնելով դամայի թևը, առաջ անցավ վայրագ դեմքով և կտրեց զինվորի ճանապարհը։ Լսվեց ապտակի մի ուժգին շառաչ։ Ապտակահար զինվորը, վոր միջահասակ, կիսամերկ մի յերիտասարդ էր, ձեռքով տրորեց կարմրակալած յերեսը և, ցավի՞ց թե բուռն զայրույթից, կծկվեց, ապա ճակատին ուղղված տեսնելով ատրճանակի փողը՝ աղաչագին ձայնով ասաց.

— Ներեցեք, ի սեր աստծո, չնկատեցի, ձերդ…

— Ա՛խ, դու շա՛ն վորդի, չնկատեցիր հա՛, յես քո…

Սպայի դեմքը կատաղությունից սփրթնել էր, աչքերից ցայտում էին մահաշունչ կայծեր։

Մյուս զինվորները լարի պես ձգված սպասում էին։

Յերկրորդ սպան և կանայք միջամտեցին և մի կերպ համոզելով հանգստացրին գազազած զինվորականին, վորը ատրճանակը տեղավորելով պատյանում, մի քանի անգամ հայհոյեց և մյուսների հետ առաջ անցավ։ Կանայք բրբջացին արծաթահնչյուն ձայնով. վոգևորվել էին իրենց կավալերի սխրագործությունից։

Իսկ զինվորները մի մոլեգին հայացք գցելով նրանց յետևից, ատամները կրճտացնելով շարունակեցին իրենց ճանապարհը։

— Հը՛, հավանեցի՞ր այդ յերիտասարդ ջենտլմենի քաջագործությունը,— հարցրեց Ջինան ծով բարկությամբ լցված աչքերը հառելով ինձ։

— Վոչինչ, խոսք չկա գրվատելու։

— Ի՞նչ ես կարծում, յեթե ապտակված զինվորը զենք ունենար, չէ՞ր գնդակահարի այդ հանդուգն սպային։

Յես ուսերս վեր քաշեցի։

— Ընկեր,— ավելացավ Ջինան.— չնկատեցի՞ր, թե ինչպիսի ցասումով բոցկլտում էին զինվորի աչքերը և ինչպես ձեռները բռունցք կազմած անզորությունից սղմվել էին կողքերին. յես այդ նկատեցի...

Բարձրահասակ, թևատարած ծառերի մի ընդարձակ տարածություն է ընդգրկում քաղաքային այգին, վորը կանաչ թևերը պարզած հյուրընկալեց մեզ իր զովասուն ծոցում։ Բուրավետ ծաղիկների և մարգաշատ պուրակների քովից անցանք։ Աչքդ է շոյում ծառուղիների կանաչախիտ հեռաստանը։ Այս ու այն ծառի տակ զրնգում են աղջիկների քաղցրահնչյուն քրքիջները։ Կանայք նազանի ժպիտներ են ուղարկում անցնող ջահելներին։

Ու թվում է մի պահ, վոր սա յե այն յերանավետ վայրը, ուր չկա հոգս ու տառապանք...

Ամառային ակումբի ընդարձակ պատշգամբում պատրաստել են ճոխ ճաշասեղան։ Նստել են բարձրաստիճան սպաներ, կանայք, փողկապավոր, թանգագլուխ պարոններ, ուտում են և ըմպում գինին, վոր բազմաթիվ շիշերի մեջ սպասում է սեղանի վրա։ Մերթ ընդ մերթ նվագախումբը հնչում է ռուսական ազգային հիմնը, լսվում են ուռաների խանդավառ ձայներ, կենացներ են առաջարկվում։

Ջինայի հետ նստեցինք ակումբի փոքր պատշգամբում ճաշելու։ Խաղողի վորթատունկերն օձապտույտ թևերով բարձրացել էին պատշգամբի ճաղերն ի վեր ու իրենց լայն տերևներով հովհարում մեզ։ Լիլաղի փնջերը, վորթատունկի տերևների միջից, ճերմակ թերթիկներով ժպտում էին և հրշապատը լցնում իրենց անուշ, կենարար բույրով։

Ճաշասեղանի շուրջը տիրում էր աղմուկ, ցնծագին ձայների, յերգերի ու բացականչությունների ժխոր։ Մի ուժգին, բամբ ձայն մի բաժակ դադարեցնելով աղմուկը, գոռաց.

— Խմենք, պարոնայք, և բոլորս միասին կանչենք՝ կեցցե միացյալ, մեծ և անպարտ Ռուսաստանը, ուռա՜...

— Ուռա՜-ա՜-ա՜...

Սեղանի բոլոր մասերից հյուսվեց մի ընդհանուր, միապաղաղ կանչ, վոր ճարճատելով գնաց մարեց ծառուղիների ու պուրակների մեջ։

— Յեվ ովքե՞ր են ճառում Ռուսաստանի անունից,— սեփականատերեր, փողատերեր, ցարական պնակալեզ չինովնիկներ և սպաներ։ Բաբբառում են ում անունից և ինչի՞ համար։ Հեղափոխությունն են ճնշում, հրճվել են, չէ՞, սրիկաները...

Վորքա՜ն ցասում ու բարկություն կար հավաքված Ջինայի բոցավառ աչքերում...

Բավական յերկար նստեցինք։ Խնճույքը վերջացավ և քեֆ անողները ցրվեցին, սեղանի վրա թողնելով բազմատեսակ ուտելիքներ և քաղցրավենիք, կիսատ խմված գինու բաժակներ։

Մնացել էին լավ հագնված մի պարոն, մի գեներալ և մի քանի տիկիններ ու զինվորականներ, վորոնք բարձր-բարձր խոսում էին ու քրքջում։ Գեներալը հարբած էր և հազիվ էր իրեն պահում վոտների վրա։ Թթի տակ մրմռում էր ինչ-վոր բան ու յերգում կցկտուր ռուսական ազգային հիմնը։ Մի պահ թևերն արձակելով հարանջից և ապա որորվելով մոտեցավ ճաշասեղանին, ամբողջ ուժով բարձրացրեց սեղանի մի ծայրը և ուժգին հարվածով խփեց գետին։

— Պարոնայք, հանուն մեծ, անպարտ և անբաժան Ռուսաստանի, ուռա՜...

Կանչեց և քա՜հ-քա՜հ ծիծաղեց։

Սեղանի բոլոր իրերը խառնվեցին իրար։ Բաժակներն ու պնակները վեր ցատկեցին և շրխկալեն ներքև թափվեցին։ Կարմիր հեղուկը ծորաց ջարդված բաժակներից ճերմակ սփռոցի վրա կազմելով փոքրիկ լճակներ։

— Բա՜վ, ձերդ պայծառափայլություն, բա՜վ,— բացականչեց մաքուր հագնված պարոնը, հաղթական դեմք ընդունեց և բռունցքը խփելով սեղանին՝ ակումբի ծառաներին հայտարարեց.

— Բոլորի փոխարեն յես կվճարեմ, յես... Թո՜ղ կեցցե սպիտակ բանակը...

Յեվ գրպանից մի բուռ թղթադրամ հանելով տվեց նրանց։

— Ահա՛ թե ինչպես է վատնում բուրժուազիան բանվորների քրտինքով վաստակած դրամը,— ասաց Ջինան հուզված և մի վայրկյան լռելուց հետո շարունակեց.

— Գիտե՞ս ով է այդ լավ հագնված պարոնը. ծխախոտի հայտնի գործարանատեր Ալեքսինկովն է. անվանի ուտող, խմող և վատնող մարդ...

Ապա պատմեց Ջինան, թե ինչպես ինքը մի ժամանակ աշխատել է Ալեքսինկովի գործարանում և դուրս արվել բանվորական գաղտնի կազմակերպություններին մասնակցելու համար։

Մենք դուրս յեկանք այգուց և բաժանվելով Ջինայից որվա բազմա-

դան տպավորություններով ծանրացած՝ քայլերս ուղղեցի դեպի տուն: Ճանապարհին հանդիպեցի գնդապետ Շեչենկոյին, վորը կանգնել էր նպարեղենի մեծ խանութի առաջ և ապակու յետև դարսված ուտելեղենները դիտում:

Փորձեցի ճամբաս շեղել, չեղավ. Նկատեց, անմիջապես մոտ յեկավ, թևիցս բռնեց և, տանելով խանութի մոտ, ասաց.

— Պա՛հ, պա՛հ, մի տեսեք, յերիտասարդ պարոն, ինչ համեղ ուտելիքներ և խմիչքներ կան այստեղ. խավյարը տեսեք, խոզի ապուխտը, ինդուշկան, Բորդոյի գինին, պա՛հ, պա՛հ...

Նրա մաշված դեմքը կծկվեց ու բացվեց արտահայտելով ուտելու և խմելու անսահման ցանկություն, սակայն տեսնելով դեմքիս լուրջ արտահայտությունը, մի քննական հայացք ձգեց վրաս և ասաց.

— Դուք հիվանդ չե՞ք, տխուր եք յերևում. իսկ ձեր պոլիտիկան, խե՜, խե՜, վո՜ւյ և... Ելի հանդիպում եք նրան: Խորհուրդ եմ տալիս ձեռք վերցնել նրանից, պոլիտիկայից, ձեռք վերցնել. կրակի հետ եք խաղում. գիտե՞ք հիմա ինչ ժամանակներ են, արյուն է թափվում չորս կողմ, արյո՜ւն... Թե չէ, գիտեք, դուք էլ մի օր կգնաք հեռու, հեռո՜ւ տեղ... Այնպիսի տեղ, ուր վոչ գինի կա խմելու, վոչ ինդուշկա անուշ անելու, խե՜, խե՜, խե՜...

Յես հավատացրի նրան, վոր գլուխս սաստիկ ցավում է, բժշկի մոտ եմ գնում. իսկ են աղջկան բոլորովին մոռացել եմ, էլ չեմ պատահում:

— Այդպե՞ս, յերիտասարդ պարոն, խելոք կացեք,— խրատեց Վասիլի Պետրովիչը և գայլի անկուշտ աչքերով նայելով մեծ ափսեի վրա հանգստացող հնդկահավին՝ շարունակեց.— դե՛հ, հիմի գնանք մի-մի բաժակ կոնծենք և եղ ինդուշկայից մի-մի պատառ անուշ անենք, ձեր գլխացավը կանցնի և կառողջանաք...

Նորից կրկնեցի, վոր հիվանդ եմ, տաքություն ունեմ, պետք է անպայման բժշկի գնամ, թող Վասիլի Պետրովիչը չնեղանա: Բայց գնդապետը դժգոհ ներս մտավ խանութ. մինչ յես մեծ թեթևություն զգացի, վոր կարողացա ազատվել նրանից...

Սենյակս փոքր էր, ինչպես քառակուսի տուփ, համեստ կահավորված: Յերեկոները, առհասարակ, տակավ եյի դուրս գալիս, պառկում եյի գիվանի վրա, գիրք ու լրագիր կարդում կամ ձեռներս գլխատակիս՝ նայում բաց լուսամուտից դիտող յերկնքի կապույտ պատառին:

Տաղտուկս փարատվում էր, յերբ Նյուսան, հարևանիս աղախինը, թեյ ու ընթրիք էր բերում ինձ, յերբեմն էլ նստում զրուցում հետս: Միջահասակ, խարտիշահեր, միամիտ աչքերով, չափազանց կենսուրախ աղջիկ էր, գնացած տեղը տանում էր աղմուկ և լիառատ, արծաթահնչյուն քրքիջ:

Այդ իրիկուն Նյուսան իր տիրուհու հետ գնացել էր ինչ-վոր տեղ և յես մնացի առանց թեյի: Հոգնած լինելով խուսափեցի թեյի պատրաստությունից և դիվանին յերկնցած՝ սկսեցի կարդալ օրվա լրագիրը: Այդ օրվա լրագիրն էլ, ինչպես նախորդ օրվանը, զգուշավոր կերպով արդեն նախապատրաստում էր հասարակական միտքը ալիանների «ռազմագիտական նպատակներով» փոքր ինչ նահանջելու մասին:

Կարդալուց հոգնելով լամպի լույսը իջեցրի, սենյակս դարձավ կիսամութ, իսկ յես ընկա մտորումների գիրկը: Չգիտեմ վորքան ժամանակ անցավ, կարծես յերազի միջից լսեցի դռան թույլ բաղխում: Ներս մտավ Զինան՝ բավականին տարիքոտ, հասարակ շորերով մի մարդու հետ, վորը ձեռքին ուներ մի զամբյուղ:

Այդ քաղաքում առաջին անգամն էր Զինան այցելում ինձ:

— Բարև՛, ընկեր Արամ,— բացականչեց նա զվարթ և, նայելով դիվանի վրա ընկած լրագրին, շարունակեց.— հը՛մ, լրագիր ես կարդում, թե ինչպես «մերոնք ռազմագիտական նպատակներով քիչ յետ նահանջեցին», չէ՞, հա՛, հա՛...

Հետո ծանոթացրեց իր ուղեկցին:

— Գրաշար Իլյուշկին, մեր լավ ընկերներից... Այդպես անվանեց նրան Զինան:

Դա միջահասակ, դեմքը նիհար-դեղնավուն, ճակատին սպիացած, հին վերք, խոհուն հայացքով մարդ էր:

— Զկարծես, բարեկամս,— ասաց Զինան նստելով կողքիս,— յեկել ենք քեզ այցելության, զրույցի: Մենք, կոմունիստներս, գործի մարդիկ ենք. ժամանակը զուր տեղ չենք սպանի: Յեկել ենք քո սենյակը, իբրև համեմատաբար ավելի ապահով վայր, մի փոքրիկ աշխատանք կատարելու. կարելի յե կարծեմ, չէ՞...

Յես սիրով համաձայնեցի:

— Բայց մենք պատասխանատու չենք, հա՛, յեթե մի բան պատահի, յեթե լրտեսները ծածուկ հետապնդելով մեզ այստեղ բռնեն և դու էլ մեզ հետ ծուղակն ընկնես: Կռվի և արյան այս ճակատագրական օրերին ամեն անակնկալ կարող է պատահել. չմեղադրես մեզ, հա՛... Դե՛հ, վեր կաց դուռը լավ կողպիր և լուսամուտները ծածկիր, վորպեսզի անցնենք գործի:

Զինայի այս նախապատրաստական ճառից հետո Իլյուշկինը զամբյուղի վերևից թղթե ծածկոցը դեն ձգեց և դուրս բերեց ձեռքի մի փոքրիկ գրամեքենա: Իսկ յես դուռը կողպեցի և լուսամուտների փեղկերը ծածկեցի:

Իլյուշկինը նախապատրաստեց մեքենան և սկսեց ինչ-վոր բան տպագրել: Բարեբախտաբար սենյակս հարևան բնակարանից անջատված էր հաստ պատով և վոչ վոք դրսից չէր կարող լսել մեքենայի խուլ ձայնը:

Զինան կարդում էր, իսկ Իլյուշկինը վարժ մատներով տպում: Դա կոմմունիստական կուսակցության հայտարարությունն էր այն մասին, թե ինչպես ռազմաճակատը պատռվել է, Դենիկինի զորքերը խուճապով նահանջում են և շուտով ամբողջ Ռուսաստանը կդառնա կարմիր...

Յերկու ժամ տևեց աշխատանքը: Բավական թվով հայտարարություն պատրաստ էր:

Իլյուշկինը կրկին տեղավորեց գրամեքենան զամբյուղի մեջ, փաթաթեց թղթե ծածկոցով, իսկ Զինան տպված թղթերը պահեց գրպանում:

Յես շատ եյի հետաքրքրվում իմանալ, թե արդյոք ինչպես և վորտեղ պիտի տարածեն այդ հայտարարությունները:

— Ե՛հ, մի կերպ կտարածենք, էլի, մեր գործը չէ՞...

Ասաց Զինան ժպտալով, իսկ Իլյուշկինի դեմքին վոչ մի գիծ չշարժվեց, կարծես նրա համար շատ սովորական բան եր այդ խնդիրը։

Ընթրիքով հյուրասիրեցի նրանց։ Ընթրիքս շատ համեստ եր,— խավյար և Կուբանի սև, համեղ հացը։

Պատմեցի Զինային իմ հանդիպումը գնդապետ Շեչենկոյին և վերջինիս խրատներն ու մութ ակնարկները։

Զինան մտածեց մի փոքր և ասաց.

— Համենայն դեպս այդ հանդիպումը վորոշ ոգուտ կբերի մեզ։ Պետք է շատ զգույշ լինել։ Ճակատում սպիտակների գործերն անաջող են գնում, թիկունքում ավելի կգազազեն։ Լավ կլինի առժամանակ դադարեցնենք մեր տեսակցությունները, տեսնենք ինչ կլինի...

Իլյուշկինը լուռ ուտում եր և ամբողջ ժամանակ կատարում համր, սառնարյուն մարդու դեր։

Ընթրիքից հետո նրանք քիչ էլ նստեցին, ապա մեկ-մեկ դուրս գնալով հեռացան։

V

Քաղաքը դառել եր մի մեծ զորանոց։ Ամեն որ զորք եր անցնում փողոցներով պաշարակիր սայլերի յերկար շարանը յետևից։ Իսկ կազակները նժույգների վրա ծույլ-ծույլ նստած գնում եյին առաջնագիծ։ Նրանց մռայլ, զազրած դեմքերից յերևում եր, վոր ակամա յեն գնում և գնում են վոչ թե կռվելու, այլ փախչելու համար...

Գլխավոր փողոցի հրապարակում, մի ակնբախ տեղ կախված գրատախտակի վրա ամեն որ արձանագրվում եր առաջնաճակատի տեղեկատուն։ Մարդիկ խումբ շարքերով հավաքված կարդում եյին։ Ով գիտե քանի՛ սրտեր ուրախությամբ լցվում եյին քաղաքներն ու ստանիցաները «ռազմագիտական նպատակներով» թողնելու մասին և քանի՞սը վշտում, վոր սպիտակ բանակը չի կարողանում մտնել Մոսկով...

Յերեկոները մարդիկ փակվում եյին տանը։ Ամեն մեկի հոգում մի գաղտնիք կար նստած, ահելի գաղտնիք։

Ամեն մեկի աչքում ցցվել եր կասկածը, վոր դիրքերը հսկող սվինավոր զինվորի պես զննական հայացքով մյուսին եր նայում։

Ու մարդիկ վախենում եյին ավելորդ խոսք ասելուց, վորպեսզի չհեռանան այս յերանելի աշխարհից։

Փողոցներն ամայանում եյին, անասունների աղբերով կեղտոտված։ Վաճառատների վոսկեփայլ ցուցանակներն անգամ գունատվել եյին, ու գարշ, անկյանք սավեր եր թափառում շուրջը։

Ժամանակի մեծ մասը տանն եյի անցկացնում. այլևս վոչ մի տեղ չեյի հանդիպում Զինային։

Նյուրան եր միայն հաճախ լինում մոտս, յերբ տան աշխատանքները կատարում, պրծնում եր։ Յեթե Նյուրան էլ չլիներ, նրա զրնգուն ձայնը չհնչեր սենյակումս, վորքա՛ն ծանր ու տաղտուկ պիտի անցներ ժամանակը...

Յերբ ճաշելուց վերադարձա (միայն ճաշի ժամանակն եյի դուրս գընում), սենյակիս դուռը կիսաբաց եր, իսկ ներսում գտա մի յենթասպա և յերկու սվինավոր զինվոր։

Ինձ տեսնելով յենթասպան ուրախ ճիչ արձակեց.

— Լավ է ինքներդ յեկաք, մենք ձեզ եյինք վորոնում...

Ու հրամայեց կանգնել սենյակի մի անկյուն, անշարժվել։ Մանրակրկիտ խուզարկեց հագուստս ու գրպանները։ Իսկ զինվորները խառնում եյին անկողինս, իբրև և ինչ-վոր բան փնտռում։

«Յերևի Զինային ձերբակալել են...»։

Մտածում եյի և ջղայնանում, տեսնելով ինձ արձանի նման անշարժված սեփական բնակարանումս։

Սենյակս տակն ու վրա արին, խառնեցին, բայց կասկածելի վոչինչ չգտան։ Յենթասպան դեմքը խոժոռեց, յերևի տխրեց կասկածելի բան չգտնելու համար։

«Հիմարը կարծում եր, թե մի մեծ, յերևելի գաղտնիք բաց կանի, վորպեսզի գնա և արժանանա մեծերի գովքին...»,— մտածում եյի յես և մտքումս ծիծաղում նրա հիմարության վրա։

Խուզարկելուց հետո դուռը կողպեցին և հրամայեցին հետևել իրենց։ Գնում եյի սվինավոր զինվորներից մեկն առաջից, մյուսը յետևից, իսկ յենթասպան ատրճանակը ձեռքին՝ կողքիցս եր քայլում։ Նայում եյի ատրճանակին և ջղայնորեն մռմռում.

— Յերևի վախենում է փախչեմ, ախմախ...

Մի զույգ խաժ աչքեր լայն-լայն բացված նայում եյին ինձ։ Նյուրայի դեմքին տիրել եր շփոթություն ու սարսափ։ Այդ աչքերը հետևեցին ինձ մինչև փողոցի դուռը և ապա անհետացան ինչպես տեսիլք։

Չգիտեմ վախենում եյի, թե ինձ իշխել եր այն զգացմունքը, վոր մարդս ունենում է, յերբ նրան ակամայից քշում են մի անհայտ, անծանոթ տեղ։ Բայց ինձ ջղայնացնում եր կշտախ յենթասպան, մացառի պես գաճաճ, վոտները ծուռ, դեմքին բազմաթիվ պզուկներ, աչքերը դեղնավուն-կանաչ։

Յերբ հայացքս աջ ու ձախ եր դառնում, դեղնավուն-կանաչ աչքերը դալկ նստում եյին ուսիս, սանձահարում շարժումներս, թե՝

«Խելոք հա՛, թե չէ կկրակեմ...»։

Փողոցի անցորդներն այնպես եյին նայում մեզ, ինչպես կնայեն սովորական, ձանձրալի դարձած բանի։ Ո՞ւմ հոգ, թե ուր եյի գնում, ինչու...

Մեր փառավոր թափորը հասավ հետախուզական բաժին։ Յերկաթյա փշալարերով մեկուսացած մի շենքից ներս մտանք ու բազմաթիվ ծուռ ու մուռ միջանցքներով գնացինք քննիչի մոտ։ Յենթասպան գնաց զեկուցելու, իսկ յես զինվորների հետ մնացի միջանցքում։ Քառորդ ժամ սրտադող սպասում։

Մտածում եյի, թե ինչպես պիտի հանդիպեմ քննիչին և ինչ պիտի ասեմ։ Յես վորովհետև գիտեյի, վոր այդպիսի վայրերում առհասարակ պետք է վորքան կարելի յե քիչ խոսել և լակոնական պատասխաններ տալ, բոլոր ուժերս հավաքեցի սառնարյուն ձևանալու և ինքզինքս չկորցնելու։

Վերջապես յենթասպան փոքրիկ, ճաղատ գլուխը դռնից դուրս յերկարեց և հրամայեց ներս մտնել:

Շքեղ սարքված փոքրիկ սենյակ: Գեներալներ Ալեքսեևի և Կորնիլովի մեծադիր նկարները պատին: Գրասեղանի մոտ նստել էր լավ հագնված, վայելչադեմ, գանգրահեր մի յերիտասարդ կապիտան: Ծուռ-ծուռ նայեց, մի պահ քննեց ինձ վոտքից գլուխ, հարցրեց անունս, ազգանունս և, հայացքը սևեռելով փողկապիս փակցրած փոքրիկ մեդալին, ասաց.

— Դե՛հ, հիմա պատմեք տեսնեմ, ինչ գիտեք Սամիտանովայի մասին, ուր է գտնվում այժմ:

Յես հայտնեցի, վոր Սամիտանովային ճանաչում եմ, բայց վաղուց է, վոր նրան չեմ տեսել և չգիտեմ այժմ վորտեղ է:

Կապիտանը հայացքը հեռացրեց փողկապիցս և ուղիղ բևեռեց աչքերիս, կարծես աչքերիս մեջ նստել էր մի մեծ գաղտնիք և նա ուզում էր թափանցել:

Ճիշտն ասած, այդ աչքերը սուր եյին, հատու, այնպես վոր ուժերս հավաքեցի չենթարկվելու նրանց:

— Իսկ վորտեղ և ինչպես եք ծանոթացել նրան:

Կապիտանը մի պահ գլուխը ձգեց թիկնաթոռի թիկունքին. նրա սրճագույն, գանգուր մազերը, համաչափ գծերով կերտված դեմքը, զինվորական շիկ համազգեստը պատկերում եյին գրավչություն, վորի հետ միանում եյին խստություն ու լրջություն:

Սարքեցի մտացածին պատմություն, թե ինչպես պատահաբար ծանոթացել եմ Զինայի հետ և յերբեք նրան մոտ ծանոթ չեմ յեղել:

— Հը՛մ,— մրմռաց կապիտանը և նայեց դռան մոտ կանգնած յենթասպային:

Վերջինիս մարմինը լարի պես ձգվեց և դեմքին նկարվեց մի քսու ժպիտ:

— Դուք բոլշևիկ չե՞ք,— հանկարծ հարցրեց քննիչը և նորից սուր հայացքը բևեռեց աչքերիս,— ճիշտ խոսեք, թե չէ ձեռքից չեք ազատվի: Խոստովանելն ավելի լավ կլինի ձեզ համար, քան թե ստելը: Մենք արդեն բազմաթիվ փաստեր ունենք ձեր մասին:

Յես վճռականապես հայտարարեցի, վոր բոլշևիկ չեմ և չեմ յեղել յերբեք:

— Հապա ինչ կուսակցության եք պատկանում, յեթե բոլշևիկ չեք:

— Ուսանող եմ,— պատասխանեցի սառնարյուն:

— Ուսանո՞ղ, հը՛, հը՛... Լավ հեքյաթներ եք պատմում, խոսք չկա: Բոլշևիկ, այսինքն Թեկից փախած ավազակ մարդ՝ ուսանո՞ղ...

Կապիտանի սուր հայացքը վազվզեց դեմքիս բոլոր գծերի վրա, ապա դարձավ դեպի յենթասպան.

— Ինչպես յերևում է, սրան պետք է մի լավ դաղել, վոր սովորի ճշմարտությունը պատմել:

Յենթասպայի դեմքը ստացավ ինքնաբավականություն արտահայտող փայլ:

Կապիտանը մատը սպառնալից թափ տվեց վրաս և խստաբար հրամայեց յենթասպային.

— Տարեք դրան, տարեք գցեք նկուղը, հետո կտեսնենք...

Յենթասպայի գաճաճ մարմինը արձանացավ զինվորական պատիվ տալու, արհամարհանքով նայեց ինձ և միասին դուրս յեկանք քննիչի սենյակից:

Միջանցքում հանդիպեցի գնդապետ Շեչենկոյին, վոր հնդկահավի պես փքված, կեռ թուրը չխչխկացնելով գալիս էր դեպի մեզ: Ինձ տեսնելով դեմքը ծամեց անախորժ բանի հանդիպող մարդու պես և առանց բարևս պատասխանելու ասաց.

— Հը՛մ, յերիտասարդ պարոն...

Ապա կողքի սենյակի դուռը բանալով շտապ ներս մտավ:

Յենթասպան մի գննող հայացք ձգեց վրաս. այս անգամ նրա աչքերն այնքան խեթ ու կծող չեյին...

Քարե աստիճաններով իջանք գետնահարկ: Նեղ, կիսամութ և խոնավ փակուղուց և սվինավոր պահակների մոտից անցնելով, յենթասպան բաց արավ մի փոքրիկ դուռ:

Յերբ կացա գլուխս վերնաշեմքին չզարնելու համար, յերեսիս խփեց մի գաղջ գոլ, կարծես մտնում եյի անասունների փարախ...

Դուռն յետևիցս փակվեց:

Խարխափելով մի քանի քայլ առաջ անցա. կանգնեցի մի պահ, մինչև աչքերս վարժվեցին աղջամուղջին:

Մի ընդարձակ, հատակը ցեմենտով պատած նկուղ: Սավերախիտ անկյունները կորած մութի մեջ: Բազմաթիվ մարդիկ այս ու այն կողմ նստած ու պառկած՝ յերևում եյին ստվերների պես: Մի քանի դեմքեր դարձան ու նայեցին ինձ ապակեփայլ աչքերով:

Հայտնի չէ ուրախացա՞ն, թե տխրեցին, վոր իրենց թիվն ավելացավ մեկով:

Բոլորն էլ հասարակ, պատառոտուն շորերով մարդիկ եյին, դեմքերը մութ ու մռայլ՝ շուրջը տիրող մառախուղի պես:

Մարդկային ստվերներից բացի ուրիշ իր չկար նկուղում: Պատերն էլ խունացած գաջով ծեփած՝ շարունակ տխուր պատմություններ լսելուց՝ գունատվել, այլակերպվել եյին: Իսկ առաստաղը մնացել էր մութի մեջ և վերևից իշխում էր ինչպես խավար ուրվական:

Հատակին զանազան գրքերով յերկնցած մարմինների արանքով անցա, նստեցի համեմատաբար ազատ վայր, կռնակս հենեցի պատին և ընկա մտածումների գիրկը...

Առաջին պատկերը Վասիլի Պետրովիչի ծամած դեմքն էր և յեղջերուի հագի նման բերանից արձակված կծու խոսքերը.

«Հը՛մ, յերիտասարդ պարոն...»:

Աչքածակ գայլը, արդյոք նրա սարքածը չէ՞...

Ու ցասումով լցվեց հոգիս:

«Լավ վոր Զինան ձերբակալված չէ, այլապես կապիտանը չէր հարցնի նրա ուր լինելը:

Սրտիս խորքից անցավ մի կենարար դող. ուրախ էի, որ Զինան ձերբակալված չէ...

Մռայլ մտքերը խառնիխուռն յեկան անցան և ամենից վերջը մնաց ցավոտ հարցը.

«Արդյոք ինչ պիտի անեն ինձ...»:

«Ինչ ուզում են, թող անեն, չպետք է սարսափել...»:

Հակառակ ներքին ծով հուզմունքիս, փորձեցի սառնարյուն մնալ և չենթարկվել խուճապի:

Իմ հոգում կատարվում էր մի անմեկնելի, աննկարագրելի հեղաշրջում: Ինչ-որ պայծառ ու վսեմ բան թև ու թիկունք դարձած՝ ինձ բարձրացնում էր աչքիս, կարծես մի ինչ-որ լավ, անգնահատելի բանի համար պետք է համակերպվեյի ճակատագրիս հետ...

Յեվ սրտապնդված սկսեցի շուրջս նայել:

Առաստաղին կպած փոքրիկ, յերկաթապատ լուսամուտ-աչքերը կամաց-կամաց մթնեցին: Վերջին փոխ ցոլքերն էլ պարտվեցին խավարից ու դուրս փախան:

Մեկը վառեց մի փոքրիկ, հազիվ իր շուրջը լուսավորող ճրագ:

Մի քանիսը պառկած տեղիցը վեր յելան, նստեցին: Նստածներն էլ ընդհակառակը յերկնցան հատակին ու շնչառության տարբերնչյուն մի խուլ համերգ արձագանքվեց շուրջս:

Ինչ-որ անծանոթ, աննկատելի կեսեր մոտեցան ձեռներիս ու վզիս, կծոտեցին. յես հալածեցի, բայց նրանք համառ էյին, անընկճելի. շարունակում էյին դաժան հարձակումները:

Մի միջահասակ մարդ յեկավ նստեց կողքիս: Նրա ծնոտից ավելի պես կախվել էր թավ, հինայի գույն մորուքը: Մազառատ գլուխը սափրված էր, նիհար: Ծխախոտ առաջարկեց ու ինքն էլ սկսեց ծխել:

— Հը՛մ, դուք էլ ծուղակն ընկա՞ք: Այստեղ լավ ապաշխարելու վայր է: Գիշերը լվերը կծոտեն, վատ օդը կնեղի, իսկ ցերեկները ձանձրույթն ու տաղտուկը:

Այնպես ջերմ ու մտերիմ էր խոսում, որ կարծես հին ծանոթներ էյինք:

— Առաջին անգամն եք վայելում բանտ նստելու յերջանկությունը:

Թավ հոնքերի ներքև կորած փոքրիկ, կենդանի աչքերը պտտացրին վրաս:

Առաջին անգամն էյի նստում բանտ:

— Վոչինչ, կսովորեք, սա էլ մի կյանք է, պիտի ապրել և ճաշակել սրա քաղցրությունները, հը՛, հը՛... Իսկ յես քանիերորդ անգամն եմ նստում, ինչ եք կարծում:

Յես տարակուսարեն նայեցի նրան:

— Յոթն անգամ, կարո՞ղ եք յերևակայել...

Ապա թեքվեց և հազիվ լսելի ձայնով պատմեց, թե ինչի համար էր բանտարկվել այս վերջին անգամ: Պարզվեց, որ կոմմունիստ է, ընդհատա-

կյա աշխատող, առանց իրական փաստերի, կասկածով են կալանավորել, ինքը վստահ է, որ կազատվի, յեթե միայն մարդիկ խիղճ ունենան...

Յեվ այսպես խոսեց շատ բաների մասին:

Լավ էր ճանաչում Զինային:

— Զինան մեր լավագույն կին ընկերներից է, — շարունակեց խոսակիցս պապիրոսի մոխիրը մատով թափ տալով. — ձերբակալվելուս նախորդ իրիկուն, այսինքն չորս օր առաջ, նրան հանդիպեցի մեր ծանոթներից մեկի տանը. կուսակցության հրահանգները գործադրելով էր զբաղված:

Հաճույքով էյի ունկնդրում ամեն մի խոսք, վոր վերաբերում էր Զինային:

Այդ վարկյանին նկուղի դուռը բացվեց և կալանավորներից մեկին կանչեցին: Բանվորական բաճկոնով, տանջված դեմքով մի խոշոր մարդ անկյունից բարձրացավ ինչպես կաղնի. հազաց մի յերկու անգամ և դուրս գնաց:

Ժանգոտած, մեծ բանալին նորից վոլորվեց փականքի մեջ:

— Ով գիտե, ուր են տանում անիծածները, — լսվեց խոսակցիս բերանից մի խուլ մրմռոց:

— Իսկ դուք Զինային չհանդիպեցի՞ք վերջին անգամ:

Յես բացասական պատասխան տվի:

Խոսակցիս դեղնափայլ, սուր հայացքը մի պահ կենտրոնացավ դեմքիս, աչքերը մանրակրկիտ զննեցին իմ խորքը, յերևի ուզում էյին ստուգել, թե վորքան ճիշտ եմ խոսում:

— Ձեր դեմքը կարծես ծանոթ է ինձ. հը՛մ, յեթե չեմ սխալվում ձեզ հանդիպել եմ կուսակցության ժողովում, յերբ մերոնք Արմավիրումն էյին...

Արմավիրում յեղած ժամանակ նրա ցույց տված տեղը չէյի գնացել յերբեք:

— Կամ գուցե դուք էյիք, վոր յեկաք վերացուցակագրելու ձեր կուսակցական տոմսը. այո, հիշեցի: Ա՛խ, հիշողություն, հիշողություն, վորքա՜ն շուտ են մոռացվում լավագույն օրերը...

Մտացածին բաներ էր պատմում:

— Նույնիսկ դիմեցիք ինձ իմանալու, վո՞ր օրն է նշանակված կուսակցական մարմնի նիստը:

Նայեցի նրա համառ աչքերին, վորոնք կխամութի մեջ բևեռվել էյին վրաս:

Արդյոք չի՞ փորձում ինձ... Կասկածը օձի պես խայթեց ուղեղս. տարակուսանքով դիտեցի նրան: Զգաց յերևի իր անհարմար դրությունը, աչքերը հեռացրեց և ընդունեց միամիտ արտահայտություն:

— Գուցե սխալվել եմ, ձեզ շփոթել ուրիշի հետ, սատանան տանի, հիշողությունս դառամել է...

Աղոտ լույսի տակ նրա դեմքին, ծնոտի մոտ նշմարեցի մի կապույտ խալ, վորի վրա յեղեգնի պես ցցվել էյին յերեք յերկար մազ:

Մարմինս զգացի լվերի խայթոց և կռնակիս պատից ծծված անախորժ

խոնավությունը։ Ուղղվեցի ու թիկն ընկա կողքիս, գլուխս դնելով արմունկիս վրա։

Նա էլի մի քանի բաներ խոսեց, կրկին ծխեց, բայց յես չպատասխանեցի։ Ավելի ճիշտ, քունս տանում էր։ Քնելու ցանկությունս գրգռում էին բանտարկյալների ընդհատվող, խզմզվող շնչառությունը և վրաս ծանրացած գաղջ օդը։

VI

Վաղ առավոտ զարթնեցի։

Փոքրիկ լուսամուտ-աչքերից վախվխելով ներս էին ընկել լույսի վտիտ շողեր ու, չհամարձակվելով առաջ գնալ, մնացել էին կիսաճամբին։

Ծանր, հոտած օդ էր շուրջս։ Մեջքիս վոսկորները տնքում էին չոր հատակին կպչելուց։ Գլխումս բզզում էր ինչ-վոր բզեզ։ Վոտներս փետացել-թմրել էին. մատներիս ծայրերին ասեղի թույլ ծակոցներ էի զգում։

Կշտիս, գլուխը ծնկներիս հենած պառկել էր մի կալանավոր, վոտքերը բերել կծկել էր փորին ու դարձել մի ցանցառ մսագունդ։ Զզվեցի, անախորժությո՞ւն զգացի, թե ուրիշ բան, ծունկս կամացուկ հեռացրի. մազառատ գլուխն ընկավ գետին, մի քանի ծույլ շարժում գործեց, մնաց անշարժ, քիթը փոշոտ հատակին հպած։

Ուզեցի վոտքի յելնել ու քայլել քիչ, բայց ճանապարհը մարմիններով փակվել էր քարակույտերի պես։

Շուրջս լսվում էր խռմփոց ու թռչում էին այս կամ այն կրծքից հառաչանքի թույլ հնչյուններ։ Մեկը քիչ հեռու շնչում էր բերանը կիսաբաց. լորձունքի մի յերկայն շյուղ կախվել էր ու ջրոտել մի փոքրիկ տարածություն հատակի վրա։ Մյուսը բաճկոնակը հանել էր, կծկել ու դրել գըլխատակին, աչքերն անթարթ հառել առաստաղին ի վեր, յերևի այնտեղ էր վորոնում իր դառն խոհերի յեզրակացությունը։ Յերրորդը հորթի պես գունչը դրել էր ծնկներին ու մնացել այդպես—ով գիտե ինչու։

Դրսից հառ-հառ ներս էին ընկնում վոստիկանների սուլերի թույլ հնչյուններ, ընկնում էին ու մարում նկուղում։ Կամ բանալին էր կոպտորեն հագում փականքի մեջ, գրավելով մի քանի արթուն աչքեր, վորոնք այդ հագից մահ կամ փրկություն էին սպասում...

Գլորվեցին հավիտենականության չափ յերկար ժամեր։ Կալանավորներին թույլատրեցին հերթով գնալ միջանցք, ինչպես ձմեռը կենդանիներին դուրս են բերում փարախից մաքուր օդ առնելու։ Բայց անասունները իրավունք ունեն փարախի շուրջը թռչկոտել, արճիկ տալ կենսուրախ, մինչ մեզ հսկում էին սվինների փայլուն, սուր ծայրերը։

Հերթն ինձ հասավ։ Յերբ միջանցքի համեմատաբար մաքուր օդը բաղխվեց դեմքիս, կուրծքս ազատվեց մի ծանր բեռից ու թափահարեցի մարմինս ջրաթաթախ թռչունի պես։

Նեղ միջանցքի առաջ ձախ կողմից հոսեցին մաշ, միգապատ դեմքեր, մութ քարայրներից լույս աշխարհ յելնող ստվերների պես։

Մի քանի րոպե չանցավ, կրկին յետ յեկա ու յերեսս փչեց փարախի գաղջ օդը։

Մի շարք բութ հայացքների, կասկածոտ աչքերի, անտարբեր հորանջող բերանների քովից անցա։ Չէյի իմանում վորտեղ նստեմ կամ կանգնեմ։ Ինձ հրավիրեց երեկվա խոսակիցս, սիրալիր ժպտաց, հարցրեց առողջությունս և առաջարկեց ծանոթանալ կողքին կանգնած յերիտասարդ, նորեկ կալանավորի հետ։

— Ծանոթացե՛ք, մեր հին ընկերներից է, յերևի վորևէ կուսակցական ժողովում հանդիպած կլինեք իրար։

Յես հայտնեցի, վոր կուսակցական չեմ յեղել, հետևաբար չէյի կարող յերբևիցե պատահել նրան կուսակցական ժողովներում։

— Գուցե ուրիշ տեղ վորևիցե գործով պատահել եք։

— Վոչ մի տեղ, բոլորովին չեմ ճանաչում։

— Դե լավ, ուրեմն. ընկերոջ ազգանունը Միխայլով է, յերկաթուղային բանվոր, բոլշևիկ լինելու պատճառով էս անիծյալ վորջն է ընկել։

Նորեկ կալանավորի անմազ և ձմերուկի պես կլոր դեմքին փայլեց ինքնաբավականության ժպիտ։ Հպարտացավ արդյոք բոլշևիկ լինելու և այդ պատճառով բանտ նստելու համար։

Բարձրահասակ էր, մաշված բաճկոնով, գանգուր մազերով։ Աչքերը ժպտում էին այնքան անկեղծ ու մտերիմ, վոր կարծես տեսնում էիր նրա հոգու խորքը, ինչպես վճիտ առվակի խորքերը։

Իրիկվա խոսակիցս, վորին Զուրով էին անվանում, ծխախոտ առաջարկեց յերիտասարդ կալանավորին ասելով.

— Ե՛խ, յեղբայր իմ, ծխենք, բոլորս էլ մի ցավով ենք տապակվում։

Միխայլովը հաճույքով վերցրեց ծխախոտը, ծխի քուլաները ցատկելով ճերմակ ատամներ ունեցող բերանից՝ գնում լուծվում էին առաստաղի աղջամուղջին։

Ապա քաղաքացիական կռիվներից զանազան հետաքրքիր դրվագներ պատմեց։

— Այստեղ թշնամին նստել է տանդ և կատաղությամբ բզկտում քեզ։ Հարազատիդ արյունը խմում ես ու սիրտդ հովանում է. բավական է իմանաս, վոր նա սպիտակ է, դու կարմիր... Յես կռվել եմ Նեմեցի, Թուրքի ֆրոնտում, բայց էս տեսակ բան չեմ տեսել։ Յես իմ ասված, էս ուրիշ բան է, չլսված, չիմացած բան...

Քաղաքացիական կռիվներում Միխայլովը գերի յե ընկել սպիտակների ձեռքը, ապա փախել ու թաքնվել Յեկատերինոդարում, վորտեղ և ձերբակալվել է այժմ։

— Ե՛խ, յեղբայր, էսօր կամ վաղը կուղարկեն ինձ էն մյուս աշխարհը։ Յես նրանց էսենց-էնենցը, թող ուղարկեն...

Յեվ սկսեց թունդ հայհոյել սպիտակներին...

Զուրովը լարված ուշադրությամբ լսում էր. Նրա գունատ այտերի արանքում կախվել էր խորհրդավոր ժպիտ։ Իսկ ինձ ինչ-վոր ներքին, անհայտ

ձայն դրդում էր զգույշ մնալ, անտարբեր. և յես կատարում էյի միայն համր մարդու դեր:

Քաշվեցի մի ազատ անկյուն, առանձնացա մտքերիս հետ. ինձ պատեց անխուսափելի թախիծը:

Կալանավորներից մի քանիսը ծխում էյին, մի քանիսը բարձր-բարձր խոսակցում ինչ-վոր բանի մասին: Մյուսներն այս ու այն կողմ թավալած՝ քնել էյին կամ հոգնած աչքերով նայում պատերն ի վեր:

Քաղց զգացի: Կողքիս մարդկանց խնդրեցի տեղեկացնել, թե ինչպես կարելի յե դրսից ուտելեղեն ստանալ:

Զուրաբը, վորը յերկու քայլ հեռու յեր կանգնած, իսկույն առաջարկեց իր ծառայությունը:

— Յեթե դրամ տաք, յես կճարեմ ձեզ համար, — ասաց նա սիրալիր ձայնով:

Լավ վոր փողերս ինձ հետ էյին և հագուստիս վրա տեղավորվել այնպիսի տեղ, վորտեղից միայն իրենց տիրոջ ձեռքով կարող էյին դուրս գալ:

Կես ժամ հետո ունեյի հաց ու յերշիկ և ուտում էյի բավական ախորժակով:

Այնուհետև Զուրաբի միջոցով շարունակ հայթայթում էյի ուտելեղեն և նույնիսկ նրա միջոցով հայրենակցիս — Ավագովին տոմսակ գնաց ինձանից՝ տեղեկացնելու իմ վիճակի մասին:

Առավոտները Զուրաբը շոգխանում էր, գիշերները կրկին հայտնվում. ուր էր գնում, ում թույլտվությամբ, հայտնի չէ: Բայց նա ամենքի հետ լավ էր, սրտակից. յերբ նորեկ կալանավոր էր գալիս, իսկույն ծանոթանում էր հետը, մխիթարում:

— Բոլորիս բախտը մեկ է, զրույց անենք, մեր գլխի անցածներն իրար պատմենք, վոր սրտներս հովանա ու էս դանդաղ չարժվող անիծյալ ժամանակը սպանենք...

Հիրավի, զարմանալի դանդաղ էր մահանում օրը ու տաղտուկը մաշում էր հոգիս: Վորքան համառ ու աներես է այն լույսը, վոր պլպլում է փոքրիկ լուսամուտների յեզերքին ու չի կամենում չքվել:

Չգիտեմ ինչ նոր բան կբերի գիշերը, բացի ձանձրույթից ու հեղձուկ օդից, բայց ամենքս էլ ուզում էյինք, վոր գիշերն ու ցերեկը վորքան կարելի յե շուտ փոխեն հերթերը:

Նորից ճրագի աղոտ լույսը ճրթճրթաց պատին, անճոռնի պառկած մարմիններից կրկին լսվեցին խլացվող ձայներ:

Կողքս դարձրի բազմոց, իսկ արմունկս բարձ: Վոտքերս մկտացին և իզուր բողոքեցին հատակի չորության դեմ, լսող չեղավ: Քունս չեր տանում:

Կիսաբաց աչքերիս դիպել էր նկուղի թանձր մշուշը: Կողքիս յերկնցել էր մի վիթխարամարմին մարդ, վորի բերանից ծանր, անախորժ գոլորշի գալիս բաղխվում էր յերեսիս: Յեվ յես ստիպված էյի շնչառությանս հետևել, նրա արտաշնչած գոլորշին կուլ չտալու համար:

Քիչ հեռու մի մարդ հեյաց ուժգին և ինչ-վոր մրմռաց քթի տակ: Նրա

կշտին մի գլուխ բարձրացավ, թքեց և ծանր խոսքերով հայհոյեց: Կիսամութի մեջ լսվեց բռունցքի մի ուժեղ հարված: Մարմինները տատանվեցին ծովի ալիքների պես:

— Յես քո բռնցը-բռնցը... չես թողնում քնենք, հա, սատանի ձուտ...

Բռունցքի հարվածները նորից տեղացին: Մարմինները բարձրացան և բռնեցին իրարու կոկորդից:

— Կխեղդեմ, շանսատակ կանեմ...

— Իշի մուռթ...

Մարմինները խառնվեցին իրար, սկսվեց կարգին տուրուդմբոց: Շուտով աղմուկը սաստկացավ և դառավ ընդհանուր: Հենց ուզում էյի վերկենալ, յերբ մի մարդ յետ-յետ մղվելով ընկավ վրաս, նրա հետ և մի ուրիշը: Մեջքիս վոսկորը տնքաց և մի խուլ հառաչանք թռավ բերնիցս: Հազիվ կարողացա անջատել ինձ ու ազատվել մարմինների ծանրությունից: Վեր յելա, բայց մարմինները դիզվեցին շուրջս և հրելով, հրմշտկելով քշեցին ինձ համեմատաբար ապահով անկյուն: Այնտեղ ապաստանել էր նաև Զուրաբը.

— Ձեզ լավ ճզմեցին ավանակները, գժվել են, — ասաց նա հանգիստ և ծխախոտը վառելով սկսեց ծխել:

Աղմուկի ու ժխորի մեջ վոչինչ չեր վորոշվում և չեր իմացվում ով ինչ է անում: Լսվում էյին սոսկալի հայհոյանքներ, կատաղի, վայրագ ճիչեր:

Մի ձայն աղեկտուր կանչեց.

— Վա՜յ, քիթս ջարդեցիք, յես ձեր...

Մի ուրիշ ձայն էս ավելի թույլ ու տառապագին նվաց.

— Մեջքս, աստծու սիրուն, տրորեցիք, խեղճ ունեցեք...

— Տղեք, վերջ տվեք էս խայտառակության, ամոթ է, — հնչեց մի ուժեղ ձայն:

Ձայնից ճանաչեցի Միխայլովին. ինչպես յերևում էր, նա աշխատում էր կռվողներին բաժանել իրարից:

— Ինչ հայվանն է յեղել այս Միխայլովը, չի թողնում խելքը կորցրած այդ խոզերին իրար քիթ ու պռունգը մի լավ ջարդեն, — ասաց Զուրաբը ատամները կրճտացնելով:

Միխայլովի և մի քանի կալանավորների ազդու միջամտության և համառ ջանքերի շնորհիվ, իրար բկից բռնած մարդիկ բաժանվեցին ու հրվեցին այս ու այն կողմ:

— Ե՜յ, ավանակներ, իշի ծնունդներ, նկուղում բազմելը բավական չէ, իրարու միս էլ եք ուզում կրծոտել, հա...

— Ի՞նչ ունեք կիսելու, փող, ժառանգությո՞ւն...

— Ինչ փող, ինչ ժառանգություն, լվերից ու կեղտից հոգնել ենք, ուզում էյինք մի լավ իրար թափ տալ, թարմանալ...

— Հը՛մ, բավական չէ, վոր մեր հոգիները հանել են էս գժանոց ծակը կոխելով, մենք էլ պետք է մի բան ավելացնենք, խելքի տղերք...

Ձայնում էյին կալանավորները զանազան կողմերից:

Մարմինները կրկին խլրտացին շուրջս: Մի քանիսը պառկեցին պա-

տերի տակ: Մի քանիսն ստացած հարվածներից մշմշում էին: Մեկի դեմքը ճանկռել էին տուրուդմփոցի ժամանակ, թևով մաքրում էր արյան հետքերը: Մյուսը մեջքն էր մաժում. մի լավ քացի էր կերել, մարմինը մրմռում էր ու անքում, յերբեմն էլ հայհոյում աշխարհիս ամենաթանգ հայհոյանքներով: Յերրորդի քթիցն արյուն էր կաթում, պատին կռթնած, կեղտոտ թաշկինակը սղմել էր քթին և կովի աչքերով նայում ինչ-որ տեղ:

Միխայլովը յերկու-յերեք կալանավորի հետ մոտեցավ մեզ, և սկսվեց սովորական խոսակցությունը: Պարզվեց, որ կովի աչքերով նայող և քթից արյուն հոսող կալանավորը, որին կանչում էին Պետրև, վերջերս խելքը կորցրել է, անտեղի ձայներ է հանում և շարժումներ գործում, գիշերները համարյա չի քնում, ինքնիրեն խոսում է ևինչ-որ կցկտուր բառեր արտասանում ու չի թողնում, որ մյուսները քնեն:

Մի կալանավոր պատմեց, թե ինչպես Պետրևյին ամեն օր տանում էին և մահվան սպառնալիքի տակ պահանջում հայտնել ինչ-որ բան: Վախեցնելու համար մի քանի անգամ կրակել են նրա վրա, և Պետրևն սաստիկ ազդված մահվան այդ կրկնվող սպառնալիքներից շշմել է ու խելքը թռցրել...

Զուրովը մի խոժ հայացք նետեց խոսող կալանավորին, բայց ոչինչ չասաց:

— Հէյ, յես ձեր եսենցը-ենենցը, ուզում եք սպանել, հա...

Այդ Պետրևն էր, որ պատի մոտ քիթը մաքրելով սպառնում էր ինչ-որ մեկին:

Միխայլովը պատմեց, թե ինչպես քաղաքացիական կռվի ժամանակ մի անգլիացի վախից այդպես խելքը թռցրել է:

— Էդ պատահեց անցյալ աշնանը: Մենք կրակում էինք անտառի մոտից. տեսնենք մի մեծ տանկ ջանավարի պես փնչացնելով թշնամու կողմից յեկավ և հարձակվեց ուղիղ մեր դիրքերի վրա: Մերոնք կրակում էին, բայց ջանավարն անսերես էր, նրա վրա ոչինչ չէր ազդում, կրակի հեղեղ տեղալով գնդացիրից գալիս էր, հա գալիս... Մեր տղերը չդիմացան, փախան իրենց դիրքերից: Ձիերը քաշել էինք անտառ, որ ջանավարը չըճմռի մեզ: Մեր հրամանատարը կանչեց մեզ և ասավ. «Տղեք, էդ տանկ քշողը անգլիչան է, շատ ծեծ կերած էդ անգլիչանը յեկել է մեր յերկիրը և ուզում է մեր հողին հանի, մեր բանվորի աշխատանքը գլխի տանի: Ով ձեզանից քաջի արյուն ունի, թող գա ինձ հետ, էդ շանորդուն ցույց տանք, որ մեզ հետ հանաք-մասխարություն անել չի կարելի: Դե՛հ, տղեք ջան, ձեզ մատաղ, քշեք ձիերը»: Կանչեց հրամանատարը և կայծակի արագությամբ առաջ սլացավ, մենք էլ յետևից: Գնդացիրը մեզ վրա մահվան կարկուտ տեղաց, մեզանից մի քանիսը շուռ յեկան... Բայց մենք փոթորկի պես հասանք ջանավարին և ամեն կողմից ողակեցինք: Մեր հրամանատարը ձիուց տանկի վրա թռավ և թրով կիսեց գնդացիր կրակող ռուս սպայի գլուխը, մենք էլ թռանք ու զորս դու պատվիրեցեր խփեցինք: Տանկ քշող անգլիչանը թևերը բարձրացրեց վերև և կանչեց իծ յու փիս... Ես տեսակ բան...

— Ինչպես կանչե՞ց, Միխայլով, ապա, — հարցրեց կալանավորներից մեկը:

— Իծ յու փիս, — կրկնեց Միխայլովը ընդհանուր քրքիջի մեջ: — Մեր հրամանատարը հրամայեց ձեռք չտալ նրան: Դա մի բարձրահասակ, բարակ մեջքով, լավ հագնված, բերնին ծխամորճ մարդ էր. վո՛նց էր դողդողում, աչքերը պիշ-պիշ մեզ նայում: Տանկի վրա նստեցինք և տաք-տաք գնացինք շտաբ: Մեր տղերը սիրտ առան, առաջ շարժվեցին և ուռա՛ կանչելով գրավեցին թշնամու դիրքերը, իսկ մեր հրամանատարն այդ քաջագործության համար կարմիր շքանշան ստացավ:

— Իսկ անգլիչա՞նն ինչ յեղավ:

— Հա՛, անգլիչանին ուղարկեցին Մոսկով. վոմանք ասում են, որ այնտեղ տեղավորել են գժանոցում, իսկ ուրիշները, թե էդ անգլիչանը կոմմունիստ է դառել և հիմի կարմիր բանակում կռվում է սպիտակների դեմ...

Պատի մոտ կանգնել էր մի բարձրահասակ չեչեն, թուխ, արևախաշ դեմքով. բեխերն էր ոլորում և մինչև թևով հոնքերն իջած փափախի տակից նրա սև, յերկաթ ծակող աչքերը նայում էին մեզ ու պսպղում ինչպես գայլի աչքը մութի մեջ:

Միխայլովն էլի ուրիշ, ուրիշ բաներ պատմեց: Ունկնդիրներս հոգնեցինք և սկսեցինք հորանջել: Ապա ամեն մեկս մեզանից տեղ փնտռեց պառկելու համար:

Տեղավորվեցի մի ազատ վայր և փորձեցի քնել: Կողքիս պառկել էր մի ջահել, պատառոտուն հագուստով տղա, որի ոտներից գարշելի հոտ էր գալիս: Յերեսս հակառակ կողմը դարձրի, բայց յերկար ժամանակ շնչառությունս չէր ազատվում այդ գարշ հոտից:

Բարձրահասակ չեչենը, որի ձախ թևը ուսից կտրված էր, դեռ կանգնել էր պատի մոտ և արծվի աչքերով նայում պառկած մարմիններին:

Մտքերը հավաքվեցին նորից և շրջապատեցին ուղեղս, կարծես մի մեղվանոց լիներ ուղեղս ու մտքերը հազարավոր մեղուների պես տզզում էին, յեռևեջում: Աչքերս փակեցի և վորքան աշխատեցի քնել — անկարելի յեղավ: Սահեցին ծանր, հոգեմաշ ժամեր: Վերջապես կրակի պես այրող մտքերը խղճացին ինձ և թռան ուրիշ տեղ: Յեվ մի անսահման թմրություն ընդգրկեց ինձ: Կես գիշերից վորքան էր անց — չգիտեմ: Մի ուժգին ձայն հենց ականջիս մոտ ճայթեց: Ինձ թվաց, թե ռազմադաշտումն եմ, հրացանն է ճարճատում: Աչքերս բացի ու կիսաբաց դռան մեջ նշմարեցի մի գ ուխ, վոր ձայնում էր.

— Միխա՛յլով, դուրս յեկ...

Յերիտասարդ կալանավորը, վոր ննջել էր նկուղի անկյունում, դանդաղորեն յելավ, աչքերը ճմռեց, մարմինների միջից խարխափելով առաջ յեկավ և, յերբ հասավ մեզ, մրմնջաց մեղմիկ.

— Մնաք բարով, տղեք, յերևի էլ յերբեք չենք տեսնի իրար...

Ու շողխցավ դուրս, յետև թողնելով մարդկային շնչառությունից հեղձուցող նկուղը:

Մի գլուխ վեր բարձրացավ կշտիս, ճռթած աչքերով նայեց մի պահ և ասաց.

— Взяли беднягу в расход (*խեղճին տարան խփելու*)...

Ու կրկին այդ գլուխը ծուլորեն ընկավ նախկին տեղը։

Անկյունից լսվեց Պետրեյի լալկան ձայնը, որ բույի պես վայեց.

— Չէ, չեմ ասի, չէ... Ուզում եք դաղեք, ուզում եք խաշեք, չեմ ասի...

Իսկ թևը կորած չեչենը պպզել էր պատի տակ, լուռ ծխում էր։

VII

Լուսամուտների յեզրերից վարանոտ քայլերով ցերեկը կրկին ներս սողաց։ Ճրագի լույսը ճրճրթաց պատին և դարձավ մեռելային աչք։

Մարմինների մեջ ընկավ ալեկոծում։ Մի քանիսը վեր յելան շորերը թափ տալով, ուրիշները նստեցին պառկած տեղը և տրորեցին աչքերը։

Դռան մոտ լսվեց ինչ-որ աղմուկ։ Մի մարդ, որին ուժով ներս եյին հրում, հեկեկում էր և աղիողորմ կանչում.

— Յեղբայրնե՛ր, հարազատնե՛ր, խիղճ ունեցեք, յես մեղավոր չեմ, ազատեք ինձ, կին, յերեխի տեր եմ, յեղբայրնե՛ր...,

Ներս հրվեց խաշած խեցգետնի պես, լացաթաթախ, կարմրած դեմքով մի մարդ, գլխի յերկայն, չեկ մազերը ցիրցան։ Փակված դռան մոտ մի պահ կանգնեց ճամբամոլոր հորթի նման ապուշ կտրած, նայեց այս ու այն կողմ մեծ-մեծ աչքերով, ապա գլուխը ձեռների մեջ աղիողորմ ձայնով հեկեկաց։

— Յեղբայրնե՛ր, մեղք չունեմ, յես խմ ասված, խեղճ մարդ եմ, կին-յերեխի տեր, դուք տեղ կրակն եք գցում...

Կալանավորների ուշադրությունը գրավեց նորեկ մարդը։ Զուրաբը մոտեցավ նրան, ձեռքն ուսին դրեց և սիրալիր ժպիտով ասաց.

— Հը՞, մեզ հետ ընկերություն անել չե՞ս ուզում։ Յեկ, մեզ մոտ տաք է, լու կա, մաքուր օդ. ինչ ես փոքրիկ յերեխի պես կանգնել զռում ես...

— Ախպե՛ր, անմեղ եմ ե՛, խիղճ չկա...

— Խե՛, խե՛, խե՛... անմեղ է, հրեշտակի պես անմեղ, խոսք չկա. իսկ թե մեզանից վո՞րն է անմեղ, սատանան տանի...

Հայտնի չէ, Զուրաբի հեգնական խոսքե՞րը, թե կալանավորների համառ հայացքներն ազդեցին, նորեկ մարդը հանդստացավ և Զուրաբի առաջնորդությամբ շարժվեց մի ազատ անկյուն։ Վերին աստիճանի արգահատելի տեսք ուներ։ Ծաղիկ հիվանդությունից դեմքն այնպես էր ծամկվել, ինչպես հնոցի մեջ յերկար ժամանակ մնացած հացը։ Բաճկոնակի փեշերը ղոլ-ղոլ կախվել եյին, իսկ մնացած տեղերը բազմաթիվ կարկատաններով նախշած։ Կոճակները, չդիմանալով յերկար տարիների աշխատանքին, կիսապոկ, վիզը ծուռ կախվել եյին։ Ուսերի վրա ներքնաշապկի կեղտոտ լաթերն եյին ցուցադրվում։ Շալվարի ծայրերն այնպես եյին գզգզվել, որ կարծես մնացել եյին կատաղած շան ատամների տակ։ Փոշեթաթախ կոշիկները մաշվել եյին։ Աջ ոտքի կոշիկի ծայրին մի փոքրիկ յերթիք կար, որից լույս աշխարհ էր ընկել բթամատը՝ յերկայն ու հաստ յեղունգով։

Զուրաբն իսկույն ծանոթացավ և ախպերացավ հետը։ Ազգանունը Վասիլենկո յեր, Ստավրոպոլի կողմերից, արհեստով ներկարար։ Աշխատանք չգտնելու պատճառով քաղցել էր և յեկել ընկել Յեկատերինոդար։ Կալանատանը նա իրեն այնպես էր զգում, ինչպես թռչունը վանդակում։ Տխուր էր, մտածկոտ, չէր ուտում ու միշտ հայացքը դռան կողմն էր։ Յերբեմն-յերբեմն թախծալի աչքերը դառնում եյին մեզ, դեմքն ընդունում էր լալկան մարդու արտահայտություն, ձայնը դողդողում էր, կցկտուր բառեր հյուսում.

— Ե՛խ, Ե՛խ, յեղբայրներ, խիղճ չկա, խի՛ղճ...

Հաց եյի ուտում, յերբ ինձ վրա հառած տեսա կովի յերկու լայնաբիբ աչք... Այդ աչքերն այնպես եյին խոշորցել ու մռայլցել, որ, կարծես, դալիս ընկնում եյին վրաս։ Յես հաց առաջարկեցի Պետրեյին. վերցրեց իսկույն և անթարթ հայացքը միշտ ինձ վրա պահած՝ սկսեց ագահորեն ուտել։

— Ձեզ ինչի՞ համար են բռնել,— հարցրի։

Պետրեն ժպտաց ցույց տալով ձյունափայլ ատամները.

— Ինչի՞, խի՞, խի՞... չեմ ասի, չէ...

Յեվ նրա աչքերն այնպիսի փայլ ստացան, որ թվում էր, թե մի անհելի գաղտնիք կար նստած այնտեղ։ Ապա բերանը մոտեցրեց ականջիս, հայացքը դեմքիս շեշտակի հառած, մատը բերանին՝ շշնջաց.

— Սո՜... մարդու չեմ ասի, թող սպանեն...

Յես էլ ոչինչ չհարցրի և նա լուռ ուտում էր. հացի պատառներն անմիջապես կորչում եյին նրա որկորում։ Յերկար ժամանակ կշտից չհասցավ. կողքիս նստած՝ կապիկի պես կրկնում էր իմ շարժումները։ Յերբ յես ժպտում եյի, նրա դեղնավուն, նիհար դեմքին էլ գծագրվում էր ժպիտ, իսկ յերբ դեմքս խոժոռվում էր, նույնը կատարվում էր նաև նրա դեմքին...

Դուռը բացվեց և Պետրեյին դուրս կանչեցին։ Կովի աչքերն ավելի խոշորցան և դառն, մահաշունչ հայացքը ծանրացավ ինձ վրա։ Կրկին հնչեց անունը և Պետրեն խուլ հառաչանքով բարձրացրեց նիհար մարմինը ու ծույլ-ծույլ առաջ շարժվեց։ Թե ուր տարան, ինչ արին,— գաղտնիք մնաց։

— Յերևի այս անգամ նշանն ուղիղ են խփել... ասում եյին կալանավորները, յերբ խոսք էր բացվում նրա մասին։

Յերկու կալանավորի ներս բերին։ Մեկը կարճահասակ, փոքրիկ մարմնով, թուխ դեմքով և ածուխի պես սև աչքերով, մյուսը բարձրահասակ, ոտները ձողի պես ձգված, խոշոր դեմքով և յերկարափեշ բաճկոնով։ Յերկուսն էլ թուրքեր եյին։ Շկլված դեմքով և վախկոտ քայլերով առաջ յեկան և կանգնելով մի անկյուն՝ ծուռ-ծուռ նայեցին մեզ։ Նրանց աչքերն արտահայտում եյին անասելի շփոթ և տխրություն։ Զուրաբը իսկույն մոտեցավ նրանց և բարեկամաբար սկսեց զրուցել. նրա հարցերին պատասխանում էր միայն կարճահասակ թուրքը, որ կոտրտված ռուսերենով ամեն անգամ ասում էր.

— Не знаем, ей бох, не знаем...

Յերբ ճրագի աղոտ լույսը ճրճրթաց, կալանավորները ցեմենտի վրա ածուխով քառակուսի գծեցին և սկսեցին տամա խաղալ։ Սկսվեց խառնիխուռն զվարթ խոսակցություն, կատակ ու բրբիջ. չեյիր կարծում, թե

գտնվում ես հետախուզական բաժնի նկուղում. մեկը քթի տակ մռմռաց ուկրաինական մի ուրախ մեղեդի. շուտով այս ու այն անկյունից յերգողին ձայնակցեցին և նկուղը թնդաց յերգով ու ծիծաղով:

— Պարոնայք, լռությո՜ւն... հնչեց անկյունից մի բամբ ձայն:

Բայց այդ ձայնը խեղդվեց համատարած աղմուկի մեջ:

Միայն յերկու թուրքերը գամվել եյին իրենց տեղը և ծուռ-ծուռ նայում մեզ: Իսկ թևատ չեչենը, գլխարկի տակից արծվային աչքերը հուրհրատելով, լուռ ծխում եր:

Զուրովի միջոցով ստացա մի յերկտող, վորով վաճառական հայրենակիցս մի լավ հանդիմանելուց հետո խոստանում եր ազատել ինձ: Այդ տոմսակն ինձ պատճառեց այն թեթևությունը, յերբ հիվանդ մարդը զգում է բժշկի մոտ: Մի տարեց կալանավոր, վոր առհասարակ շատ բարյացակամ եր դեպի ինձ, նկատելով տոմսակը, հարցրեց.

— Յերևի լավ լուր եք ստացել, ուրախացել եք:

Յերկու խոսքով հաղորդեցի նրան նամակի բովանդակությունը: Նա մի րոպե շուրջը նայեց կասկածոտ աչքերով և շրթունքները մոտեցնելով ականջիս ասաց.

— Այդ մարդուց շա՜տ զգույշ կացեք, կասկածելի տիպ է, կարող է խաբել ձեզ...

— Վո՞ր մարդու մասին է ձեր խոսքը:

— Զուրովի... պարտքս համարեցի զգուշացնել ձեզ. ո՜վ գիտե, յերիտասարդ մարդ եք, կարող եք սխալվել...

— Ախր, նա այնպես պատվավոր մարդ է յերևում դրսից:

— Հը՛մ, աղվեսն էլ շատ պատվավոր արարած է ցույց տալիս իրեն, բայց աղվես է...

Խոսակցիս ալեխառն աղվամազով ծածկված դեմքին և խոշոր, արտահայտիչ աչքերում նստել եր անկեղծությունը: Առանց այն էլ վաղո՜ւց նման կասկածները ծագել եյին իմ մեջ և շատ զգույշ եյի պահում ինձ:

Յերկու թուրքերը պառկեցին և կծկվեցին իրար. կարճահասակն անհանգիստ շարունակ շուռ ու մուռ եր գալիս այս կողքից այն և փնթփնթում քթի տակ, իսկ բարձրահասակը բերանը լայն-լայն բանալով հորանջում եր:

Խաղացողները ցրվել ու պառկել եյին այս ու այն կողմ: Տարեց կալանավորը յերկնցել կողքիս ծխում եր և աչքերը սուզել տառապալի մտախոհի մեջ: Ծխելուց հետո դարձավ դեպի ինձ և կամացուկ ասաց.

— Քնենք, յեղբայր, ինչ կլինի—լինի, շատ մտածելուց բան չի դուրս գա, լավն էն է քնել և էս դարդի աշխարհը մոռանալ...

Յեվ թևերը դնելով գլխատակին աչքերը փակեց:

Քունս սակայն չեր տանում. վորքան աշխատեցի աչքերս փակել, ցրել մտքերս, չեղա՜վ... Ու ժամերը սահում եյին հավիտենական քայլերով:

Յերբ նայեցի հարևանիս, նրա աչքերն էլ բաց եյին:

— Ե՛խ, քունս չի տանում, չե. իմ փոքրիկ Նատաշան միտս յեկավ, մի տեսնեք ինչ աղջիկ ունեմ, ե... Ե՛խ, հիմա վորքա՜ն տխրած կլինի իմ Նատաշան...

Նրա աչքերում խաղաց տրտմություն և վշտի ամպ:

Առաստաղից մի պապուկ ընկավ յերեսիս, թաթերն արձակեց և փորձեց վազել, բայց գարշանքով խառեցի նրան ու գցեցի հեռու, հեռու. ինձ պատեց անախորժ զգայություն և ավելի ես խանգարեց քունս:

— Ե՛խ, եխ, Նատաշա... Յեթե իմանայիք ինչ անուշ աղջիկ է. տասներկու գարուն հազիվ է համրել իմ Նատաշան...

Իսկ իմ աչքերին պատկերվեց Զինան...

«Զինա՜ն... Արդյոք Զինային բան չի՞ պատահել...»:

VIII

Իրիկնադեմին ինձ կանչեցին դուրս: Մինչև նկուղի դուռը հետս տարա մի շարք միգամած աչքեր: Առանձնապես հուզիչ եր տարեց կալանավորի սրտագին մնաս բարովը:

Հրացանակիր պահակն ինձ առաջնորդեց վերև: Քայլում եյի շշմածի պես: Ինձ թվում եր, թե կապիտանի մոտն են տանում, բայց մեծ յեղավ զարմանքս, յերբ առատ լուսավորված սենյակում, գրասեղանի յետև, թիկնաթոռին մեխված տեսա գնդապետ Շեչենկոյի մսակույտը: Նրա հրամանով դուրս գնաց ինձ ուղեկցող պահակը:

— Հը՛մ, յերիտասարդ պարոն, լավ ապաշխարեցիք, չե՞, խե՜, խե՜...

Գրասեղանի յետևից ճարճատեց նրա բամբ, հեգնող քրքիջը:

— Զգուշացրի՜ ձեզ, վոր խելոք մնաք, ձեռք վերցնեք այն փողոցային բոզից: Չե՞ք իմանում, վոր նա կասկածելի կին է, հայրենիքի դավաճան, Ռուսաստանի թշնամին, չե՞ք իմանում... Էլ կին չկա՞ր. կանանցից շա՜տ են աշխարհքում, հենց էն բո՞զն է մնել աչքդ...

Մատը թափ տվեց սպառնալից և աչքերը խստությամբ վոլորեց վրաս: Մինչ յես հազիվ եյի հուզմունքս զսպում, պրկելով ջղայնությունից դողացող շրթունքներս:

— Ձեր բարեկամ Ավագովը յերկու անգամ խնդրեց ինձ բարեխոսել ձեզ համար,—շարունակեց գնդապետը թուլացնելով դեմքի դաժան գծերը,— բայց հազիվ կարողացա կապիտանին համոզել, վոր դուք այդ աղջկա վոչ թե գաղափարակիցն եք յեղել, այլ... սատանան տանի, հազիվ կարողացա համոզել: Հիմա պետք է շա՜տ զգույշ մնաք, թե չե, գիտեք հա՜... Յեթե ուրիշ անգամ էլ վոտքը այս շեմքից ներս դնեք, էլ հավիտյան դուրս գալ չի լինի... Հը՛մ, ինչ եք մտածում:

Մի վայրկյան ինձ գերեց մի ահավոր միտք. ցատկել դեպի այդ զըզվելի ճարպագունդը, բռնել վզից և ուժգնորեն սեղմել... Բայց յես գերագույն ճիգով զսպեցի ինձ և հայտնեցի, վոր համաձայն եմ Վասիլի Պետրովիչի ասածներին...

— Տեսնենք, յերիտասարդ պարոն, տեսնենք,—սառնությամբ մռմռաց գնդապետը և զանգահարեց:

Ներս մտնող պահակին մի յերկտող հանձնելով հրամայեց ուղեկցել ինձ քննիչի մոտ: Կապիտանը կարդաց գրությունը, մի ծակող հայացք բևեռեց աչքերիս, հոնքերն հավաքելով մի պահ մտածեց, ապա ինչ-որ արձանագրեց թղթի վրա ու, կասկածով լի աչքերը թարթելով վրաս, ասաց.

— Ազատ եք, կարող եք իրերը վերցնել և գնալ:

Բայց յես վոչ մի իր չունեյի վերցնելու: Պահակն ուղեկցեց ինձ մինչև դուռը և յես դուրս յեկա այդ մարդակեր շինությունից, ինչպես վանդակից ճողոպրած թռչունը:

Ամբողջ կրծքով շնչեցի դրսի մաքուր օդը, դանդաղորեն քայլելով մայթի յերկայնքն ի վար: Մինչ ականջումս դեռ ճարճատում եյին գնդապետ Շեչենկոյի սպառնական խոսքերը.

«Տեսնենք, յերիտասարդ պարոն, տեսնենք...»:

Մութը իր թևերի տակն եր առել փողոցը, տները, աստղավառ յերկինքը: Յերբեմն-յերբեմն լռությունը խզող կառքերի դղրդյունը և լուսամուտներից դուրս ցատկող լույսերն ապացույց եյին, վոր մարդիկ դեռ ապրում են իրենց սովորական կյանքով:

Վորտեղից, չգիտեմ, մութի մեջ առաջս ցցվեց մի մարդ և հավասարվեց քայլերիս:

— Յերիտասարդ պարոն, շնորհավորում եմ, ազատվեցիք:

Զուրաբն եր իր բամ ձայնով և թավ մորուքով: Զարմանքն ու շփոթությունը տիրեցին ինձ անակնկալ կերպով նրան տեսնելով կողքիս և յես տհաճությամբ հեռացրի դեմքս, վորովհետև նրանից ալկոհոլի և ծխի ծանր հոտ եր փչում:

— Չգնա՞նք և մի լավ չխմե՞նք ձեր կենացը...

Մերժեցի առարկելով, վոր հոգնած եմ և պետք է շտապով գնամ տուն հանգստանալու: Նրա աչքերում նշմարեցի խայթող, դիվային փայլ... Դյուր չեկավ նրան մերժումս:

— Ե՜խ, եխ, յերիտասարդ պարոն, չգիտեք շնորհակալ լինել նրանց, ովքեր ձեզ համար աշխատանք չեն խնայել...

Յեթե խոսքը վերաբերում եր բանտում ինձ ուտելիք բերելուն կամ հայրենակցիս ամսական առաքելուն, յես ամեն անգամ ավելի եյի վճարում, ասելով.

— Ես էլ քեզ նա չայ...

Յեվ նա չայն, առանց ընդդիմության հանդիպելու, կորչում եր նրա գրպանների խորքը:

Այժմ ինչ է ուզում ինձնից:

— Ուրիշ բանի համար պիտի շնորհակալ լինեք, յերիտասարդ պարոն,— նրա ձայնը ցածրացավ և դարձավ խորհրդավոր հնչյուն,— այն բանի, վոր յես կապիտանին համոզեցի, վոր դուք անմեղ մարդ եք...

Կանգնեցի մի պահ և մութի մեջ նայեցի նրա մութ աչքերին:

— Զարմացա՞ք: Ե՜հ, ինչ արած, աղքատությունից յեղբայր, դժվար է ապրել, մեծ ընտանիք ունեմ, փող է պետք...

— Ուրեմն դուք կապիտանին հաղորդում եյիք, ինչ լսում եյիք մեզանից,— հարցրի յես վրդովված:

— Կարող եյի թունդ բաներ հայտնել, վոր դուք բոլշևիկ եք, մասնակից ընդհատակյա աշխատանքներին և ուրիշ շատ բաներ...

— Յեվ նա կհավատա՞ր:

— Բաս ինչպես. յեթե չհավատան, էլ ինչի՞ կհանձնեն ինձ այդպիսի պատասխանատու պարտականություններ:

Բերանիցը դուրս ցայտեց արաղի գոլորշու մի հեղեղ: Յես շունչս պահեցի այդ անախորժ հեղեղը չկլանելու համար և վորոշեցի շուտ ազատվել նրանից:

— Հիմա ինչ եք կամենում, յես հոգնած եմ, շտապում եմ տուն:

— Վոչինչ, միայն ուզում եյի հիշեցնել ձեզ յերախտապարտ լինել ինձ, վոր ձեզ փորձանքի չմատնեցի. յերախտապարտ լինել, հասկանո՞ւմ եք, կլն, յերեխի տեր եմ...

Առանց ծպտունի նրան տվի վերջին կոպեկներս և գայրույթով լցված արագորեն առաջ անցա: Յերբ յես նայեցի, Զուրաբը մոտեցել եր լույսին և հաշվում եր իմ տված փողերը...

Ինչ-որ միտք հանկարծ չարչարեց ուղեղս. յես դարձա և շտապ քայլերով մոտեցա նրան:

Դրամը բռան մեջ, վորսը պինդ բռնած գազանի խոշոր աչքերով նայեց ինձ:

— Իսկ Միխայլովը, նրան ինչ արին...

— Ուղարկեցին վերև, խե՜, խե՜... ուղարկեցին աստվածների մոտ...

Սոսկումով ու ցասումով բռնված մարդու կատաղությամբ վազեցի առաջ:

ՄԱՐԳԱՐ

ԻՆԳԼԻԶԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

I

Բազարում լսած լուրը այնպիսի հույս էր ներշնչել Ճմուռ Հաթոյին, որ քունը աչքից կորել էր: Քանի անգամ շուռ ու մուռ գալով անկողնում, նստեց տեղերում, վերջը կնոջը զարթեցրեց:

— Ա՜յ մարդ, ինչ ես տունը գիժգաղար անում,— ձայն տվեց կինը, իսկ նա հորանջեց, խաչակնքեց, վերմակը գեն գցեց ու դուրս գնաց տանից:

Ամառվա խաղաղ գիշեր էր. լուսնային թեթև քամին թեև սառնորակ շունչ էր բերում հեռավոր սարերից, բայց Հաթոն, որ շապկանց էր դուրս եկել, ցուրտ չզգաց: Նայեց լուսնյակին, որ փետրաձև ամպերի արանքից մի քիչ ժանգոտ երևաց նրա աչքին. նա ուշադիր, զննող հայացքով դիտեց լուսինը, ապա ներս մտնելով ասավ կնոջը.

— Դշխուն, ասես լուսնյակը բռնվել ա. սինին ծուր ա, տանեմ տփեմ, չարքերը փախնեն:

Մթության մեջ մի քիչ խարխափեց դույլը կամ սինին գտնելու հուսով, ապա ասավ.

— Ե՞հ, թվանք էլ չկա, թե մարդ թվանքով փախցնի:

Ապա մի պահ ու կսկծալից հառաչանք արձակելով նստեց, կարծես ամբողջ մարմնով խորտակվեց անկողնի կողքին:

— Ա՜խ, բալիկ ջան, ես քո արևուն մեռնեմ, ո՞ւմը տվիր թվանքդ, ես քո թվանքին մատաղ...

Ու մթության մեջ թեթև հեծկլտոց լսվեց:

Դշխունը ճրագը վառեց, հառաչեց, աչքերը սրբեց ու զգույշ, տանեցոց չզարթեցնելու համար կամացուկ դուռը բանալով դուրս եկավ տանից: Գոմբաշունը թափով եկավ, պոչն արագությամբ շարժելով փաթաթվեց նրա ոտներին ու իր ջերմ աշխուժով բացեբաց ցրեց նրա քնաթաթախ գլխում նոր ամբոխված սև-սև մտքերը: Նա նայեց լուսնյակին ու տուն դառնալով, մխիթարեց ամուսնուն, որ լուսնյակը բռնված չի և ապա թեթև հանդիմանեց, որ իրեն քնից զարթեցրեց ու նորից մտքերի ծովը գցեց:

— Դշխուն, ես անգամ իմ սատրը պիտի կատարվի, ա՛յ կոխանես: Յեղունգներս եռենց են ասում. ինչքան մտիկ եմ անում, յեղունգներից յերում ա: Ա՜յ, կոխանես, թե յերկու ամսից հետո եսոնց իդը չկորի, ես բեխերս կնդել կտամ:

Նա ձեռքերը բռունցք շինելով բութ մատները կպցրեց իրար ու ճրա-

գին մոտեցնելով, կենտրոնացած հայացքով, ինչպես անում են գուշակ հմայողները, դիտեց յեղունգներին ու ասավ.

— Ա՜յ, տես, տես, կնիկ ջան, յեղունգներս պարզ ասում են:

Ապա ձեռքերն իրարից բաց թողնելով, ավելացրեց դանդաղությամբ.

— Ցավաշ դու, ես են արանեցուն գտնեմ. էդ խաբարը նա յա բերել Բազրից. Բունիաթի Բարսեղի զուքանն ա ասել: Ասում են իրան աչքով տեսել ա, ինգլիզների զորքը Բաքու յա մտել: Ա՜խ, Դխշուն ջան, են անմահ պատարագը վկա, թե որ էդ բանը դրուստ դուրս յեկավ, գարնանն առած ջոջ յեզը մատաղ կանեմ, իմ ձեռով կմորթեմ:

— Ա՜յ մարդ, ձեռ վերցրու էդ գիժահարներից. կակուղ դամարդ գտել են ու խաբում են, խելքդ առել են. մի լսի եդոնց, տուներս կքանդես. անջաղ-անջաղ մե խաղաղութեն ա ընկել. սաս սաղված ոտիմ անի, յեթում ծնացածներս յետ դառնան, ինչ ես ընկել ջանից յետևից,— ասաց կինը դժգոհելով ու վերմակը քաշեց գլխին:

Սենյակում խաղաղ ննջառության համաչափ մշմշոց էր լսվում:

Հաթոն պառկեց. բայց վո՞րտեղ էր քունը... թռել, փախել էր հեռո՛ւ, հեռո՛ւ, սարերի, ծովերի յետևը. ու նրա միտքը արթուն, քնի յետևից ընկած, կես գիշերին թափառում էր հեռու, անծայր յերկրներ, ինչպես յերազի մեջ ընկած մանուկը... Տեսնում էր յերկրներ, ծովեր, քաղաքներ, որ կյանքում չէր տեսել ու որոնց մասին չէր էլ լսել:

Յերբ Հաթոյի հոգնած ու բորբոքված կոպերը ծածկվեցին ու լսվեց նրա առաջին խռմփոցի ձայնը, կինը — Դխշունը կողքը բթեց.

— Հաթո՛, յե՛լ կեսոր դարձավ:

Հաթոն թափ նստեց, շորերն հագավ, չգիտես ումը հայհոյելով քթի տակ, բակում քնած քաշվորներին զարթեցրեց, սայլը լծեց ու ճանապարհ ընկավ սարը, յերեսը խաչակնքելով ու սուրբ Ոհաննեսի անունը հիշելով:

Արևելքն արդեն շառագունում էր. լուսաստղը՝ բոլորովին գունատ, հազիվ նշմարվում էր, յերբ Հաթոն հնձվորների հետ արտ հասավ:

II

Այդ լուրը որ լսեց Հաթոն, փոթոթեց նրա հոգին: Այդ տեսակ լուրեր շատ էր լսել, շատ անգամ էր հուսադրվել ու հուսալքվել, բայց վոչ մի անգամ վոչ մի լուր Հաթոյի վրա այդպիսի ազդեցություն չէր արել:

Նրա՝ մոտ վաթսունամյա դեմքը, որ, իր ասելով, վաթսուն հազար ցավ էր տեսել ու վաթսուն-վաթսուն կնճիռներով ծածկվել, այդ օրը կարծես պարզվել, պլպլում էր, ինչպես յերեսը ձու քսած թուխ բոքոն, և ճակատի ակոս-ակոս կնճիռները կարծես չէյին նկատվում այտերի առողջ, թարմ կարմրությունից: Ներսից մի անհայտ ձեռք նրա կրծքի տակ կարծես հարվածում էր, ու այդ զարկը թափ խփում էր գլխին ու տարածվում ամբողջ մարմինը, լցնելով մի անուշ, զուրեկան զգացմունքով:

— Ինգլիզներն յեկել են... ա՛խ, չէ՞... սաս բալիկս և յեկել. ա՛խ, քո յե-

կած ճամբին մատաղ, բալիկ ջան... Ասում եր նա ու թափ առած քաշում գերանդին տիտանի ուժով, քաղվորներին յետ թողած, ու մեկ մեկ-մեկ իրեն թվում եր, թե այդ բարակ ցողունների փոխարեն դիմացի սարերն ե կտրում իր թևերով:

Քառասուն տարու արտ ե հնձել, չի հիշում, թե այսպես փոթորկված գերանդի քաշեր: Մեկ ել եսպես հնձում եր են տարին, յերբ նշանվել յեր ու կալը վերջացնելուց հետո հարսանիք պիտի աներ: Դա յերեսունուհինգ տարի առաջ եր, ինքը կարմրաթուշ, աղվամազոտ պատանի յեր:

Վոչինչ չուներ այդ ժամանակ Հաթոն: Հարուստ, ունևոր ընտանիքի զավակ, բայց սեփական վոչինչ չուներ — յեղբայրների սարուկն եր: Ու չեր ել մտածում ունենալ իր սեփականը: Ընդհանուր աշխատում, ընդհանուր ուտում եյին. ինքն ել մի փոր հացից, մի ձեռք հագուստից զատ ուրիշ պահանջ չուներ: Բայց յերբ ամուսնացավ ու հինգ տարվա ընթացքում դարձավ չորս զավակի հայր, մեծ յեղբայրն ասավ.

— Աղբեր, ժամանակ ե, վոր բաժանվենք, ամեն մեկը դառնա իր տան, իր գլխի տերը:

Սնդուկը մեծ յեղբոր ձեռին եր, վոսկիները մեջը: Յերբ յեղբայրներով հավաքվում եյին խոսելու, Չիլ Ավագը նստում եր սնդուկին կամ նրա կողքին դրած մինդարի վրա, յեղբայրները շարվում եյին հատակին ու զրուցում: Չորս յեղբայրներից ամեն մեկը համոզված եր, թե քչեն-քչեն հազար վոսկի կհանի իրեն այդ սնդուկից: Բայց բաժանվելու որը Ավագը յեղբայրներին կանչեց, արխալուղի տակից կապած շորե գոտուց հանեց մեծ բանալին, — զրընգ, զրընգ, զրընգ — յերեք անգամ զրնգացնելով շուռ տվեց բանալին ու սնդուկի խուփը պատին շուռ տալով, ասավ.

— Ահա, աղբրտիք ջան, ինչ վոր կա, եստեղ ա, հալալ փայ արեք. սրանից յետ ամեն մեկը իր հերը, ամեն մեկը իր գլխի տերը:

Յերբ հաշվեցին, ու ամեն մեկին յերկու հարյուր մանեթ փող ընկավ թղթով, արծաթով ու վոսկով, ու յերբ յեղբայրները խռոված յերեխայի նման շրթունքներն ուռցրած չեյին համարձակվում հոգոց հանել, Ավագը խզեց այդ սպառանը սառական լռությունը.

— Անտեր փարի մեջը բարաքյաթ չի մնացել. չումի տարին դոխտուրին աշխարհքի փարա տվինք, վոր հիվանդ տավարները չսատկացնի: Յերկու ձեռք տուն շինեցինք, յերկու հազար դեղին խարջեցինք...

Հաշիվը պարզ եր. բոլորն ել գիտեյին, վոր եդ եդպես չի, բայց ինչ կանես, թռած դուշը ել չի բռնվի. մեջ յեկավ արաղը, ու ամեն բանին հոգոց ափին ու մոռացան:

Հաթոն դարձավ իր տան, իր գլխի տերը: Թեև բաժանված, բայց գործը եփ միատեղ եր: Յերկրագործության մեջ իրար ոգնում եյին, իսկ առևտուրը միասին եյին անում:

— Իրար հետ չանենք, չենք ապրի, — ասում եր Ավագը, չիլ աչքը խաղացնելով, — մեր կյանքը բարձած, ծանդր սել ա, գոմեշների պես քամակ-քամակի չտանք, յելը չենք հանի:

Ու բոլորն ել համամիտ եյին նրան: Յերևանից ու մինչև անգամ Թիֆլիսից ապառիկ ճոթեղեն եյին առնում, տանում եյին գյուղերն ու ապառիկ տալիս գյուղացիներին:

— Նիսի՛, բարաքեն նիսի մեջն ա, — ասում եր Ավագը յեղբայրներին, — նիսյա տվեք գեղերը, փարի հաշվով տվեք, փարով տվեք, մալով առեք:

Իսկ յեղբայրները գյուղերում մի գլուխ ասում եյին ապառիկ ուզող գյուղացիներին.

— Ա՜խ, նիսեն, նիսե՜ն... Նիսի բարաքյաթը կտրվի, նիսեն մեր տունը քանդեց...

Իսկ առնելիս ասում եյին.

— Փարա, փարա տվեք, մալն ինչներիս ա պետք:

Իսկ տները լցվում եր ու լցվում: Աստծու աչքը քաղցր, իրենք առողջ, արդեն հասած զավակների տեր, բոլորն ել աշխատող, բոլորն ել աչքաբաց: Ամբողջ գավառում անելիք եր իրենց տունը: Մի փեշ վերցրու ձեռդ, ընկիր սարե-սար, գեղե-գեղ, Չիլ-Ավագի անունը տուր ու առաջ գնա, տարիներով գլխի վրա կպահեն: Հայ, թուրք, քուրդ, բոլորը հավասար պատկառանք ունեին դեպի Ավագն ու իր յեղբայրները:

Վոր մտածում ե Հաթոն, քիչ ե մնում խելքը գնա... Գերանդին ցած ե դնում, մատով ճակատի քրտինքը շռռացնում գետին, նստում ու մտածում ե, չալլի ճոթով յերեսի քրտինքը սրբելով:

Ինչքա՜ն քրտինք ե թափել. ծովի չափ քրտինք ե թափել, մինչև կարողացել ե տուն ու տեղ դնել: Ու եդ տարիներով դրած տուն ու տեղը եսպես՝ մի քացով տան ու քանդեն...

III

Հաթոն լավ աշխատավոր յերկրագործի համբավ ուներ. առավոտից մինչև իրիկուն տանջվում եր ու խաշվում արևի տակ: Ֆահլաների հետ գերանդի քաշելիս կարծես նրանց որինակ տալու մի զորավար եր պատերազմի դաշտում: Վոչ միայն տնեցիք, ֆահլաները, այլև պատահական անցորդները ամաչում եր նրա մոտ կանգնել պարապ: Վարելիս նրա վոգևորությունը ներշնչվում եր յեզներին: Անբան անասուններն ել կարծես զգում եյին Հաթոյի ժրաջանության հզոր ուժը. նրա ձայնը լսելիս վզները թեքած ուժ եյին տալիս ագգերին ու վոտները խրում փուխր հողի մեջ: Նա պաշտում եր հողը, և հողը մոր նման գուրգուրում եր նրան: Նրա հողը շատերի հողից ընտիր եր, բերքը բոլորից լավ եր լինում, իսկ անասունները ժիր ու առողջ:

Բայց Հաթոն յերկրագործ լինելով, միաժամանակ և առևտրական եր: Այստեղի հողը բավարար չափով չեր վարձատրում իր վրա քրտինք թափողին. ուստի համարյա բոլորն ել ստիպված վորևե կողմնակի աշխատանք եյին ճարում: Բախտավորների ճանապարհը առևտուրն եր. և Հաթոն ել իր յեղբայրներով այդ ճանապարհն եր ընտրել: Յերկրագործ և առևտրական. —

զարմանալի կերպով այս յերկու տարբեր եյությունները զուգորդվել եյին նրանում, և կարծես յերկու տարբեր մարդիկ, տարբեր հոգիներ ապրում եյին այս մարդու մեջ։ Հողի վրա հողագործ եր աշխատավորի բոլոր հատկություններով, առևտուր անելիս յերևան եր բերում առևտրական մարդկանց հատուկ բոլոր նրբությունները։ Այստեղ կարծես այն քրտնաթաթախ հողի ազնիվ աշխատավոր մարդը կորչում, աներևութանում եր, և այդ նույն թուխ, արևառ դեմքի վրա պլպլում եյին աղվեսային զույգ աչքերն ու նրա շրթունքների տակից դուրս եյին ցցվում գազանային ատամները։

Գյուղերում անասուն առնելիս կամ չիթ ծախելիս Հաթոյի հասը առևտրական չկար։ Նրա ճարտար լեզուն, «վաճառական» խոսվածքը այնպես եր կաշկանդում գյուղացիներին, ինչպես օձից հմայված ճագար, վոր գնում, նրա բերանն և մտնում։ Մեծի հետ մեծ եր Հաթոն, փոքրի հետ յերեխա, իսկ կանանց ու աղջիկների հետ մի հարազատ զրուցընկեր։ Կխոսեր անուշ լեզվով, նրանց դարդը կհարցներ, նրանց գաղտնիքները մինչև անգամ կիմանար, բայց բոլորը գիտեյին, վոր Հաթոն մի ուրիշի, խոստովանահորից ավելի լավ կպահի իրենց սրտի խոստովանանքը։ Սակավապետ եր, գյուղացոց շատ նեղություն չեր տա — չեր թողնի դես ու դեն ընկնեն իրեն հյուրասիրելու համար։

— Բուրիկ ջան, բան հարկավոր չի, յեղ ունեմ, յեղ ու հաց,՝ մի ձմուռ արմ, ուտենք։

Յեվ ձմուռը, նրա կարծիքով, ամենազորեղական, ամենաօգտակար ու գյուղացու աչքին չերևացող կերակուրն եր։ Շատ անգամ եր, յերբ ախորժակ չեր ունենում, իր փայ ձմուռի յուղը տավարի թափանի մեջ, կամ հողի ամանով տալիս եյին Հաթոյին, վոր տուն տանի... վորովհետև, իր ասելով, տանն էլ բոլոր կերակուրներից ավելի ձմուռն եր սիրում։

Նրա անունը մնաց Ձմուռ Հաթո, ճիշտ է, բայց դրա փոխարեն նա տարեկան տասնյակ փթերով յուղ եր դուրս բերում Յերևանի շուկան ծախելու։

Դեռ չեր յեղել առևտուր, վորից նա ձեռնունայն կամ քիչ վաստակով տուն դառնար։ Բայց այսօր կարծես Հաթոյի աշխույժը կորել է. յերբ նստեց դեզի շվաքում գերանդին սրելու, հեսանը նրա ձեռից սողաց ջրի ամանի մեջ. նա գերանդին դրեց կողքին ու թեք ընկած, խոր թառանչ քաշելով, նորից դառն մտածմունքների աշխարհն ընկավ։ Թեքվող արևի բարկ ճառագայթների արանքներում մեղմորեն թրթռացող անուշ զեփյուռը, վոր դեզ կանգնած վորաների շվաքում մի կայտառ զովություն եր սփռում, Հաթոյի այրվող ճակատի ու կողերի վրա թմրություն եր իջեցնում։ Յեվ նրա կիսախուփ աչքերի առջևով մոտիկ անցյալի պատկերներ են անցնում շարան-շարան... Ի՞նչ եր ինքը և ինչ դարձավ... Յերա՞զ եր այս կյանքը, թե իրականություն... Ու նա աննկատելի կերպով հեզհեզաբար մեկնվելով դեզի տակ, մոռացած հունձը, անձնատուր յեղավ մտքերին։

...Մինչև բոլշևիկների գալը ինքը Թագավորի ապրուստ ուներ։ Տունը լիքն եր, բոլորն էլ ժիր ու աշխատասեր, վորոնցից յերեքը արու։ Էլ ինչն

եր պակաս։ Յերեք տղային էլ ազատեց զինվորական ծառայությունից Նիկոլ Թագավորի օրոք։ Մեծի համար մի կով տվեց «դիվանխանի» գրագիր Փանոս աղին, միջնակի համար հինգ դեղին տասնոց տվեց նաչալնիկի (գավառապետի) կնկան, իսկ փոքրի համար չորս հարյուր մանեթ փող ծախսեց, մինչև կարողացավ ազատել, վորովհետև պատերազմը վրա յեր հասել։

Շատերն եյին նախանձում իրեն, և նախանձ աչքը դիպավ... Խե՜ղճ Հաթո...

Բոլշևիկները յեկան, ու իր բախտը թեքվեց։ Յերկու ձեռք տուն ուներ, վորոնցից մեկը քաղաքի աչքն եր — յերկհարկանի, մեծ տուն։ Բայց անաստվածները խլեցին ձեռից, դարձրին վորբանոց. ինչքան քոս ընկած ու վոջլոտ, անտեր յերեխա կար, բերին, լցրին մեջը, հատակները մուրտառեցին, աննման տունը գոմ դարձրին։ Էդ վոչինչ, աղքատ-ուղքատ մարդիկ են, բալքի նրանց համար էլ մի քունջ եր հարկավոր կուճուրելու համար։ Լավ սենյակներից յերկուսը գրավել եր Ժանգոյենց Աստվածուրի թոռը։ Ժանգոյենք պապենական հոտաղ ու նոքար են յեղել հարևաններին, հեռավորներին, մինչև անգամ գեղերը քաղ են գնացել, սրա-նրա դռան փշրանքով են ապրել. հիմի Ժանգոյի թոռը «նաչալնիկ» դառած նստում եր էդ օթախներում։ Ինչքան պահած ցորեն, ալյուր ուներ, վոր գարնան դեմ, սովի ժամանակ շուկա պիտի դուրս բերեր, բոլորը գրավեցին։ Ինքն էլ գյուղերից կտրվեց։ Էլ չի կարողանում վոչ ծախել, վոչ առնել։ Գյուղերն իրեն համար ստերջ կով են դարձել, փետի նման հոտով կաթը ցամաքել է... Բայց էդ կրակիծն էլ վոչինչ, կդիմանար, յեթե իր ազիզներին փորձանք չպատահեր։ Յերբ կռիվները սկսվեցին, սուտ լուր յեկավ, թե բոլշևիկները բոլոր տղամարդկանց կոտորում են. իր յերեք տղերքն էլ սուտն ու զորթը չջոկեցին, գլուխներն առան փախան։ Յերկուսն անցան Պարսկաստան, մեկը սարերում բքի բերանն ընկավ ու փետացավ։ Էս մրմուռը ինչպես դուրս գնար իր սրտից...

Գիտակ մարդիկ գուշակում եյին, վոր բոլշևիկները յերկար չեն մնա։ Ռուսաստան սով է, յեկել են հաց ուտելու, շուտով յետ են դառնալու։ Մի քանիսն էլ ասում եյին, թե հայոց փախած զորքը միացած ինգլիզների, ֆրանցուզների զորքին, Բաթումի ու Բաքվի կողմից վրա յեն տալու բոլշևիկներին կոտորելու։ Իսկ մահտեսի Սահակը, տեր-Բչոյի տիրացուն, Աղթամարու կողմերից փախած էն սարկավագը, միշտ ասում եր, թե բոլշևիկների ժամանակը շուտով լրանալու յե, վորովհետև սուրբ գրքի մեջ հիշած Նեռի իշխանության վերջը հասել է։

Ինչքա՜ն եր հուսադրվել ինքը, ձմուռ Հաթոն, ինչքա՜ն արաղ եր խմացրել թե մահտեսի Սահակին, թե տեր-Բչոյին, բայց ամիսներն ամիսների յետևից անցնում են ու սրանց վերջը չի յերևում...

Ու մի օր էլ իրեն աչքալույս տվին. այդ օրը յերեկ եր, ուրբաթ օրը՝ Հաթոն գնացել եր բազար, վոր մշակներ վարձի... հանդիպեց տեր-Բչոյին, միասին մտան խմելու. ու տեր-Բչոն միկիտան Բարսեղի դախլտաջ, արաղի թասը կոնծելով ասավ.

— Հաթո՛, ջուրը վրեզ ա, ես անգամ հաստատ լուր կա։

— Վա՜յ, կարգին մատաղ, բերանդ լուս դառնա, եդ ինչ ասիր... Բարսեղ ջան, քո հոգու հոգին ուտեմ, մեն պոլ բութիլկա էլ բաց արա։

Տերտերը ցցեց ու ասավ.

— Բա՛, Հաթո ջան, աչքդ լուս, ասում են ինգլիզները Բաքու յեն հասել։ Մարդ ա յեկել, արանեցի մի մշակ ա, Բաքու վոտի վրա ձու յեր ծախում։ Երեկ ա յեկել. ասում են՝ իր աչքով ա տեսել ինգլիզներին իրանց բայրաղներով...

Ինքը խմելու գլուխ չունի—վոչ արաղ, վոչ գինի, բայց գինետունը մի կատարյալ հարսնքատուն դարձրեց. մտնողի փեշից քաշեց ու խմացրեց. այնքան, վոր մեկիտան Բարսեղն էլ վախեցավ և մտնող ու խմողին յետևի դռնով դուրս եր ուղարկում, վոր չլինի թե դալմաղալ բարձրանա, վորովհետև առաջվա ժամանակները չեյին, արաղ ծախելն արգելված եր, կարող եյին իմանալ ու իր բունը քանդել, ունեցածը քամուն տալ։ Այդ լուրից վոգեվորված ինքը տուն գնաց։

Եդ բանը լողի պչքին էլ քունն մոտ կգա. ամբողջ գիշերը անքուն անցկացրեց։ Հիմի էլ գերանդին կողքին, կծղող արտի մեջ, բանող մշակների մոտ, ինքը՝ ամղանա հողագործ Հաթոն, դալը յեզան նման, սամաթելը կոտրած, վիզը ցած և ծռել ու լուծի տակից դուրս բերել...

Ու հանկարծ վեր թռավ պառկած տեղից, չանթեց գերանդին ու, դեպի հնձող մշակները վազելով, գոչեց.

— Ձեզ տեսնեմ, տղերք ջան, դե շո՜ւտ, քիչ մնաց հա՜...

—

Հաթոն չիմացավ՝ ինչպես որը վերջացավ, հնձվորները բարդերը դիզեցին ու տուն դարձան։ Աշխատանքը սովորականից շուտ վերջացավ, բայց յերբ տուն հասավ, արդեն մութն եր. թեև կիրակնամուտ եր, բայց իսկույն հաց կերավ ու պառկեց։ Մի յերկու կունք քնելուց հետո, կես գիշերին, յերբ նրա ջարդված մարմինը բավական կազդուրվել եր, զարթնեց ու նորից ընկավ մտածմունքների աշխարհը։

Թեև ինքն էլ համոզված եր, վոր ուրիշ կերպ չի կարող լինել, վերջ ի վերջո ինգլիզները պիտի գան ու սրանց դուրս անեն, բայց լուրը այնքան հանկարծակի յեր ու այնքան ուրախալի, վոր ինքն էլ մեկ-մեկ յերկմտում եր ու թերհավատում։ Ճիշտ այն մարդու նման, վոր հանկարծ մեծ գանձ է գտնում ու իր բախտի վրա հիացած՝ ինքն էլ չի հավատում։

Շատերից լսեց։ Մենակ տերտերն ու մահտեսին չեյին նրան այդ աչքալույսը տվողը։ Վոչ միայն խանութները փակած նախկին վաճառականները, վորոնք նիհար ու դալուկ, փայտը ձեռներին, ընգնգալով, գողի նման պատերի տակ նայելով անցնում եյին փողոցով. վոչ միայն այն մարդիկ, վորոնց հետ ինքը սովորաբար խոսում եր բոլշևիկների մասին, այլև մի քանի ջահել տղերք, վորոնք այնքան էլ հակառակ չեյին բոլշևիկներին, նույնպես, թեև մի քիչ ծածկաբար, մի կիսատ աչքալույս եյին տվել նրան, արժանանալով խնձորի ու տանձի հյուրասիրության։

Կարծես ամբողջ քաղաքն եր խոսում։ Քիչ եր մնում գնա բոլշևիկների մոտ, հենց նրանց մեծի—գործկոմի նախագահի մոտ ու նրան էլ հարցնի. նրան, վորից այնքան սարսափում եր առաջ. իսկ այժմ, կարծես նրա հմայքն արդեն ընկել եր։ Մինչև իսկ մի յերկու անգամ ինքն իրեն լուրջ հարցրեց—գնա՞, թե չէ։ Բայց լավ համարեց առայժմ համբերել. կարող եր գործը փչացնել։ Նրան թվում եր, թե ինքը մի գաղտնի ծրագիր ունի և գործկոմի նախագահի մոտ գնալով, այդ ծրագիրը կբացվի, ու գործը կփչանա։ Նրան թվում եր, թե դրանով կարող է մի գաղտնիք բանալ, վորով դավաճանած կլինի ինգլիզներին։

Ու նրան թվում եր, վոր յեթե առայժմ այդ բանը ծածուկ պահի, նրանց գործը ավելի աջող կգնա։

IV

Կիրակի առավոտը, ժամն արձակվելուց հետո Ճմուռ Հաթոն նկատեց, վոր տեր-Մաղաքը մի ուրիշ տեսակ է նայում իրեն և կարծես մի բան է ուզում ասել։ Ինքն էլ, չգիտես ինչու, կարծես կարիք զգաց նրա հետ խոսելու։ Ժամի դուռը պաչեց, հեռացավ, բայց տեսնելով, վոր տերտերն ուշանում է, դարձավ նորից պաչեց, գլխամբ կանգ առավ ու նորից պաչեց, մինչև տերտերը դուրս յեկավ։

— Հը՞, Աթանաս ապեր,—ասավ տեր-Մաղաքը գավազանին հենված քայլելով և փոքրիկ, կոպերից դուրս պրծած ջրալի աչքերը ճպպացնելով,—չես յերևում. ու յետ նայեց, աչքի տակով մի գաղտնի հայացք գցելով, տեսնելու, թե իր յետևից ովքեր դուրս յեկան։

Հաթոն զգաց, վոր տերտերը բան ունի ասելու ու քիչ ծռվեց դեպի բեմի յետևը տանող նեղ փողոցը։

— Որհնած, չես յերևում,—ու աջը յերկարացրեց։

— Փառավոր մնաս,—ասաց Հաթոն, աջն առնելով,—աշխատող մարդ ենք. շաբաթ-գլուխ չայիրներն ու արտն ենք։

Յեվ տեսնելով, վոր խոսակցությունը սովորական սահմաններից չի անցնում, մտածեց հեռանալ։

Տերտերը հասկացավ նրա միտքն ու շտապով հարցրեց.

— Ասում են բան ես իմացել, Աթանաս, ինչ կա...

— Բա՞ն... Ի՞նչ բան։

— Բաղվից խաբար ես առել։

— Բաղվի՞ց... Ե՞հ, ասում են էլի, ինչ գիտամ։

— Բարսեղի տեղը դարտկեցիք հա՛,—ասավ տերտերն ու, գավազանը առաջ ուղղելով և աչքերը չռելով նրա ծայրին, նշան արավ Հաթոյին առաջ շարժվելու և ալեխառն մորուքի տակից կզակը քորելով քայլեց։

Հաթոն հետևեց նրան։

— Եդ նենգավորից հեռու կաց, Հաթո,—ասաց նա սպառնալից, բայց քաղցր տոնով։—Նա ինչ ա, վոր ինչ ցավի դարման անի։ Արաղից գլուխն եր ցավում։

Հաթան հասկացավ. խոսքը վերաբերում էր տեր-Բշոյին:

Տեր-Տետոսաղի մահից հետո նրա ծխերն անցել էյին յերկարաջարդ քահանա տեր-Բշոյին: Տեր-Մաղաքը մի քանի յուղալի ծխերի աչք ուներ: Դրանցից մեկն էլ ծմուռ Հաթան էր, վոր թեև թալանվել ու փետրահան էր յեղել, բայց, ինչպես ասում էր տեր-Մաղաքը, «ուղտը ինչքան էլ սատկի, կաշին մի իշի բեռ է». բացի դրանից, հույս ուներ, վոր նա շուտ-ուշ ելի են մեջը տան տերն է լինելու: Բայց տեր-Բշոն արդեն նրա տունը գնացել էր, մի քիչ դժար էր խլել—առելիք կդառնար: Այժմ ժամանակը շատ հարմար ու նպաստավոր համարեց ախոյանին վարկաբեկելու և իր ապագա անելիքների ծրագիրը դրսելու համար:

— Ախար արաղն ինչի՞ յես խմացնում, ջուրը չհասած բոբիկնում ես. սպասիր, թող խղճս կատարվի, ես շներն անատակվեն, հետո նստենք սուրբ սեղան որհնենք, սրանց հոգեհացն ուտենք ու հարսնիքը սարքենք: Են վախտը արաղն էլ մեջտեղ կգա, կոնյակն էլ, ռոմն էլ, մաղեն էլ. կուզես Դոնի զուրգել էլ բերել տուր, թե կողակի գլխից կամ իշխանից զզվել ես:

Այս արապարուղի խոսքերը միանգամից լարեցին Հաթոյի յերակները, և նա պինդ բռնելով հոգևորի ձեռից ասաց.

— Տերտեր ջան, կարգիդ մատաղ. մուխլին են որը մի բան գցեց ականջս, դրուստ ա. դու ըսես քո կարգը, եղ աղթամարցին ինչ գիրք ա մոխի արել, վոր առել ա, թե եստոնց որը կարճ ա:

Տեր-Մաղաքն զգաց այն, ինչ վոր կզգար ձկնորսը, վոր տեսնում է ուռկանը ձկներով լցված.

— Ի՞նչ... աղթամարցիս վո՞րն ա. են ցնդած սուտ ձգնավո՞րը... Գնանք, Հաթո ջան, գնանք, յես քեզ խոկականն ասեմ, աստծու իրան բերանի խոսքն ասեմ, և վոչ թե ապրոյնիկ տեր-Բշոյի նման արագ կոնծեմ ու սուտ մաղթանք անեմ:

Միասին մտան յեկեղեցու բակի խուցը:

Խուցի մեծ պատուհանը, վորի ապակիները դեղին ցեխով պատած, ձիթած թղթի պես մի սակավ լույս էյին ներս թողնում, փակած էր, կարծես յերբեք չբացվելու: Վերևի փոքրիկ լուսամուտից էր մի քիչ լույս թափվում ներս և ծուխը դուրս գնում:

Խուցը լցված էր ծխով և ծանր ոդով: Թախտի վրա, վոտքերը կախ գցած, շարվել էյին յերեք հոգի. թախտի դիմաց, հողե հատակին վոտները փռած նստած էյին չորս ծերունիներ, վորոնք յեռանդով չիբուխ էյին ծխում:

— Բարի վաղջույն: Դու էլ եստեղ ես, Սերոբ աղա, ժամից ինչպես փախար, չտեսա,—ասաց տերտերը դառնալով մոտ հիսուն տարեկան, այտերից ու կզակի տակից կնճիռները կախ մի մարդու: Սա քաղաքի առաջնակարգ հարուստներից էր, այժմ ամեն ինչ կորցրած: Նրա կողքին նստած էր կոկարդը ոսկած, խունացած գլխարկով Փանոս աղեն, զինվորական տաճանի նախկին գրագիրը: Մի քիչ հեռու նստած հայտնի յերգասաց Կարապետ աղեն էր, վոր ամբողջ գավառում հայտնի էր իր հարստությամբ ու ժլատու-

թյամբ, և մեկ էլ նրանով, վոր շաբաթ յերեկոներին իր գիլ ձայնով «լույս զվարթ» էր յերգում ու զատկին «Քրիստոս հարյավ» ասում: Նրան ճանաչողները ձայնի բարձրացման աստիճաններից կարողանում էյին գուշակել, թե քանի մանեթի մոմ ծախած կլինի զատկի յերեկոյան, վորովհետև այդ արտոնությունը (իր ասելով՝ պարտականությունը) տասներկու տարուց ի վեր իրեն էր պատկանում:

Հատակին նստածներից մեկը կապալառու Տոնոն էր, մյուսը առաջին անգամ իր մեծ խանութը «մագազին» անվանող Կոսոն, վորին Մողոզի Կոսո անունն էյին տվել սրախոսները, վորովհետև իբր՝ նրա յերկար ու տափակ քիթը գլուխը ընկած մողես էր հիշեցնում: Մյուսները խուցից ու գավթից անբաժան, հեքիաթ ասող հին փափախավոր ծերունիներ էյին:

Սրանք ամեն որ հավաքվում էյին ու խոսում և չէյին կշտանում իրենց ասածներից, նման այն կնոջը, վոր թանգագին հարազատին կորցնելով՝ չի հաշտվում ու ամեն որ գերեզմանատուն է գնում, նստում նրա գերեզմանի վրա ու անվերջ վողբում, շարունակ նույնը կրկնելով...

Այս կորուստ վողբացողների հավաքատեղին կամ սափրատունն էր, կամ յեկեղեցու գավիթն ու խուցը:

— Յես հաստատ բան եմ ասում,—շարունակեց ընդհատված խոսքը Փանոս աղեն խզված ձայնով, վոր մի յերկու հին ճմրթված ռուսերեն լրագիր բռնել էր ձեռին.—յերկո՞ւ ամիս, ա՛յ, կտեսնեք, թե յերկու ամսից հետո սրանք չըքաշվեցին, իմ անունը Փանոս չլինի: Անգլիայի թագավորն արդեն թուղթն ստորագրել է, սպասում են Ֆրանցիայի պատասխանին. դա դիպլոմատիա յե, հանաք-մասխարություն չի, վոր իսկույն պատասխանեն. շատ չի քաշի, հոռ-եգուց եղ պատասխանն էլ կստանան, ու են ժամանակը դուք տեսեք, թե ինչպես սրանց չորանի շան բերանն ընկած գելի նման բուրդը գզում ու վո՛ն են անում. վո՛ն, մեռզա՛վեց, կասեն... Ե՛հ, ինգլիզ կասեն, Անգլիա՛, անգլիչանե՛, հանաք հո չի. Նժդեհի զորքը հո չի, վոր ռուսի ըշտիկի ծերը չտեսած կծիկը գնեն ու մկների նման Պարսկաստանի ծակերը հազար թումանով տանեն: Դրան ինգլիզ կասեն, առ-յեստ՝ անգլիչան, ծովերի ու ցամաքների տերը. դա նեմեցին քամակի վրա գցեց, դրա տունը չքանդվի, դրան ռուս կզիմանա՛, են էլ բոլշևիկ ռուս...

— Գիտա՞ք ինչ կա, աղբեր,—ասաց մեջքը պատին տված, հատակին նստած ծերունիներից մեկը, Զանենց Ասոն, վոր հայտնի հեքիաթ ասողի հռչակ ուներ.—յես ձեզ մի բան ասեմ, լավ լսեք:

— Սրանից շատ տարի առաջ, ջահել վախտս, Յերևան ագվակատ Մացակ աղի տանը նոքար ժամանակս, մի որ մի քանի ռուս մարդիկ թվանքներով ու պատրոնդաշով աղիս մոտ հյուր յեկան: Լավ քեֆ արին, մինչև կես գիշեր նստան: Քնելուց առաջ աղես հրամայեց, վոր իր ձին, թվանքը, շորերն ու վորսի բաները պատրաստեմ, առավոտը վորսի պիտի գնան: Առավոտը վաղ ճամբա ընկան, ինձ էլ հետները վերցրին:

Խոր Վիրապի կողմերը, Արաքսի ափերին, ես վորսկանների խումբը ցրիվ յեկավ, յես էլ ինձ համար թամաշ անելով շուռ էյի գալիս, մեկ էլ մի

պատիկ ձորի մեջ մի զարմանալի բան տեսա։ Մեծ թափուղի նման հողագույն մի կծիկ ընկած էր գետնին, մի յերկար սև ոձ պոչը խրել էր կծիկի մեջ ու գլուխը բարձրացնելով, վողջ մարմինը շրմփացնում էր եդ կծիկին։ Աչքից լեզուս կապվեց. փախա. ամա զարմանքը ինձ կալել էր. կանգնեցի հեռու ու մոտիկ արի։ Տեսա, ոձը չի կարողանում հեռանա, սիրտ արի ու մոտ գնացի... Ի՞նչ տեսնեմ. տե՛ր աստված, ես ի՜նչ բան էր... Ես վիշապը, պոչը խրված փշերի մեջ, ինչպես ձութով կպցրած, քաշում էր ու չէր կարում պոկի։ Մարմինը վոլորում էր, լեզուն դուրս գցած, գլուխը ծամռում, մեկ քսում գետնին, մեկ գիք բարձրացնում, պահում էր ինչպես ցցած փետ, ու մեկ էլ ուժով շրմփացնում եդ փշերին։ Քիչ-քիչ փշերը խրվում էյին նրա կակուղ մարմնի մեջ, նա էլի հանում էր ու նորից խփում. ու քանի գնում, էնքան ավելի յեր կատաղում ու ավելի թափով խփում։ Փշերն էլ մի-մի անգամ շարժվում էյին։ Խփեց, էնքան խփեց, մինչև վոր ծվիկ-ծվիկ եղած, բերանն ու մարմինը ջարդված փռվեց գետնին։ Եդ ժամանակ տեսնեմ ադես անցնում էր. ձեն ավի, մոտ յեկավ, մոտիկ արավ, մոտիկ արավ, մի քար վերցրեց, խըփեց ոձի կիսամեռ գլուխը ջնջխեց ու ասավ. «Տեսնում ես, Ասո, սա վոզնի յէ, ես փշերն էլ սրա զենքերն են, սրանցով է պաշտպանվում իր թշնամուց»։ Ու վերցրեց գցեց չանթի (տոպրակի) մեջ։ Վոզնի, գիտաք էլի, այսինքն կոզնի։ Եդ օրվանից յես եդ բանը չեմ մոռանում։

— Հիմի գիդա՞ք ինչ կա. դուք ինձնից խելոք, գիտնական մարդիկ եք, ամա իմ չափ չեք ապրել, աշխարհ չեք տեսել... Իմ կարճ խելքով եդ ձեր գոված ինգլիզն ու ֆրանցուզը ոձի նման պոչները ավել են բալշեվիկների ձեռին ու մարմնով խփում են ու հա խփում։ Ի՞նչ դուրս կգա դրանից։ Իմ հասկացածով իրանց մարմինն են ծվատելու ու իրանց գլուխը ջնջխելու։ Դրա համար էլ չեն իշխնում, վոր թափ առնեն ու ուժով խփեն։

Լսողների վրայով սառը քամու պես մի բան անցավ։ Մի քանիսի դեմքին հուսահատության արտահայտություն նշմարվեց։ Ասոն, վոր թեև աշխարհից քաշված, իր որը ապրած մի ծերունի յեր, բայց իրրև խելոք, առակավոր խոսքի վարպետ, վորոշ հարգ ուներ շրջապատի աչքում։ Բացի դրանից, նրա որդան, վոր յերկար տարիներ Բաղվում բանվորություն էր անում, վերջին տարիները մի յերկու անգամ տուն էր յեկել, վորով ծերունի Ասոն վորոշ տեղեկություններ էր իմանում նոր իշխանության մասին։

— Բա վոր եդ ոձը թեժ պղպղատե շապիկ հագած լիներ, կոզնին ինչ որը կընկներ, հալալ նոքար Ասո,— վրա բերեց Փանոս ադեն տպավորությունը ցրելու համար և, իր ասածին ուժ տալու նպատակով, շեշտեց «նոքար» բառը։

— Եդ առածները թողեք, հալալ վախտ չի, եսանց բան կա,— ասավ Ճմուռ Հաթոն խեթ նայելով Ասոյին և ապա դառնալով տեր-Մաղաքին՝ թախանձեց, վոր ավետարանը մոտիկ անի։

Տերտերը, վոր անհամբեր սպասում էր իր դերի մեջ մտնելու, էլ ուրիշ խոսք չավեց։ Սև տափը գրպանից հանելով, դեղնած մատներով մի հաստ

ծխախոտ փաթաթեց, դրեց մաշտուկը, Սերոբ ադի կրակից վառեց ու փոշոտ սեղանից մի կաշեկազմ գիրք վերցնելով դրեց ծնկանը։

— Ի՞նչ եք սուտ դագեթների յետևից ընկնում, կամ նաղլների. ամեն բան սուրբ գրքի մեջը կա, ինչ եք սար ու ձոր ընկնում,— ասաց նա ակնոցները սրածայր կոր քթին դնելով և պոչերը ականջների տակն անցկացնելով, խոկական բուի հայացքով.

— Անհավատներին աստված իշխանությունը ժամանակավոր է տալիս. ժամանակը վոր անցավ, նրանք էլ կանցնեն, ինչպես մորեխը գալիս է ու անցնում։

Բոլորը հետաքրքրությամբ նրան նայեցին, մանավանդ ծերունիները, վորոնք մարած աչքերը գցեցին նրա ակնոցներին ակնածանքով. իսկ Ասոն պարտված խոյի նման գլուխը ցնցեց ու նայեց դռան կողմը։ Ճմուռ Հաթոն նստեց տերտերի կողքին ու լարված ուշադրությամբ նայում էր մեկ նրա շրթունքներին, մեկ գրքի թերթերի մեջ թաղվող նրա մատներին, ինչպես քուրմից պատգամ լսող հեթանոսը։

— Աստված իր հայտնությունը մի անց չի անում,— խոսեց տեր-Մաղաքը, իր նեղս ընկած, մագաղաթյա չոր յերեսին լուրջ արտահայտություն տալով։— Յերանելի Հովհաննու Հայտնության ԺԱ գլխի մեջ հեթանոսների համար ասում է. «Սուրբ Քաղաքը նրանք կկոխեն քառասուն և յերկու ամիս»։

Լսողները հետզհետե լուրջ և յերկյուղած դեմք էյին ընդունում։

— ԺԲ գլխի մեջ,— շարունակեց տերտերը կարդալ և մեկնաբանել,— ասում է. «Կինը արեգակը ծածկոցի պես փաթլած իր վրա, լուսինը վոտների տակ և գլխի վրա տասներկու աստղ, հղի յեր. ծնեց և ծնելուց հետո գնաց անապատ, այնտեղ կերակրվելու հազար յերկու հարյուր վաթսուն օր...»։

Ունկնդիրները հիացմունքով նայում էյին նրա ամրամրացող միրուքին, չոր շրթունքներին, վորոնց տակից յերևացող սև-դեղին ատամների արանքից յերբեմն փուքսի նման փչելով դուրս էր թռչում ծուխը, յերբեմն հառում էյին գրաբար բառերն ու բացատրությունը։ Տերտերն ավելի վոգևորվեց, նայեց նրանց, առանձնապես Հաթոյին և շարունակեց.

— Տեսեք, տեսե՛ք, վո՜րտեղ է աստվածային ճշմարտությունը,— և կարդալով «Հայտնության» ԺԳ գլուխը, ասաց, մատը տողերի վրա խաղացնելով. «Ծովից դուրս յեկավ մի գազան, վոր ուներ յոթ գլուխ և տասը յեղջյուր և տասը յեղջյուրների վրա տասը խույր. և նրա գլխի վրա հայհոյության անուն... և ամբողջ յերկիրը զարմացավ գազանի վրա, վորովհետև վիշապը տվեց նրան իր թագավորությունը և բոլորը յերկրպագեցին վիշապին, վոր իշխանություն տվեց գազանին իշխելու քառասուն յերկու ամիս... բոլոր ազգերի ու լեզուների վրա...»։

— Հազար յերկու հարյուր վաթսուն օրը կամ թե քառասուն յերկու ամիսը ինչքա՞ն է անում, Հաթո,— ասաց տերտերը վեհապանծ հայացքով ու խորամանկ ժպտով, ձեռքը ծալած գրքի կազմին դնելով և մյուս ձեռքով մաշտուկը բերանը կոխելով։

Հաթուն ապուշ հիացքով նրան էր նայում։

— Հազար յերկու հարյուր վաթսուն օր… խորհմաստ մաթեմատիկոսի դեմքով, մատների վրա հաշվելով, մեջ ընկավ գրագիր Փանոս աղեն.—Եղ անում է՝ ճիշտ յերեք ու կես տարի։

Կարապետ աղեն հանկարծակի ջուր կուլ տված մարդու պես բարձր ձայնով կոկորդը մաքրեց, այնպես, ինչպես «լույս զվարթը» յերգելիս մաքրում էր, և ասաց.

— Ցավա՛չ, եղ վո՞ր օրվանից ա հաշվվում։

Բայց Փանոս աղեն նրան ընդհատեց ու շարունակեց իր հաշիվը։

— Քառասուն ու յերկու ամի՛ս… Եղ էլ կանի ճիշտ յերեք տարի ու կես…

— Յերեք տարի՛ ու կե՛ս,—մրմնջացին մյուսները, ու տիրեց մի խորհրդավոր լռություն։

— Այո՛, յերեք տարի ու կես,—ուրախաձայն աղաղակեց տեր-Մաղաքը, հաղթանակը տարած զորավարի ինքնամոռաց հպարտությամբ։—Սուրբ գիրքը մի նշանախեց էլ սուտ չունի. ամեն ինչ պիտի կատարվի… «Յերկինք և յերկիր անցցեն և բանք իմ մի՛ անցանիցեն», ասում է ավետարանը։ Հաշվեցեք 1920 թվի նոյեմբերի վերջից ու հաշիվը պարզ կլինի։ Ուզո՞ւմ եք հաշվենք 1921 թվի փետրվարից՝ մեկ է, մեջ տեղը յերկու ամսվա տարբերություն կանի…

V

Աստվածավախ գավառի այս փոքրիկ քաղաքի մեծ ցեցերը Խորհրդային իշխանության հաստատումից ի վեր թունավոր ատամները հանված օձերի պես իրար փաթվելով գալարվում եյին և փչչացնելով, բերանները բաց ու խուփ անելով քարշ եյին տալիս մի վողորմելի գոյություն, հիշելով իրենց յերանավետ օրերն ու յերազելով, թե գուցե մի օր իրենց շուռ յեկած ճախարակը կրկին յետ կդառնա ու աջ կպտտի։ Յեվ իրենց անզորությունից կրված, վորսորդի քաղցած շների նման դունչները հովին բռնած՝ հոտ եյին քաշում ու ագահությամբ կլանում օդի մեջ անհայտ տեղերից տարածված այս կամ այն լուրը իշխանության փոփոխության մասին։ Նրանք շատ բան եյին լսել բազարում, պատերի տակ, սափրատանը, խուցում ու յեկեղեցու գավթի անկյուններում։ Լսել եյին, վոր տեր-Մաղաքը գուշակել է այս իշխանության վերջը, բայց դեռևս վոչ մի անգամ այնպես հաստատուն խոսք չեյին լսել, ինչպես այսօր։ Տեր-Մաղաքը, վոր լսելով, թե աղթամարցի մահտեսին գուշակություն է արել, խլելու համար նրանից մարգարեյական փառքը, յերկու ամիս շարունակ Նոր-կտակարանը տակն ու վրա յեր արել և վերջապես գտել էր այդ տեղն ու սերտել, այժմ իր գրքով դարձավ նրանց համար մի կախարդական ծերունի, ճշմարտախոս մարգարե և սրբազան պատգամախոս։ Նրա յերկար միրուքը, վորի վրա շարունակ փայլում էր ագահաբար լափած կերակուրի յուղը և վորի համար նա «տեր-Լըփո» անունն էր ստացել, այժմ թվում էր նրանց յեկեղեցու կիսախավար պատին նկարած մի

աստվածային միրուք։ Եվ առարկություն, հակաճառություն, յերկմտություն չկար, ինչպես առհասարակ լինում էր։ Խոսքն այնքան պարզ էր և մանավանդ այնքան իրենց սրտին մոտ, վոր ամեն մեկը հանցանք էր համարում րոպեյի վեհությունը պղծել իր ամենաչնչին կասկածով։ Ինչպես մաթեմատիքական դժար խնդիր լուծող աշակերտներ՝ ամենքը լուռ, մտախոհ, մատներով հաշվում ու մռմռում եյին։

Ծմուռ Հաթուն, վոր յերկար հաշիվներ չեր սիրում, գործնական մարդու վողևորությամբ վեր թռավ ու, դառնալով կապալառու Տոնոյին, ասավ.

— Յես քո վոտը պաչեմ, Տոնո ջան, մե հասի, գտի արանցուն, ասում են իրիկուն յեկել էր քաղաք, վորտեղ ըննի՝ գտի, բեր, ասա՝ Հաթուն ա կանչում։

— Վո՞րտեղ կըլնի,—ասավ Տոնոն ու վոտի կանգնեց։

— Ջաղացը, ջաղացը. թե նստեղ-չըլավ, Մանուկի թավլեն հարցրու։

Տերտերը շարունակում էր իր բացատրությունները, մյուսները նորից եյին հարցնում ու կրկին հաշվում։ Մի կենդանի, թեթև, սրտաբուղխ խոսակցություն սկսվեց, ինչպես սկսվում է բանտարկյալների մեջ, յերբ նրանց հայտնվում է իրենց ազատության լուրը։

Կես ժամ չանցած ներս մտավ Տոնոն նախկին ալրավաճառ Հարեթի հետ, վորը մի ժամանակ դաշնակցական տեղական յենթակոմիտեյի գանձապահը լինելով՝ անձնական ու ընդհանուր գանձը խառնելով խառնուրդն ընդարձակել էր, իսկ այժմ ալյուրի ու կոմիտեյի միացյալ հաշիվներն էլ, իշխանությունն էլ կորցրած, օրվա մեծ մասը ջաղացումն էր անցկացնում, բաղարջ ուտելով, փնթփնթալով և համեմատելով ներկա անտանելի ու անցյալ յերանելի օրերը հայոց ազգի ընտիր ու ազնիվ իշխանավոր դասակների համար, վորոնցից մեկն էլ ինքն էր։

Նրանց հետ էր և արանեցին, մի կարճ, դեղնավուն, բարակ վերարկուհագին և փոքրիկ, քոլոզանման փափախ գլխին գյուղացի։ Սրան ընդունեցին ինչպես մի պատգամաբերի։

Հաթուն վրա ընկավ.

— Տո յես քո են… են… են… հոր հոգին… կրծեմ. եղ ու՞ր ես պահվել, չես երևում։ Ասա, է, մե ասա, ի՞նչ խաբար ես բերել։

— Ի՞նչ խաբար։

— Բաղվից… Ասում են նստեղ բան ես տեսել, բան ես իմացել… պատմի տեսնանք։

— Ի՞նչ բան…

— Ինգլիզներին։

Գյուղացին տարակուսեց։

— Հը՞… ինչ ինգլիզ…

Ու շեկլիկ, խորամանկ աչքերը գցեց շրջապատողներին, կարծես վորոշելու, թե ինչ մարդիկ են և ինքը ինչ շրջապատում է գտնվում։

Նրան տարակուսանքից հանեց Հարեթը, վոր գիտեր նրա պատմությունը։

— Տօ, ինչ ես ոխտ որ դարման չկերած եզի պես շշմել, դե առա եկ. պատմի, ինչպես տեսար ինգլիզներին:

— Տերտերն ասում ա, վոր սրանց ժամանակը լրանում ա ես տարի,— մեջ ընկավ աշխուժացած Կարապետ ապեր,— սրանց իշխանությունը վերջանալու յա:

Արանեցին, վոր մի քանի անգամ կիսատ-պռատ լսել եր ջաղացում աղթամարցու և տեր-Մաղաքի զրուցակցությունների մասին և այժմ տեսնելով հավաքվածներին, տերտերի գիրքն ու կողքին դրած գիրքը, կարծես ամեն ինչ հասկացավ: Ու վախենալով, թե տերտերն առաջին ավետաբերի պատիվը իրենից ուզում ե խլել, առավ, առանձնապես Հաթոյին նայելով ու խորամանկ դեմքին մի զավեշտական լրջություն տալով.

— Ի՞նչ վերջանալու... վերջացել պրծել ա. ինգլիզները Բաղու յեն մտել,— ու ավելացրեց պարծենալով.— հինգ որ առաջ տեսա:

— Դու տեսա՞ր,— հարցրեց Հաթոն:

— Ա՛յ ես աչքերովս,— ասաց արանեցին:

Յեվ պատմեց, թե ինչպես ինքը ձվի զամբյուղը ձեռին կանգնած՝ բազարում իրարանցում ընկավ, ժողովուրդն սկսեց վազել դեպի Պարապետ, կոոպերատիվը փակվեց, ինչպես ռուս զորքերն անցան շարքերով պողոտաները գլխներին, ինչպես ճառախոսները խոսեցին շարունակ ինգլիզների անունը տալով: Յեվ նկատելով լսողների հետաքրքրությունը, ավելի ես ոգևորվեց ու մի քանի բան ել իրենից ավելացրեց, վոր չեր տեսել կամ լսել, թե ինչպես թափի ձենն ե լսել, եդ ձենն ել ինգլիզների թափի ձեն եր. ինքը թափերի ձենը ճանաչում ե, վորովհետև մի տարի պատերազմի ժամանակ պրող գնալիս լսել եր: Ինքը հենց նույն որը դուրս ե յեկել Բաղվից. չի տեսել, թե ինչպես ռուսների զորքը գնալուց հետո ինգլիզի զորքը մտավ, բայց հիմի արդեն մտած կլինեն: Յեվ ավելի վոգևորված ավելացրեց.

— Ինգլիզներն հիմի Ղազախն ել անցած կլինեն. կարելի յա Երևնու տակն ընին:

Հիացմունքը կատարյալ եր: Գյուղացու կցկտուր խոսքերը վորսում եյին հափշտակությամբ, ամեն մեկը իր յերևակայության մեջ լրացնելով, ինչ-վոր նա կիսատ եր թողել:

— Պրծա՛վ կոպերատը,— բացականչեց Մաղաքի Կոսոն:

— Յես վոր ասում եմ՝ սուրբ գրքի խոսքերը կկատարվեն, բա դուք եմ ասում,— վրա բերեց տեր-Մաղաքը, իրեն կնիք գյուղացու խոսքերին, և լռություն տիրեց:

— Աստծով ծերն եսենց ել կհասնի եկի,— ասավ Հաթոն, սրբելով թաց շրթունքները աջ դաստակով:

— Սրանց իգն ու թողն ել կկորչի եսօր-եգուց,— վրա բերեց խռպոտ ձայնով Փանոս ապեր:

— Կկորչի՛, կկորչի՛ տիրոջ կամքով, և «Սոդոմ-Գոմորի» *) նզովքը

*) Կոմունիստներին այդպես եյին կոչում այս շրջանում:

ձայնը կքարանա մեր փողոցներում,— վերջարանեց տեր-Մաղաքը:

Դրսից յերգի ձայն լսվեց...

VI

Յերբ խուցից ցրվեցին, բազարում իրարանցում եր ընկել: Փոքրիկ քաղաքի կենտրոնը կիրակիներին հատուկ կենդանություն եր ստացել:

Բոլորն շտապում եյին դեպի բուլվարի մեծ հրապարակը: Պիոներներն ու պատկոմները զարդարված տոնական հագուստներով, դրոշակներով, թմբուկը առջևից, կայտառ յերգելով անցնում եյին բազարի միջով: Մի քիչ հետո կանոնավոր շարքերով անցավ զինվորների տեղական վաշտը: Նրանց յետևից վազում եյին բոբիկ ու կիսատկլոր յերեխաներ:

— Յերևանից ավտոմոբիլով մարդիկ են յեկել, բոլոր կուսակցականները հավաքվում են, միտինգ ե լինելու,— տարածվեց բազարում, վորտեղ տեղացիներից զատ, լցված եյին և գյուղերից յեկած զանազան մարդիկ— վարձվող հնձվորներ կամ մթերք բերած գյուղացիներ:

Այդ լուրի հետ կայծակի արագությամբ, չգիտես վորտեղից և ինչպես, տարածվեց սոփրատանը հավաքվող բազմության մեջ, վոր տերտերի գուշակությունը կատարվել ե, և անգլիացիք արդեն Բաղու յեն մտել ու շարժվում են դեպի Յերևան:

Ծմուռ Հաթոն յերբեք միտինգի չեր յեղել: Ինչքան տեսնում եր հավաքված բազմություն, ճառախոսություն, աչքի տակով մի արհամարհական հայացք գցելով, գլուխը կախում ու հեռանում եր, մտածելով, վոր խենթ մանուկները միայն կարող են կանգնել ու բերանը բաց լսել զավզակությունները:

Բայց այսոր Հաթոն ել շտապեց դեպի բուլվար: Գնում եր հսող բազմության հետ ու պատկերացնում, թե ահա հաշվեհարդարի ժամանակը հասել ե: Ինչպես վոր արանեցին պատմեց, եդպես ել եսենց ե լինելու: Ինչպես յերևում ե, ինգլիզները հասել են, գուցե և Յերևանն ել վերցրել, ու սրանք հավաքվում են կծիկ գնելու: Ջե՛ վոր Նժդեհի փախչելուց առաջ ել հայոց զորքերն ու ադերը եդպես հավաքվեցին շարքե-շարք ու հետո փախան սարերը:— Ախա՛յ, ախա՛յ, գնացեք, յես ձեր գնացած ճամբեն օրհնեմ:

Ու նրան թվում եր, թե արդեն ամեն ինչ փոխվեց: Արեն եյի ժպտում եր առաջվա նման, եյի ինքը գյուղերն ե գնում, իր գլխի տերն ե, իր ապրանքի ու տան հերը:

Իսկապես վոր չտեսնված բազմություն եր հավաքված: Մի կողմը պիոներն ու պատկոմները իրենց դրոշակներով, նրանց յետևից խմբված մանուկների բազմություն՝ նախանձ հայացքով նրանց դիտող, մյուս կողմը տեղական հատվածները— բատրակները՝ Ծնոյի տղի առաջնորդությամբ: Դիմացը զորքն եր շարված, սրանց մոտ ել քաղաքի արհեստավորները, նույնպես դրոշակներով: Վորբանոցի յերեխաներն ել մաքուր զգեստ հագած՝ շարժվել եյին այնտեղ պատավ ու չոր դեմքով կառավարչուհու հետ: Գավկոմը,

քաղաքի գործկոմը և բոլոր պաշտոնյաներն ու ծառայողներն այնտեղ էին։ Քաղաքային տան կողքին կանգնած էր մի կանաչագույն ավտոմոբիլ, ինչպես ցատկելու պատրաստ մի ահագին գորտ, աչքերը չռած։

Ոգոստոսյան արևը մի անուշ ջերմություն էր սփռում լեռնային զով ու հստակ ոդի մեջ, և պայծառ շողքերը կարմիր դրոշակների ու գույնզգույն հագուստների վրա փայլելով մի գեղանկար պատկեր էին հորինում։

Վաղուց էր, վոր Ճմուռ Հաթոն այդպիսի գեղածիծաղ պատկեր չէր տեսել, այդպիսի անուշ զգացմունք չէր վայելել։ Նրա սրտի վրայից կարծես մի ծանր բեռ էր ընկել, և նա շնչում էր լիաթոք, ազատ... Ու ներքուստ ներդաշնակում էր իր հիացումը դրսի հրաշագեղ պատկերին։

Վոմանց համար գուցե և աննկատելի մնաց, վոր Հաթոյի պես շատերն էին ներկա այսորվա միտինգին։ Հաթոն գիտեր, բայց վոչ վոքի չէր մոտենում, նույնիսկ Կարապետ աղին ու Տոնոյին, կարծես առայժմ չուզենալով նրանց մասնակից անել իր յերջանիկ զգացումներին, ու միայնակ, միայնակ վայելելու այդ վայրկյանի ամբողջ քաղցրությունը...

Քաղաքային շենքի դռնից դուրս յեկավ մի թխադեմ, բեխ ու մորուք ածիլած, յերկարահասակ յերիտասարդ, խոշոր աչքերով ու լուրջ դեմքով, շրջապատված տեղական մի քանի գործիչներով։ Նա արագությամբ բարձրացավ պատին կից շինած քարե սանդուխքով, կանգնեց վերի աստիճանի վրա ու հաղթական դիրք ընդունելով, դարձավ դեպի բազմությունը, վոր ընդունեց նրան բուռն ծափահարությամբ։

Տիրեց խորին լռություն։ Բոլորի հայացքները դարձան դեպի նա։

— Ընկերներ և քաղաքացիներ,—գոչեց նա վորոտագին ձայնով,— այսոր ձեզ մի շատ կարևոր նորություն եմ հաղորդելու... Այն որից, յերբ կազմվեց խորհրդային իշխանությունը, միջազգային բուրժուազիան հանգիստ չուներ։ Ատամները սրած, նա ամբողջ ճիգերը լարում էր զինելու բոլոր սև ուժերը Կարմիր Մոսկվայի դեմ, խեղդելու իր ճիրաններում առաջին բանվորա-գյուղացիական պետությունը, վորպեսզի իր յերկրներում ծայր տվող ու ծավալվող հեղափոխական շարժումները զսպե... Այդ կռվի գլուխն անցած էր կապիտալիստական պետություններից ամենահզորը—Անգլիան...

Հաթոն, վոր ձեռքը ճակատին արևի շողերից պաշտպանելով աչքերը հառել էր խոսողի բերանին, ականջները սրել վորսալու նրա բերանից արագությամբ հոսող բառերը, «Անգլիա» բառից ցնցվեց, վորովհետև այդ բառը միայն հասկացավ, ու մտածեց. «Ըհը՛, հասավ, հիմի կասի թե Անգլեն ինչ ա անելու»։

Իսկ ճառախոսը շարունակում էր Հաթոյին անըմբռնելի բառերի հեղեղը թափել։

— ...Բայց նրա հարվածները ջրի անզոր ալիքների նման փշրվում են ու փոշի դառնում Խորհրդային Միության ամուր ժայռին դիպչելով...

Հաթոն անոք, անպաշտպան մեղապրյալի նման, վոր անծանոթ լեզվով իրեն դատող դատախազի ու դատավորների անհասկանալի խոսքերը լսելով, խղճալի հայացքն այս ու այն կողմն է դարձնում մի ներքին ցավով բռնված,

հանկարծ իրեն մենակ զգաց ու շուրջը նայեց։ Տեսնելով պատի տակ Փանոս աղին, գաղտագողի մոտեցավ նրան ու մեկ ճառախոսին, մեկ նրան նայեց հարցական հայացքով։

— Խորհրդային Միությունը,—շարունակում էր հռետորը,—վոր ձգտում է խաղաղության, ինչպես հայտնի յե, բանակցություններ էր վարում Անգլիայում նոր կազմված բանվորական կառավարության հետ... Դեռ մի քանի որ առաջ հեռագիրը հաղորդում էր, վոր անգլո-խորհրդային բանակցությունները խզվել են...

— Ինչ ա ասում, Անգլեն բարկացել, խռվել ա եսոնց,—բթեց Փանոս աղի կողքը Հաթոն։

— Սուս,—ատամները սխմած, թունոտ աչքերով ու մռայլ սաստեց նրան Փանոսը.—սուս, տեսնենք ինչ ա ասում։

— Յերկու որ առաջ,—շարունակեց անվրդով հռետորը,—անգլիական կառավարության գլուխ Մակդոնալդը վերջին րոպեյին զիջեց և սույն 1924 թվի ոգոստոսի 7-ին կնքված է յերկու դաշնագիր Անգլիայի և Խորհրդային Միության միջև։ Դաշնագիրն ստորագրել են Խորհրդային Միության կողմից ընկեր Ռակովսկին իր ոգնականներով, իսկ Անգլիայի կողմից Մակդոնալդը և Պոնսոնբին... Այդ դաշնագրով Անգլիան ճանաչում է Խորհրդային կառավարության իրավական գոյությունը...

...Ընկերներ, այս դաշնագիրը մի պողպատյա ապտակ է բոլոր հակահեղափոխական ուժերին և մահացու հարված յեվրոպական բուրժուազիային։

...Սա խոշոր, շատ խոշոր հաղթանակ է, և Միության բոլոր քաղաքներում այսոր ցույցեր ու միտինգներ են տեղի ունենում, վողջունելու մեր կառավարության այս հաղթանակը...

— Ի՞նչ,—հարցրեց տարակուսանքով Հաթոն,—Ինգլիզները չեն յեկել։

— Զահրումար են արել,—փսփսաց Փանոս աղեն դառնությամբ,— սրանց հետ, ասում է բարեկամ են... ու ինքը րոպեյապես անհետացավ։

— Վողջունում եմ ձեզ, ընկերներ ու քաղաքացիներ, այս մեծ հաղթությամբ,—գոչեց ճառախոսը։

— Ուռա՜, կեցցե՜... թնդաց ոդն ու լցվեց ծափերի ու բացականչությունների գղրդյունով, վորին հաջորդեց զուռնի, պատեֆոնների ու պիոներների սրտագին ու վառակիզ «Ինտերնացիոնալը»...

Կարծես սև ամպի մի դաժան վորոտ էր այս աղմուկը, վոր պայթեց Ճմուռ Հաթոյի գլխին, ու կարկուտի մի ահեղ տարափ, վոր վայրկենապես վոչնչացրեց իր հասուն արտը աչքերի առաջ... Նա շատ բան չըմբռնեց հռետորի խոսքերից, բայց այսքանը հասկացավ, վոր «Ինգլիզները» հաշտվել են բոլշևիկների կառավարության հետ։ Նա սառած յետ քաշվեց, անմխիթար հայացքը շրջեց—կարծես բոլորը իրեն էին նայում նախատական հայացքով,—ու այդ ծակող, սպանիչ հայացքից խուսափելու համար, գլուխը կախ, գողի նման յետ-յետ գնաց ու շուռ յեկավ։

— Տեսա՞ր ոձի ու կողնու պատմությունը,—նրա կողքը բզելով, ասաց

Ասոն, վոր մինչ այդ աննկատելի չեր մնացել Հաթոյին։ — Փանոս ադին սաս, դագեթները լավ կարդա, ոձի պատմութենը չմոռնա, ինքն էլ եղ ոձիցն ա։

Բայց Հաթոն վոչինչ չեր լսում։

Նա չիմացավ, թե ինչպես տուն հասավ ու ընկավ թախտին, գլուխը բռնելով ձեռքերի մեջ։

— Արանեցին եպես ժողովք եր տեսել Բագու հա… Ցա տեր-Նփոն լափից դատ ինչ լղար ունի, վոր բան իմանա, քո ցավին դարման անի… Ախմախ, ախմախ Հաթո… մրմնջում եր նա ինքնիրեն ու գլխին տալիս հուսահատ։

ՑԵ. ԲԱՀԱԹՈՒՐ

ՄՈՒԿՈՒՉԸ

(Հատված «Մանուշ» պատմվածքից)

I

— Բերեք, բերեք այն հրեշին,— հրաման տվեց կարմիրների գլխավորը, ու յերբ ձիուց իջավ, ամենքը նկատեցին, վոր նրա աջ վոտը փայտից եր շինված։— Ամբողջ տունը խուզարկության յենթարկեցեք։ Վոչ վոքի բաց չթողնեք այդ տնից։ Արտակարգ հսկողություն նշանակեցեք։ Այնուհետև, ով գանգատ ունի նրա դեմ, ում վատություն ե արել, ում կեղեքել ե— թող ամենքը առանց քաշվելու իրենց ցուցմունքները տան։ Ու ամբողջ նրա գույքը — յեղած չեղածը՝ տներ, արտեր, այգիներ, տավար, վոչխար — այդ ամենը կանցնի գյուղին, չունեորներին…

Առաջին վայրկյաններում գյուղացիները չգիտեյին հավատա՞ն իրենց ականջներին, իրողությո՞ւն ե դա, թե հեքիաթ… Ինչպե՞ս, հզոր Մուկուչը, վորի լոկ անունից շատերի դողն եր բռնում, այդ Մուկուչը՝ անույժ պետք ե կանգնի՞ իրենց առաջ ու լսի այն բոլոր մեղադրանքները, վոր տարիների ընթացքում կուտակվել եյին նրա դեմ ու տարիներով թալանածը պիտի դառնար գյուղի սեփականությո՞ւնը…

Բայց չե… սուտ չե… Այդ մարդիկ… Խրոխտ ե նրանց դեմքն ու դրոշակները ալ…

Մանավանդ, յերբ կես ժամից Մուկուչին պահակներով շրջապատած քշեցին-բերին, նրանց կասկածը միանգամայն փարատվեց…

Այն Մուկուչը, վորի միակ խոսքին յենթարկվում եր վոչ միայն իրենց գյուղը, այլ և ամբողջ շրջանի իշխանությունը, վորի տանն եր լուծվում յերբեմն շատերի կյանքի ու մահի խնդիրը,— այդ յերբեմնի անպարտելի Մուկուչը այժմ կանգնած եր իրենց առաջ…

Դա մի արտակարգ տեսարան եր և հենց իրեն Մուկուչի համար, չնախատեսված, աներևակայելի տեսարան։

— Ահա և նա, վորը տարիներով՝ ինչպես սարդը ծծում ե ճանճի արյունը՝ ծծել ե ձեզ, ուժասպառ դարձրել,— ասաց կարմիրների գլխավորը։— Ով ինչ ունի ասելու, թող անվախ առաջ գա, ասի։

Ու Մուկուչի առաջ մի անսպասելի հրաշք կատարվեց։ Նրանք, վորոնք իր ներկայությամբ յերբեք չեյին համարձակվում ծպտուն հանել, գլուխները քարշ, ձեռները ծալած՝ խոնարհվում եյին, սողում իր առաջ, այժմ, բերանների

կալը կորած՝ տրտունջ, զայրույթ էին արտահայտում: Ով ինչ մաղձ ուներ պահած սրտի խորքում, թափում էր նրա գլխին անխնա: Տարիների ատելությունն էր—կուտակված, ահելի:

— Մի հինգանոց փողի տվեց ինձ, վեց ամսից հետո կովս խլեց…

— Յերկու տարի նրա արտերում ու բաղերում ձեռք ու ոտքս մաշեցի: Վերջը գլխիս խփեց, դատարկ ձեռքով ճամբու դրեց…

— Էդ անամոթ մարդն էր մեղավոր, վոր կնիկս դարդից մեռավ: Ջահել, սիրուն աղջկաս ճամբից հանեց…

— Յեղբայրս իրեն գցեց ժայռից, հոգին սատանի բաժինը դառավ, յեղած-չեղածը Մուկուչի տունը մտավ…

— Պարտքի տեղ բաղս ձեռքիցս խլեց…

— Մենք ինչ գավի ունեինք մեր հարևանի հետ, վոր իրար մսի ընկած՝ իրար արյուն էինք խմում: Բոլորը դրանց գործն է: Իշխանության հետ միացած՝ մեզ ճանապարհից գցում էր…

Մի անվերջ ահելի բողոք, մի կատարյալ անհատնում վոզը:

— Ի՞նչ ունես ասելու այդ բոլոր մեղադրանքների դիմաց,—հարցրեց կարմիր գլխավորը Մուկուչին:

Մուկուչը ապշած նայում էր այդ սանձարձակ ամբոխին: Վ՞րտեղից հավաքվեց… Ե՞րբ ծնվեց… Վորովհետև առաջ նա չկար ախր… Մինչև այժմ գոյություն ուներ միմիայն իր «յես»-ը, իր ցանկությունները, իր կամքը—յերկաթե… Իսկ այժմ կանգնած է բյուրավոր կամքերի, բյուրավոր «յես»-երի առաջ, վորոնք սակայն միաձուլվել, մի ընդհանուր կամք, մի ընդհանուր «յես» են դարձել—պողպատե…

— Ի՞նչ ունես ասելու,—կրկնեց գլխավորը:

— Ի՞նչ պիտի ասեմ. կարգ է յերևի, վոր սև յեզը վեր ընկնի, դանակավորները կշատանան: Չե՞ս տեսնում ինչպես են սեխները բաց արել, սուտն ու ղորթը իրար խառնում…

— Ի՞նչ… ինչ,—հանկարծ վորոտաց ամբոխը և այնպիսի կատաղի աղմուկ բարձրացավ շուրջը, վոր Մուկուչը իսկույն սուս արավ և կծկվեց:

— Արյունս տան—կխմեն,—մտածեց նա, զգալով իրեն հառած հազարավոր կայծակնացայտ աչքեր, ոդում բարձրացած հազարավոր բռունցքներ:

— Լավ, լավ,—լսվեց գլխավորի խրոխտ ձայնը,—հանգստացեք: Դուք ձերն ասացիք, հիմա թող մի քիչ էլ սրան լսենք:

Ու յերբ ամբոխը հանդարտվեց, գլխավորը նորից դարձավ Մուկուչին իր հարցմունքով:

— Յես ինչ եմ ասում,—ասաց Մուկուչը, վորի ճկուն լեզուն միշտ սովոր էր հարմարվել հանգամանքներին:—Ժամանակներն ուրիշ ժամանակներ էին, կարգերն—ուրիշ: Հիմա ամեն ինչ փոխվել է… Ո՞վ գիտե, կարելի յե՝ արդարը, ճշմարիտը դուք եք… Ույժը ձեր ձեռքումն է: Ձեր թուրը աջ էլ է կտրում, ձախ էլ: Ո՞վ է հերքում: Կարելի յե շատերին նեղացրել եմ… Բայց և շատ-շատ բարություններ եմ արել… Գյուղը կարգի յեմ գցել, յեղեցի յեմ շինել, ուսումնարան եմ բաց արել, աղբյուր եմ բերել… Այդ ամենի ուրացողը անաստված պիտի լինի, անխղճմտանք…

Զայրույթի նոր բռնկումն էր այդ արդարացման ճառի պատասխանը:

— Հա, ուղիղ է, բայց այդ ամենը արել ես մեր մեջքերով, մեր ձեռքերի աշխատանքով, մեր արյուն-քրտինքով,—միաբերան աղաղակեց ամբոխը:

Բայց Մուկուչը արդեն սառն, անտարբեր հայացքով դիտում էր այդ անսովոր տեսարանը: Ու արդար ցասումի այդ ահավոր բողոքը մժեղների դժժոց էր համարում:

* * *

Ընտանիքի հետ բաժանվելիս մեծ հարսի ականջին փսփսաց.

— Չվախենաք. սա գարնան սելավի նման յեկավ—կերթա: Շատ չի քաշի—կպատովեմ: Զգույշ կացեք, ամեն մեկի չհավատաք: Մարդ ասած ինսանին՝ ավելի սակավ: Իմ մասին չմտածեք… Սա էլ կանցնի…

Սուտ մարգարեություն: Նրանք վոչ միայն չգնացին, այլ Մուկուչին բանտից բանտ էին քաշքշում, հարցաքննության յենթարկում: Պատահմամբ լսեց, վոր իր վորդի Մուշեղին նույնպես ձերբակալել են, հարսներին դուրս բերել տնից ու ամբողջ գույքը տվել գյուղին:

«Չէ, ասես սա յերազ չդառավ, կրակ դառավ», մտածում էր Մուկուչը:

Ամիսներն անցնում էին անփոփոխ: Հարցաքննում էին ու նորից նետում բանտը: Ծանոթացավ կեղտի և սովի, անարգանքի ու հալածանքի հետ:

«Վայ տունդ քանդվի, ինչպես քանդվեց, ռուս թագավոր: Դու գլորվեցիր, մեզ էլ տակովդ արիր», շարունակում էր մտածել Մուկուչը:

— Ինչո՞ւ յեն այս արխմայրին պահում, չգիտեմ: Ոդը միայն ապականում է…

— Վերջ տան գնա: Այնքան գործ կա դրա դեմ… Հարյուրերորդականը բավական է:

— Բայց դա շատ բան գիտե անցյալից… Մինչև բաց չանի…

— Հը՜… պառավը քարից էլ պինդ է… «Վոչինչ չգիտեմ… խեղճ մարդ եմ»—բերանի խոսքն է:

— Գանձը… ամենքից թալանածը… վ՞րտեղ է թաղված: Նույնիսկ գերեզմանները քանդել են, բան չեն գտել…

Այսպես էին խոսում իրար հետ պահակները:

Յերբ Մուկուչը փորձում էր այդ գաղտնի գանձի հրապուրանքներով փոխել տալ իր կացությունը, ուսին գարկում էին.

— Հը՛, ծեր աղվես, ուրեմն ունե՞ս: Տեղը հայտնիր: Անցյալը պատմիր անկեղծ, կփրկվես…

«Չլինի՞ վերջս եկել է»—մտածում էր նա, ու առաջին անգամ իր կյանքում մի հարց ծագեց գլխումը, թերահավատության առաջին ցոլքը.—իրո՞ք ամենազորեղ է վոսկին: Այն վոսկին, վորի առաջ նա յերկրպագել է, ծունկ

և չորել, ամեն ինչ մոռացել է աշխարհի յերեսին, դարձրել է իր աստվածը, իր հոգին, իր հավատը։

Հետզհետե յեկավ այն համոզմունքին, վոր ինչ-վոր ուժեղ, զորավոր ձեռքերում է գտնվում ու գուցե փրկություն չկա…

— Ուստա Սիմոն, ուստա Սարգիս, մի գյուղից ենք, ենքան մեր տանը աղ ու հաց եք կերել,—դիմում եյին Մուկուչի վորդիքը համագյուղացիներին։

— Ու թթուն խմել,—վրա եյին բերում ուստա Սիմոնը և ուստա Սարգիսը։

— Աղաչում ենք, պաղատում, ձեր վոտքերն ընկնում, գնացեք են մարդու մոտ, ասեք—խղճա, մեղք է պառավը, վոտի մեկը գերեզմանումն է, կյանքի վերջին որերը բանտերում հալ ու մաշ դառնա…

— Ի՞նչ յերեսով եք են մարդին դիմում,—պատասխանում եյին ուստա Սիմոնը և ուստա Սարգիսը.—վերջապես, շնորհակալ չե՞ք, վոր դեռ շունչը բերնումն է, շանսատակ չեն արել։ Քանի՞ տուն է քանդել անիծածը, քանի՞ արյունն է խմել…

— Դեհ, հիմա ել դուք եք մեր աչքը հանում,—տրտնջում եյին հուսահատված վորդիք

— Հա, հանում ենք, բաս չենք հանի՞…

II

Մի որ հանկարծ հայտնեցին, վոր տանում են դատելու։

Կրկին՝ պահակներով շրջապատած՝ քշեցին։

Մուկուչի սիրտը մահացու դող ընկավ։ Բանտարկության դառն որերին շատ բան եր լսել նոր իշխանության խստությունների մասին։ Շատերն եյին գիշերը դուրս բերվում բանտից ու այլ ես չեյին վերադառնում…

Ու Մուկուչը հիմա եր զարմացած, վոր ինքը՝ հազար անգամ ավելի մեղավոր՝ դեռ ապրում է։

«Սրանք մի փորացավ ունեն, մի ոյին են բերելու գլուխս,—մտածում եր նա ճանապարհին։—Տեսնես ո՞վ է լինելու իմ դատավորը։ Չլինի՞ են տղան—վոտը կտրածը։ Թե նա յե—կորած եմ…»։

Որը տոթ եր, արևը—կիզիչ։

Մուկուչի վոտները կարծես արճիճով լցրած լինեյին։ Իսկ ճանապարհը—յերկար։

Քանի մոտենում եյին նշանակված տեղին, այնքան ուժազուրկ եր դառնում Մուկուչը։

Հանկարծ կանգնեց.

— Ընկե՛ր, աղաչում եմ…

— Ես քո ինչի՞ ընկերն եմ, քավթառ,—բղավեց պահակը։

— Հայ ես, չե՞, խոսք ունեմ ասելու…

— Գաղտնիք չկա, ինչ սիրտդ ուզում է, հայտնիր։

— Ձեզ վոսկի կբախշեմ, վոսկի յեմ տալու, է, վոսկի, թուղթ փող չե,—ինձ բաց թողեք. ինչի՞ յեմ պետք ձեզ… մի հալված, մաշված մարդ…

— Ճամբադ գնա, պառավ…

Ռուս պահակը, վոր իմացավ նրա առաջարկի մասին, գոռաց.

— Կորի՛ր, քո հարամ փողը մեզ պետք չե։ Իսկ վոսկի թե շատ ունես, առանց քո բաշխելու ել տերությունը կվերցնի։

Լուռ, գլխակոր շարունակեց ուղին։ Ու նորից կանգ առավ։

— Մի ուրիշ խնդիրք ունեմ։ Ո՞վ է լինելու իմ դատավորը։

— Կին է,—ծիծաղեց պահակը։

— Կի՞ն…

Մուկուչը մի րոպե մնաց քարացած, հետո սկսեց ուժգին խաչակնքել յերեսը, արագ-արագ կրկնելով.—հրաժարիմք ի սատանայե, հաժարիմք ի սատանայե…

— Կինը դատավո՞ր,—կրկնեց նա, դառնալով պահակներին։—Աշխարհը ուրեմն զորթ վոր թարսի փալանգ է դառել։ Վա՜յ մեզ…

— Ճամբադ գնա, պառավ։ Շուտով կտեսնես դատավորիդ վոսկի վարսերը։

— Ինչ ասացի՞ր… վոսկի վարսե՞ր,—բացականչեց Մուկուչը, և մի միտք կայծակի պես շեշտակի հանկարծ յեկավ շանթեց նրա ուղեղը։—Մենակ մի կին կա աշխարհիս յերեսին վոսկի վարսերով… Ուրիշը չկա և չի ել կարող լինել… Անո՜ւնը… են կնոջ անո՜ւնը,—շնչասպառ աղաչեց նա։

— Մանուշ։

Մուկուչը ցնցվեց և արձանացավ. անմիտ չռած աչքերն եյին միայն, վոր դառնում եյին պահակներից մեկ սրան, մեկ նրան։ Հետո հանկարծ սկսեց խելագարի պես յերկու ձեռքով ծեծել գլուխը.

— Վա՜յ քեզ, Մուկուչ… վա՜յ քո ծնված որին… Մարդու վերջն է գալական… Սա՞ եր վերջդ… Ա՜ հայ մարդ,—դիմեց նա հայ պահակին,—դու լինես ձեր նոր որենքը, կարգը, ձեր նոր աստվածը, բռնիր իմ միրուքից, կախիր հրեն են կաղնի ծառից, մենակ ազատիր ինձ կին դատավորից… են կրակ վարսերով Մանուշից…

— Գնա, գնա, շատ մի խոսի…—հրեց նրան հայ պահակը։

Բայց Մուկուչը փռվեց գետնին, պահակի ձիու վոտնատակին։

— Կոխ տուր, անցիր վրովս, ազատիր նրանից… չտեսնեմ նրա յերեսը…

— Ո՞ւմ։

— Իմ հարս Մանուշի…

Հայ պահակը ծիծաղեց և դարձավ իր ռուս ընկերներին.

— Պառավը խելքը կորցրել է, ինչ-վոր հիմար-հիմար բաներ է դուրս տալիս։

Մուկուչին զոռով վեր կացրին և ստիպեցին ճանապարհը շարունակել։

Ճանապարհը—ձանձրալի, անվերջ։ Մուկուչի վոտները—կապարի նման ծանր։ Գլխում կարծես մի կրակոտ մեխ եր ցցված։

Դատավորը իր հարսը պիտի լինի, հարազատ վորդու կինը—Մանու-

շը… Եվ Մանուշը, որի համար հոգի էր տալիս Մուկուշը, տարիներ շարունակ տանջվում էր այդ գեղեցկուհու համար,՝ յեվ յերբ իր վորդին գնաց կռվի դաշտը և այնտեղ մահացավ, Մուկուշը մոռանալով պատիվը՝ հակառակ Մանուշի ընդդիմության, տիրացավ նրան, ազատելով նրա անողնական վիճակից…

Ո՜, ինչ յերանելի օրեր եյին Մուկուշի համար այն օրերը, յերբ նա համբուրելով իր պաշտած նազանակին՝ հրճվում եր լի ու լի: Մինչ Մանուշի համար անպատվություն, տանջանքի և ցասումի սոսկալի օրեր եյին, մահաստրասու օրեր…

Յեվ ահա տարիներ հետո, Մուկուշը, այն հարուստ, հզոր մարդը այժմ գզգզված շորերով, խեղճացած, գլխիկոր պիտի գնա ու հանձնվի ժողովրդի դատաստանին, և ով պիտի կատարի դատավորի դերը,—այն փոկի վարսերով կինը, իր հարսը, Մանուշը… Ի՞նչպես, ինչպես պիտի նայի Մուկուշը նրա աչքերին, պիտի ունկնդրի նրա նզովալից խոսքերը, պիտի տեսնի նրա ցասկոտ, զայրալից դեմքը: Ո՜, ավելի լավ է մի հարվածով վերջ տալ կյանքին, ավելի լավ է գետինը պատռվի ու ինքը չքվի այս աշխարհի յերեսից, քան կանգնի իր դատավորների առաջ՝ ամոթահար ու անպատիվ, քան ամենքը մի բերան անիծեն իրեն, թքեն, իր կատարած սև գործերը յերեսովը տան, ամենքը, ամբողջ աշխարհը…

Մուկուշին մի պահ տեսիլքի պես պատկերանում է հավաքված բազմությունը, զազրած դեմքերը, գյուղացիների արդար զայրույթը… Յեվ այդ բոլորի մեջ հնչում է հանկարծ հարսի զանգակ ձայնը.

— Հը, Մուկուշ, հիմա էլ դու՞ ես նստել մեր տեղը…

Ամենքը լուռ սպասում են:

— Տարե՛ք ես գզվելի պառավին… Կորցրե՛ք աչքիցս… Սաղ-սաղ թաղե՛ք, բաց աչքով տեսնի իր մահը…

«Ուրեմն մահս իրոք յեկել է, ինձ հետ է»,—մտածեց Մուկուշը մթագնած ուղեղով:

Բայց սա ինչ դղրդոց է: Կարծես ժայռեր են սարից պոկվում: Իսկ իր գանձը: Վո՞րտեղ է թաղնված իր գանձը: Ինչո՞ւ չի գալիս օգնության:

Ամբողջ կյանքը նրան նվիրեց, դիզեց, պահպանեց: Իսկ վե՞րջը…

Ուրեմն սուտ է բոլորը: Փրկություն չկա՜… Դե՛, կորչի ուրեմն նա էլ ջհանդամի տակը… Մնա հենց թաղված տեղը, յեթե անպետք է, անզոր…

Ջիերը զանգդաղ քայլում եյին տոթից հոգնած:

Բարակ կամուրջ եր առաջները ընկած: Ներքև կատաղած գետը վագրի վոստյուններ եր գործում ու նրա մռնչոցից ամբողջ ձորը դղրդում:

Մուկուշը մի զզվանի հայացք ձգեց ձիերի վրա նիրհող պահակներին, կամացուկ մոտեցավ կամուրջի ծայրին, նայեց աջ, ձախ ու մի ակնթարթ, մի թեթև շարժում, վերջին մի թռիչք… ու կատաղի ալիքները կլանեցին նրա մարմինը:

Յերբ պահակները սթափվեցին, իրենց առջև տեսան ծերունու տեղ փրփրընդոստ գետի զոռ ալիքները, վորոնք ամեն ինչ, ինչ վոր հին եր, փտած, խարխուլ, տանում եյին հավիտենականության գիրկը նետելու:

Վ. ԹԵՐԶԻԲԱՇՅԱՆ

ԵԼ ՎԱՀԻԴԻ ՎԵՐՋԻՆ ԱՐԿԱԾԸ

I

Ծեր և միականի Մուհիդը, վորին էլ-Վահիդ մականունն եյին տվել («վահիդ» արաբերեն նշանակում է մեկ), Բաղդադի շրջակայքում ուղտապան եր, ուներ միայն մեկ ուղտ,—նրա վողջ կարավանը,—այն էլ ծեր և միականի, ինչպես իր տերը:

Ուղտապանը և ուղտը ունեցել եյին բեդուին նախահայրեր, սակայն յերկար տարիներ ապրելով և շրջելով Միջագետքի քաղաքներում՝ վորդեգրել եյին խաղաղ բարքեր, իսկ ծերությունը իմաստուն եր դարձրել նրանց:

Ուղտը իր սապատով վաստակում եր յերկուսի ապրուստը—թեթև բեռներ և անցորդներ փոխադրելով, իսկ ուղտապանը աչքի լույսի պես սիրում և խնամում եր նրան:

Մի անգամ, գործի բերմամբ, Վահիդը և իր ուղտը, վորի անունն Արգի յեր, հետևելով Յեփրատ գետի հոսանքին, գնացին դեպի հարավ: Գիշերը հասան հին Բաբելոնի ավերակներին, վորից քիչ հեռու գտնվում է մի գյուղաքաղաք: Վահիդը նախընտրեց գիշերել ավերակների մեջ, վորովհետև դրանով կազատվեր նախ՝ քարվանսարայի վարձից և յերկրորդ՝ մարդկանց ձանձրալի հարց ու փորձից:

Մի քիչ վորոնելուց հետո գտավ մի հարմար անկյուն, պատսպարված կիսափուլ պատով—գուցե խալդեական պալատի, տաճարի կամ բաղնիքի վերջին բեկորը—և պառկելով ուղտի սապատը թեթև բեռից՝ մեջքի վրա պառկեց նրա կողքին և սկսեց դիտել աստղավառ յերկինքը:

Գիշերը հարավի պարծանքն է: Ցերեկվա տոթին՝ դանդաղ տողանցող կարավանները չափված, միալար քայլելով՝ անապատների հրայրքի միջից յերազում են սփոփիչ գիշերը:

Վահիդը՝ վորպես ճշմարիտ հարավցի՝ զգում եր գիշերվա ամբողջ հըմայքը: Նրա հոգին լցվեց յերանությամբ և անգիտակցաբար սկսեց հնչեցնել, կոկորդային խռպոտ ձայնով, գիշերվա յերգը, ավելի ճիշտ՝ մի հանգերգ, յերկար ու միալար.

— Յա՜ լե՜յլ, յա՜ լե՜յլ, յա՜ լե՜յլ (ո՜վ գիշեր, ո՜վ գիշեր…):

Գիշերվան գովքն է սա, նույն հանգերգը, վոր կրկնվում է Միջագետքից և Պարսից ծոցից սկսած մինչև արաբական մեծ տափաստանը և հյուսիսային Աֆրիկայի խորքերը:

Մինչ տերը յերգում եր, ուղտը արթուն վորոճում եր: Յերբ Վահիդը

հոգնեց յերգելուց՝ դարձավ դեպի ուղտը և սկսեց խոսել նրա հետ։ Արգին լսում եր տիրոջ խոսքերը, գեթ այնպես եր թվում, և վորոճալու հետ միասին մերթ ընդ մերթ գլուխը շարժում, կարծես հավանության նշաններ անելով։ Վահիդը սիրում եր յերկար խոսել ուղտի հետ, հայտնելով նրան իր մտքերը և տեսակետները, վարվելով նրա հետ վորպես բանական արարածի, վորովհետև աշխարհիս վրա նրանից զատ ուրիշ բարեկամ չուներ։

Գիշերը սկսեց ցրտել. Վահիդը փաթաթվեց իր աբայի ծալքերում և պատրաստվեց քնելու։

— Քնիր, սիրելիս,— ասաց նա ուղտին,— վաղը յերկար ճամբա ունենք կտրելու, լուսաբացից առաջ շարժվելու յենք։— Հետո ավելացրեց.— Այստեղ ապահով ե, վոչ վոք չի համարձակվի գիշերով մոտենալ այս ավերակներին ուրվականների աչքից. մենք ուրիշ, մենք չենք վախենում, այնպես չե՞, Արգի։

Քիչ անց Վահիդը սկսեց մեղմորեն խռմփալ. ուղտը ճոճաց արթուն և կարծես տխրեց. նայում եր քնած տիրոջը և գլուխն օրորում։

Վահիդի քունը յերկար չտևեց. հանկարծ զարթնեց և նայելով շուրջը՝ ասաց.

— Դեռ քնած չես, իմ խեղճ Արգի... Վատ յերազ տեսա. ինչ-վոր անըզգամներ յեկել եյին, ուզում եյին քեզ տանել։ Մարգարեյի միրուքը վկա, յերազը լավ յերազ չեր։

Նորից քնեց։ Այս անգամ, թվում եր, նրա քունը ավելի խաղաղ եր, շնչառությունը կանոնավոր, իսկ դեմքի վրա յերևում եր պայծառ ժպիտ. ակներև եր, վոր վատ յերազներ այլևս չեյին հաճախում նրա նիրհը։

Սակայն այս անգամ ել քունը յերկար չտևեց։ Վահիդը զարթնեց և աչքերը տրորելով ասաց.

— Ալլահ, ալլահ, սա ինչ ե, յերազիս մեջ գնացել եյի ջաննաթը *). ճիշտ կենտրոնը. շուրջս հուրի-փերիներ, յերգ ու նվագ. գինի եյի խմում և ծխում նարգիլեներից լավագույնը. բայց ավա՜ղ, դու ինձ հետ չեյիր, սիրելիս. ուղտի մուտքը արգելված ե այնտեղ. ափսո՜ս, ափսո՜ս։ Սողոմոն իմաստունի ծածրակը վկա, լավագույն կհամարեյի քեզ հետ միասին դժոխք գնալ և Սաղայելի կանանց բաղնիք տանել կամ կարասների համար կուպր փոխադրել, քան թե...

— Սալամ ալեյքում։

— Սալամ ալեյքում։

— Սալամ ալեյքում։

Յերեք վողջույններ լսվեցին խավարի մեջ, և Վահիդը խոսքը կիսատ թողած՝ ժամանակ չունեցավ անմիջապես արտասանելու սովորական պատասխանը՝ «ալեյքում սալամ»։

Յերեք սպիտակ բուրնուզներ**) առաջացան խավարի մեջ— յերեք մարդկային եյակներ— և կանգնեցին մի շարքի վրա։

Վահիդը նախ կարծեց, վոր յերազի շարունակությունն ե, սակայն

*) Դրախտ։

**) Սպիտակ քաթանե յերկար հագուստ, վոր սովորաբար ունենում ե մի գլխանոց բաշլուղի նման. գործ են ածում արաբները։

տուրեց իրողությունը՝ շոշափելով իր միրուքը և դեռ վորոճացող ուղտի գունչը։ Հետո ճշմարիտ արևելցու անխռով ձայնով ասաց.

— Յեթե այս հեթանոս քաղաքի փլատակներում թափառող ջիներից *) չեք, թող ալահը որհնե ձեր գալուստը։

— Մենք ջիներ չենք, այլ քեզ պես ուղղափառ մուսուլմաններ,— պատասխանեց յերեք ստվերներից ամենաբարձրը խուլ կոկորդային ձայնով, և յերկյուղածությամբ մրմնջաց. «Լա ուլլա ուլ ալլահ, Մոհամեդ ռասու ուլ ալլահ»։

Մյուս դերվիշները քթի տակ մրմնացին. «Բիսմ ալլահ ուլ ռահման ել ռահիմ» և շոյեցին իրենց միրուքները։ Վահիդը հետևեց նրանց օրինակին, մեքենայորեն կրկնելով նույն խոսքերը։

Յերբ այս բարեպաշտ արարողությունը վերջացավ, անծանոթ հյուրերը Վահիդի հրավերով նստեցին կիսափուլ պատի տակ և բավական ժամանակ լուռ մնացին։

— Ո՛վ մուսուլման, իմացիր, վոր մենք թափառական դերվիշներ ենք, այս անգամ գալիս ենք ուղիղ Մեքքեյից, ուր գնացել եյինք կատարելու նվիրական ուխտագնացություն մեծ մարգարեյի գերեզմանին։

Խոսողը նույն կոկորդային ձայնն եր։

— Թող ընդունելի լինի ձեր նվիրական ուխտը։

Ձայնը շարունակեց.

— Այժմ յեկել և բերել ենք մեզ հետ սուրբ յերկրի սուրբ հողը և տանում ենք Մարգարեյի որհնությունը վողջ աշխարհի հավատացյալներին. ո՜վ յերջանիկ որ, վոր խոստանում ես ջաննաթի յերանությունը. ինշալլահ, հասել ե արդեն փրկության ժամը։

Լռություն։

Լսվում եր միայն ուղտի ատամների կրճտոցը. նա շարունակում եր վորոճալ։

Վահիդը չեր հանդգնում խզել նվիրական լռությունը. նա մտածում եր։ Անծանոթ դերվիշի ճառը բավական ստարոտ չեր հնչում գիշերվա այն ժամին Բաբելոնի ամայի փլատակներում։ «Հասել ե փրկության ժամը և յերջանիկ որը» հայտարարում ե նա, իսկ Վահիդը ամենևին վստահ չե, վոր այդ այդպես ե, և հետո իրեն ինչ...

Հանկարծ կոկորդային ձայնը հայտարարեց.

— Դեռ աստղերը չդժգունած ճանապարհ ենք ընկնելու դեպի Մոսուլ, տանելու մարգարեյի որհնությունը պատվող դերվիշների միաբանությանը։

Դերվիշները խավարի մեջ կայծկլտող աչքերով նայում եյին վորոճացող ուղտին։

— Յերևում ե, ազնիվ ցեղից ե որհնյալ կենդանին, անկասկած սահարական արագընթաց տեսակից,— ասաց նրանցից մեկը։

Վահիդը չպատասխանեց. մի անորոշ կասկած սկսել եր կրծել նրա

*) Վոգի։

սիրտը, բայց դերվիշների պատկառելի տեսքը և նրանց առաջնորդի նույնքան պատկառելի և բարեպաշտ խոսքերը մեղմացնում էին կասկածի խայթը:

— Թող ալլահը հովանավորե ձեզ և աջողությամբ պսակե ձեր առաքելությունը, ով սուրբ հայրեր, իսկ այժմ, կարծում եմ, որ ամփոփիչ քունը անհրաժեշտ է ձեր հոգնած անդամների ուժը նորոգելու համար, քանի որ վճռել եք դեռ լույսը չբացված ճանապարհ ընկնել:

Այսպես խոսեց Վահիդը և տխրությամբ նայեց իր սիրեցյալ ուղտին, որը դեռ որոճում էր:

— Ճշմարիտ է, ով բարի մուսուլման, հանգստյան մեծ կարիք ունենք, որպեսզի նորոգված ուժերով քարոզենք մարգարեի խոսքը:

— Շատ դժվար է հետևողի բանը. դու յերջանիկ ես, ով մուսուլման, որ ունես այդ որհնված ցեղի կենդանին, որի սապատը ավելի հանգստավետ է, քան նույնիսկ հազրաթի Իբրահիմի *) գոգը:

— Ալհամդուլլահ, արդարև ուղտը որհնված կենդանի յե:

Լսելով այս խոսքերը, այս անգամ Վահիդի սիրտը սեղմվեց. նա ակամա հիշեց իր քիչ առաջվան վատ յերազը:

Յերեք դերվիշները բարի գիշեր ասացին և պառկեցին կողք-կողքի պատի տակ: Քիչ անց նրանք քնեցին, գեթ այդ էր վկայում նրանց ռունգերից լսվող համաչափ աղմուկը, որին սովորաբար խռմփոց անունն են տալիս:

Վահիդը մի քիչ միամտվեց, յերբ նրանց քնած տեսավ:

— Մարդիկ քնի մեջ ավելի անվտանգ են յերևում, — մտածում էր նա. — յեթե չեյթանը մոլորեցրել է սրանց և չար մտքերը բույն են դրել սրանց հոգում, թող ալլահը փարատե այդ չար մտքերը և բարերար քունը առաքինի յերազներ բերի, որպեսզի զարթնեն մաքուր հոգով և գնան արդարության ճանապարհով:

Վահիդի քունը փախել էր: Նա յերկար մտածեց աշխարհի բաների մասին, հիշեց իր մանկությունը, յերիտասարդության օրերը, յերբ մեծ կարավանների հետ էր ճամփորդում, նստած իր զտարյուն «սլաքը», աչքերը սևեռուն հորիզոնին, իրար հաջորդող և անհայտացող միրաժներին, որոնց յետև թագնված էին հեռավոր ոազիսները: Մտքերի քմահաճ ընթացքը նրան փոխադրեց այդ ցանկալի ոազիսներից մեկը, ուր մի ժամանակ, շատ առաջ, ապրում էր նա, որին սիրել էր անհույս և կորցրել անհետ, որպես միրաժ:

Այս գիշեր այդ անցյալի տեսիլը սովորականից ավելի պայծառ էր, այնքան պայծառ, որ մի պահ կարծեց, թե ներկա յե և իրական: Ահա նա, անապատի աղջիկը, սև, այրող աչքերով, հերարձակ, ջրի մերկ կուժը կիսամերկ ուսին, աղբյուրի մոտ կանգնած դիտում է յեկող կարավանը, որի հետ է և Վահիդը: Զանգակները մեղմ հնչում են, ոազիսը լցվում է աղմուկով: Գիշեր է, խարույկներ են վառում. հեռվից լսվում է չախկալների ոռնոցը մեկը յերգում է միալար «Յա, լեյլ, յա, լեյլ»...

*) Հայր Աբրահամ:

Ուղտը շարունակում էր իր որոճը: Նա այժմ միակ արթուն արարածն էր Բաբելոնի ավերակներում, որովհետև նրա տեր Մուհիդ-էլ-Վահիդը նորից փոխադրվել էր յերազների աշխարհը, ուր նրան սպասում էին անցյալի տեսիլները, ոազիսների և միրաժների հմայքը և գիշերվա մեղմ գեփյուռը...

Այս անգամ Վահիդը ննջում էր խոր քնով, խոր և ճակատագրական:

⁂

Հնադարյան Բաբելոնը, ով գիտե, քանի միլիոներորդ անգամ ականատես յեղավ արևի ծագման. և նրա ավերումից հետո ցերեկվա վիթխարի լուսատուն քանի հարյուր հազարերորդ անգամ ոսկեզոծեց նրա փլատակները — մի շատ դժվար հաշիվ, ներկա դեպքում կատարելապես ավելորդ (թող ների մեզ այս շրջաբանությունը): Սակայն այս անգամ նա հաստատելով արևի ծագման փաստը՝ միաժամանակ ստիպված ենք հաստատել մի իրողություն, որ կսկիծով և հուսահատությամբ համակեց Մուհիդ-էլ-Վահիդի սիրտը: Խնդիրն այն է, որ յերբ վերջինս քնից զարթնեց՝ նախ նկատեց իր սիրեցյալ ուղտի բացակայությունը, ապա աչքերը շփելով — որ ավելի պարզորեն տեսնի — տեսավ՝ որ գիշերվա յերեք դերվիշները նույնպես անհայտացել էին:

Յերբ հաստատ ստուգեց իրողությունը, Վահիդը սկսեց ծեծել իր կուրծքը: Նա ողբում էր իր կորուստը, անիծում խաբեբա դերվիշներին և մեղադրում ինք իրեն, որ անզգույշ է յեղել, հավատացել է յերևույթներին և թողել, որ նենգավոր քունը փաթաթե իրեն մոռացության սավանների մեջ:

Սովորական փիլիսոփայությունը քիչ էր մնացել ամբողջապես լքեր նրան: Նա ձեռները խփում էր գլխին և մրմնջում.

— Հիմար, հիմար ծերուկ, մինթե դու մեդրեսեյում *) սորված աշակերտ ես, կամ հարբած քրիստոնյա, որ մոռանում է իր հավատը մի բաժակ գինու համար: Մինթե քո հայրերի իմաստությունը փախել է քո գլխից, ինչպես անվարժ հյուրը՝ քարվանսարայից. ինչպես թույլ տվիր, որ անծանոթ մարդիկ, կասկածելի ինքնակոչ դերվիշները ծիծաղեն քո միրուքի վրա և խլեն քո վերջին ապավենը...

Արևը դիմում էր դեպի զենիթը հեղեղելով բազմադարյան փլատակները իր կենսատու ճառագայթներով, սակայն ավերակները շարունակում էին իրենց մեռելությունը և հնադարյան Բաբելոնը մի անգամ ևս ողբում էր իր ճակատագիրը, այս անգամ ուղտապան Մուհիդ-էլ-Վահիդի հետ, որը ողբում էր իր կորած ուղտը, ինչպես Բաբելոնը իր կորած փառքը...

II

Յերբ Վահիդը հասավ մոտակա գյուղաքաղաքի դռներին, որից նա խուսափել էր յերեկ գիշեր, նրան դիմավորեց կիսամերկ յերեխաների մի

*) Դպրոց, ուր ղուրան են սովորում և կարդալիս նստած տեղը օրորվում են յետ ու առաջ:

խումբ։ Տեսնելով միականի ծերուկին յերեխաները, ըստ յերևույթին, վորոշեցին զվարճանալ նրա հաշվին։ Սուր ու այլանդակ ճիչերով վրա ընկան և մանր քարերի հետ միասին այլազան սրախոսություններ սկսեցին շպրտել դեպի նա.

— Սալամ-ալեյքում, հաջի բաբա,— ճչաց պղնձագույն մարմնով և արևառ դեմքով մի սոտահակ.— չլինի՞ գնում ես անհավատներին բարի գալուստ մաղթելու. զգո՜ւյշ, բաբա վահիդ (ակնարկություն միականիության), նրանք կծաղրեն քո միրուքը և կստիպեն քեզ պարել ուղտի պարը…

— Յերկաթալարերի վրա,— ավելացրեց մի ուրիշ սոտահակ։

«Ուղտի պարը» ծակեց Վահիդի սիրտը, հիշեցնելով իր սիրեցյալ ընկերոջ. սակայն նրա համար պարզ չեր, թե խոսքը ինչ «անհավատների» մասին է. ուզեց հարցնել, բայց տեսնելով, վոր այդ չարաճճի վոհմակից խելքի մոտիկ բան չի կարելի սպասել, գավազանով սկսեց ցրել նրանց։

— Կորեք գնացեք,— մրմռաց քթի տակից և, նորից հիշելով իր կորած ուղտը, մտքում ասաց.— Մարգարեյի բոլոր կանայքը *) վկա, ձեր ամենքի մայրերը չեյի փոխի իմ ուղտի մեկ կույր աչքի հետ…

Այդ րոպեյին վերևից լսվեց ինչ-վոր մեքենայի խուլ գոռոց. յերեխաները հեռացան Վահիդից և սկսեցին դիտել յերկինքը ձեռները ճակատներին՝ աչքերը արևից պաշտպանելու համար։ Վահիդը ապշած այդ տարորինակ աղմուկից, վոր գալիս եր յերկնակամարից և գնալով ուժեղանում, հետևեց յերեխաների որինակին. մի քիչ վորոնելուց հետո տեսավ ինչ-վոր թռչնաձև բան, սլացիկ մարմնով և հսկա թևերով, վոր սավառնում եր ոդի մեջ վիթխարի ծիծեռնակի պես։

— Թեյարե, թեյարե**),— ճչացին սոտահակները և սկսեցին վազել մեքենայի թռիչքի ուղղությամբ։

Վահիդը լսել եր սավառնակների մասին, բայց սեփական աչքով դեռ չեր տեսել։

— Ա՜յ թե ինչ,— մտածեց նա,— սատանայական թռչունը իրավ վոր հրաշքի բան է. սակայն ինչ գործ ունի մեր յերկնքում։ Կասկած չկա, անհավատները յեկել են։ Ալլա՜հ, ալլա՜հ, ո՞վ եր տեսել այսպես բան Հարուն-ել Ռաշիդի յերկրում։ Վա՜յ քեզ, Վահիդ, ուղտդ գողացան՝ հերիք չէ, այժմ շեյթանի սուրհանդակն է գլխիդ պտտվում։

Մինչ սավառնակը անհայտանում եր քաղաքի յետև՝ հեռվից յերևաց խրտնած մի ավանակ, վոր փախչում եր դեպի դաշտը. նրան ընչասպառ հետապնդում եր մի ծեր արաբ և ամբողջ ուժով գոռում.

— Բռնեցեք, բռնեցեք անիծածին, ո՜վ մուսուլմաններ, չե՞ք տեսնում փախչում է։

Դաշտում Վահիդից զատ վոչ վոք չկար, ուստի սա, կատարելով մուսուլմանի պարտքը, կանգնեցրեց վազող կենդանուն, վոր ուղիղ գալիս եր դեպի ինքը, ամուր բռնեց նրա պախուրցը և սպասեց մինչև տերը գա։

*) Մահմեդը ունեցել է տասից ավելի կանայք։

**) Սավառնակ, ոդանավ։

Ծերունի արաբը մոտեցավ և նախքան շնորհակալ լինելը մատուցված ծառայության համար՝ ձեռքի գավազանով մի քանի պատժիչ հարվածներ տեղաց խեղճ կենդանու մեջքին, ապա ճակատի քրտինքը սրբելով ասաց.

— Ե՜, վալլահ, համշարի, մեծ նեղությունից ազատեցիր, եշս իր կյանքում յերբեք խրտնած չեր, այսոր առաջին անգամ լինելով ինքն իրեն կորցրեց, յերբ լսեց իր յերկար ականջներով այն դժոխային աղմուկը, վոր գալիս եր յերկնքից. տես, դեռ ականջները խլշում է, սարսափը դեռ չի անցել։ Ալլահ, ալլահ, ո՞վ եր տեսել նման դիվային թռչուն։ Մարգարեյի միրուքը վկա, եշս մեղավոր չէ, մարդիկ խրտնեցին, ուր մնաց անբան անասունը։ Խոսքը մեր մեջ մնա, այդ ինգլիզ կոչվածը իսկական ջանավար է, կգնաս աչքերովդ կտեսնես, հրես քաղաքում են։

Վահիդը բանից տեղյակ չեր, մեքենայաբար եշի վզկապը հանձնեց տիրոջը և ուշացած արձագանքի նման կրկնեց՝ «ինգլիզ» թեթև հարցական շեշտով։

Իշապանը արդեն հեռացել եր, կարիք չզգալով նոր բացատրություններ տալու, վստահ լինելով, վոր ամբողջ աշխարհին հայտնի յէ արդեն, թե անգլիացիները սկսել են տիրել Միջագետքին։

Արդարև, Վահիդը, վորի միակ մտահոգությունը իր սիրեցյալ Աբդին եր, անհաղորդ եր իր շուրջը կատարվող անցուդարձին։ Ճիշտ է, նա լսել եր պատերազմի մասին, վորի հեռավոր արձագանքները հնչվում եյին Միջագետքի խորքերում, լսել եր նույնպես, վոր անգլիացիները Բասրայի կողմից առաջ են շարժվում, սակայն բնավ լրջորեն չեր մտածել այդ մասին. չեր էլ ուզում մտածել, վորովհետև ավելորդ եր համարում ուղեղը հոգնեցնել այն բաների մասին, վորոնք անմիջական կապ չունեյին իր կամ իր ուղտի հետ։ Բացի դրանից, ունենալով յուրահատուկ փիլիսոփայություն՝ ատելով ատում եր ամեն տեսակի արյունհեղություն, իսկ պատերազմը նրա կարծիքով վոչ այլ ինչ եր, յեթե վոչ կազմակերպված մարդասպանություն։ Վահիդի իմաստությունը իր նախնական բնույթով հանդերձ չեր կարող հանդուրժել, վոր մարդիկ մի կողմ թողնելով ստեղծագործող աշխատանքը՝ հանգիստ խղճով կտրում են միմյանց կոկորդը. նրա կարծիքով արդարությունը գերիվեր եր մարդկային բոլոր տեսակի շահերից՝ ցեղից, հայրենիքից, ազգությունից, նույնիսկ կրոնից, վորին մոլլաները հաճախ սխալ մեկնություններ են տալիս։

Այդպես եր ուղտապան Մուհիդ-ել-Վահիդը, և ինչ իմանար նա, վոր մինչդեռ ինքը գիշերը անց է կացնում Բաբելոնի, խալդեյական հին մայրաքաղաքի ավերակներում, անգլիական առաջապահ զորամասերը զրահապատ սրընթաց ավտոմոբիլներով հասել եյին Բաղդադի մոտերքը, և ժամ առ ժամ սպասվում եր նրանց մուտքը Հարուն-ել-Ռաշիդի մայրաքաղաքը, վոր Իրաքի սիրտն է՝ փռված Տիգրիսի շքեղ ափերին։

⁂

Տխուր խոհերով Վահիդը անցավ քաղաքի դարպասից և հիշեց իր կորած ուղտը, վորի հետ միասին հաճախ անցել էր նույն տեղից ուրախ և անհոգ, իմաստուն և անչար: Իսկ այժմ... այժմ նախանձում է քիչ առաջ հանդիպած իշապանին, այդ վողորմելի անասունի տիրոջը. չէ՞ վոր գրպանում մի կարգին էշ գնելու չափ դրամ չուներ, իսկ ապագան մռայլ էր ու անորոշ, հղի անակնկալներով և աննախընթաց դեպքերով:

Այս խոհերի մեջ՝ անցնելով ամայի փողոցներով, Վահիդը աննկատելի կերպով հասավ քաղաքի փոքրիկ հրապարակը, ուր բազմություն էր խռնվել: Հրապարակի կենտրոնում շարված էին զրահապատ ավտոմոբիլներ, վորոնց կողքերից սպառնալից դուրս էին ցցված գնդացիրների փողերը: Մի քանի հրացանավոր՝ կլոր գլխարկներով, լայն գոտիներով և բաց ծնկներով, անց ու դարձ էին անում ավտոմոբիլների շուրջը, հետաքրքրությամբ նայում խռնված ամբոխին և յերբեմն ձեռքի շարժումներով պահում էին նրան հարգական հեռավորության վրա: Ոտար զինվորները խումբ-խումբ կանգնում էին դես ու դեն, ծխում էին և խոսում անծանոթ լեզվով. նրանք բոլորն էլ մաքուր ածիլված էին և ծնկները բաց: Բնիկ արաբները շրջապատել էին նրանց և բերանաբաց դիտում էին այդ ոտարոտի մարդկանց, վորոնց նըմանը նրանք յերբեք չէին տեսել: Անգլիացիները փորձում էին յերբեմն խոսել արաբների հետ, ձեռներով շարժումներ էին անում, և յերբ բան դուրս չէր գալիս, իրենց լեզվով հայհոյում էին, ապա ծխախոտ առաջարկում նըրանց, ովքեր չէին խորշում շայլված թունդ խոտերից (իհարկե անհասկանալի), վորոնց հաջորդում էր անզուսպ ծիծաղ և հրհռոց անբեխ-անմորուք մերկասրունքների շարքերում: Ջոնի-ների և Թոմի-ների*) ծիծաղի առարկան տեղացիների յերկար փեշերը և միրուքներն էին հատկապես, ուղղակի հակապատկերը իրենց կարճ շալվարների և անմազ դեմքերի: Արաբներին այս հակապատկերը ծիծաղ չէր պատճառում, զրահապատների գլխից յերկարող գնդացիրները սառեցնում էին նրանց տրամադրությունը, ճնշում էին և խեղդում ծիծաղը նրանց կոկորդներում. դրա փոխարեն նրանց զարմանքը փոխվում էր ապշության, հիացումը՝ անմտության և այդ բոլորը միասին վերածվում էին մի տեսակ հարկադրական հարգանքի և պատկառանքի անծանոթ և ահավոր ուժի հանդեպ:

Վահիդը ապշած դիտում էր այս ոտարոտի տեսարանը: Նա մի պահ մոռացել էր կորուստը և, նայելով հրապարակում անց ու դարձ անող զորքին, զգում էր, վոր այդ մարդիկ կատակի համար չեն յեկել, վոր խնդիրը ավելի լուրջ է, քան թվում է:

Մի շատ ջահել անգլիացի զինվոր, գրեթե յերեխա, կանացի դեմքով, ժպտուն կապույտ աչքերով, մոտեցավ հանկարծ Վահիդին և արաբերենով ասաց.

— Զե՛ն, հեմշերի, զե՛ն...**):

*) Անգլիական զինվորներին տրված մականուններ:

**) Լավ է, քաղաքացի, լա՛վ:

Վահիդը հանկարծակիի յեկավ և չպատասխանեց, թեև ասված խոսքերը անպայման պատասխան չէին պահանջում. սակայն, տեսնելով յերիտասարդի դեմքի բարեմիտ արտահայտությունը, ակամա ժպտաց և մեքենայորեն սկսեց շոյել իր միրուքը: Անգլիացին նույնպես ձեռքը տարավ դեպի իր անմազ ծնոտը, շփեց և ժպտալով ասաց.

— Չկա, միրուք չկա:

Այդ րոպեյին լսվեց մոտորի աղմուկը. փոշիների միջից մոտեցավ մի ավտոմոբիլ, վորից դուրս թռավ մի բարձրահասակ, դաժան դեմքով սպա, յերկար մտրակը օդի մեջ շարժելով:

— Մարշ, հայդե՛,— լսվեց մի ուժեղ բառ, և յերկար մտրակը նախ սկսեց օդի մեջ շաչել, ապա թափանցեց ամբոխի մեջ, պայթեց մարդկանց գլուխների վրա, փաթաթվեց նրանց իրաններին և վզներին և քիչ անց սրբեց ու մաքրեց հրապարակը հանդիսատես արաբներից, վորոնցից շատերը խուճապի մատնված կոխոտեցին իրար, թավալեցին փոշիների մեջ և փախան տանելով անողոք մտրակի հետքերը իրենց անդամների վրա և դաժան սարսափը իրենց հոգիներում:

Փախչող ալիքը իր հետ քշեց և Վահիդին, վոր սկզբում չիմացավ, թե ինչ պատահեց, սակայն լսելով մտրակի շաչյունը և նրան ընկերակցող խոսքերն ու իրարանցումը, հասկացավ, վոր հրամայվում է հրապարակը դատարկել: Տեսնելով իրար կոխոտող, փոշիների մեջ տապլտկող ամբոխը և նրան տիրող խուճապը, Վահիդն ավելի քան տխրեց: Նա չէր կարող բացատրել դաժան սպայի վարմունքի պատճառները, քանի վոր, իր կարծիքով, հնարավոր էր, առանց մտրակի օգնության դիմելու, հայտարարել, վոր հրապարակում խռնվելը խստիվ արգելվում է: «Յերևի ուզեց փորձել իր նոր գնած մտրակը,— մտածեց Վահիդը,— կամ գուցե կարծում է, վոր ամենաիմաստուն Հարուն-էլ-Ռաշիդի յերկրում մտրակի լեզուն ավելի պերճախոս է, քան սովորական մարդկային լեզուն: Յեղափոր վկա, նա սխալվում է, և յեթե նրա լեզուն իմանայի, բարձրաձայն կասեի՝ ով մարդ աստուծո կամ սատանայի, յեթե դու կարծում ես, վոր արաբներին ծեծելով կատարում ես քո պարտքը, ապա իմացիր, վոր այդ պարտքը կծանրանա մեջքիդ, ինչպես ջաղացքարը, և ժամանակը կգլորի քեզ այն անդունդը, վորտեղից լսվում են միայն խուլ հառաչանք և ատամների կրճտոց. լավ իմացիր, վոր արաբի հետ էլ կարելի յե խոսել այնպես, ինչպես խոսում են ձեր յերկրի մարդկանց հետ — ասեն գնա, կգնա, յեթե համոզվի, վոր պետք է գնալ»:

Այս մտքերը և նման մի շարք խոհեր բավական ժամանակ զբաղեցրին Վահիդի ուղեղը, սակայն ուղտի կորուստը միշտ ներկա յեր այնտեղ, վորպես կենտրոնական խնդիր, վորի վճիռը շարունակ հետաձգվում էր: Գրավող բանակի տեսքը և նրա հզորության գիտակցությունը նրան ներշնչում էին բազմազան մտքեր: Հենց այն միտքը, վոր սավառնակով կարելի յե խուզարկել անապատը, նրա ամենահեռավոր ծայրերը, վոր անձի սրընթաց կառքերով հնարավոր է արաբական նժույգից էլ արագ սլանալ և հետապնդել ավազակներին, ստիպում էր նրան անդրադառնալ և կշռել այդ բոլոր հնա-

բավորությունները։ «Զգնամ արդյոք սրանց մեծ սահիբի մոտ, հայտնեմ ինձ պատահած դժբախտության մասին և խնդրեմ...»։ Այստեղ միտքը կանգ էր առնում, ընդհատվելով դաժան սպայի մտրակի սուր հիշողությունից։

III

Վահիդը քայլում էր աննպատակ՝ ծուռ ու մուռ փողոցներով և չնկատեց, թե ինչպես հասավ մի այլ հրապարակ, ուր կանգնած էր յերկհարկանի մի շենք, նախկին գավառական վարչությունը, վորի վրա այժմ ծածանվում էր մի անծանոթ դրոշակ, առանց կիսալուսնի և աստղի, յեռագույն, խաչաձև անկյունով։ Մի խումբ արաբներ հավաքված դիտում էին դրոշակը և ցածր ձայնով խոսակցում էին։

— Սալամ-ալեյքում,—վողջունեց Վահիդը։

— Ալեյքում սալամ,—պատասխանեցին նրան։

— Սա ո՞ւմ պալատն է,—հարցրեց նա։

— Այստեղ նստում է ինգլիզների մեծ սահիբը*)։

Շենքի մուտքը պաշտպանում էին յերկու պահակներ, իսկ մի այլ զինվորական կանգնած դռան շեմքին, ծխամորճը բերնին և ձեռները հենած կողքերին, խոժոռ նայում էր խմբված արաբներին ծխի քուլաներ բաց թողնելով. դա մի հաղթահասակ՝ անգլիացի յեր, կարմրած դեմքով, շեկ և կարճ բեխերով, թևի վրա ուներ սերժանտի**) յեռագիծ սպիտակ նշան, գլխին կոլոնիալ կլոր դեղնագույն գլխարկ։ Մի յերկար շարք գունավոր ժապավենի փոքրիկ կտորներ, կարված նշանազգեստի թևի վրա, ցույց էին տալիս նրա ծառայության տարիների քանակը, վորի մեծ մասը անց էր կացրել գաղութային յերկրներում՝ Հնդկաստանում և Հարավային Ջինաստանում, ձեռք բերելով բռունցքի և մտրակի գործածության անվրեպ փորձառություն, կիրառելով մեծ-բրիտանական քաղաքակրթության բարձր սկզբունքները և անխախտ պահելով նորին մեծության կառավարության աշխարհատարած պրեստիժը։

Այժմ նա կանգնած հսկում էր նույն սկզբունքների ներկայացուցչի կայանը և նրա վրա ծածանվող դրոշակի պատիվը, ինչպես սպանդանոցի շուն, վոր պատրաստ էր գործի դնելու ատամները, յերբ իր վոսկորին վտանգ է սպառնում։

Յերևում էր, վոր ներկաներից մի քանի արաբ քիչ առաջ ականատես էին յեղել անգլիացի սպայի մտրակի առաջ բերած խուճապին։ Մի բարձրահասակ քաղաքացի պատմում էր դեպքը։ Մյուսները լուռ լսում էին և թափահարում գլուխները։

— Ինչո՞ւ յեն ծեծում,—ասաց մի ծերունի.—եշն ինչ է, նա էլ է չարանում, յերբ ականջներից բռնում ես, շներն էլ իրենց պատիվն ունեն։ Իսկ մենք խո մարդիկ ենք, մեր սեփական հողի վրա, ուրիշների մուլքը չենք գավ-

*) Արաբերեն նշանակում է «տեր»։

**) Յենթասպա։

թել, ապրում ենք մեր քրտինքի վաստակով, հեռու մեզնից տարի շառը։

— Ճշմարիտ է, ով իմաստուն սեյիդ Աբդուլլահ-իբն-Ոմար,—խոսեց մի այլ ծերունի.—յեթե այս անհավատները կարծում են, վոր գործ ունեն անասունների հետ, չափազանց սխալվում են, վորովհետև այն ժամանակ, յերբ մեր պապերը տարածում էին գիտության լույսը ամբողջ աշխարհում, ուսումնասիրում էին ալգեբրան և բժշկությունը, թարգմանում Պլատոնը և Արիստոտելը, այն ժամանակ, ասում եմ, սրանք դեռ վայրենիներ էին և թափառական կյանք վարում։

Ավելի յերիտասարդները ուշադիր, զարմանքով և խորին ակնածությամբ լսում էին ծերունիների խոսքերը, վորոնք շատերի համար նոր հայտնություններ էին։

— Յերբ ամենաիմաստուն և հզոր Հարուն-էլ-Ռաշիդը իշխում էր Բաղդադում և Արաբական կայսրության սահմանները հասնում էին...

Հանկարծ լսվեց թնդանոթի խուլ վորոտ, մի քանի սավառնակ շառաչ դռռացին և արագ պտույտներ սկսեցին գործել քաղաքի վրա։ Հրապարակը լցվեց մարդկանցով։ Խռնվող բազմությունն արդեն սկսել էր խուճապի մատնվել։ Գավառապետի շենքից դուրս յեկան մի խումբ զինվորներ և յերկու շարք կանգնեցին դռան առաջ, մեզ ծանոթ յենթասպայի ղեկավարությամբ։

Թնդանոթի վորոտը հեռվից էր գալիս։ Վահիդը թեև սուր ականջներ ուներ, սակայն ավելի ստույգ տեղեկություն ստանալու համար քաշվեց հրապարակի մի ազատ անկյուն, պառկեց գետնի վրա, ականջը փակցրեց հողին և սկսեց լսել...

— Նամազի լավ ժամանակ ես գտել, մարդ աստուծո,—ասաց մի անցորդ ծիծաղելով և կանգ առավ։

— Բաղդադի կողմից է, Տիգրիսի ափերի մոտերքից,—բարձրաձայն ասաց Վահիդը, ականջը հեռացրեց գետնից, բայց պառկած մնաց։ Տեսնելով իր մոտ կանգնած մարդուն, վոր ապշած նայում էր իրեն, ժպտաց և միրուքը շոյելով ասաց.

— Նամազս վերջացրի, հերթը քոնն է, պառկիր գետնի վրա և կլսես շեյթանի խոհանոցի պղինձների հանած աղմուկը։

— Ասում ես Բաղդադի կողմի՞ց է։

— Դու ասացիր։

— Վեր կաց, վոտների տակ կտրորեն, չե՞ս տեսնում...

* * *

Իրարանցումը հրապարակում սաստկանում էր։ Լսվում էր քաղաքային մունետիկի ձայնը, վոր հրավիրում էր քաղաքացիներին քաշվել տները և չանհանգստանալ։

— Մեծ սահիբի հրամանով, ծեր ու յերիտասարդ, կին ու յերեխա, բոլորը անխտիր վախ չունենաք, բան չկա, վտանգ չկա... Ո՞վ գտել է, հինգ արծաթ բաշխիշ... Յա՜ ալլահ, յա՜ Մոհամեդ...

Շատերը չէյին նկատում, վոր ծեր մունետիկը, վոր սովորաբար կորած

ավանակներ գտնելու համար հրապարակային հայտարարություններ էր անում, այս անգամ էլ մեքենայորեն կրկնում էր իր հավիտենական հանգերգը — «ո՞վ գտել է, այսքան դուրուշ բաշխիշ»: Թեև վոչ մի ավանակ չէր կորել, բացի Մուհիդ-էլ-Վահիդի ուղտից, և վոչ վոք չէր խնդրել ծերունի մունետիկին «էշի բալալ կանչել», սակայն ծերունը յերկար տարիների ընթացքում սովորել էր միշտ նույն խոսքերը կրկնել և այսօրվա արտասովոր հայտարարությունը անելիս՝ անգիտակցաբար կցում էր սովորական վերջաբանը:

Ամբոխը ուշադրություն չէր դարձնում մունետիկի տարօրինակ և անկապ հայտարարության բովանդակության վրա, վորին նա նույնպես սովոր էր, սակայն Վահիդը լսելով հայտարարությունը, ցնցվեց, վեր թռավ պառկած տեղից և, ճեղքելով մարդկանց խիտ շարքերը, մոտեցավ մունետիկին: Վերջինս կրկնում էր նույն հայտարարությունը և վերջին բառերը՝ «ով գտել է, և այլն», յերբ Վահիդը բռնեց նրա ձեռքը և սկսեց ամուր թափ տալ:

— Կանչիր, կանչիր, ձայնդ անպակաս, կորածը իմ ուղտն է, այս գիշեր գողացան անզգամները, տաս արծաթ տուր, տասնհինգ, քսան... Ուղտս նշան ունի, մի աչքը կույր, մազը մուգ-դեղին, ճիշտ ինն տարեկան...

Վահիդը այնքան բարձր էր ճչում, վոր մի րոպե գրավեց շփոթված ամբոխի ուշադրությունը: Սկսեցին հավաքվել մունետիկի և Վահիդի շուրջը, հեռացողները յետ էին գալիս հետևելով մեկ-մեկի օրինակին: Միականի ծերունը գրավել էր բոլորի ուշադրությունը, մոռացել էին ոդում սավառնող գիվային թռչունները, թնդանոթի վորոտը, սահիբի պաշտոնատան վրա ծածանվող դրոշը և նրան պահպանող զինվորների շարքը:

Վահիդը շարունակում էր բարձր ձայնով նկարագրել կորած ուղտը և նրան պատահած դժբախտությունը: Շրջապատող բազմությունը լուռ լսում էր և կարեկցում խեղճ Վահիդին, վորի վիշտը միայն ճշմարիտ արաբը կարող էր զգալ իր հոգու խորքում:

Յերբ Վահիդը վերջացրեց իր պատմությունը, մունետիկը բարձրացրեց իր ձեռնափայտը բազմության գլուխներից վեր և այս անգամ հետևյալ կերպով ձևակերպեց իր հայտարարությունը.

— Սահիբի հրամանով կորել է մեկ ուղտ, մեկ աչքը փչացած. մուսուլմաններ, մեկ ուղտ, վախ չունենաք, հե՛յ, փտանք չկա, մեկ ուղտ, գտնողին քսան արծաթ... քսան արծաթ...

Բազմությունը տեղից չէր շարժվում: Հեռվից լսվում էին խառնիխուռն ձայներ, ծիծաղ, հիշոց և սուլոց: Մունետիկի հայտարարությունը այս անգամ ուշադրություն գրավեց իր տարօրինակ ու անկապ բովանդակությամբ:

— Գժվել է հիմար ծերուկը:
— Վախից խելքը թռել է:
— Հարբած է, դուցե:
— Ջերմ ունի, զառանցում է:
— Հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ...

Հանկարծ ամբողջ հրապարակը թնդաց նման բացականչություններով-

բոլորը անխտիր սկսեցին «հո՛ւ, հո՛ւ» կանչել, շատերը առանց իմանալու, թե բանը ինչումն է: Յերեխաները հետևում էին մեծերի օրինակին և իրենց սուր ճիչերով ճեղքում օդը: Կտուրների վրա կանգնած կանայք, փաթաթված սև շղարշների մեջ, քիչ էր մնացել միանային տղամարդկանց հարայհրոցին, սակայն մնացին քարացած, յերբ իրենց բարձրությունից նկատեցին, վոր յերկհարկանի շենքի առաջ շարված անգլիական ջոկատը՝ հրացանները ուսին՝ սկսեց առաջանալ դեպի ամբոխը և յենթասպայի հրամանի համաձայն՝ զինվորները հրացանները ուսից վար առնելով սկսեցին փամփուշտներ լցնել:

Հանկարծ կտուրներից լսվեց կանանց սուր ճիչ և չարագուշակ կերպով ճեղքեց օդը: Իրողությունը անսովոր էր և անակնկալ: Հրապարակի բազմությունը, կարծես ելեքտրական ուժեղ հոսանքից շանթահար՝ մեխվեց տեղնուտեղը, անմռունչ: Միայն լսվում էր դեռ մունետիկի գիլ ձայնը, վորի վերջին բառերն էլ սառեցին՝ անակնկալ կերպով ելեքտրականացած մթնոլորտում...

— Քսան արծաթ, ո՛վ մուսուլմաններ, քսան արծաթ, գտնողին քսա՜ն արծա՜թ...

— Փախե՛ք, կրակում են, փախե՛՛ք...

Սակայն վոչ վոք տեղից չէր շարժվում: Ամբոխի դիրքը սպառնալից էր: Ամենքը զգում էին, վոր վոչ մի վատ բան չեն արել. այդ գիտակցությունը վրդովում էր նրանց հոգին և լցնում այն արդար զայրույթով: Միթե իրենք ազատ չեն զվարճանալու իրենց հայրենի քաղաքի հրապարակում, վայելելու իրենց հանգստյան օրը, ուրբաթը, այնպես, ինչպես իրենց հաճելի է: Ինչո՞ւ յեն յեկել այս օտարազգիները, անկոչ հյուրերի պես, և խախտում են հյուրասիրության տարրական կանոնները, քիչ առաջ մորթելով, իսկ այժմ մահացու հրացանով:

Զինվորների ջոկատը վարանեց, տեսնելով ամբոխի սպառնական դիրքը և քար լռությունը: Յենթասպան ձեռքը բարձրացրեց օդի մեջ և ինչ-վոր բան ասաց անգլիերեն. մի յերիտասարդ, թրքական ֆեսը գլխին, թարգմանեց նրա խոսքերը.

— Սահիբը հրամայում է անմիջապես ցրվել, իսկ վաղ առավոտ, սովորականի պես, բաց անել շուկան և անցնել խաղաղ աշխատանքի. չհնազանդվողները կենթարկվեն ամենախիստ պատիժների, նույնիսկ կախաղանի:

Յերկհարկանի շենքի պատշգամբի դուռը բացվեց և մի անգլիացի կարճլիկ զինվորական գեներալի ուսադիրներով և ալեխառն մազերով դուրս յեկավ դիտելու հրապարակը: Ամենքի հայացքը մի պահ ուղղվեց դեպի պատշգամբը: Ծեր գեներալը սպասում էր, վոր ժողովուրդը կողջունե իր յեկույթը, և պատրաստվել էր պատշաճ կերպով պատասխանելու ամբոխի խանդավառ ցույցերին և ովացիաներին:

Թարգմանը շարունակում էր.

— Սահիբը հայտնում է նույնպես, վոր անգլիացիների հզոր փադիշահը հարազատ զավակների պես սիրում է իր հպատակներին և հույս ունի,

վոր իր հպատակները և հովանավորած ազգությունները անկեղծ վորդիական զգացմունքներով տոգորված են դեպի նորին մեծության գահը, վորի հզորությունը հայտնի յե ամբողջ աշխարհին։

Ամբոխը անհամբեր լսում եր Թարգմանի խոսքերը և, յերբ սա վերջացրեց, կամաց-կամաց սկսեց ցրվել, լուռ և անշշուկ։ Ծեր գեներալը տեսնելով, վոր ժողովուրդը անուշադիր թողեց իր նշանավոր և պատկառելի անձը, դժգոհ հեռացավ, պատշգամբի դուռը յետևից ամուր շրխկացնելով։

* * *

Հրապարակը համարյա դատարկվել եր, կանայք նույնպես հեռացել եյին կտուրներից իրենց ամուսիններին դիմավորելու համար։ Մունետիկի ձայնը այլևս չեր լսվում, սակայն նա մնացել եր կանգնած հրապարակի կենտրոնում Վահիդի հետ։ Վերջինս իրանը ծռած հարցական նշանի պես՝ նայում եր նրան և քթի տակից մրմռում եր՝ «ալլահ, ալլահ, միթե ամեն ինչ կորած ե, միթե իմ սիրեցյալ Արգին գտնելու վոչ մի հույս չկա»։

Զինվորների ջոկատը պետի հրամանով վերադարձել եր կայանը։ Յենթասպան մի քանի հրամաններ տալուց հետո կրկին զբաղվել եր իր գրքով՝ շենքի դռան առաջ, և շարունակում եր ծխել իր ծխամորճը հանդարտ և անայլայլ։

— Պիտի գնամ մեծ սահիբի մոտ և բողոքեմ,— բարձր և վճռական ձայնով ասաց Վահիդը։

Մունետիկը գլուխը թափահարեց և կարծես ինքն իրեն՝ խոսեց.

— Այսօր յերեխաներս հաց չունեն, ով պետք ե վճարի իմ վարձը։

Վահիդը ձեռքը տարավ դեպի գոտին, ուր պահված եր քսակը, հանեց մեկ արծաթ, դրավ ծերունի մունետիկի ափի մեջ և առանց յետ նայելու հաստատ քայլերով առաջացավ դեպի յերկհարկանի շենքը։ Հասնելով դռան մոտ՝ նա մի պահ վարանեց, տեսնելով շեմքի վրա անշարժ կանգնած յենթասպային, վորը ձեռները դարսած մեջքին՝ ընդունել եր սպառնական դիրք։

Վահիդը հիշեց Թարգմանի խոսքերը—«անգլիացիների հզոր փադիշահը հարազատ զավակների պես սիրում ե իր հպատակներին»,—սիրտ առավ և խոսքը ուղղելով յենթասպային և մի ձեռքը բարձրացնելով դեպի պատշգամբը՝ ասաց.

*— Սահիբի քերիր *), խնդիրք ունեմ։*

Սերժանտը նախ դեմքը խոժոռեց, հետո դիտելով մանրազնին Վահիդի արտաքինը, խորշոմապատ արևոտ դեմքը, վորի վրա անսովոր փայլով կայծկլտում եր միակ աչքը, ալեխառն միրուքը, վոր կիսով չափ ծածկում եր բաց կուրծքը՝ ժպտաց և աջ բռունցքը մեքենաբար սեղմելով՝ ատամների միջից մռմռաց.

— Come on! *(արի),—ու ձեռքով մոտենալու նշան արավ։*

Վահիդը մի պահ տատանվեց—գնա՞, թե վոչ։ Մինչ նա վարանում եր,

**) Մեծ տեր։*

սերժանտի ուղեղում մի միտք ծագեց, մի զվարճալի միտք, հենց այնպես, մի փոքրիկ կատակի ծրագիր, փարատելու համար գաղութային նվաճման ծանր տաղտուկը։

Վահիդը մոտեցավ։ Սերժանտը տեղից չշարժվեց։ Մի պահ նրանց հայացքները հանդիպեցին։ Անգլիացին դեռ ժպտում եր, սակայն ճանապարհ չեր տալիս։ Վահիդը ձեռքի շարժումով հասկացրեց, վոր ուզում ե մտնել։ Անգլիացին նույնպես ձեռքի շարժում արավ, կարծես ուզում եր ճանապարհ տալ, բայց այդ շարժումը ունեցավ անսպասելի հետևանք։ Հանկարծ Վահիդը զգաց, վոր աչքերը մթնում են, կորցնում ե վոտքի տակի հողը և ինչ-վոր աննպատակ պտույտներ ե գործում ոդի մեջ։ Այս բոլորը կատարվեց մի քանի ակնթարթում, և Վահիդը ռետինե գնդակի պես կանոնավոր վոստյուններով գնաց թավալելու չորս-հինգ քայլ հեռու հրապարակի փոշիների մեջ... Ո՛, խեղճ Վահիդը դեռ չգիտեր ինչ ասել ե բոքսը...

Իսկ անգլիացին՝ հաստատելով իր անվրեպ հարվածը և բռունցքի անորինակ ուժը, բռնվեց անզուսպ հրճվանքով. նա ծիծաղում եր թոքերի ամբողջ ուժով և ձեռներով ամուր սեղմում եր կողերը, վոր ցնցումից չպայթի...

IV

Ներկա պատմությունը ամբողջացնելու տեսակետից կարևոր և անշուշտ պարզել այն խնդիրը, թե յերեք անծանոթ դերվիշների Բաբելոնի ավերակներից հանկարծակի հեռանալը կապ ունի՞ արդյոք դժբաղդ Մուհիդ-ել-Վահիդի սիրեցյալ ուղտի կորստյան հետ։

Պատմողի համար դժվար չե պարզել այս խնդիրը. նա գիտե, վոր յերեք հավատացյալ և բարեպաշտ ուխտավորները (վորոնց քունը ավելի քան կասկածելի յեր) ճիշտ կես գիշերին վեր կացան և ստուգելով, վոր Վահիդը խոր քնած ե, անշշուկ արձակեցին ուղտի կապը, թեթև բեռ ամրացրին սապատին, արաբին հատուկ վարպետությամբ վոտքի հանեցին թմրած անասունին և յետևներից քաշելով անաղմուկ հեռացան Բաբելոնի ավերակներից։ Յերբ ազատվեցին խորդ ու բորդ փլատակներից՝ քայլերը արագացրին։ Նրանք մտադրել եյին մինչև լուսաբաց կտրել այնքան տարածություն, վոր ամեն մի հետապնդում անհնար լիներ։

Յերբ գիշերը մոտեցավ իր վախճանին և հորիզոնը սկսեց շառագունել, մեր հավատացյալ և բարեպաշտ ուխտավորները իրենց ավարի հետ միասին հասան մի ոազիսի, վոր ավելի ճիշտ կարելի յե անվանել արմավենիների պուրակ, վորի նմաններին հաճախ կարելի յե հանդիպել Իրաքում, մանավանդ Տիգրիս և Դիյալա գետերի ափերին։

Այստեղ նրանք վորոշեցին մի քիչ շունչ առնել՝ անդադար յերթից հոգնած։

Արևը արդեն սկսել եր լուսավորել ծառերի կատարները, քիչ հետո, հանկարծ, գնդակի պես դուրս թռավ հորիզոնից (միշտ այդպես ե լինում տափաստաններում, ուր բարձրություններ և սարեր չկան)։

Դերվիշները կանգ առան և, տեսնելով արևի ծագումը, դարձան դեպի հարավ և սկսեցին մինչև առավոտյան աղոթքը իրենց յերկար միրուքները ծանր-ծանր շոյելով:

Մինչ զբաղված եյին այս բարեպաշտական արարողությամբ, նրանցից մեկի հայացքը, սովորականից մի քիչ ավելի սևեռուն և ուշադիր, ընկավ ուղտին, հատկապես նրա գլխի և դեմքի վրա:

— Անեծք չեյթանին, խաբվեցինք. ուղտի մեկ աչքը կույր է, ինքն էլ զառամած, մթության մեջ չենք նկատել:

Այս խոսքերը արտասանվեցին այնպիսի տոնով, վորի մեջ զգացվում եր հիասթափություն՝ խառն ափսոսանքի և կատաղության հետ:

Աղոթքը սառեց մյուսների շրթունքներին և ձեռները անշարժացան միրուքների վրա:

Այս անակնկալ և ցավալի հայտնությունը պատկանում եր յերեք պատկառելի կրոնավորներից նրան, վորի ձեռքում գտնվում եր ուղտի վզկապը: Թոկը բավական յերկար եր, վորով ուղտը հնարավորություն ուներ ազատ շարժումներ անելու և պահելու վորոշ տարածություն իր և իրեն առաջնորդողի միջև:

Ստուգելու համար տխուր իրողությունը մոտեցան և հաստատեցին անհերքելի փաստը:

— Ալլահ, ալլահ, ինչի՞ յե պետք այս զառամած և ծուռումուռ կենդանին. դրազ եմ գալիս, վոր դրան քսան արծաթ էլ չեն տա,— խոսեց մեզ ծանոթ կոկորդային ձայնը, վոր պատկանում եր խմբի ավագ Մուսթաֆա-Նուրեդդին-էլ-Մանսուրին:

Ու բոլորը միաբերան սկսեցին անիծել իրենց բաղդը և հայհոյել ուղտին ու նրա տիրոջը, կարծես թե վերջիններս եյին պատճառը իրենց անաջողության:

Ուղտը կարծես հասկանում եր բանի եյությունը, նրա տհաճությունը սկսում եր փոխվել անհանգստության: Բնազդաբար նա զգում եր, վոր գործ ունի դեպի իրեն թշնամաբար տրամադրված ոտարականների հետ, սակայն թշնամության բուն պատճառը չեր կարող գուշակել: Վահիդը նրա հետ միշտ քաղցրությամբ եր վարվում, չեր հայհոյում, չեր բղավում, խոսում եր մեղմ և փաղաքշող ձայնով. իսկ այժմ... այժմ նրա առջև կանգնած եյին յերեք անծանոթ և դաժան դեմքեր, փրփրած բերաններով և կատաղությունից փայլատակող աչքերով:

Արդեն իր առաձգական յերկար վիզը գալարեց, կակուղ թաթերը մեկ-մեկ բարձրացրեց գետնից, փոքրիկ ականջները շարժեց և կարճ պոչը վոլորեց. թվում եր, ինչ-վոր բան անհանգստացնում եր կենդանուն: Շատ հավանական է, վոր նրա սապատը քերվում եր, իսկ սապատ քերելը հեշտ բան չե ուղտի համար: Հանկարծ նա բերանը բաց ու խուփ արավ և կոկորդից արձակեց մի խուլ մռնչյուն. մեծ քանակությամբ թուք եր հավաքվել նրա բերնում. լորձունքի այդ պատկառելի քանակությունը նա վերածեց մի խոշոր գնդի և մեկեն շառաչյունով շպրտեց յերեք գազազած դերվիշների վրա: Լորձունքի գնդակը վորպես շրապնել պայթեց մարգարեյի հետևորդների գլուխների վրա և վողողեց նրանց պատկառելի դեմքերն ու նվիրական միրուքները...

Դերվիշները մռնչացին գազանների պես. լպրծուն հեղուկը համարյա կուրացրել եր նրանցից մեկի աչքերը, այն մեկի, վորին անվանում եյին Մուստաֆա Նուրեդդին-էլ-Մանսուր:

Հաստ ձեռնափայտերը շարժվեցին ոդի մեջ, սակայն նախքան սրանց նպատակին ծառայելը, Արդեն մի բարձր թռիչք գործեց, դարձավ ինքն իր վրա և յետևի վոտները գետնից կտրելով՝ յետ մղեց վճռական գրոհը:

Ճակատամարտը կարճ տևեց. ուղտը ուղղելով վերջին հարվածը դերվիշներից մեկի փորին, իր ծեր սրունքների ամբողջ ուժով սլացավ դեպի անապատի խորքերը...

Այն մեկը, վոր ստացել եր վերջին հարվածը, այժմ անշունչ փռված եր գետնի վրա, իսկ մյուս յերկուսը, վորոնց մարմնի զանազան մասերի վրա դեռ թարմ եյին ուղտի թաթի հետքերը, կատարելապես ապշած և շփոթված անակնկալ և ըստ յերևույթին հիմար դեպքից, չգիտեյին ինչ անել — հետևել փախչող ուղտին, թե հասնել իրենց ուշաթափ ընկերոջ ոգնության:

V

Մենք ուղտապան էլ Վահիդին թողինք թավալված փոշիների մեջ, արաբական [illegible] փոքր քաղաքի հրապարակում, ուր հաղթականորեն ծածանվում եր Մեծ Բրիտանիայի դրոշակը և վորի հովանու տակ անդուլ հրճվում եր գաղութային յերկարամյա ծառայության համար վարձատրված վարձկան սերժանտը տեսնելով իր բռունցքի անսովոր ուժի հետևանքը:

Արդարև անգլիացի սերժանտի բռունցքի հարվածը ճակատագրական յեղավ խեղճ Վահիդի համար: Ճշմարիտ է, հարվածի պատճառած ցավը յերկար չտևեց,— Վահիդը մի կերպ քաշ գալով հասավ իրեն ծանոթ Աբբասի քարվանսարան,— սակայն տակնուվրա արավ նրա վողջ եյությունը և առիթ յեղավ, վոր նա տանջվի հոգեպես: Նա չեր կարողանում մոռանալ անգլիացու անզուսպ ծիծաղը, վոր նրան դիվային եր թվում, իր նախնական և պարզ հոգում չեր կարողանում գտնել այդ անսանձ հրճվանքի պատճառը. խփեց՝ բավական չե, այժմ էլ ծիծաղում է. ինչու, ինչու: Միթե մարդկային հիմարությունը կարող է հասնել այն աստիճանին, վոր ուրիշի տանջանքը հրճվանքի աղբյուր դառնա: «Ալլահ, ալլահ, ասում եր նա իր մտքում, տեսնում եմ, վոր քո ստեղծած բաները այնքան էլ խելոք չեն. թող շնից էլ վատթար լինեմ, միայն չլսեմ մարդու ծիծաղը իր մերձավորի դժբախտության վրա, հատկապես այն դժբախտության, վորի պատճառը հենց ինքն է»:

Նախորդ գիշերվանից ի վեր վոչինչ չեր կերել, ամբողջ որը թափառել եր և վերջին անգամ ստացել մի բռունցքի հարված, վոր տակն ու վրա յեր

արել նրա վողջ էյությունը: Յերեկոյան Վահիդը ընկավ տենդի մեջ: Քարվանսարայի տերը, վաղեմի ծանոթ Աբբասը, հաճախ գալիս եր նրան խնամելու և գիշերվա մեծ մասը անց կացրեց նրա կողքին:

Վահիդը սկսեց զառանցել. տաքությունը գնալով սաստկանում եր:

— Մարգարեյի անունով յերդվեցին, Մեքքայից ենք գալիս ասացին, մենք — մեծ անապատի թափառական դերվիշներս — քարոզում ենք աստծո խոսքը... հետո գողացան իմ Արդուն... Յա հա՛քի, խաբեցին... Իսկ դժոխքի թռչունը գոռում է մեր դաշտերի վրա... Մեծ սահիբը ծիծաղեց, յերբ իմացավ, վոր ուղտը կորել է... ասաց՝ միրուքդ ածելիր, ուղտդ կճարեմ... Բաղդադում մի տուն կա, այնտեղ հաշիշ էյի ծխում... ասավ՝ Բաղդադը լավ քաղաք է, մենք շուտով կտիրենք նրան... Մի չարչարեք իմ ուղտին, նա այսօր շատ է հոգնել... Խե՜ղճ Արդի, խե՜ղճ Արդի...

Մի քանի որ Վահիդը տանջվեց տենդի մեջ, հինգերորդ որը դադարեց զառանցելուց, ընկավ մի տեսակ ինքնամոռացման, ավելի շուտ անզգայության մեջ: Սակայն կես գիշերին հանկարծ սթափվեց, նստեց անկողնի մեջ և աչքերը լայն-լայն բաց անելով՝ սկսեց խոսել Աբբասի հետ, վոր այդ րոպեյին ներկա յեր:

Թվում եր, վոր տենդը անցել եր և նրա միտքը գործում եր սովորական պայծառությամբ.

— Սիրելի Աբբաս, զգում եմ, վոր վերջին ժամս հասել է. գնա և բեր ինձ մի բաժակ շերբեթ, վերջին անգամ ուզում եմ ճաշակել յերկրային քաղցրությունը:

Աբբասը շտապեց կատարել մահամերձի ցանկությունը:

Բաժակը դատարկելուց հետո Վահիդը ասաց.

— Շնորհակալ եմ հավիտյան, ով անման Աբբաս, թող որհնվի քո արհեստը և աշխատանքը, վորովհետև աշխարհիս վրա չկա ավելի քաղցր բան, քան արդար քրտինքի վաստակը. անիծվեն անորենները և ուրիշի աշխատանքի պտուղը խլող հափշտակիչները...

Լուսաբացին, յերբ քարվանսարայում գիշերող կարավանը զանգակների ուրախ ձայների ընկերակցությամբ դուրս յեկավ լայն դարպասից, ուղղվելով դեպի լայնարձակ հորիզոնը, ուղտապան Մուհիդ-էլ-Վահիդը ննջեց այն խաղաղ և անվրդով քնով, վորից այլևս չեն զարթնում...

* * *

Մուհիդ-էլ-Վահիդի հայրենիքը վաղուց արդեն գրավված եր անգլիական զորքերի կողմից, վորոնց մեծ մասը հնդիկ սպահիներ եյին: Նորին մեծության իշխանությունը տարածվել եր ամբողջ Միջագետքի վրա:

Մի որ գավառական նույն փոքրիկ քաղաքի հրապարակում, ուր գտնըվում եր մեզ ծանոթ յերկհարկանի շենքը (վորի վրա դեռ ծածանվում եր բրիտանական դրոշակը), հայտնվեց մի ուղտ՝ բուրդը գզգզված, ուժասպառ, գրեթե կմախքացած. խեղճը հազիվ շարժվում եր իր յերկար սրունքների

վրա և մերթ ընդ մերթ արձակում կոկորդային խուլ ու անախորժ մռընչյուն:

Յերկհարկանի շենքից դուրս յեկավ մի անգլիացի սպա, ծխամորճը ատամների մեջ բռնած, և տեսնելով իր հանգիստը վրդովող կենդանուն, զայրացավ հնդիկ պահակի վրա, և ստուգելով, վոր ուղտը անտեր է, հրամայեց ձերբակալել և առաջնորդել վոստիկանատուն:

Յերբ հնդիկ զինվորը մոտեցավ խեղճ անասունին, տեսավ, վոր նրա մեկ աչքը կույր է:

Դ. ՄԵՍՅԱՆ

ՎԱՍԻԼ ԱՂԱՆ

Սայլերի քարվանի ծերը դուրս յեկավ գյուղից ու ձգվեց թրխկոցով ու ճռճռոցով. ասես վագոններ լինեյին իրար կպած իրենց լծկաններով, գոմեշներով: Սայլերի միջին կանգնած սայլապանները ճիպոտները ձեռքներին նրանց ընթացքի հետ օրորվում եյին սոխ ու հաց ծամելով:

Ջվարթ աղմուկը, աշխույժ շարժումը ընդհանուր ուրախություն եյին հայտնում: Պառահորդները չեյին էլ հարցնում, գիտեյին ուր են գնում, կամ սայլապանների փոխարեն կանաչ, թարմ ճյուղերով մինչև ճաղերի ծայրերը հյուսված սայլերն եյին պատասխանում:

— Եղ ա դուք էլ գնացիք, տեսնանք մենք յերբ ենք կարում դուրս գանք:

— Աստված աջողա, վո՞ր կողմի վրա, մեր աչքերն էլ են սարքին:

— Այ տղա, բոստանները վերջանալու յա, մեր յերեխեքը դեռ կանանչ քչի (կչեպ) չեն տեսել:

Գյուղից դուրս յեկած սայլերի շարանը սկսեց կարճանալ, փոքրանալ դաշտերի հեռավորության մեջ: Ճամբան յերկար էր, մի քանով պետք է կարճացնեյին: Զրույցը, հանաքն ու ուրախությունը թեժացան: Հասակավորները սայլերը թողին հոտաղներին ու հավաքվեցին Առուշանի սայլը: Աշացողները սայլի կողքովն եյին գնում վազքով, ուշքները լարած պատմողի բերանին. ինչ մոռներն եր ընկնում, նրանից եյին պատմում, ինչ աչքներովն եր ընկնում՝ նրանից եյին խոսում:

— Տղերք, են ինչ ա,—ասաց մեկը, ցույց տալով հեռուն:

— Վո՞րը,—հարցրին իրար հետ մի քանիսն ու յերեսները դարձրին այն կողմը, աչքերնին հուպ ածին, ձեռքերը դրին ճակատներին:

— Հրեն է, են կանանչը...

Հեռվում, դաշտի խորության մեջ կասես թե մի կանաչ փափախ եր ցած դրած, վոր հազիվ եր նշմարվում նստած կապույտ մուժի մեջ:

Խոսքը Վասիլ աղի տան ու բաղի մասին եր, վոր՝ ուսած՝ կանաչին եր տալիս շրջապատի ծղնոտացած ամայության մեջ: Խոսակցությունն էլ դարձավ այդ կողմը:

— Հեյ գիդի Վասիլ աղա, մի գլուխը բարձրացնի հիմա...

— Բարձրացնում ա ինչ անի, անջաղ կարվեց ծուխը, նրա... (հայհոյանք):

— Ամմա հախ դատաստան եր, հա՛...

— Հախ չեր, ասում են...

— Վո՞նց չեր հախ...

— Նհենց, վոր նա, ասում են, մեկել թավադների թայը չեր. խղճմտանքով եր, աշխատավոր ու հալալ...

— Վոր հալալ եր, Գեո, ենքան կարողությունը վո՞րտեղից եր նրան:

— Աշխատել եր:

— Հալալությունո՞վ յանի:

— Բա հարամությունո՞վ:

— Արա, հալալությունով հարստություն կլի՞, են էլ ենքա՞ն...

— Բա հարամությունով կլի՞:

— Նոր ես գիտո՞ւմ բա եդ: Հալալությունով վոր հարստանալը ադաթ ըլի, քեզանից էլ հալալ մարդ կա՞, ընչի՞ չես կարում մի լուծդ թամամ պահես, վոր մի գլուխ թայը պակաս, թայը պակաս: Հրեն, Առաքելը—հո գրանից հալալն ու աշխատավորը՝ սուտ ա. տեսել ես, վոր դրա չուխան ու շալվարը թագա իրար ըսսատ գան. մինչև մինը իրար ա գցում, հագնում—են մեկելը մաշվում ա. մեկել մինչև են ա իրար անում՝ են մեկելն ա մաշվում: Ներկելու մասին էլ հո չեմ խոսում—վորտեղի՞ց ա նրան երկու մանեթը: Բա Վասիլ աղա՞ն. հեռու չեր, հո, մոնեղ ա, դովլաթը չոլերովն եր անցել, «Հարուն-Ղարունի» տեր եր:

— Յավաշ, բա մեղ տանում ես նրան թայ անո՞ւմ: Մեր տակին են գլխիցը կերված ա. են ինչ նա յա՝ հիմքը հաստատ ա ըլել. ինքն ուսում առած, խելքը՝ շատ:

— Ուսում առած, խելքը շա՜տ. ուսումն ու խելքը պետքը չի, թող նրա հոգերը իմ ու քուննը ըլեր՝ ուսումներս էլ կշատանար ու խելքներս էլ: Տեսնում ես հիմա տղան, Բագրատ աղան. ուսումը շատ չե՞ր, վոր հոր դովլաթը չներ եր խաղացնում, բոլուժի անում. են ինչ հիմա յա, ասում են, ամեն քաղաք մոնողի ըսսատ ա գալիս: Տղերքը մասխարա յեն անում, թե՝ «Բագրատ աղա, տափ չես տալի, տափ—վարենք»:

«— Էլ աղա չկա, ասում ա, հիմի կի գիփ նոգիրնիր ենք, մե արադի, պապիրոսի փուղ չունի՞ք...»:

Ծիծաղեցին:

— Բա սուտ ա ասո՞ւմ Ակոփը. թող հարստանա եկի հոր նման, հալալությունով, ուսումով ու խելքով:

— Չէ, դե հարուստ չկա՞ վոր. յես խղճմտանքի վրա յեմ ասում, հալալության վրա: Ով վոր նրան ճանաչում ա, նա յա ասում, թե մարդը վոչ նոքարի հախ ա կտրած, վո՞չ էլ թե թողած, վոր մի հարամ մաղ իրա դովլաթին խառնեն:

— Հավատաս վոչ, են տաշ եր, վոր բեյինները իմ հալեր, թե ով վոր հալալ ա ու սասու ճամբումը՝ նա էլ հարուստ ա:

— Իմ կարծ խելքովը, ամենից հալալ դատաստանն են եր, վոր արին: Վասիլ աղի են... (հայհոյում է). հողը նրա ընչին եր պետք. վարողն ուրիշը, հնձողն՝ ուրիշը: Ըսենց չի՞, Մակի:

— Ա՛յ տղա, խոսի յե՛․ ա՛յ, սրան հարցրեք, Մակին նրա ինչն ա գիտում։ Հ՞ը, Դանել։

— Դանելի բերանը թափուր ա՞, վոր խոսի, տեսնում չե՞ս, ուզում ա թե չանան կրնկնահան ըլի։

— Ըզորթ, Դանելը նրա լավը կիմանա։

— Դե վոր հալալութենից ու խղճմտանքից եք խոսում,— բերանի անկյունները լեզվով մաքրելուց ու վիզը ձգելուց հետո, սկսեց Դանելը,— թողեք մի բան էլ յես ասեմ։

Սայլերը թրխկ-թրխկալով, աղմուկով, ճիպոտի ու մարդկանց աղմուկըն իրար խառնված՝ բավական հեռացել էյին Վասիլ աղի տան հավասարութենից, իսկ Դանելը սայլի մեջ կանգնած, ական ամեն մի թրխկոցի հետ գլուխ տալով ու ընդհատելով իր պատմությունը՝ շարունակում էր.

— Վասիլ աղիցը յես մի բան տեսա՝ նոր, նրանից յետո իմացա, թե ինչ մարդ ա նա։ Իմ նրա տանը ըլած վախտն էր։ Ասած ա, խոսքը ժամանակը կքաշի։ Եսպես կալերը նոր պրծել էինք, յերկու սել լծել տվավ, մեզ ճամբու գրավ դեպի Բոխչալու, վոր ինքն էլ քամակներիս ձիով գա. սերմ փոխելու ենք գնում։ Իրիկունը ժամժամքին հասանք Մոլլա-Ահմադլու։ Քոչը վեր էր գալի. ենպես էր, վոր շունը տերը ճանաչում չէր. տասը տեղով գալիս, իրար միջով անց ին կենում տավարն ու վոչխարը։ Ասեցինք հասնանք էդ քոչի բերանից, վոր գշերը ապրանք չտանիլ տանք։ Գեղի միջով անցկենալիս մի պառավ թուրք, անունը Հասան, առաջներս կտրեց — յեզներիցը ճանաչել էր։

— Ես Վասիլ աղի սելերը չե՞ն,— հարցրեց։

— Հա, ասինք, Վասիլ աղինն են։

— Բա ո՞ւր եք գնում ես վախտը,— ասեց,— վեր յեկեք, յեզները դուս արեք. ամոթ չի՞ մեզ համար, վոր եսպես անժամանակ թողենք անցկենաք, տանեք ապրանք կորցնե՞ք։

Վեր եկանք, յեզները դուս արինք։ Հենց էդ ժամանակը Վասիլ աղան ինքն էլ յեկավ վրա հասավ։ «Խո՞շ, բեշ» արին, ձիուց վեր յեկավ նա էլ։ Դու մի ասիլ, ես պառավ թուրքի տղեն մի քանի տարի Վասիլ աղի մոտ չորան ա։ Մարդը մեզ տուն տարավ, սամավար գցեց, չայ խմեցինք, ինչ վոր ձեռքից յեկավ, պատիվ տվավ, հավ մորթեց։ Հաց ուտելուց յետո ուզեցինք յեզները կապտենք սելերիցը, ես Հասանը թե՝

— Կապելը պետքը չի, ես կողմի վրա արեք, թողեք գնան արածեն, արխային կացեք, բանեղից մի մազ չի կորչիլ։

Մենք էլ էդ կողմովը արինք. մի խոտ տեղ էր, ապրանքը ձեռաց կըշտացավ ու նստեց. մենք էլ փալասներս գլխներիս քաշեցինք, քնեցինք։ Առավոտը վեր կացանք թե սելերը լծենք — մի կարմիր աչառ կար — տեսանք՝ էդ աչառը չկա։ Դես աչքի, դեն աչքի — աչառը տափը ծակից նի մտավ։

Վասիլ աղան էս թուրքի յախեն բռնեց։

— Ա՛ թուրք,— ասեց,— յեկ գլխիս ոյին մի խաղա, յեզս յետ բեր, թե չե փիս կլի։

Թուրքը մնաց ցամաքված։

— Աղա,— ասեց,— էդ ինչ ես ասում, բա մենք մարդ չե՞նք. բա մենք շուն ե՞նք, քու ասելովը. բա մարդ մարդու դռնաղ անի, բերի տուն, առաջին հաց դնի ու նրա յեզը գիշերը գողանա՞։ Ասսու խաթեր, ինձ բեյարուա մի անի ես գեղի միջին, ով իմանա՝ ինչ կասի։

— Դե, ես ա կռնանես բեյարուրը,— ասեց Վասիլ աղեն։— Յես գիտեմ դա ինչի աջըղ (վրեժ) ա. աղիդ հախիցը յերկու վոչխար յետ եմ քաշել չե՞...

— Չե՛, Վասիլ աղա, աստված, յերկինք,— յերդում ա ուտում թուրքը, քարերը կծում, հավատացողն ով ա։

Ձին նստեց Վասիլ աղեն, մաթրաղեց, գնաց։

Մի սհաթ չանցած, տեսանք ուրյադնիկին ու երկու ստրաժնիկի առած յեկավ։

Տղերք, յես տեսա, դուք վոչ տեսնեք։

Վասիլ աղան մատը մեկնեց Հասանի վրա ու ռուսերեն նիկոտրատեց։ Մաթրաղները քաշեցին — վոնց վոր կատաղած դուշը մի ճուտի քրքրի — տալիս են, վոնց են տալիս, մաթրաղը մաթրաղին ա դիպչում։ Ես խեղճ պառավ մարդը բառանչում ա, ով ա անգաճ դնողը։

— Ասա,— ասում են,— վո՞րտեղ ա աչառը, ու՞ր ես տարել, վո՞ր կողմը զրկել. կպանենք, թե վոր ես սհաթիս տեղը չասես։

Կռացել ա ընկել Վասիլ աղի վոտները, երեսը տափերն ա քսում, արտասուքը թող անում, աղաչանք անում.— «Վասիլ-աղա, աստվածդ կսիրես, ազատիր ինձ ես կրակիցը, յես քու աչառից խաբար չեմ...»։ Վասիլ աղեն քացի յա տալիս երեսին, գցում ստրաժնիկների առաջը։ Սաղ գեղը յեկել ա ցիփ կապել, ով ա կարում մոտ գա, մի խոսք ասի։ Դե, ջանն ազիզ ա՝ մաթրաղների տակին չոքե-չոք մտնում ա շան բունը, մտնում ա հավաբունը, վոր բալքի կարենա ազատվի նրանցից, յետևիցը հանում են, քաշում, դուրս գցում ու նորից տալիս։ Երե՜ս, մերե՜ս, ով ա տվել երես, արնակոլոլ ա ըլել։ Յետ են դառնում մին նմուտ, գալիս խոսում Վասիլ աղի հետ ու նորից սկսում։

Շատ վոր թակեցին՝ ուրյադնիկը ձեռքով արավ, թե կանգնեցեք։ Ստրաժնիկները կանգնեցին։

— Ա՛ Հասան,— առաջ կացավ ուրյադնիկը։ Հասանը՝ գլուխը, երեսը, միրուքը կարմրած, ձեռները պլոկված, չոքեց նրա առաջ։— Հիմի դու միտք կանես քո միջումը, թե վկա չկա՞, բան չկա, եսա թակեցին պրծան, կթողնեն ու կգնան։ Խելքդ չկտրի՝ եսքանը. մինչև վոր բոլորը մին-մին չասես քու բերանովը, մինչև յեզը յետ չտաս՝ քեզ պրծնիլ չկա։ Վասիլ աղան վոր ասում ա, կնշանակի դրուստ ա. մենք չենք թողնի, վոր սրա նման մարդու յեզը մին գյադա ուտի։ Պառավ մարդ ես, յեկ անպատիվ մի դառնա, ես մարդու յեզը իրան տու, խոսք եմ տալիս պրատակոլը վոչնչացնեմ, Վասիլ աղան էլ գանգատից ձեռք քաշի, բաց թողնենք քեզ. թե չե՝ պետք ա կոներդ քամակից կապեմ թո՛ւշ բերդը։

Էն խեղճ Թուրքի պառավն էլ մի կողմից ա իրան կտրատում, աղաչում, մաթրաղների բերանն ընկնում—չեն հավատում:

Թակը մին էլ վոր նորեցին՝ Հասանը ձեռքերը բարձրացրեց:

— Յավաշ,—ասեց,—ուրադնիկ աղա, տամ դրա յեղը: Վասիլ աղա, տամ յեղդ, ախպեր, յես եմ գողացել, յես եմ տարել, սպանել միք սա ինձ, տամ, տամ...

Ստրաժնիկներին կանգնեցրին: Վասիլ աղեն գառավ ուրյադնիկին, թե «տեսա՞ր»: Յերկուսն էլ ծիծաղեցին: Մենք բոլորս մնացինք սառած, թե էս ինչ բան պատահեց:

— Ա՜ Զահրա, ա՛ Զահրա,—ձեռքով արավ Հասանն իրա կնկանը,—գնա մեր Ջեյրանը քշի գա:

Պառավը գլխի չընկավ, շշկլվեց ու, մինչև մենք էլ գլխի կընկնեյինք, թե ինչ ա ասում Հասանը՝ ինքը վեր կացավ, գլուխը կարմրին տալով վազ տվավ դեպի տան քամակը, ստրաժնիկներն էլ յետևիցը: Գոմն էնտեղ էր, նի մտավ գոմը, ու մին էլ տեսնենք էնտեղից մին սպիտակ յեզ դուրս արավ: Յեզ, ինչ յեզ, Առուշան, վոր մեր էս քարվանումը նենց յեզ չկա. աչքահուլունքը ճիտն արած, ըղորթ վոր մին ջեյրան:

— Վասիլ աղա,—ասեց,—քու յեզը հո սրանից լավը չէր. եդ մին յեզն ունեմ յես, եդ մինն էլ դու տար, թե կարաս դրա ամաչն ուտես: Դու երկու ցութան ես լծում, յես մենակ եդ մի յեզն ունեմ, դրանով եմ պահում իմ տունն ու չիլաղ քյուլփաթս, տա՛ր, յեզը վոր գտես յես եմ գողացել յեզդ: Հա՛, հա՛, Ջեյրան ջան,—առաջնեքս արավ յեզը.—գնա՛, մաղիդ հաշվովը մին խեր տեսնի Վասիլ աղան քեզնից, թե վոր նրա յեզը քո տերն ա տարել, թե ու չէ՝ անմեղ եմ յես—արուն դառնա աշխատանքդ ու մենակ դու ճաշ նրա դառնը, վոնց վոր մենակ ես իմ դառնը... Դե, տա՛ր, Վասիլ աղա, էլ ասելու բան չունեմ. թե աշխարհքումս արդարություն կա, կտեսնենք մի օր էլ քո վերջը ու սրանք էլ կիմանան, թե ո՛վ ա ում յեզը տարել:

Վասիլ աղեն իրան ուտում էր:

— Տօ, հարամզադա, ինչ նամարդուլ ես անում,—վրա պրծավ.—դու մի գող Թուրք ըլես, յես՝ աղնիվ, պոչտանի գլորյանին, համարձակվես երեսիս եդպես խոսե՞ս... Կոներդ քամակից կապել կտամ, Սիբիրը գեսր թողնել տամ հո. լակոտներից եմ մեղքը գալիս, թե չէ...

Թողինք Հասանի ձեռքը ծոցումը, արտասունքը թող անելիս, յեզը լծեցինք գնացինք: Սիրտը փոխեցինք, ակերը բարձած յեկանք տուն: Յեկանք, ամմա ինչ ըլի, վոր լավ ասենք, տղերք. մի՛ ասիլ, անտեր աչառ, դունչդ կըմեկնես Թա՞ռուշ արտից վրա կդաս գեղը: Ուրախացա իմ միջումը, ասե՝ մարդի (Թուրքի) հալալ ապրանքը չկորավ, կտանենք յետ իրան կտանք: Ամմա ինչ անի էս քու ճալալ Վասիլ աղեն: Իբիկնապահն էր, էլ չթողեց եզը լուսանա. կանչեց ինձ իրա մոտ, ձեռք դրավ ուսիս թե՝

— Դանել ջան, արա՛, քեզ եմ հավատում մենակ. էն անտեր աչառը փախել ա յեկել, հացդ կուտես ու վո՞նց վոր ըլի, գիշերս հասցնես քաղաք. եղուց ծեգին հենց բաղարը կմանես, վոր քեզանից առաջ մարդ չլինի մտած:

կծախես ինչ գնով էլ ըլի ու յետ կդառնաս, թե չէ, վոր աչառի գալը ձենձուն ընկնի, եղուց խաբարը հասնի Թուրքին՝ յես խայտառակ կդառնամ:

Հանեց ջիբիցն էլ մի մանեթ տվավ, թե «էս էլ քեզ խարջլուղ մինչև քաղաք հասնելդ» ու հետն էլ պնդացրեց, թե «վոր բերանիցդ բան էս հանել էս մասին, իմացիր վոր ինձանից պրծնիլ չես»:

Ասեցի, մարդ ա, էլի, դե ամոթ ա համարում հալբաթ իրա համար, կծախի իրանը ու Թուրքի յեզն էլ իրան կտա մի հանգով: Բա՞ն չունենս. աչառի փողը ջիբը դրավ՝ հինգ Թումանը, Թուրքի Ջեյրանն էլ լծեց մինչև վերջը:

— Ա՜յ աղա, բա դու էլ եդքանը գիտեցած՝ սուս արի՞ր,—նկատեցին այս ու այն կողմից:

— Յե՛ս,—ասաց Դանելը:—Բա վոր մաղը վրես թափ տված ըլեր, թե բերանիցդ բան չդուրս գա՝ կարայի ծպտա հանեմ. կոներս կապել կտար. Հասանի օրինակը աչքիս առաջին չէ՞ր: Որենքն էլ էր նրանը էն վախտը, պրիստավն ու ուրյադնիկն էլ: Ամմա էս յեզի վախտը, վոր Թագավորություն-բան փոխվեց ըլավ՝ Վասիլիս կոներն էլ կապեցին: Յարար արին, չորս կողմի գեղերից, ով ինչ ուներ Վասիլ աղի դեմ, յեկան: Հասանն ու իր աղեն էլ յեկան: Պատմեցին նրանք Ջեյրանի պատմությունը. հարցրին, թե՝ բա վկա-մկա չունե՞ս խոսի, վոր եդ մասին գիտենա: Դե նա էլ ինձ ինչ էր ճանաչում. մնացել էր անտառնի նման կանգնած, չէր իմանում ում անումը տա:

Առաջ կացա եղանեց ծիծաղելով, ասի՝ յես խաբար եմ: Վասիլը, վոր ինձ տեսավ, մթնեց: Մին-մին պատմեցի բոլորը ու ասեցի՝ դրուստ ա ասում Հասանը, աչառն էլ յես եմ տարել ծախել, փողը բերել Վասիլին տվել:

— Վասիլ, միտդ ա՞,—ասի,—հինգ Թումանը. միտդ ա՞ Հասանի թակն ու նրա պառավի արտասունքը—էս նրա պատասխանն ա:

— Արե՛ք, ինչ կարում եք, ինչ ձեռներիցդ գալիս ա,—ասեց,—յես օրենքի առաջը կխոսեմ ձեզ հետ, էնտեղ, քաղաքումը... Հասանին տվեք իր յեզները:

— Հալա դու յես հաթեթա տալի՞ս, ասի, աննամուս, ով գիդա, չգիտա, յես հո լավ գիդամ քեզ: Գնա՛,—ասի,—հա՛, քաղաքումը կտեսնաս:

Էս Հասանս էլ բերանը բաց ա արել, աչքերը չռել, չի իմանում, թե ինչ անի, ուզում ա թե ձեռքերս պաչի:

Սրա նման ուրիշ շատ պատմություններ կար: Հասանին իրավունք տվին Վասիլ աղի ապրանքից մի ջուխտ իրա հավանած յեզ ջոկելու. մնացածիցն էլ սրան-նրան տվին, իրան դրկեցին քաղաք, էն դրկին էր: Հագերը բաժանեցին [illegible] էր, վոր յերևում էր—տվին տասը աղքատ աղի, վոր վոչ կենալու տուն, վոչ էլ մի թիզ վարելու հող ունեյին: Ապրում են հիմա նրանք էնտեղ իրար հետ հալալ ախպեր պես:

Վասիլ աղիցն էլ դե հիմա մենակ էն չաչն ա մնացել—Բաղրատը, էն վոր, ասում եք, ամեն քաղաք մտնողի փեշից բռնում ա, արաղի ու պապիրոսի փող ուզում:

ԵՎ. ԳԱԼՃՅԱՆ

ԾԻԼՈ

Ծիլոյի յերիտասարդությունն էլ պատերազմի մորակին հանդիպեց. հազիվ լինի քսանութ տարեկան, բայց քունքն արդեն արծաթին է տալիս:

Համառ փոճապաշտ է Ծիլոն, համառ՝ ինչպես Սողոմոնի շան պոչը: Ո՞վ կասի, վոր արդեն յոթը տարի չէ, ինչ դուրս է յեկել Տրապիզոնի նահանգից... Նայեցե՛ք սորա լազի շալվարին. հետույքն այնքան է փթթավոր ու կախ ընկած, վոր կարծես արարատյան վոչխարի դմակ լինի՝ օրո՜ր ու շորո՜ր... Կեցվածքին ապա նայեցեք. ամեն բոպե մրցակցի հայտնվելու սպասող կատաղյա՜լ մի ըմբիշ: Եվ չնայած, վոր քթածակերը բաց ու խուփ է անում ձիարշավի ասպարեզը մտնող նժույգի պես, բայց իր չորս տարեկան Գասպարի կապույտ հագից խեղդվելու րոպեներին անգամ շարժվում է այնպես, ինչպես արտոնված ժամանակից դեռ բավական կանուխ իր խանութին մոտեցող առևտրականը:

Լուռ է Ծիլոն՝ յերբ խոսել է պետք, և ճառո՜ղ՝ յերբ անհրաժեշտ է լռել միայն. դրա համար էլ բառերը դուրս են փախչում նրա բերնից այնպես, ինչպես շփոթված նապաստակները իրենց բնից, վորի գլխին վորսորդը դիրք է բռնել անթարթ: Ծիլոն ինքն էլ է զգում հետո, վոր շատեց, չկարողացավ ասել այն, ինչ վոր ուզում եր ասել, բայց և վոչ մի կերպ չի կարողանում առնել դրա դիմացը: Միշտ այդպես է լինում սկսած այն օրից, յերբ առաջին անգամ վոտք դրեց այդ գյուղը և սկսեց տասապելական չափազանցություններով պատմել իր հերթական փախուստը յերկրից... Ունկնդիրները, սակայն, վոչ միայն չհավատացին, այլ և սկսեցին ձեռ առնել նրան՝ կրկնելով հերոսամարտի այս ու այն գլուխը: Իսկ յերբ նույն տարում Սարսաղ Ակոբի շները պատահմամբ կալի բռնվելով գայլի հետ նրա ծլարուծարանում, ճանցրին ծխախոտի մատղաշ տունկերը, Ծիլոն այդ ավերը գյուղացիների չարամտությանը վերագրեց և կարծես վրեժ լուծած լինելու համար խռովեց ու վորոշեց բնավ էլ չսկսել այդ մշակույթը:

— Ձե՛ք ուզեր, վազ կանցնիմ, շա՜տ մի պետքս է...

Այդպիսով Ծիլոն կորցրեց վոչ միայն խոսքի, այլ և գործի համարձակությունը ու խիստ մենակ զգաց իրեն: Բայց մի մենություն, վորին խնամում է Ծիլոն այնպես, ինչպես յեգիպտացիներն իրենց Ապիս յեզն եյին խնամում:

Մի օր գյուղի յերիտասարդները տեղում ապրող կարմիր բանակայինների ջոկատի հետ ձյունագնդի խաղալիս, յերբ արդեն կերքն յեկած՝ իրար եյին կպել, Ծիլոն՝ վոր մեկուսի կանգնած, արև-բեխերի տակից դառն

ատամներն եր ցույց տալիս, հանկարծ, ասես զսպանակից մղվածի պես, վեր ցատկեց տեղից, ապա վազելով հասավ և ամենազորբա ռուսի մեջքից բռնելն ու տապալելը մեկ արավ... Հիացմո՜ւնք ու զարմա՜նք փայլեց խաղացողների ցրտից բորբոքված այտերի վրա, և այդ օրը Ծիլոն պաշտոնապես ներկայացվեց կարմիր բանակայինների արդեն խիկ համախմբված ջոկատին:

— Անգրեմ ծանոթանալ,— անդամահատված ռուսերենով ասավ գյուղի յերդվյալ թամադա Ճոճո Ռաքելը,— Ալեքսյան Սարգսի հետ, վոր թարգմանի Ծիլո, խնդրեմ...

Ու մինչ Սարգիսն այդ նամուս ցեխոտող բառից գունատված՝ հեռանում եր զանգազ՝ ատամների տակ ինչ-վոր մրմռալով, այնտեղ Ռաքելը ծիծաղից ձյունի մեջ թավալող խմբին բացատրում եր, թե ինչպես Ալեքսյան Սարգիսը Ծիլո մկրտվեց 1915-ին, Տաճկաստանից նոր փախած գաղթական տարվա բարեկենդանին: Ռաքելը, ծիծաղից գրեթե աչքերը փակած, պատմում եր, թե մինչ գյուղի յերիտասարդությունը սեղան նստած՝ ուտում, խմում, յերգում — քեֆ եր քաշում, բարեկենդանի այդ ավից օրը Ալեքսյան Սարգիսը գաչիճի մեկ անկյունը իր ուղղահայաց վզովը ցից կանգնած, ձեռները մեջքին՝ սեղանի անց ու դարձն եր դիտում, յերբեմն-յերբեմն արև-բեխերի տակից դառն ատամները ցույց տալով:

— Մեկ ալ տեսնամ բերնեն ջո՜ւր կվազե,— վոգևորությունից խոսքն իր մայրենի լեզվին դարձնելով շարունակեց Ռաքելը.— շիտակն ըսեմ, շա՜տ փիս եղա. ձեռաց ցատկեցի տեղես ու — ծո, Ծիլո՜, հոս եկե, համեցեք նստե,— կանչեցի, հետո խոսքս սեղանի մեկալ գլուխը նետելով հրամանըրի մեկու մը, վոր նամուսով տեղ մը տա Ծիլոյին... Ազ խոսքերուս վրա անգիր աշխարհ գացած սերխոշներն (արբած) անգամ մեռնելու չափ խնդալ սկսեցին և ամենքը մեկ՝ աղաչեցին, վոր բացատրեմ Ծիլոյին ինչ ըլլալը: Ծիլո,— պոռացի յես թամադայական լրջությամբս,— պարոն կնշանակե ֆրանսերեն... Ատոր վրա սեղանը փաթկոց մը բարձրացուց, վա՜ր... հա՛, հա՛, հա՜ա՜ա՜, հի, հի հի՜ի՜ի՜, հո՛ւ, հո՛ւ, հո՜ւո՜ւ...

Եվ այդպես Ալեքսյան Սարգիսը գյուղում մնաց վորպես Ծիլո:

— Ծո, Ծիլո՛, դուն ալ եկե թամաշա ըրե, թերևս որ մը մարդ դառնաս,— իրեն թույլ եր տալիս ասել անգամ Ավետիս աղան — գյուղի ծերակուտականների կամանդիրը Լծկան Ստեփանի սրճարանում տավլու խաղալու աջող րոպեներին:— Մի խռովիր, եկե,— ավելացնում եր նա ժպիտի մի փայլակ ցույց տալով իր չորացած լիմոն դեմքին:

Նման րոպեներին Սարգիսն ինչպես վոր համոզվում եր Ռաքելի այն հայտարարությանը, թե ծիլո — պարոն է նշանակում ֆրանսերեն և պինդ ու մանր բացած աչքերում խոնարհ ժպիտ հաստատելով Ավետիս աղայի սեղանին եր մոտենում:

— Հապա թող Բող-ողլի Միսակը սիրտ ընեի ինձ Ծիլո կանչելու... Մե մարդ, վոր հեչ ավել չի ինձմե, ինչպես հայվան քյասիբին մեկը:

— Եվ յեթե Բող-ողլու, կամ նմանների հասցեյին իր ամբարած հայ-

հոյանքները չրավականանային, պատրաստ եր Ծիլոն ավելի թունդ մի հայհոյանք գտնողին փեշքեշ անել իր անբաժան ընկեր-կացինը։

Յեվ Ծիլոն գյուղում ծիլոյությունը ծախելով ու գնելով, տարին տասներկու ամիս ամեն ձևի և գույնի լուրի միայն կերավ իր ընտանիքի հետ մեկտեղ և գնալով՝ գլխի թաղիքե լայնեզր գլխարկին անգամ հայհոյել ըսկըսեց անխնա, թե ինչու յե այդպես անհուսորեն քրքրվում։

Թոփալ Ներսեսն եր միայն, վոր մարդավարի վարվեց Սարգսի հետ և ընավ բերան չառավ Ծիլո բառը. դեռ ավելին. յերբ բոլշևիկների յեկած տարվա սաժենանոց ձյունը Սարգսի խրճիթից ներս՝ սպառնում եր խեղդել փոքրիկ Գասպարին, Ներսեսն իր մշակներին հրամայեց, վոր խոտանոցներից մեկը պարպեն և Սարգսին հատկացնեն այդ «սենյակը»։

— Ինչու չըներ այդ լավությունը Ներսեսի պես գենգին մարդը,— մտածում եր Ծիլոն և շարունակում վիզը միշտ ուղղահայաց, ձեռները պահել մեջքին և այդպես ծիլոյացած գերբում անգործ ման գալով՝ վերապրել Յերկրում անցկացրած այն օրերը, յերբ իր իսկ հայրը—գյուղի աղան նման հազարավոր լավություններ կըներ ծանոթին թե անծանոթին, հային թե թուրքին...

— Հե՜յ գիդի օրե՜ր,— ախ եր քաշում Ծիլոն։— Ամա հիմակ կնիկդ թող երթա ծառայութին ընե, վոր տուն պահի... Հեյ-հե՜յ, փճացավ գնաց աղամարդությունս։

Յեվ յեղավ, վոր գարնանամուտին Թոփալ Ներսեսը հրամայելով խնդրեց Ծիլոյին, վոր մաքրի իրենց արտաքնոցում կուտակված աղբը։

— Ով կեղտոտեր ե, թող ան ալ դուս թափի,— կարճ հայտարարեց Ծիլոն՝ մերթ շոյելով արև-բեխերը, մերթ էլ ասես պոկելով։

Չանցած կես ժամ՝ Ներսեսի մշակները նորից խառով լցրին Ծիլոյի սենյակը... Յեվ Սարգիսն ստիպված յեղավ հանել խոտերի տակից իր փալասներն ու պղինձը, ջրի կուժերն ու լոբու պարկը և... քաշվել նախկին խրճիթը։

— Յարաբ յես ու Սարգիսն եյի այն օրը, յերբ Հայկանուշս—Ֆաթմայիս—թուրք աղայի այդ աղջկան փախցնելով Սուխում հասցուցի... Ան ալ վորտե՜ղ... Քանի՜-քանի՜ սուր ու հրացանի ճակատ ովլի... Ո՞վ սիրտ կըներ ճամբաս կտրելու,— մտածում եր Ծիլոն տեղափոխվելուց հետո և լուռ՝ Հայկանուշի յերեսին նայում։— Կնիկդ պետք ե ծառայութին ընե, վոր դուն ուտենա... Փու երեսիդ, անամոթ, ալ ինչ հայվանի պես կկենաս, գետնին տակը չանցնիս...

Յեվ առաջին անգամ լինելով Սարգիսն ինքն իրեն Ծիլո՛, ճշմա՛րիտ Ծիլո անվանեց։

— Վո՞ւր ե նամուս, վոր ձեռքս տար-անոր կպարզեմ, հա... Նորեն մաշալլա ատ ժողովրդին, վոր ակդ չեն ըներ ինձ իրենց գլխեն։

II

Այդ օրվա դեպքից հետո Սարգսին հաճախ կարելի յեր տեսնել Հայկանուշի հետ գյուղի ծայրին, ավերակների կամ ծառերի տակ նստած և ինչ-

վոր խնդրի շուրջ խորհրդակցելիս։ Սարգսի հոնքերը սովորականից ավելի եյին բարձրանում-իջնում և մատները մի րոպե անգամ հանգիստ չեյին տալիս արև-բեխերին, իսկ Հայկանուշը հակառակ ավանդության՝ խոսում եր ե՛վ բարձրաձայն, ե՛վ ձեռով-փռով։

Մի օր իրիկնադեմին Ծիլոն էլ գլուխը թաղած մի կուժ ուսին՝ Հայկանուշի հետ իջավ աղբյուրը ջուր բերելու դիտավորությամբ, բայց ճամբան շեղելով, նրանք գյուղի վողջ շրջանն արին՝ միշտ իրենց շուրջը կարծես ինչ-վոր բան փնտրելով։

Յեվ Սարգիսն ամբողջ մի ամիս ծիլոյությունը մի կողմ թողած՝ օրերն անց եր կացնում մոտակա անտառում միշտ իր ընտանիքի հետ։ Ամառվա վերջն եր թեև և անտառումն էլ բավական հով կար, բայց յերկուքի բլուզներն էլ թրջվում, իրաններին եր կպչում։

Հպարտ ինչ-վոր ժպիտ եր պլպլում թե Սարգսի և թե Հայկանուշի դեմքերին և անտառի լռության մեջ, կացնի հարվածներից զատ, յերբեմն-յերբեմն Ծիլոյի հրամաններն եյին լսվում՝ ուղղված մեկ Հայկանուշին, մեկ փոքրիկ Գասպարին, վորն իսկույն կուժը գետնի վրա քաշքշելով հորն եր հասցնում։

III

Թեև Սարգիսը շատոնց եր բացակա գյուղացոց աչքից, բայց գյուղացիները շատ քիչ եյին հետաքրքրվում նրանով—այսինքն նրա ֆիզիկական գոյությամբ։ Սակայն դրա փոխարեն, յերբ տոն օր կամ կիրակի յեր գալիս, հաճախ եյին հիշում Ծիլոյին, վորն իսկույն, կարծես կերպարանք առնելով, ցցվում եր իրենցից քիչ հեռու—մի ծառի, սյունի կամ պատի տակ, վիզը միշտ ուղղահայաց։

— Ըսես տաված բաղի-բաղի (յերբեմն) ինչու ավարաներ կտեղծե...

Յեվ այդպես ուշադրություն չեյին դարձնի Սարգսի մոտ ամիս ու կեսվա անհայտանալուն, յեթե մի օր Հավարչի Հրաչը քմծիծաղը դեմքին, հևալով չընկներ Լծկան Ստեփանի սրճարանը, թե՝ գիտե՞ք, ժողովուրդ, Ծիլոն յափու կշինե... Ֆացեր ե մենակ ծածկը, մեկ ալ պատուհաններու չերչիվեները (շրջանակ)։

— Յաշասո՜ւն Ծիլո, յաշասո՜ւ՜ու՜ն... հեգնորեն թնդաց սրճարանը միաբերան։

Նույն այդ իրիկուն, աշխատանքից հետո, յերբ Սարգիսն արևակեզ ու քիչ էլ նիհար դեմքով գյուղացիներին ներկայացավ, ամեն մեկը վրա ավեց իր սրախոսությամբ.

— Ճիշտը խոսե, Սարգիս, աշխատանքի տեղն ձեռներդ մեջքի՞դ եր, թե ազ վոսկի բեխերուդ,— առաջինը մեջտեղ ընկավ Ասլան Վարդանը։

— Տեսե՛ք, տեսե՛ք,— ավելացրեց Լոպազ Մինասը,— չեյթանին աչքը քոռանա, այնքան ե մուրճը թերս իջեցուցեր մեխի գլխին, վոր բեխին կեսը ծամեր ե բարկութենեն։

— Սարգիս, ինձի աչե, յերբ տանդ ծածկն ալ խլսիս, յափուլիս հետ փոխեմ պիտի, ռագի յեա, հա, հա... Ջանըմ, բան մ՚ալ վրան կավելցունենք,— իր չորացած լիմոն դեմքը ծամածռելով կատակել ուզեց Ավետիս աղան, վորն այդ տարին եր վերջացրել իր յերկհարկանի, ութը սենյականոց, փայտաշեն, բայց գյուղումը հեչ չտեսնված յափուն։

Սարգիսը բնավ չնեղացավ այդ կծու խայթոցներից, ընդհակառակը․ կողքին կանգնած Գյանջեցի Միկիչից իր ապրանքի պես խլեց ծխախոտի տոպրակը և արև-բեխերի տակից գառան ատամները ցույց տալով, սկսեց պապիրոս փաթաթել։ Սարգիսը միայն բացառիկ տրամադրություն ունենալիս եր ծխում։

— Ինչո՞ւ սիգարա մ՚ չքաշել, քանի վոր հեչ մեկը բերան չառավ Ծիլո բառը։

Հենց դրա համար չե՞ր, վոր Սարգիսը հաշտվել եր մեն-մենակ, արևի տակ ճենճերալով տուն շինելու չարչարանքի հետ։

— Թաք վերնար Ծիլո խոսքը աշխարհքես, վերնա՜ր—գետնի տակը անցներ...

IV

— Հիմակ մնաց ապակիներու հարցը,—ասում եր Սարգսին ինքն իրեն, յերբ տասն որ անց, տան կտուրն ու լուսամուտների շրջանակները մի կերպ սարքած՝ յետ եյին գալիս աշխատանքից։

— Արդեն տարի մ՚ ոլամութին ընելով հազիվ կրնամ սա խարդումանի (կտուրը ծածկելու մասնավոր տախտակ), մեխի և չերչիվեներու հաշիվը խլսեմ... ամա սա գինըրզ ապակիները ինչպե՞ս ընենք, հա...

Հայկանուշը իր սովորական լռությամբ միայն կարողացավ պատասխանել այս անգամ։ Քիչ հետո ուսերը թեթև բարձրացան ու մի քանի րոպե այդ դիրքում մնալուց հետո նորից իջան կամացուկ։

Ճար չկա՜ր...

V

Սարգսին ստիպված եր յեղել իր տնակը կառուցել շենից դուրս, մոտակա պուրակի յեզերքին, գյուղից ժամանակին նվեր ստացած այն մի ափ հողի վրա, վորը 1915-ին իր ծիլարուծարանն եր մի յերկու ամսով, այն ծիլարուծարանը, ուր Սարսաղ Ակոբի շները պատահմամբ կռվի բռնվելով գայլի հետ՝ փճացրել եյին իր ծխախոտի մատղաշ տունկերը։ Ստիպված եր յեղել այդտեղ կառուցել իր տնակը, վորովհետև շատ լավ գիտեր, վոր գյուղում ազատ հող լիներ ել, ո՞վ եր Ծիլոյի դրկիցության հետ հաշտվողը։ Մեկ ել Սարգսին ուզեցել եր, վոր աշխատանքի ընթացքին դուշմնի աչքից հեռու մնա...

Բայց արի տես, վոր տնակի հենց կողքին Յահուդի Պետոսի արտերն են փռվում...

Յահուդի Պետո՜ս... Չորս իգիթ տղի տեր... Տարեկան յերկու հարյուր փութ ծխախոտի հակ կապո՜ղ... Քսան մշակի վարձն ու հացը գլուխ բերո՜ղ... Եղ գառած տեղովը յեղամնների թվին յերկու տարին մեկ մի տղա ավելացնո՜ղ... Եվ վո՞րը թվես՝ ամեն իրիկուն յերեք հարյուր մեծ գլուխ մալ հաշվելով գոմ անո՜ղ...

— Ադոր Յահուդի Պետոս կըսեն, լուեն իսկ յեղ կքամե...

Տերտերից դատ, Յահուդի Պետոսը վոչ վոքի չի բարևում իր ճամբին։

— Տերտերը աստծու մարդ ե. աշխարհք ե, մեկ ալ տեսար պետք եղավ, յա...

Բայց չկա մեկը, վոր կարենա խուսափել նրա զինված հայացքից։ Յեթե մեկն ու մեկին ասելու բան ունենա, անպատճառ մոտն ե կանչում և վոչ թե ինքը մոտենում նրան։ Տանը թե դուրսը իրեն պահում ե այնպես, վոր կարծես ամենքից ել առնելիք ունի և պայմանաժամը շատո՜նց անցել ե։

VI

Գիշեր ե։

Այսոր Պետոսի դահլիճում ե վառվում ոջախը։ Ներկա յեն բոլորը—տան մեծից մինչև ամենափոքրը։ Խնդիրը լուրջ ե։ Պետոսն ընտանեկան ժողով ե գումարել։ Բոլորը լու՜ռ՝ լսում են։ Պետոսը հին աղվես ե, ո՜ո՜ո՜...

Սկսում ե պատմել նախ իրենց տան վրա ժամանակին թափված քրտինքից, որինակ ե բերում պապին, հորը և ապա հենց իրեն և ժառանգած մալ-առավարից խնդիրը աստիճանաբար աճեցնում ե, զարգացնում, ի մի հավաքում իր իսկ որով բազմացած կովերին, յեզներին, այծերին, ձիերին, խոզերին, աճած ծխախոտի մշակույթը՝ մեկ-մեկ, յուրահատուկ վիճակագրական փաստերով և յեզրակացնելով, վոր կանգ առնելը մահ ե, խոսքը բերում, ցցում ե Ծիլոյի իր արտերից մեկի գլխին կառուցած նորաշեն տնակի վրա։

— Ադ շան լակոտը, ադ տաճկցածը, ալ խալխի չարուխ լիզողը վուրկե՞ դուս ընկավ ու եկավ ադ տեղը չակալի պես պպզեց, հե՞... Յես միտքս դնեմ, վոր ադ հողին ալ խաղողի գործ դարձնեմ, լավ Ղրիմի բարունակներու տեղը դանամ, ադ փեշը փուշի պես ցցվի ու արյունս պղտորե... Յես տնանկ փուշ մը խոթեմ անոր ադ մախաթով բացված աչքերը, վոր գյոռին մեջն ալ չըմոռնա...

Փռփուր եր կապել Յահուդի Պետոսի բերանը, աչքերն արյուն լցվել։ Ծխախոտի տոպրակն անգամ կարծես դողդողում եր սարսափից նրա գերան մատների մեջ։

— Զատիկ, ես վախեն լավ վախտ չկա, առ ամանն ու դնա գազ (նավթ) լից ադ շան բնի վրա, կրակ նետե ու յետ եկե. յալլա՜, ինչ ես շաշմիշ եղեր...

Բազմանդամ ընտանիքից քչերն եյին այդպիսի վերջավորության սպասում, բայց քանի վոր այդ եր Պետոս աղայի վերջին խոսքը, իսկույն բոլորը մի հոգի ու մի մարմին դարձան...

— Աս խնդիրը տունես դուս չգա, հա՛,— ավելացրեց Պետրոսը, յեկավ նստեց օջախի դեմ, ծխեց ու թուքը պղտացրեց, պղտացրեց ու ծխեց այնքան, մինչև վոր Զատիկը— իր անդրանիկ տղան նավթամանը ձեռին դուրս յեկավ ներսի սենյակից և սանդուխները սուսիկ իջնելով՝ անհայտացավ արճիճե խավարի մեջ...

Հեռվում ձայն տվեց շների ինչ-վոր ձիգ կաղկանձ։

— Զատիկն ինչ բանի յեր ներսը այդքան վախտ,— հարցրեց Պետրոսը տղան իր կնոջը, վորը յերեխաներին պառկեցնելու պատրաստություն եր տեսնում։

— Ի՞նչ գիտնամ, մարդ, դուն ա՛լ... Թուղթ մը գրեց ու ջեբը դրավ։ Հարցուցի, ամա ձայն չհանեց։

VII

Մի քանի որ սրան-նրան յերես գնելուց հետո, Ծիլոն տեսնելով, վոր բան դուրս չի գալիս, դիմեց հարևան գյուղի բռունցքներից Զոռրա Մարկոսին։

— Տասնվեց թերթ ապակու փարա յե պետք... Ալ դո՛ւն ու աստվածդ, Մարկոս աղա...

— Ինչո՛ւ չտամ, տխմար. կուտամ, մեծ բան մը խո չե, ջանըմ։ Դուն ալ յերկու շաբաթ կուգաս ու թութունիս վրա կաշխատիս։ Սարգիս ախպա՛ր, ինչ ըսիր տոր, հա՛։

Ճար չկար։ Յեվ Սարգիսը համաձայնվեց։

Ծիլոն ձեռք բերած փողը պինդ-պինդ պահ տվեց Հայկանուշին, գիշերը լուսացրեց այնպես, ինչպես յերեխաները նոր տարվա գիշերն են լուսացնում, և հաջորդ առավոտը շատ կանուխ դեպի իր նորաշեն տնակը բարձրացավ շրջանակների չափը առնելու։

— Սա ապակիներու գործն ալ խլսինք, ալ հեչ դարդ չունիմ։ Ոլուղ-ջոջուղս մեյ մը թող չոր ու լուսավոր տեղ պառկին... Մնացածն աստված վողորմած ե, խեղճ չենք մնար, ջանըմ,— մտածում եր Ծիլոն ճանապարհին։

Բայց... ծանր մի մշուշ նստեց նրա աչքերին, քունքերին մուրճի հարվածներ հասցրին կարծես և ինչ-վոր թել կտրվեց ծնկներում, յերբ այրված տեսավ իր փայտաշեն տնակը... Նախ չուզեց հավատալ աչքերին, տենդոտ ճպճպացրեց կոպերը, բայց... առավոտյան թեթև հովը խփեց դեռ մխացող փայտերի մնացորդներին և ծուխն ու մոխիրը իրար խառնած՝ գետնից բարձրացրեց և ուղիղ իր կողմը շպրտեց...

Արդեն հրեշային փաստի առաջ՝ Ծիլոն լուռ հանեց թաղիքե գլխարկը, ցուցամատով քամեց գունատված ճակատի սառ քրտինքն ու գնաց պպզեց մոտակա ծառի տակ. պպզեց Ծիլոն և սև-բեխերն ուղղակի փետրել սկսեց կարծես։

— Վո՛չ թե մեկը, ապա վո՛ղջ գյուղն ե ըրեր սա ավերը, վո՛ղջ գյուղը... խո մենակ մեկը չեր, վոր Ծիլո կկանչեր... Չե՛, չե՛, մա՛մա՛խ, ա՛խ։

Յեվ արցունքը հազիվ խեղդելով Սարգիսն արյունակալած աչքերը հեռավոր իրենց գյուղին տնկած՝ կարծես մի անգամից հրդեհել եր ցանկանում նրա վողջ տները, վորոնց կտուրները ժպտում եյին անտարբեր՝ արևի առաջին ճառագայթների շողյունքից։

VIII

Հաջորդ որը գյուղում մի հանձնախումբ ընտրվեց Ալեքսյան Սարգսի մոխրացած տնակի խնդիրը քննելու համար. հանձնախմբի առաջին գործը յեղավ նախ տեղն ու տեղը դիտել ավերը և ապա գործի անցնել։

Վոչ միայն հանձնախմբի և նրանց ընտանիքի անդամներն եյին Ծիլոի գյուղը վազում, այլ և ամբողջ գյուղն իր շներովը միասին։ Ուսուցիչը մեկ ուզեց ընդդիմանալ աշակերտների անսանձ ցանկությանը, բայց շուտ յեկավ թե չե, դասարանը մի ակնթարթում պարպվեց։

Հայկանուշը փոքրիկ Գասպարին շալակն առած՝ արցունքներն եր սըրբում կանանց շարքում և լուռ մղկտում, իսկ Ծիլոն տագնապն արդեն անցկացրած՝ այնպես կրակոտ ու աղմկոտ եր ճառում այս անգամ, վոր լսողը պիտի կասկածամտեր, թե ով գիտե ինչ նպատակով՝ գուցե հենց ինքն ե կրակ գցողը...

Գյուղի պառավները, վորոնք նոր-նոր եյին Սարգսին Ծիլո անելու չափ հասունացել, ի մի խմբված՝ մեկ Ծիլոյին եյին նայում չարաճճի ծամածռություններով, մեկ փսփսում իրար քթին և փորները գաղտնի բռնում, վոր չլինի թե հանկարծ փռթկացնեն մեծերի ներկայությանը...

Ահա հարսանիք, թե թաղում հիշեցնող այդ տակնուվրայության մեջ մեկ էլ լսվեց գյուղական միլիցիոների բամբ ձայնը։ Բոլորը շուռ յեկան։ Ձեռին ինչ-վոր թղթի կտոր, բացատրում եր, թե մոտակա կաղնուն եր տեսել փշով հաստատված։

Հանձնախմբի անդամներից նույն ճռճռ Ռաքելը գրեթե պատռելով խլեց միլիցիոների ձեռից թղթի կտորը և բարձրաձայն ու կակազ կարդաց.

— «Ծի...լո.

«Յեթե աս տեղ յա... փու շինե...լու նա...րեն միտք ը...նես, գիտ...ցած ըլլաս, վոր աս բոշ գը...լոխդ կը...թա...ցընեմ խորոզի գլ...խի պես, խորոզի գլխի պես... Քու լ...փաթի տեր ես, լավ մտա...ծե...հաս...կը...ցա՞ր, հասկըցա՞ր... քյոփակ ողլի քյոփակ...»։

Վայրկենական հեհացին հաջորդեց ինչ-վոր ցուրտ լռություն։ Յեվ աջից-ձախից հարցերի ու կարծիքների մի տարափ եր, վոր սկսեցին տեղալ Ռաքելի գլխին։

— Ստորագրություն չկա՞։

— Չկա։

— Բիչ կարդացողի ձեռգիր ե։

— Թղթին աչեցեք, թղթին, կարծես նոյա գաֆթարեն պատռած ըլլան։

— Յես չըսի՞, վոր Յոհուղի Պետրոսի կերած ապուրը չե։ Ուրիշն ըրեր

է, հիմակ եկեք կուզե, վոր անոր բողազին բռնեն,— հաղթական կանչեց Ծիլոն ձեռները մեջքին, գառան ատամները ցույց տալով։— Յես չըսի՞, յես չըսի՞,— կրկնում եր նա աջ ու ձախ, առանց, սակայն, իմանալու, թե ինչու յե ուզում անպատճառ, վոր Յահուդի Պետոսը չլինի հանցավորը։

Թեև հրդեհի լուրն առնելուն պես միայն Յահուդի Պետոսն եր անցել Թաքելի մտքովը, վորովհետև ինքը, վորպես գլուխը լեցուն մարդ, վոչ միայն ծանոթ եր արդեն նրա խաղողի մշակույթ սկսելու ծրագրին նույն այդ, Ծիլոի օգտագործած հողաբաժնի վրա, այլ և մի շարք խորհուրդներ ել եր տվել... Բայց ինչպե՞ս կարելի յե վողջ գյուղի աչքին անպատիվ անել մի մարդու, վորի չեն տան բարիքը ճաշակում է գրեթե շաբաթը յերկու անգամ զանազան քեյֆերի առթիվ...

— Մե մարդ, վոր ուզածդ ատեն ձեռք կրնես՝ ըլլա փարայով, ըլլա գործ տալով... Ամա սա ժողովրդի աչքին փոշի մ՚ փչելը պարտքս ըլլա...

Յեվ նույն իսկ իրիկուն Լծկան Ստեփանի սրճարանում Ճաճա Թաքելը գյուղի բոլոր գրագետների ձեռագիրն եր համեմատում անստորագիր, սպառնացող յերկտող ձեռագրի հետ։ Բայց ինչ վորոշման կարող եր հանգել, յերբ ինքն անգամ, վոր գյուղում վարժապետից հետո առաջին գիտնականն եր հաշվվում, ամեն ստորագրություն դնելիս, բոլորովին այլ, թանաքի գույնից զատ, ուրիշ վոչնչով նախորդների հետ չհամեմատվող ձեռագիր եր հրապարակ հանում։

Յեվ վորովհետև Թաքելն այդ ձևով իբր թե չկարողացավ գտնել հանցավորին, վորոշեց ամենքի վրա ել կասկածել, հենց ենպես՝ վորպեսզի գործ տեսած լինի։

— Ծո՛, քեզ հետ եմ, Քյոսա, գիշերս սեյնա՞կդ եյիր քնած, թե բալքոնը։

— Գիշերս ուղիղ Սարգսի տան կրակներու մեջն եյի քնած։

— Քյոս այլին աչե, աված պատասխանին աչե... Դուն ըսե, խմբըլը մեր բախչայեն գիշերով անցնելուդ շունը չհաչե՞ց։

— Ձեր բախչայեն անցնելուց շունը հաչեց, ինչպես չե, ամա դուն ինչպես կրնայիր հաջոցն իմանայիր, յերբ վողջ գիշերը քեյֆ կքաշեյիր Ավետիս աղայի տունը։

— Զայնդ քեզ քաշե, հայվան ողլի հայվան... Յավաշ տեսնանք. Յեսիր Մարգար, քեզի գանք, դուն ջահելութեն չես ըներ, խոսե նայինք, գիշերս կնիկդ ինչու հորանցը ղրկեր եյիր,— վերջին անգամ խորամանկել ուզեց Թաքելը՝ հիշել չցանկանալով, վոր Մարգարի կինը հազիվ մի ամիս կար, ինչ մեռել եր արդեն։

— Կնիկս ինչու հորանցը ղրկեր եյի՞... Ախմախ ախմախ խոսելեն ինչ կեր։

Յեվ Յեսիր Մարգարը նախ կարմրեց, հետո գունատվեց և ատամների արանքից Թաքելի հասցեյին ինչ-վոր հիշոցներ շվացնելով դուրս յեկավ սրճարանից։

Ծիլոն այս բոլորին նայում եր այնպիսի հետաքրքրությամբ, վոր կարծես թե փողի քսակ է գտել ու հարմար մի անկյուն է փնտրում, վոր տեսնի ինչ կա մեջը...

Յեվ քննիչ հանձնախումբը գյուղի յերդվյալ թամադա Ճաճա Թաքելի նախագահությամբ բավականացավ յերբեմն այս ու այն անհատի ու կամպանիայի վրա կասկածելով միայն և գործը փակված հայտարարեց։ Դեռ ավելին՝ բանի տեղ չդնելով այն, վոր այդ ամբողջ իրադարձությանը ներկա յեր և միացյալ գյուղխորհրդի ներկայացուցիչ-գյուղական միլիցիոները, հայտարարեց, թե՝

— Իմաց ավեք աղ Ծիլոին, վոր չըլլա թե սեյսավետիականջին խաբարբան հասցնե... Տակեն վողջ դուս չելլար, հա՞... Միլիցի հետ յոլա կերթանք, ջանըմ, մեր մարդն է...

IX

Ծանր եր այդ բոլորը Ծիլոյի խոպան ուղեղի համար, բայց ծանր այնպես, ինչպես հեղեղել սպառնացող ապրիլյան ամպը։

Յեվ յերբ ապրիլյան աշնան քամին մոխրի մի հյուլե անգամ չթողեց Ծիլոյի գյուղում, Սարգիսը նորից հիշեց հոր աղայությունը։

— Լուսահոգին չափ մ՚իսկ չեր վերցներ գետնեն, ամա ինչն եր պակաս մեր տունը, խան եր, խա՛ն...

Յեվ, յերևակայելով, վոր իր բորբոսնած խրճիթն ել մի խան է լեցուն, Ծիլոն ձեռները մեջքին, արդեն մաղ դարձած լայնեզր թաղիքե գլխարկը ա-լա Նապոլեոն ծածկելով, հենց ենպես — քեֆի համար ման եր գալիս գյուղի փողոցներում այնպես ծանր ու ինքնաբավական, վոր կարծես թե սարից վերադարձող ու ճամբից բեզարած հսկա մի հոտ է տուն անում...

Յեկավ Զ...գյուղի ձմեռը։ Շնագայլեր, շնագայլեր։ Գիշերները մինչև լույս գոմերի ու հավաբների դռներին պպզած՝ գկլրտում են քաղցից կամ կաղկանձում, իսկ աղվեսներն այս ու այն հավաբունը կոխելով՝ վառիկներ թացնում։

Ծիլոն, վոր ամբողջ գարունն ու ամառը տան յերազով, տուն չինելով և ապա աշնանն ել նույն այդ տան հրդեհը վորոճալով եր զբաղված, մի օր ել տեսավ, վոր ուտելիքից վոչնչե վոչինչ չի մնացել տանը, վոչ իսկ լորու թուրշի (թթու)։

Յեվ առաջին անգամ լինելով Սարգիսն անքուն անցկացրեց իր գիշերը։

— Դրկիցներեն խնդրելով, պարտք ընելով սա որվա ճաշն ալ կերանք, լա՛վ. ամա վաղը... Հայկանուշի վոսկրացածն ալ վերջ չունի, վոր աշխատելու երթա...

Յեվ այդ մերկ սրի նմանվող վաղվանից ազատվելու համար եր, վոր Ծիլոն քնել չկարողացավ այդ գիշերը։ Բեխերը տրորելով վողջ գիշերը տապլակեց նա Հայկանուշի կողքին, վորը հոգացավի մրմուռից թմրած՝ խռմփում եր բերանաբաց։

Լուսաբացին Ծիլոն վեր թռավ փալասների տակիցը, լաթերը վրան քաշեց, յերեսը թրջեց և ուղիղ վարժապետի տունը վազեց։ Շատ լավ գիտենալով, վոր նա քնած կլինի դեռ, դուռը պինդ-պինդ ծեծեց և քիչ սպասե-

լուց հետո, առանց այլևայլության ուղիղ նրա քշեց, դռան յեռը հանդի-պելով նրա ճղոտ ու լույսից դեռ վախեցող աչքերին:

— Բարի լույս, վարժապետ, կուժը տանեմ ջուր բերեմ գամ, հետո ալ փեչկոյից փայտ ջարդեմ...

— Վերջապես բողազի վոսկորը կուլ ե տվել,— քիչ մնաց բարձրաձայն կանչեր վարժապետը անակնկալ հրճվանքից:

Քիչ հետո, յերբ գլուխը լուսամուտից դուրս հանած՝ որվա յեղանակն եր ստուգում՝ վորոշելու համար, թե այդ որն արժե՞ դպրոց գնալ, թե վոչ, տե-սավ, վոր մեկը խիտ հաստատուն ու վճռական քայլերով աղբյուրն ե իջ-նում կուժը ուսին:

— Ըսես Ծիլոն ըլլա... Բայց ան ու ադ քայլվածքը... Ադ ե իշթե, կուլ ե տվեր բողազի վոսկորը... և լավ, վոր կուլ ե տվեր, թե չե, խաչը վկա, ձո-րը իջնալ-ելլալես ջուրի ճամբին պիտի մեռնեյինք որ մը,— այս անգամ արդեն համոզված՝ կատակել ուզեց Զ... գյուղի տրապիզոնցի վարժապետը— իր ճաղատությամբ, նույն ե ասել մանկավարժական գործունեյության քա-ռասնամյակը տոնել յերազող պարոն Հովակիմ Ծզոյանը:

X

— Զմեռս կերպ մը գլուխ հանելու յե, թե չե,— մտածում եր Ծիլոն աղբյուրի ճամբին.— իսկ գարնան... Ջանըմ դուն ալ, վո՜չ աչքս ե քյոռ, վո՜չ վոտքս՝ թափալ: Գարնան դայյալլի մ' կուտամ սեւյավիտը... Հող չունիմ, բան չունիմ, ինչ կրնան ընեն: Հողս թող ըլլա, անկե յետք կտեսնվինք... Աշխատողը վոսկի կթափե...

Ցեվ դեռ գարունը չեկած՝ Սարգիսն ու Բոզ-ողլին—Ծիլոյի առաջին, ուրեմն և չբարեփոխված այդ տպագրությունը,— դիմում արին միացյալ գյուղխորհրդին և բաժին ստացան կիսավեր ու անտեր մի տուն (տերը— Յանզոն Հունատան եր գաղթել) իր շրջակա հողերովը միասին՝ գյուղից բավական հեռու, ձորակի գլխին:

Ապրիլի կեսերին աշխատանքը յեռում եր արդեն նրանց հանգստա-ցած հողերում: Գութանի յեռեից վորդերն սևս դողդղած իրենց աշխար-հում անսպասելիորեն կատարվող այդ այլափոխությունից, գլուխներն ա-րևին՝ գալարվում ու ձգվում, ձգվում ու գալարվում եյին խոնավ սևա-հողի նորաբաց ակոսներում:

—Ոլուզ-չոչուխով իրա՞ր են անցեր,— արհամարհական տոնով խոսում եյին նրանց հացեյին Լծկան Ստեփանի սրճարանի յերդվյալ հաճախորդ-ները:

Վորպես հող տեսած մարդ՝ Սարգիսն եր վարում սկսված մշակույթը:

— Թող գան ու տեսնեն ադ քյոռ անխիղճները, վոր Ծիլոն ալ մաճ բռնել գիտե,— ասում եր նա քրտինքը սրբելով:

— Ասլան պարտքի տակեն դուս չգանք նե... Գութնի համար փարա ճարե, լծկանի համար՝ ճարե, սերմացուն մալա կամ նորեն պարտք ըրե...

Ցեվ այդ բոլորի դիմաց ջուխտ մը աշխատող ձեռք յես, ջուխտ մ' դուն... խելքս բան մ' չի կտրեր,— կասկածամտում եր Բոզ-ողլին:

— Սարգիսը բեխ չունենա, թե աշնանը դուշմանի աչքը չքոռցնե... Ծո, վախկոտ, ինչ ես պռոշներդ ուղտի պես կախեր, աշխատե... Յես աս կտորը մինչև գլուխը վարեմ պիտի ասոր, դուն ալ գնա ան քարուտը և բել-լեմեդ (մասնավոր բահով փորելը) խլխե, մո՛ռ...

XI

Անցավ յերկու տարի:

Ծխախոտաբույծների միություն հիմնվելուց հետո մեծ աշխույժ եր տի-րում վողջ Արխադիայում: Ել հող չմնաց, վոր չծածկվեր ծխախոտի տունկով:

— Ոտարը կկարծեր, վոր մեր կերածն ալ թութուն ե:

Ցեվ այդ յերկու բուռն տարիներում ինչ չտեսնված տեսարաններ դիտեց Զ... գյուղը:

Գյուղերում, վորտեղ յեթե մեկի հավը պատահմամբ յերկու ձու յե դնում մի որում, կամ յեթե մեկը բուռշի ուտելիս փռշտում ե հանկարծ ու դիմացինի պնակն ու յերեսը ծածկում ծամծմված լոբու կտորներով, իս-կույն, չանցած յերեք որ՝ ամբողջ շրջանն ե խոսում այդ բազա խաբարի մասին. լսվա՞ծ բան ե ուրեմն, վոր Ալեքսյան Սարգսի նորաշեն տան մոխ-րացման պես մի խնդիր փակված մնար իր տեղում...

Ինչքան վոր գյուղի ջոջերը ձաձա Ռաքելի գլխավորությամբ, քրտինք մտած, ջանացին թաղել այդ հարցը, լինի սպառնալով, լինի կաշառելով՝ սկսած Ծիլոյից, միլիցիոներից մինչև վերջին խոզարածը, բայց յեղան մար-դիկ, վորոնք լուրը հասցրին միացյալ գյուղխորհրդի ականջը:

Ասում եյին, վոր նույն ինքը—գյուղական միլիցիոները, վախենա-լով պատասխանատվության կանչվելուց, ծածուկ գնացել ու պատմել ե բա-նի վողջ եյությունը:

Ցեվ յերբ Սարգիսն արդեն ցանած արտերը բնության խնամքին հանձ-նել, ծխախոտ չորացնող արան կառուցելու պատրաստություններ եր տես-նում, բացվեց խիտ ու մանրամասն մի քննություն իր տան հրդեհի շուրջը...

Մի գեղեցիկ որ էլ Յահուդի Պետոսին հավիտենական անենլիքվորի իր գիրքովը առաջնորդեցին շրջանային դատարան, վորտեղից չորս որ անց դուրս բերին դունմա ու գլխահակ և մի ամբողջ տարով ծակը կո-խեցին...

— Հեչ վկա չըլլար ալ, Պետոսի պապանձիլը վկա յեր ու վկա,— ա-սում եր Բոզ-ողլին կանգնած տեղը պարելով:

— Յահուդի Պետո՜ս ու բա՞նդ... Մաշալլա՛ այն դուռներուն, վոր սիրտ ըրին և ջհանդամեն եկած ադ շեյթանի աչքերեն կորեցին արևը,— ավելաց-նում եր Սարգիսը:

XII

Յեվ այսօր, յերբ Յահուդի Պետրոսն ուղղիչ տնից արդեն դուրս յեկած՝ դատական վորոշման համաձայն իր լավագույն հողաբաժնի վրա լուռ ու տխուր՝ յափու յե կառուցում Ծիլոյի համար, այստեղ Ալեքսյան Սարգիսը գյուղում կոոպերատիվ հիմնելու աշխատող ժողովների առանցքն է կազմում։

— Ալ ադ գենգիններու բոշ խոսքերուն ականջ կախող չկա...

Իսկ Միրո բառը բերնե-բերան է թռչում ընկերական զրույցների և ուրախության ժամերին միայն թեկուզ իրեն—Սարգսի ներկայությանը՝ հենց այնպես, կատակի համար։

ԱԴ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՆԳՍՏԻ ՅԵՐԳԵՐ

1.

Սարերի կրծքին, անտառների մեջ
  վարդերով զուգված
ես շենքերը մեծ, պալատները նուրբ՝
  մերն են հիմա։
Փերուզե ծովի ափերին փռված
  պուրակները բաց,
շատրվանները բյուրեղ ու ցնցուղ,
  հավքը սինամա
ու չինարները անխոս խորհրդով՝
  մերն են հիմա։

Մենք ենք արյունով՝ ես փրփուր ծովի
  ջրերի չափով,
քրտինքով, ջանքով ձեռք բերել եսոր
  հանգստի համար։
Ընկեր մաերիմ, անվերջ աշխատող
  կրակի տապով,
յեկ, հանգստացիր ծանր օրերից
  շենքերում կամար,
վոր եգուց նորից մենք կավի կանգնենք
  մեր գործի համար...

2.

Հորիզոններին արնածոր ու շեկ
գրկեց մթնշաղ.
արևի վերջին շողերը գունատ
ծովում չքացան.
յերկու վոսկի աչք՝ յերկու աստղ վառվեց
յերկնակամարում.
շշուկների մեջ չինարներն անուժ
տխրեցին անձայն.
շատրվանի սառ շիթերն են թափվում
մոլոր, ցիրուցան...

Մթնշաղների թավիշ թովչանքով
իջավ յերեկոն,
ու ծով ու յերկինք մշուշեց կապույտ
յերազն անհունի...
Միայն անհանգիստ ելեքտրոկայանն
եր շնչում անքուն,
կրկնում եր անվերջ, վոր ինքն հանգստի
ուրիշ ժամ ունի,
վոր մեզ համար չե դեռ այս կապտավուն
յերազն անհունի...

Գ. ՄԵԼՕՅԱՆ

ՄԵՄՈ*)

(Եզդական պոեմ)

1.

Ութը տարի յեր անցել են որից,
Ինչ Մեմոն թողեց, գնաց անգյուման.
Յեվ մայրը պառավ, յերերուն ստվեր՝
Կարոտը սրտում՝ նստած Խաչ-ճամփին,—
Էն, վոր տանում ե Շամ ու Երզրում,
Իրան ու Բաղդադ և Դիարբեքիր,—
Աչքը ջուր կտրած՝ սև մութքերի հետ
Սպասում ե յուր անգին Մեմոյին։
Թռչում են անցնում որեր, տարիներ,
Մեմոն չի գալիս, չըկա ու չըկա։
Ութը տարի յե՝ աղի արցունքից
Սև ջուր ե իջել նրրա աչքերին,
Ցավերից կապույտ, մըրմուռից խորունկ
Սև սուգ ե պատել սևավոր սրտին։
Ութը տարի յե՝ ինչ չար աչքերից,
Չար լեզուներից պահել ե գողով
Ու պահպանել ե վորդու աչքի լույս՝
Լեռների շուշան շարմաղ Ազուլին։
Յեվ ամեն անգամ, յերբ ձեռքը անտես
Փռում ե փեշը թանձրը խավարի
Ու վառում ջահերն յերկնակամարի,

*) Սույն պոեմը Մշո դաշտում՝ Մեղրագետի ափին՝ 1916 թ. մի քյուրդ յերգել ե յերաժշտագետ Ռոմանոս Մելիքյանին, վորի առաջարկությամբ և մշակեցի սյուժեն, պահպանելով ժողովրդական ստեղծագործությունների ընդհանուր յերանգը։

Գ. Մ.

Մեմոյի մայրը անհուն կսկիծով
Ասում է հարսին.
— Յեթե պատահի՝ գիշերը լսես
Մեր տան մոտերքը դու մի վոռնաձայն,
Ինձ իմաց կանես, վոր տեղիցս յելնեմ
Ու դիմավորեմ մեր դռան շեմքին
Իմ ումրը ու արև թառլան Մեմոյին,
Քանի դեռ ոդեն նա վոտ չի դրել…

2.

Ոխտ ձմեռ իջավ Խաչ-ճամփի վրա,
Ոխտ գարուն ծաղկեց զմրուխտ սարերին,
Յեվ Ազուն մոլար՝ պղտոր հայացքով
Մընում է նորից բեբախտ Մեմոյին։
Բայց մըթնում է որն իր սև սըրտի հետ,
Մեմոն չի գալիս, չըկա ու չըկա…
. . . .

Մի խավար գիշեր, յերբ մեգ ու մըշուշ
Իջել եր կախվել ձորերի վրա,
Ու Մեմոյի մայրն իր ցավերի տակ
Քընած եր թովիչ գառ յերազներով,
Յեվ Ազուն վառման կըրակով անշեջ
Թևավորում եր հուշերն իր անմեռ,
Լըսեց, վոր պառավ շունը գազազած՝
Վեր կացավ հանկարծ ձախ կըռան վըրա,
Իրան կըտրատեց մեծ ճամփի մոտին
Ու լըռեց մեկեն տըխուր վընգոցով։
Ձեն տըվավ Ազուն՝ ականջը դըռան.
— Ո՞վ է ուշացած մեր դուռը յեկել.
Յեթե ճամբորդ ես՝ Մեմոյին ղոնախ,
Չգիտե՞ս, վոր ոխտը տարի յե արդեն,
Ինչ Մեմոն գընաց, չըկա ու չըկա…
Յեթե անցվոր ես՝ մոլոր ու հոգնած,
Ներս արի, կուտամ քեզ դայվե, թութուն,
Խըմե ու ծըխե, գընա քո ճամփեն։

Դող բըռնեց անցավ Մեմոյի մարմնով,
Սիրտը կըսկըծաց կարոտի ցավից,
Աչքերը վառվեց սիրո կըրակով,
Ու սըրտամորմոք ասաց Ազուին.
— Յես ղոնախ եմ քո նախշուն աչքերին,
Ղոնախ եղ սև-սև, կամար ունքերիդ,
Ղոնախ քո նազուք, շարմաղ երեսին,
Մեմոն եմ, Մեմոն.
Քո կարոտն է ինձ բերել սարերով,
Յեկել եմ՝ առնեմ մորըս որհնությունն,
Վոր լուսածեգին հասնեմ ղոշունին։
Քար կըտրեց մնաց Ազուն զարմանքից,
Սիրտը թըրթըռաց անմեռ կարոտից,
Աչքերը լըցվեց խընդության ցողով,
Մաղվեց ու շաղվեց շարմաղ այտերով։
Դուռը կամացուկ բացվեց կըրընկին,
Սիրավառ սըրտերն իրար ձուլվեցին
Խոլ-խավարի մեջ լուռ ու անշըշուկ
Ու բոցկըլտացին անթեղված կայծով։
Յետ դառավ Ազուն, ասաց Մեմոյին.
— Ոխտը տարի յե՝ աչքըս քո ճամփին՝
Մըրմուռ կարոտով լացել եմ, կանչել,
Ոխտը գարունքին ծաղիկ եմ փընջել
Ու մնացել եմ Մեմոյիս դարձին.
Մերըդ ընկել է ձեռ ու վոտներից,
Ել լավ չի տեսնում, թող քընի հանգիստ.
Արի մինչև լույս սեր առնենք, սեր տանք,
Նոր լուսածեգին կերթաս ղոշունին։
Յեվ գիշերն ամբողջ մինչև լուսածագ
Սեր առին տըվին Մեմոն ու Ազուն։

3.

Արևը նոր եր Նեմրութ սարերից
Իր շողքը տըվել չըվող ամպերին,
Մեմոյի մայրը զարթեց, վեր կացավ,

Վեր կացավ տեղից, տեսավ սարսափած՝
Են չքնաղ Ազուն՝ լալագար ծաղիկ,—
Վորին ուխտ տարի պահել եր գողով
Ամեն չար աչքից, չար լեզուներից,—
Քաղցր քուն մրած ոտքի ծոցում։
Սիրտը թունդ առավ, աչքերը մթնեց,
Զուգեց հավատալ տեսած պատկերին.
«Ո՞վ պիտի լինի ես մարդը նամարդ,
Վոր գիշերս թաքուն անցել է իմ շեմքն
Ու տրորել է նամուսը մեր տան...
Թե Մեմոն լիներ, ձեն կըտար Ազուն,
Նա չեր համբերի մինչև լուսաբաց.
Թե Մեմոն լիներ... Չէ, չէ, Մեմոն չի,
Մի նամարդ է սա,
Վոր գողացել է նամուսն իմ վորդու...»,—
Մըմըռաց իր մեջ պառավը խայթված,
Քաշեց Մեմոյի այնալուն պատից,
Վոր սիրտը դաղի քընած նամարդի,
Բայց մեկ ել հիշեց, վոր Մեմոն բերախտ
Են կյանքում յերբեք հանգիստ չի գտնի *),
Կախ տըված կըրկին այնալուն պատից,
Միտն ընկավ իրենց դամեն տոհմական,
Վոր հին ադաթով սերընդե սերունդ
Հասել եր իրեն, պահվում գլխատակ,
Վեր կալավ, հանեց մըգլած պատյանից
Ու են պես շամփրեց «նամարդի» մեջքին,
Վոր սիրտը դաղեց քընած Մեմոյի,
Զորս մատ ել անցավ, գետնի մեջ խըրվեց։
Վեր թըռավ, նըստեց Ազուն գիվահար,
Ճըչաց, ծըղըրտաց՝ աչքերը չըռած,
Մազերը փետեց, շաղ տըված գետնով
Ու Մեմոյի մորն անիծեց վողըրով.
— Աչքըդ քոռանար, դու եդ ինչ արիր.

*) Ընդհանրապես քրդական հնավանդ տրադիցիաներով տան բացակա անդամի զենքը չեն գործածում նույնիսկ տոհմական թշնամու դեմ։
Գ. Մ.

Ձեռդ կոտրվեր, եդ ինչ սև բերիր
Անմուրազ հարսիդ սևաբախտ սրտին,
Վա՜յ լե մըն, Մեմո...
— Մեմո՜... Վա՜յ լե մըն, վա՜յ լո...
. . . .

Յեվ խելացնոր պառավն անճարակ
Պատռատեց ճերմակ լաչակը գլխի,
Մազերը պոկեց գողգոջուն ձեռքով,
Փարվեց իր վորդու սառը դիակին,
Վողբաց ու կոծեց, վա՜յ տըված գլխին
Ու կըրծքին սեղմած արնածոր դամեն՝
Դուրս նետվեց ոդից, մըրրափած գյուղից
Դեպի սարերը հաղթ ու վիթխարի,
Մըրընչաց, կանչեց անհուն կըսկիծով.
— Հե՛յ, գըմրուխտ սարեր, կըրակ ու կարկուտ
Թափեք չոր գլխուս.
Ընչի՞ յեք զուքվել, յերբ չըկա Մեմոն.
Ցամաքե՛ն թող ձեր ջըրերը զուլալ,
Թառամե՛ն բոլոր ձեր ծիլն ու ծաղիկ,
Թո՛ղ մոխիր դառնա ձեր ամեն մի քար,
Ու քամին առնի՝ ծովերը շաղ տա...
Հա՛, հա՛, հա՛ հա՛, հա՛, զուլո՜ւմ եր, զուլո՜ւմ...
Յեվ արնաթաթախ դամեն տոհմական
Իր կողը խըրեց մայրը Մեմոյի,
Ու կըսկըծանքի մըրմունջը վերջին
Սառեց ու մնաց պաղ շըրթունքներին՝
«Վա՜յ լե մըն, Մեմո, վա՜յ լե մըն, վա՜յ լո...»
Թահո՛ւ, փուչ աշխարհ։

1926 թ., 28 հուլիսի
Թիֆլիս։

Վ. ՆՈՐԵՆՑ

ԲԱՑ ՆԱՄԱԿ—
ԲԱՐԵԿԱՄԻՍ

«Այն աղվոր, աղվոր որերը, վորոնք կորան
Ու գուցե ալ չեն դառնալու»,—գրում ես ինձ,
— Իմ թանկագին, իմ յերազո՜ւն բարեկամս,
Գրում ես ինձ դառնակսկիծ...

Յես էլ հանկարծ, յես էլ պոյետ, թե՛ եմ առնում
Յեվ յերկարում թերս թեկին քո բարեկամ,
Վերջին անգամ կարոտներով, տրտում, տրտում,—
Ճամբա ընկնում մտերմորեն՝ վերջին անգամ...

Հառնում է սյուքն որորներումն աղու, աղու,
Թափում վարսերն արդեն կրակ մեր ճակատին.
Մենք մոլորուն ու տարագիր խենթ այցելու—
Զայնն ենք փնտռում հողի մարդուն ու արորին։

Արշալույս է.—արևն անզոր ու դալկադեմ.
Լեռները լուռ ու խոհական տարիներով.
Դաշտերը մերկ ու անհայուր ահա մեր դեմ.
Գյուղերը փուլ ու հիշատակ հոգեխռով։

Արշալույս է.—ճամբան ոտար ու մահառիթ,
Այգեստանը փլատարած շիրիմի պես.
(Ոտար ենք մենք կարծես մեզի ու անժպիտ)
Իսկ որերը—հրաճարակ ու հրալեզ...

Արշալույս է.—(բայց գիշերվան վորքան նման)
Վո՜չ մանուկ կա, վո՜չ ալ վարդեր շաղաթաթախ,
Ծո՜ւխ է միայն (արշալույսին այնպես նման)
Հագել ցոլքերն արևելքին՝ ցուրտ ու խաղաղ։

Ծո՜ւխ է միայն (մեր հոգին այնպես նման)
Բաբախելով լիզում Առտերն ու Ախթամար,
Յեվ կարծես թե մի ուշացած թռչուն անտեր—
Ճի՜չն է ձգում իր վոգեար.—«Ա՛խ-Թամա՜ր»...

Ճչում ուժգին՝ հետո ընկնում է թևաթափ
Ինչպես հոգին մեր թևավոր—հոգերին այս,
Ո՞ւր, չգիտենք. բայց ընկնում է... ու լուսաստղ—
Վորոնում է արևագեղ ուրի՜շ աշխարհ...

«Այն աղվոր, աղվոր որերը մահին են մութ.
Չկա՜ն հիմակ, չե՛ն դառնալու», գրում եմ քեզ,
— Իմ սիրելի՛, իմ արյունի՜ բարեկամս,
Գրում եմ քեզ յես դառնակեզ...

Արդեն չկա՜ն, արդեն մշուշ, արդեն մոխի՜ր.—
Բայց բոցեղեն նորոգ որե՜ր յեկան ահա,
Ու գալիս են նորե՜ն, նորե՜ն, պայծառորե՜ն—
Լեցնելու շա՜ռ Արշալույսով որերն ահա՜...

Որեր բույրով ու արևով լի՜ յեն, վառման,
Որեր շառաչ ու շոգիով լեցուն՝ գալի՜ս...
Որերն ուժեղ՝ Մարտունիի կամքի՜ նման,
Որերը տա՜ն Ջրանցքների,—իմ սիրելի՛ս...

Որերն աղմուկ հովիտներում, գործարանին,
Ուր Վերելքին ամեն բազուկն է նվիրված,
Վոր որերի վրա արյուն, որերին հին—
Ջրե պատառ մահածրար, թաղե անդա՜րձ...

ՇԻՐԱԿԻ ԴԱՇՏԵՐՈՎ

Գնո՜ւմ ենք, ուրա՜խ ենք ու ցնծո՜ւմ.
Գնո՜ւմ ենք դաշտերով շիրակ.
Ծփո՜ւմ է ծով-կանաչը ցնծուն
Ու խայտում արտերի հողը տաք—
Սրտի պես բաբախ ու կրակ։

Գարո՜ւն է գունազեղ, հազարնազ,
Կախվել են շողերը պսակ.
Ալագյազը ժպիտ է յերազ,
Ալագյազը ձյունալույս պսակ—
Շողերով գիսակ առ գիսակ։

Իսկ Մասիս մի տեսիլ ադամանդ՝
Ցոլո՜ւմ է լուրթ կապույտում.
Ցոլում է ինչպես սառն ադամանդ
Ու փարվում մենավոր կապույտում—
Ամպերով նրբին՝ պսակո՜ւն։

Բայց անգութ հին հուշերն են զարթնում
Ինչպես ոձ թունազեղ ու սև,—
Մառախո՜ւղն է իջնում անհատնում,
Մառախուղն—մութ գիշեր սևաև՝
Ծածկում խնդացող Արև...

Պատմում են ասկումներ խելագար,
Նիշում Աղետին վայրը խիկ,
Նկարում խոլական այն պայքարն...
Յեվ արյուն, և՛ ավեր խելագար,
Վոր ապրեց անմեղ ծծկերն իսկ...

Պատմում են, հիշում են՝ լռակում...
Լսում ենք ահով դեռ մեկին...
— «Բայց արդեն հերիք է... անհա՜տնում...

Կարծես վոտքըս ճողփաց լճակումն
Արյունի—մանկան վողբագին...

. . . .

Գնո՜ւմ ենք, տխո՜ւր ենք, անրջո՜ւն,
Բայց թեթև թևերով թռչո՜ւմ.
Զարադե՞մն... ել չկա՛. մենք խնդուն
Ու կանանչ դաշտերով ենք թռչում,—
Հեքյաթի բոցեղ թռչո՜ւն։

Գնում ենք դաշտերով դալարուն.
Վողջունում Զարթոնքը գվարթ.
Այրում է Նայիրին արևուն
Նայիրյան նոր գարունը հպարտ—
Իբրև պերճ, չքնաղ դափնեվարդ։

Հնձում են հողվորներն ել անդին,
Փարվում հասկերին հրավառ.
Զրնգում է կորուն գերանդին—
Հաղթերգին պես կորիճ անցորդին.
— Ինչ գեղո՜ւն է ամառը։

Զեղո՜ւն են մեր սրտերն ել, ամա՜ռ,
Գնո՜ւմ ենք դաշտերով շիրակ.
Գնում է մեր Յերկիրն ել համառ...
Ամեն ժամ մի նոր քար, մի պայքար
Ու կերտում Ապագան շատակ։

...Քշում են սայլակներն յերգեցիկ—
Բանվորներն ժիրաժիր, բրոնզ,
Շինում են կայարանն ելեքտրիկ,—
Վառման են ճակատները բրոնզ,
Իսկ աչքերը իրենց՝ հրձիգ։

Կերտում են կայարանն ելեքտրիկ,
Վոր լույս տան հողվորին մթին,

Վոր կամքով և ուժով դինամիկ
Դեռ Թաքուն մեր ուժերը պայթեն,
Մեր հողերը բերքի՝ հորդեն...

Գնո՜ւմ ենք, ուրա՜խ ենք ու ցնծո՜ւմ.
Գնո՜ւմ ենք դաշտերով շիրակ.
Ո՜, ահա Ախուրյանն էլ ցնծուն,—
Մանուշակ բասվերում մի տնակ,
Հակիչի ժպիտը շողակ։

— Թո՛ղ, այնտեղ ամբարտակն է արդեն.
Ջրամբարն էլ լիք, լուսածոր,
Կապտորակ իր աչքերն են արդեն,
Վոր կյանքեր են Թողում՝ հրալի
Աչքին պես, սրտին—Լենինի...

Շափում է ու գնում Թունելո՜վ
Ծծելու ծարավը մրրկուն
Հողերին խարխլուն (դարերով).
Ինչպես բիլ կապտերակ մշտարթուն,
Ինչպես լույս՝ վարար ու հորդո՜ւն...

* * *

...Դառնո՜ւմ ենք, հպա՜րտ ենք ու ցնծո՜ւմ.
Դառնո՜ւմ ենք դաշտերո՜վ շիրակ.
Գնում է «յերկրորդ հերթը» *) ցնծուն
Ու խայտում Շիրակի սիրտը տաք—
Սրտի պես բաբախ ու կրակ...

---

*) Նոր կառուցվող ելեկտրոկայանի աշխատանքը տարվում է յերկու հերթով։

ՀՌԻՓՍԻՄԵ ՊՈՂՈՍՅԱՆ

ՔԱՂԱՔԸ

Վես ու բազմահարկ տներ մոխրագույն,
Յերկաթե գնդուն գորշ տանիքներով,
Պատուհանների շարքերը փայլուն
Փողոց են նետում լույսերի մի ծով։
Ցերեկի փոխված գիշերը խավար
Բյուր ելեկտրական արևներ վառել,
Դեն շպրտելով ծածկոցը իր Թավ
Վառ ու տոնական զգեստ է հագել։
Ավտոյի զիլ կանչ, տրամվայներ վազող—
Հսկա համրիչի փողփողեջ շարան...
Լուրեր ռադիոյից արագ սլացող,
Յեվ կյանքը փոխվող վայրկյան առ վայրկյան։
Թևեր են առել փողոց, հրապարակ,
Առաջ են Թռչում, ծփում շառաչով,
Վախից կծկված յերկինքում հատակ
Աստղերն են դողում, աչքեր Թարթելով։
Ու այդ հսկայի խոլ Թռիչքի դիմաց
Ճամփա չե բացում Մոնբլանը խոնարհ,
Յեվ սապատավոր մեջքերը ծռած՝
Ծունկի յեն գալիս սարեր անհամար։
Ու վեհ քաղաքի ուժին հպատակ՝
Ծեր ժամանակի սլաքն է վազում...
Բացվում է շատ ծովերի հատակ,
Գետերն էլ իրենց ճամփեն են փոխում։

ՔԱՂԱՔՈՒՄ

Այսօր քաղաքում
Վառ ելեքտրական արշալույս,
Յեվ նարնջագույն լույսերում,
Ռադիոյի ուսին վոսկեթել
Տրիլլիոն լուրեր են թառել։

Քաղաքն է սա...
Վոր խրոխտ նժույգի պես
Անհամբեր, պատրաստ արշավի,
Փնչացնում է ռունգերը հսկա
Իջնելով կյանքի կրկես։

Քաղաքն է սա...
Ուր հրապարակը գոտկել է մայթով
Բաճկոնը իր լայն մետաքսյա,
Յեվ սալահատակ փողոցներ՝
Հոսող ահարկու գետեր։

Կայարանում ժխոր...
Ու զույգ փախչող կծիկներ՝
Յերկաթուղու ճամփան հեռավոր,
Ինքն էլ վիշապ պողպատե,
Համաճեմ թաթերով թուջե։

Շտապում է հեռվից դեպ քաղաք,
Բերելով յերախում յերկաթե
Բյուրավոր ամբոխներ անհագ.
Ու հազում է ծխնելույզը մրոտ
Գոլորշու տաք շնչից արյունոտ։

Ծփացող քաղաքում,
Նոր արթնացած մանուկից էլ աշխույժ,
Բրոնզեղեն աշխատանքը թևերն է քշտում,
Ջլուտ բազուկները լարում է ուժգին
Ու զարկում է մուրճը սալին։

Թնդում է հեռուն անսովոր զարկից,
Դողում են նրա շուրթերը հակինթ.
Հալոցք է դառնում արևը նորից
Ու շնչովը իր՝ բոցավառ ու նոր՝
Աստղերն է շեղում ճամփերից սովոր։

ԳԵՎՈՐԳ ԳՐԻԳ

ԲԱԳՈՒ ՇԱՐՔԻՑ

I

ԹՐՔՈՒՀԻՆ

Նուրբ նազերով, նուրբ խաղերով վորպես թեթև յեղնիկ
Ժողով յեկավ մի թրքուհի, մի նազելի աղջիկ։
Աչքերը սև վորպես գիշեր, խորհրդավոր ու խոր
Սևի վրա վառած հրեր, ասես աստղեր բոսոր...

Յեկավ խնդուն, յեկավ ժպտուն հաղթանակից դարձած,
Կուրծքը հպարտ, աչքը անթարթ—ասես գարուն ծաղկած.
Վարսերը ճոխ անփույթ փռած ուսերին ու մեջքին,
Շորորում եր յեղնիկի պես, յեղնիկի պես նրբին...

Այնպես գերող, այնպես շոյող, այնպես քաղցր եր խոսում.
Ձայնը այնպես նուրբ եր հնչում – ասես յերգ եր հոսում.
—Իմ ընկերներ, դարձավ նա մեզ, իմ յեղբայրներ անգին,
Ձեզ եմ բերում սիրտս կարմիր և իմ տանջված հոգին...

Դարեր, դարեր տառապել ենք հարեմ-բանտում՝ «վոսկի»,
Յերազել ենք, արտասվել ենք... կարոտ ազատ խոսքի.
Ու մեր լեզվի, ու մեր մտքի, ու մեր սրտի վրա
Յեղել է մի ծանր կապանք—մի արնաներկ շղթա...

—Իմ յեղբայրներ, դարձավ նա մեզ, իմ ընկերներ անգին,
Ձեզ եմ բերում սիրտս կարմիր ու իմ տանջված հոգին.
Լույս որերի հրով վառված թողեք կանչեմ կրկին—
Թրքուհիներ, տանջված քույրեր, վառքի յելեք ուժգին...

II

ԾՈՎԸ

Ծով, մրընչա, ալեկոծվիր,
Ծով, կատաղիր ու գոռգոռա,
Յեվ գալարվիր, և գազազիր,
Յեվ փոթորկվիր միլիոն անգամ...

Ելի պիտի մեղմիկ հևաս իմ վոտքի տակ,
Ելի պիտի հիվանդ նվաս ու աղերսես,
Ելի պիտի անզոր անքաս ու արտասվես...

Քո ջրի չափ արյուն եմ յես թափել եստեղ,
Քո ջրի չափ քրտինք եմ յես հեղել եստեղ,
Քո շառաչից ավելի մեծ շռինդ ունեմ,
Քո ավազից ավելի շատ մրրիկ ունեմ...

Ծով, արտասվիր, ծով, աղերսիր—
Յեվ մրրկվիր, և գալարվիր,
Ինչքան կուզես բարձր ճչա
Յեվ մրընչա, և քրքրջա...

Ելի պիտի կրակս վառ շուրթդ կիզե,
Ելի պիտի կամքիս նավը կուրծքդ ակոսե
Ելի պիտի խարիսխս սուր սիրտդ ծակե...

Ամեն ջրում, ամեն ափում—ամեն յերկրի
Նավեր ունեմ, բանակ ունեմ ընկերների,
Քեզնից ել լայն, քեզնից ել խոր, քեզնից հզոր
Փռված եմ յես արևի պես բարկ ու բոսոր...

ՀՐԱԶԴԱՆ

ՅԵՐԵԿ

Յերեկ գալուկ, դու ծերունի մի գետակ,
Դարան մտած ընթացքիդ մեջ դարավոր,
Քո ափերում արոտ ու գյուղ վոտքի տակ
Խամրում եյին ջինջ ջրերի ծարավով։

Քո հովիտում ճահիճ ու ցեխ ու կապանք,
Հիվանդ ծեսեր՝ հին ու զառամ որերի,
Քո ձորերում պառավ շեներ հոգեվարք,
Վախ ու սոսկում և վոհմակներ չարքերի։

Քո գիշերը հուշերի պես մշուշոտ,
Ալիքներիդ խշխշոցը մի թափոր,
Քո զարզանդից վողջ ծվարած քուրսու մոտ,
Ապրում եյին մի հնավանդ հավատով։

ԱՅՍՕՐ

Նոր քո վողջ ճանապարհին խնդություն,
Քո շուրջն նոր լուսաբորբոք մի տոն է,
Նոր հանկարծ վոտքի յելած հանդ ու տուն՝
Կոփում են կուռ քո կողերը բետոնի։

Դարեր, դարեր լուռ թմրել ես մրափել,
Չը բերելով լույս ու աշխույժ վոչ մի տան,
Նոր, ահա ղառած լավա հրաթև,
Քո թևերում յեռում է թափ մի տիտան։

Դաշտերդ եսոր բարկ արևի խարակից
Զարթնած զվարթ աշխատում են քրտնաթոր,
Խոր ջրերդ բորբ հրերին հարակից
Լույս են վառում մութ խուղերում գետնափոր։

Վ Ա Ղ Ը

Վա՛ղը, վա՛ղը քո պաղ ջրերն ալեզարդ
Կփոթորկեն միլիոն ակներ շողեշունչ,
Միլիոն տենչով կշառաչեն միլիոն մարդ,
Վաղը կգան նորեր, որեր վոգեցունց։

Դու կը դառնաս ջահը զարթնող աշխարհի
Յեվ աղբյուրը լույսով ապրող լավերի,
Հսկա մի ույժ, մի հեղրոշեն վիթխարի,
Վաղվա քո թափն հազար խավար կավերի։

Կխորտակես վաղը ճրագ ու կանթեղ,
Աթարի ծուխն ու թոնիրը պապական.
Վա՛ղը, վա՛ղը կմռնչաս ամեն տեղ,—
Վաղը կգա քո հրաշունչ ապագան։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երես

Յերկու խոսք . . . 3
1. Հ. Հակոբյան—Ընթեռ-հորսը . . . 5
2. Արազի—Անխուսափելին . . . 15
3. Ն. Թորգոմյան—Հորձանքում . . . 27
4. Մարգար—Ինգլիզի բարեկամները . . . 60
5. Յե. Բանաքար—Մուկուչը . . . 79
6. Վ. Թերզիբաշյան—Ել Վահիդի վերջին արկածը . . . 85
7. Գ. Մնայան—Վասիլ աղան . . . 104
8. Յե. Գայեյան—Ծիլը . . . 110
9. Ազ. Վարդանյան—Հանգստի յերգեր . . . 123
10. Գ. Մեյոյան—Մեծո . . . 125
11. Վեսպեր—Բաց նամակ բարեկամիս . . . 130
12. » Շիրակի դաշտերով . . . 132
13. Հախփախե Պողոսյան—Քաղաքը . . . 135
14. » » Քաղաքում . . . 136
15. Գևորգ Գրիգ—Բագու շարքից . . . 137
16. Պահարե—Հրազդան . . . 138

15ր
Գ-93
ՏԿԿ
օրինակ
[1թ.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0067513

III
2156